

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlb.am/>

E-mail: [info@artsakhlb.am](mailto:info@artsakhlb.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlb.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ԴԻՐՔԵՐՈՒՄ



**ՎԼԱԴԻՄԻՐ ՅՈՎՍԵՓՅԱՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԴԻՐՔԵՐՈՒՄ**

«Դիզակ պյուս» հրատարակչություն  
Ստեփանակերտ-2018

ՀՏԴ 340  
ԳՄԴ 67  
Հ 872

Լվիրում եմ ծնողներին՝ ԽՈՐԵՆ ԵՎ ՇՈՒՇԻԿ  
ՀՈՎՍԵՓՅԱՆՆԵՐԻ անճռաց հիշատակին

*Խմբագիր՝* Երևանի Պետական համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,  
ՀՀ «Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի  
նախագահ ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

*Գրքի հրատարակությունը հովանավորել է Արցախի Հանրապետության  
Դատարանների նախագահների խորհուրդը*

ՀՈՎՍԵՓՅԱՆ Վ.

Հ 872 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ: /Հողվածների և հարցա-  
զրույցների ժողովածու/: Վ. Հովսեփյան.- Ստեփանակերտ:  
«Դիզակ պլյուս» հրատ., 2018.- 232 էջ:

Գրքում զետեղված է Արցախի Հանրապետության դատական մարմիններում աշխատելու տարիներին հեղինակի հողվածների և հարցազրույցների հիմնական մասը, հրապարակումներ, որոնք վեր են հանում նրա պատկերացումները դատական իշխանության կայացման, կատարելագործման և հեղինակության բարձրացման, համակարգի խնդիրների, հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների, դատական ատյանների տեղի և դերի, արդարադատության մատչելիության, քաղաքացիների իրավունքների պաշտպանության, դատարան-ՁԼՄ-ներ փոխգործակցության և այլ հրատապ իրավական հարցերի մասին:

Գիրքը կարող է օգտակար լինել բուհերի դասախոսների, ուսանողների, արդարադատության և իրավակիրառ գործունեություն իրականացնող բնագավառների աշխատողների և, առհասարակ, հայ ժողովրդի իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 340  
ԳՄԴ 67

ISBN 978-9939-1-0695-3

© Հովսեփյան Վ., 2018

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

«Արդարադատության դիրքերում». այսպիսի վերտառությամբ ժողովածուում զետեղված են Արցախի Չանրապետության վաստակաշատ դատավոր, իրավագիտության ոլորտում իր ուրույն, արժեքավոր խոսքն ու ինքնատիպ հետք ունեցող Վլադիմիր Յովսեփյանի հրապարակախոսական հոդվածներն ու հարցազրույցները:

Արհեստավարժ գործչի պարագայում դյուրին չէ իրավագիտության այնպիսի բարդ ու պատասխանատու ոլորտի առնչությամբ, ինչպիսին արդարադատությունն է, հրապարակախոսական հարթությամբ նյութ հրապարակելը. մի կողմից առկա է ասելիքը մասնագիտական պատշաճ լեքսիկոնով շարադրելու անհրաժեշտություն, մյուս կողմից այն պետք է լինի հնարավորինս մատչելի և ունենա գործնական ուղղվածություն: Վլադիմիր Յովսեփյանը հանրությանը հայտնի է իր գիտական վերլուծություններով, արդարադատության արդիական հիմնահարցերին նվիրված տեսական ու գործնական ասպեկտներով կատարված հետազոտություններով, սակայն սույն ժողովածուին նրան բացահայտում է միանգամայն այլ տեսանկյունից՝ ընդգծելով հմուտ իրավագետի ոչ միայն մասնագիտական անվիճելի կարողությունները, այլև իր կոչումին ու իր պատասխանատու կարգավիճակով Յայրենիքին նվիրվածությունը:

Ինչ խոսք, հրապարակախոսական ոգին հավուր պատշաճի պահպանելու նկատառումով հեղինակը ձգտել է դրանցում որոշակի չափով «ներարկել» հասարակական ինքնագիտակցությանը մատչելի ու ըմբռնելի զգացմունքայնություն, իրավական մշակույթին համահունչ տոնայնություն, ինչն էլ ավելի գրավիչ է դարձրել նյութը և դարձել է նախապատվելի ոչ միայն նեղ մասնագետների, այլև հանրության լայն շրջանակների համար:

Յովսեփյանի և հարցազրույցներում նյութը դարձյալ արդարադատության հրատապ հիմնահարցերն են, որոնց համարժեք արտացոլումը ոչ միայն նպաստում է ժամանակի ոգին ճշգրիտ ընկալելու, Արցախի ժողովրդի ազատագրկման պայքարի իրավական ասպեկտները համարժեք պատկերացնելու, այլև անխուսափելիորեն կարող է խիստ օգտակար լինել Արցախի միջազգային կարգավիճակը կանխորոշելուն:

նվիրված խրթին հարցադրումների լուծման տեսանկյունից: Մասնավորապես, հեղինակն անհերքելի փաստարկներով ընդգծում է միջազգային չափանիշներին համապատասխան, Արցախում արդարադատության կայացման ու զարգացման, այդ ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության իրական վիճակը, այդ գործընթացին խոչընդոտելու Ադրբեջանի նկրտումները և այլն:

Միջազգային հարաբերությունների համատեքստում հիշյալ վերլուծությունների, դրանցում արտացոլված փաստարկների արժեքը կայանում է նրանում, որ համոզիչ փաստերով հիմնավորված է այն դիրքորոշումը, որ Արցախում արդարադատության կայացման, մարդու իրավունքների դատական և արտադատական պաշտպանության վիճակը շահեկանորեն տարբերվում է Ադրբեջանի համանման ցուցանիշներից: Կոնկրետ օրինակներով արձանագրվում է այն, որ Ադրբեջանը ոչ միայն ռազմական ուժի գործադրմամբ մշտապես խոչընդոտել է Արցախում ժողովրդավարության կայացման գործընթացին, այլև ակնհայտորեն զիջում է իր իսկ քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման, երաշխավորման տեսանկյունից:

Վլադիմիր Յուսեֆյանի հոդվածներն ու հարցազրույցները հարուստ են նաև գիտագործնական հիմնախնդիրների լուծման համարժեք «բանալիներ» ընտրելու նկատառումով, քանզի դրանցում առկա են բազում արժեքավոր դիրքորոշումներ և մոտեցումներ, որոնք անմիջականորեն առնչվում են դատաիրավական բարեփոխումների տարաբնույթ ասպեկտներին:

Թեպետ նյութը, հիմնականում, վերաբերում է դատական իշխանության մարմինների կարգավիճակին ու գործունեությանը, դրանում միաժամանակ արտացոլված են ողջ իրավական համակարգին վերաբերող մի շարք առանցքային նշանակության հարցեր: Թերևս, այս ասպեկտը նյութին հաղորդում է ոչ միայն զուտ գործնական, այլև տեսական բնույթ, քանզի բացահայտվում են համակարգային էական հարցադրումներ, խնդիրներ և դրանց լուծման ողջ էվոլյուցիան:

*ՀՀ «Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյան*

## «ՅՈՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ»

Ծերունին մի րոպե կանգ առավ և աշխատեց հեռվից նշմարել իր արտի դրությունը:

- Ո՞րն է արտդ:

- Այն բարձրինը...

Վերևից, լիասերի մեջ գոյացած ջրերը պատռել էին իրենց թումբերը, ուժգնությամբ ցած թողել և գրեթե սրբել արտը... Ընկավ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, ծնկները կթոտեց և նա տեղնուտեղը, իր ընտանիքին կերակրող ցորենի դիակների կողքին նստեց ու գլուխը ձեռքերի մեջ ծածկեց:

Սիրելի ընթերցող, երևի հասկացար, որ տողերիս հեղինակն անմահ Վրթանես Փափազյանն է, ով ծերունի հողի աշխատավորի կերպարը կերտել է իր «Արտը» պատմվածքի մեջ:

«Ազատ Արցախ» թերթի ս.թ. հոկտեմբերի 21-ի համարում «Գրավ է դրվել հողը, բռնագանձվել է... կենսաթոշակը» վերնագրի տակ շարադրվել է քաղաքացի Մուրադ Գաբրիելյանի միակողմանի պատմությունը, թե իբր ԼՂՀ դատարաններն իր նկատմամբ անհիմն դատական որոշումներ են կայացրել, որի ուժով բռնագանձումներ են տարածում իր ապրուստի միակ միջոցի՝ կենսաթոշակի վրա՝ զցելով իրեն ծանր կացության մեջ և այլն: Ասել է, թե «Նիհարած, անկման եզրին կանգնած այծը տենչում է ապրել, իսկ մսագործը նրանում ծարպ է որոնում»: Իսկ իրականում ինչի մասին են «խոսում» դատական նիստում ստուգված և իրենց հաստատումը գտած ապացույցները, փաստերն ու տվյալները:

Մարտունու շրջանի Մյուրիշենի գյուղբնակիչ, բայց մշտապես Ստեփանակերտ քաղաքում բնակվող, 75 ամյա Մուրադ Գաբրիելյանը, «կարտոֆիլագործությամբ» զբաղվելու նպատակով 1999թ. մարտի 19-ին Արցախբանկի Մարտունու մասնաճյուղից ստացել է 1.580 հազար դրամ կարճաժամկետ վարկ՝ տարեկան 15 % տոկոսադրույքով: Վարկի համար գրավի առարկա է հանդիսացել գյուղի տարածքում գտնվող, նրա ընտանիքին պատկանող 2,72 հեկտար ժամանակավոր սեփականաշնորհված վարելահողը: Ամբողջ կյանքում լրագրությամբ զբաղված Մ.Գաբրիելյանը, մի պահ պատկերացնելով իրեն որպես հողի աշխա-

տավոր, որդու հորդորանքով, որպես վարկի ստացման երաշխավորություն, գյուղապետարանից տեղեկանք է վերցրել, որ հողը լրիվությամբ մշակված է և կարտոֆիլը ցանված ու ներկայացրել բանկի մասնաճյուղին: Այդ այն դեպքում, որ նա հողի վրա մի կաթիլ քրտինք չէր թափել և ոչ էլ ցանքս էր կատարել:

Հողից ձերբազատվելու համար Ա.Գաբրիելյանը դիմումներ է հղել գյուղապետարանին, շրջվարչակազմին և ԼՂՀ կառավարությանը: Պատասխանները եղել են միանշանակ՝ բյուջեից տրամադրված միջոցները, տվյալ դեպքում վարկերը ենթակա են պարտադիր վերադարձման:

Այնուհետև Մ.Գաբրիելյանը որոշում է զբաղվել «խոզաբուծությամբ», սակայն խոճկորները հասունության շրջանում վարակվում են «քոս» հիվանդությամբ և նրանցից միայն մեկն է փրկվում: Ծերունի հողագործը չի ընկճվում. Ստեփանակերտ քաղաքում բնակվող հարսի միջոցով վարկը մտցնում է առևտրի ոլորտ և բռնում Վրաստանի Հանրապետության «Սադախլո» բնակավայրի ճանապարհը, բայց նորից մատնվում է անհաջողության, քանի որ ապրանքները վերավաճառելու համար պատշաճ գնորդներ չի կարողանում գտնել:

Սիրելի ընթերցող, Մ.Գաբրիելյանի վարկային «Ողիսականի» դրվագները քաղում եմ քաղաքացիական գործին կցված և նրա գրած բացատրություններից:

1999թ. օգոստոսի 10-ին, Արցախբանկի Մարտունու մասնաճյուղի կառավարչի և վարկերի գծով ավագ մասնագետի կողմից Մյուրիշենի համայնքի ղեկավարի մասնակցությամբ տեղում ստուգվել է նշված վարկի օգտագործման գործընթացը և պարզվել, որ այն նպատակին չի օգտագործվել:

Վարկի օգտագործման ժամկետը լրանալուց հետո, վարկառուն բազմիցս կանչվել է վարկատուի մոտ, զգուշացվել վարկը մարելու անհրաժեշտության մասին, սակայն ոչ մի տեղաշարժ չի եղել: Այդ իսկ պատճառով վարկատուն հայց է հարուցել Մարտունու շրջդատարան՝ Մ.Գաբրիելյանից 1.910.000 դրամ բռնագանձելու պահանջի մասին: Շրջդատարանը 03.11.2000թ. վճռով բավարարել է հայցապահանջը՝ բռնագանձումը տարածելով պատասխանողի այլ գույքի վրա: Տվյալ դեպքում, դա չի հակասում օրենքի պահանջին, քանզի քննարկվող ժամանակահատվածում՝ հողի ժամանակավոր սեփականաշնորհման պայմաններ



րում, նրա իրականացման մեխանիզմներ ԼՂՀ-ում չեն եղել: Բացի այդ, գործող օրենսդրության համաձայն՝ բռնագանձումը տարածելու համար հարկադիր կատարման միջոցների թվին են դասվում նաև՝ պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտները:

Մ.Գաբրիելյանը շրջափոխարանի վճիռը չի բողոքարկել ԼՂՀ Գերագույն դատարան:

Թերթի հոդվածում նաև նշվել է, որ «հանրապետության դատախազությունը կատարելով անհրաժեշտ ստուգումներ, 2001թ. մայիսի 10-ին պատասխանել է, որ «Մարտունու շրջափոխարանի վճիռն անհիմն է ու անօրեն, իսկ Գերագույն դատարանը, անտեսելով դատախազության պահանջը, Մարտունու շրջափոխարանի վճիռը թողել է ուժի մեջ»:

Ավելորդ չեն համարում պարզաբանել, որ դատարանը որևէ մեկի պահանջ չի կատարում, այլ իրականացնում է արդարադատություն, որի ընթացքում դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Իսկ պետական մարմինների, ՏԻՄ-ի և դրանց պաշտոնատար անձանց, կուսակցությունների, հասարակական միավորումների և լրատվության միջոցների ցանկացած միջամտություն դատավորի գործունեությանն արդարադատություն իրականացնելիս անթույլատրելի է և առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Բայց դա չի նշանակում, որ դատարանը չպետք է որևէ մեկի հետ կապ ունենա: Չամագործակցություն պետք է լինի և իշխանության, և մամուլի, և հասարակության բոլոր խավերի հետ:

Իրականում, ԼՂՀ գլխավոր դատախազությունը, շրջափոխարանի խնդրո առարկա վճիռն անհիմն համարելով, 13.05.2001թ. հսկողական կարգով բերված բողոքում խնդրել է բեկանել այն և գործն ուղարկել նոր դատաքննության, այն պատճառաբանությամբ, որ շրջափոխարանը չի ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվ կերպով գործի իրական հանգամանքները պարզելու համար: Մասնավորապես՝ գործը քննվել է առանց պատասխանողի մասնակցության և հայցվոր կողմը ժամանակին միջոցներ չի ձեռնարկել վարկի դիմաց գրավ դրված հողի վրա իր բացարձակ իրավունքն իրականացնելու համար:

Ի դեպ՝ ԼՂՀ Գերագույն դատարանի հսկողական ատյանի դատա-

կան կոլեգիան գործը քննել է Մ.Գաբրիելյանի մասնակցությամբ, որտեղ վերջինս չի ժխտել, որ վարկի մի մասը ներդրել է առևտրի մեջ, իսկ մի մասն էլ օգտագործել անձնական կարիքների համար:

Նման պայմաններում, դատական կոլեգիան ընդգծել է, որ բողոքարկվող ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել սոսկ միայն ձևական նկատառումներով, ուստի այն թողնվել է անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժվել, այլ ոչ թե անտեսվել, ինչպես ակնարկված է հողվածի մեջ:

Ավելորդ չեմ համարում նաև նշել, որ ըստ շրջվարչակազմի տվյալների, Մ.Գաբրիելյանը վերջին 2 տարվա ընթացքում հողի ոչ մի հարկ չի մուծել և բնակվելով Ստեփանակերտ քաղաքում, մինչև 2002թ. ապրիլ ամիսն աշխատել է Արցախի Պետական պատմաերկրագիտական թանգարանում, որպես գիշերային պահակ:

Ինչ վերաբերում է հողվածի հեղինակի այն մտահոգությանը, «որ պետական միջոցներից մեծածավալ վարկեր են տրամադրվել հանրապետությունում ոչ այնքան անհայտ մարդկանց», ապա կարող եմ ասել, որ Գերագույն դատարանում նման տվյալներ չկան, և հողվածագրի հեղինակը իրավասու է իրեն հուզող հարցերի վերաբերյալ բազմակողմանի լրագրողական հետաքննություն կատարել, հաղորդակից լինել պետական և ոչ պետական մարմինների գործունեությանն ու այնտեղ տիրող նեգատիվ կողմերի մասին տեղյակ պահել հասարակության լայն զանգվածներին:

ԼՂՀ Գերագույն դատարանը պատրաստ է միշտ մամուլին և ՋԼՄ-ներին տրամադրել դատական նիստում ստուգված և իրենց հաստատումը գտած տեղեկություններ և տվյալներ: Այս ասպարեզում լրատվության միջոցները կարող են դառնալ դատական համակարգի կարևոր դաշնակիցը:

*«Ազատ Արցախ» հանրապետական թերթ /ՀԹ/,  
29 հոկտեմբերի 2003թ.*

## ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԼՂԳ-ՈՒՄ

*«Մարդու ազատության երաշխիքը  
դատական իշխանության անկախությունն է»  
Մոնտեսքյու*

Ցանկացած իրավական պետությունում դատական իշխանությունը հանդիսանում է երկրի հիմնական հենասյուներից մեկը, որի ուժով մշտապես գտնվում է հասարակության, կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների տեսադաշտում:

Ի տարբերություն իշխանության մյուս ճյուղերի՝ դատական համակարգը, լինելով ավելի բաց և թափանցիկ, գտնվում է ավելի խոցելի վիճակում, ուստի այս պարագայում հասարակությունն ավելի աջալուրջ և պահանջկոտ է դատական իշխանության և դատավորների նկատմամբ, հաշվի առնելով այդ իշխանության առանձնահատուկ դերը և դատավորների պաշտոնավարության անփոփոխելիությունը՝ «երկարակեցությունը»:

Իմաստուններից մեկն ասել է, որ պետության անսասան հիմքն արդարադատությունն է:

Խոսելով դատավորների և դատարանների մասին՝ Ն.Բոնապարտը նշել է. դատավորներին թույլ տալ անցնել օրենքները և շրջանցել դրանց կատարումը՝ միևնույն է, թե ոչնչացնել օրենսդիր իշխանությունը: Եթե օրենքների ձիշտ կատարումը պետության կառուցվածքի և կարգ ու կանոնի պահպանման անմիջական պայմանն է, ապա դատարանի մեջ չի կարելի չտեսնել մի հաստատություն, որն ամրապնդում է պետական իշխանությունը և պետության անսասանությունը:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը /ԼՂԻՄ/ ղեկավարվում էր ԽԱՀՄ և Խորհրդային Ադրբեջանի օրենսդրությամբ: Սակայն դա չի նշանակում, որ ղարաբաղյան շարժման առաջին տարիներին մարզի իրավապահ մարմիններն, իրենց ժողովրդի արդարացի պահանջը բավարարելու համար պասիվ դիրք էին բռնել: Ընդհա-

կառակը, օգտագործվել են բոլոր հնարավորություններն Ադրբեջանի իրավազորությունից դուրս գալու համար:

Այսպես՝ դեռևս 1989 թվականին մարզի դատավորների ընդհանուր ժողովը հետևյալ բովանդակությամբ հեռագիր է ուղարկել ԽՍՀՄ ղեկավար մարմիններին. «Ազգային պատկանելության հատկանիշով հայերին Ադրբեջանից վտարման շարունակվող քաղաքականությունը, անախադեպ ֆիզիկական ոչնչացումը, զանգվածային ջարդերն անդամալուծել են մարզի դատական մարմինների աշխատանքը, ստեղծված իրավիճակում այլևս հնարավոր չէ հետագայում արդարադատություն իրականացնել ի շահ մի հանրապետության, որի հակահայկական քաղաքականությունը բացարձակորեն հասցվել է պետական աստիճանի: Խնդրում ենք մարզի դատական մարմիններին անհապաղ հանել Ադրբեջանի արդարադատության մարմինների կազմից»:

Ավաղ, Կենտրոնն ականջալուր չէր արցախահայության պահանջների նկատմամբ:

1991 թվականի օգոստոսյան «պուտչ»-ից և Ադրբեջանի՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին հայտարարությունից անմիջապես հետո Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների 1991 թվականի սեպտեմբերի 2-ի համատեղ նիստում ընդունվեց Յոչակագիր ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Յանրապետություն հռչակելու մասին: Յոչակագիրն ազդարարեց, որ «Յանրապետության տարածքում, մինչև ԼՂՅ Սահմանադրության և օրենքների ընդունումը, գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև ներկայումս գործող այն մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն Յոչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին»:

Յոչակագրում նշված հիմնադրույթն ամրապնդվեց նաև ԼՂՅ Գերագույն խորհրդի կողմից 1992 թվականի հունվարի 6-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքում: Օրենքը, ամրագրելով իշխանության երեք ճյուղերի տարանջատման սկզբունքը, արձանագրեց նաև, որ ԼՂՅ իրավասությունների մեջ մտնում է նաև «Գերագույն դատարանի և դատական իշխանության մարմինների համակարգերի,

հանրապետության արդարադատության և մյուս մարմինների կազմակերպումը, կազմի հաստատումը, դրանց իրավասության և աշխատակարգի սահմանումը»: Հիմունքներից բխող՝ Գերագույն խորհրդի 1992 թվականի հունվարի 6-ի և հունիսի 6-ի որոշումներով թույլատրվեց մինչև սեփական Սահմանադրության և օրենքների ընդունումը ԼՂՀ տարածքում կիրառել ՀՀ օրենսդրությունը, իսկ ՀՀ օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունների համար կարող են կիրառվել նախկին ԽՍՀՄ օրենսդրական ակտերը, եթե չեն հակասում ԼՂՀ անկախության Հռչակագրին: Այդ ակտերի կիրառման ընթացքում «Հայաստանի Հանրապետություն» կամ «ԽՍՀՄ» բառերը փոխարինվում էին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերով:

Անկախության հռչակումից հետո դատական իշխանությանը վերաբերող առաջին հիմնարար փաստաթուղթը՝ «Դատական իշխանության մասին» ԼՂՀ օրենքը, ընդունվել և կիրարկման մեջ է դրվել 1996 թվականին: Օրենքի համաձայն, հանրապետության տարածքում գործում էր երկաստիճան դատական համակարգ: Հանրապետության յուրաքանչյուր շրջանում և Ստեփանակերտ քաղաքում ձևավորվել էին շրջանային /քաղաքային/ դատարաններ, իսկ դատական համակարգի վերին օղակը գլխավորում էր ԼՂՀ Գերագույն դատարանը՝ եռաստիճան դատական ատյաններով՝ Գերագույն դատարանի դատական կոլեգիա, Գերագույն դատարանի դատական պալատ /նախագահություն/ և ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողով /պլենում/: Հանրապետության միասնական դատական համակարգի անբաժանելի մասն էր կազմում ԼՂՀ զինվորական դատարանը, որը քաղշրջդատարաններին հավասարեցված կարգավիճակով գործում էր ԼՂՀ պաշտպանության բանակում: Հանրապետության դատական համակարգում շարունակեց գործել պետական հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից օրենքով սահմանված կարգով հինգ տարի ժամկետով ընտրված ժողովրդական ատենակալների ինստիտուտը:

ԼՂՀ Գերագույն դատարանը, լինելով դատական իշխանության բուրգի գագաթին, բացի առաջին ատյանի կարգով քրեական և քաղաքացիական գործեր քննելուց, օժտված էր նաև վճռաբեկ և հսկողական ատյանների, ինչպես նաև արբիտրաժային և սահմանադրական դատա-

րանների լիազորություններով:

Բոլոր դատավորներն ընտրվել են ԼՂՀ Ազգային ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Ընդ որում, ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահը, նրա տեղակալը և Գերագույն դատարանի մյուս անդամները՝ հանրապետության նախագահի ներկայացմամբ, շրջադրատավորները՝ ԼՂՀ արդարադատության պետական վարչության, իսկ զինվորական դատարանի դատավորները՝ արդարադատության պետական վարչության և ԼՂՀ պաշտպանության նախարարության համատեղ ներկայացմամբ:

Ինչպես նկատելի է, Լեռնային Ղարաբաղը հարազատ էր մնացել Խորհրդային Միության դատական համակարգին և պրակտիկայում նույնիսկ հենվել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի ղեկավար պարզաբանումների վրա:

Սահմանադրության և «Դատարանակազմության մասին» օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը 1999 թվականի հունվարից անցավ եռաստիճան դատական համակարգի, մտցվեց վերաքննության ինստիտուտը, որը վերցված էր ռոմանոգերմանական իրավական համակարգից, չնայած որին հետխորհրդային հանրապետություններից ոչ մեկը չէր գնացել:

ԼՂՀ-ն, պատվով դուրս գալով պատերազմի դաշտից, անցավ շուկայական տնտեսությանը, նոր տնտեսական, սոցիալական և քաղաքական հարաբերությունների խթանմանն ու ամրապնդմանը: Այնուհանդերձ հիմնականում Խորհրդային Միությունից ժառանգած իրավական ակտերն ակնհայտորեն խոչընդոտում էին նոր համակարգի ձևավորմանը և հաստատմանը: Հանրապետությունն այլևս չէր կարող ղեկավարվել հին օրենքներով: Ուստի 1999-2001թթ. ԼՂՀ-ում ընդունվեց դատաիրավական ակտերի մի ամբողջ փաթեթ՝ միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, դատախազության, փաստաբանական գործունեության, դատարանակազմության, դատավորի կարգավիճակի, դատական մագիստրատուրայի խորհրդի մասին և այլն: Հանրապետության տարածքում կիրարկման մեջ դրվեց 1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Երկրի օրենսդիր մարմինը

2002 թվականի փետրվարի 6-ին ընդունեց «Դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում Գերագույն և առաջին ատյանի դատարանների գործունեության մասին», «ԼՂՀ-ում նոր քրեական դատավարության օրենսգիրքը կիրարկման մեջ դնելու մասին» օրենքները, ինչպես նաև նշանակեց Գերագույն և առաջին ատյանի դատարանների նախագահներին և դատավորներին, ինչը և ազդարարեց ԼՂՀ-ում դատական համակարգի կազմավորման նոր փուլի սկիզբը: Դատավորներն իրենց պաշտոններն ստանձնեցին 2002 թվականի փետրվարի 15-ին՝ հանրապետության նախագահի ներկայությամբ տված հանդիսավոր երդմամբ: Այդ օրվանից ԼՂՀ -ում սկսեց գործել նոր դատական համակարգը, որը կազմված է առաջին ատյանի և Գերագույն դատարաններից: Առաջին ատյանի դատարանն ըստ էության քննում է բոլոր քաղաքացիական, քրեական, տնտեսական և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Այլ է խնդիրը Գերագույն դատարանի պարագայում: Այն արդարադատություն է իրականացնում վերաքննության կարգով՝ մեկ դատավորի կազմով և վճռաբեկության կարգով՝ կոլեգիալ, ոչ պակաս, քան երեք դատավորի կազմով: Գերագույն դատարանը նաև սահմանադրական դատարանի լիազորություններ իրականացնող ատյան է, որը գործերը քննում է կոլեգիալ, բայց ոչ պակաս, քան հինգ դատավորի կազմով:

Յետևապես, հանրապետությունում գործում է երկաստիճան դատական համակարգ, որտեղ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորություններն իրականացվում են Գերագույն դատարանի կողմից:

Պետք է նշել, որ ցանկացած իրավական և ժողովրդավարական երկրում բարեփոխումները շարունակական բնույթ են կրում, այսինքն՝ այդ գործընթացը չի կարող կանգ առնել կամ դադարեցնել, այն անընդհատ զարգացում է պահանջում. հենց դադարեց, նշանակում է պետությունը լիարժեք չի լինի: Այդ իսկ պատճառով ժամանակը ցույց տվեց, որ ԼՂՀ-ում գործող դատական համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի թե՛ ներպետական, և թե՛ միջազգային իրավունքի տեսանկյունից:

ԼՂՀ 2006թ. Սահմանադրության ընդունմամբ դատական իշխանությունն իր մարմինների կազմակերպման և գործառնության սկզբունքներով ու լիազորություններով հանդես է գալիս բոլորովին այլ տեսքով:

Սահմանադրորեն ամրագրվեցին իշխանության ճյուղերի տարանջատման, դատական իշխանության և արդարադատության իրականացման սկզբունքները և դրանց իրացման երաշխիքները:

Սահմանադրության համաձայն, ԼՂՀ-ում կգործի եռաստիճան դատական համակարգ՝ բաղկացած ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից և Գերագույն դատարանից: Կարող են ստեղծվել նաև օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններ: Եռաստիճան դատական համակարգի բարձրագույն մարմինը՝ Գերագույն դատարանը, բաղկացած կլինի սահմանադրական և վճռաբեկ պալատներից, որոնք կկազմավորվեն և կգործեն 2009 թվականի հունիսի 1-ից, իսկ հուլիսի 1-ից սահմանադրական պալատ կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականությունը:

Անկախ դատական իշխանության կարևորագույն երաշխիքներից մեկն էլ կհանդիսանա արդարադատության խորհուրդը, որը կփոխարինի դատական մագիստրատուրայի խորհրդին: Դատական օրենսգրքի ընդունմամբ կստեղծվեն դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ, դատական իշխանությունը ԼՂՀ-ում կգործի ինքնակառավարման սկզբունքի հիման վրա, կսահմանվեն դատավորների գործունեության նյութական, սոցիալական և այլ երաշխիքները, դատավորի վարքագծի կանոնները:

ԼՂՀ Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումների ոլորտում կարևոր քայլ եղավ հանրապետության նախագահի 2008թ. փետրվարի 1-ի կարգադրությունը՝ դատաիրավական համակարգի բարեփոխումների հայեցակարգը մշակելու և անհրաժեշտ օրենսդրական փաթեթը նախապատրաստելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին, որին պահանջ դրվեց մինչև 2008 թվականի օգոստոսի 1-ն ավարտել դատաիրավական համակարգի բարեփոխումների հայեցակարգի մշտական աշխատանքները և ներկայացնել համապատասխան օրենսդրական փաթեթը: Աշխատանքները սկսված են և դրանք շարունակական բնույթ կկրեն:



Ընդունված ճշմարտություն է, որ եթե թատրոնը սկսվում է հանդերձարանից, դատարանն էլ՝ դատական նիստերի դահլիճից: Ասել է թե՛ դատախարավական բարեփոխումների մի հատվածն էլ դատարանաշինությունն է, քանի որ արդարադատություն իրականացնելու ընթացքում պետք է անհրաժեշտ պայմաններ լինեն թե՛ դատավորների, և թե՛ դատական կողմերի համար: Դա է պահանջում դատավարության գործընթացի մշակույթը, և այդ համատեքստում երկրի ղեկավարը վերջերս այցելել է Շուշի քաղաք և տեղում ծանոթացել հանրապետության դատական մարմինների տեղակայման հնարավոր նստավայրերին:

ԼՂՀ-ում դատական իշխանության նոր համակարգի ձևավորումը կսկսվի վերաքննիչ դատարանի ստեղծումով: Այդ է վկայում ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և հանրապետության նախագահի կողմից ս.թ. մայիսի 22-ին ստորագրված «Դատարանակազմության մասին» ԼՂՀ նոր օրենքը:

Օրենքի համաձայն, ԼՂՀ-ում կգործի մեկ վերաքննիչ դատարան՝ դատարանի նախագահի և վեց դատավորի կազմով, որի դատական տարածքը հանրապետության տարածքն է, իսկ նստավայրը՝ ք. Ստեփանակերտը:

Վերաքննիչ դատարանը, իր իրավասության սահմաններում, կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, կվերանայի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերը, իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունելու պահից կքննի նաև վարչական գործերը:

Վերաքննիչ դատարանը կսկսի գործել ոչ ուշ, քան 2008 թվականի հուլիսի 1-ից և նրա ստեղծվելու պահից Քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի գործունեությունը կդադարի, իսկ ԼՂՀ առաջին ատյանի դատարանը կվերանվանվի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Հանրապետությունում կգործի մեկ առաջին ատյանի դատարան՝ դատարանի նախագահի և ինը դատավորի կազմով, որը, բացի Ստեփանակերտ քաղաքից, նստավայրեր կունենա նաև հանրապետության շրջկենտրոններում:

Հանրապետության նախագահը, օգտվելով ԼՂՀ Սահմանադրության 68-րդ հոդվածով իրեն տրված լիազորություններից, վերաքննիչ և

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում դատարանի նախագահի և դատավորների թափուր և ավելացող պաշտոններում նշանակումները կկատարի ոչ ուշ, քան մինչև 2008 թվականի հունիսի 20-ը:

ԼՂՀ Սահմանադրությունն արձանագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Շատ շուտով ԼՂՀ դատավորների շարքերը կհամալրվեն նորանշանակ դատավորներով, որոնք արդարադատություն իրականացնելիս դատավոր կկանգնեն բարու և չարի հավերժական պայքարին: Հիշենք Նարեկացու խոսքերը՝ «Դատիր բարեգութ»: Մեր միակ Գերագույն դատավորը վերևում է:

*«Ազատ Արցախ» ՀԹ, 10 հունիսի 2008թ.*

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ**

*Մարդկային գործունեության ոչ մի տեսակ ապահովագրված չէ սխալներից և մոլորություններից: Դա հավասարապես վերաբերում է նաև դատարաններին, որտեղ գործնականորեն անհնար է բացառել վրիպումները: Ուստի՝ դատարանակազմության զարգացման պատմությունը մշակել է ստորադաս դատարանների դատական ակտերի բողոքարկման (գանգատարկման) 4 եղանակ՝ վերաքննություն, վճռաբեկություն, վերստուգում (ռեհզիա) և վերանայում նոր երևան եկած հանգամանքներով:*

*Այդ բոլոր եղանակներն ուղղված են ոչ միայն ստուգելու ստորադաս դատարանների դատական ակտերի հիմնավորվածությունն ու օրինականությունը, այլև վեր հանելու և ուղղելու գործի քննության և լուծման ընթացքում թույլ տրված դատական սխալները, չնայած դրանցից յուրաքանչյուրն ունի մեկը մյուսից տարբերվող իր բովանդակությունն ու առանձնահատկությունները:*

Լատիներեն «apellatio» բառը նշանակում է դիմել որևէ մեկին, այսինքն՝ խոսքը գնում է դատական ակտն ավելի բարձր ատյանին բողոքարկելու (գանգատարկելու) մասին, որի հիմքում ընկած է առաջին ատյանի դատարանի դատական որոշման ոչ վերջնական լինելու նախադրյալը:

Վերաքննության ձևով դատական ակտի բողոքարկման ինստիտուտը ծագել է Հռոմեական կայսրությունում և իր հետագա զարգացումն ստացել եվրոպական մյուս երկրներում, մասնավորապես՝ Ֆրանսիայում, Ավստրիայում և Գերմանիայում: Ցարական Ռուսաստանում այն գործել է 1864-1917թթ. և դադարել Խորհրդային Ռուսաստանի Ժողովուխորհի «Դատարանի մասին» 1917թ. թիվ 1 դեկրետի ուժով՝ դատական քաջքշուկը վերացնելու և նոր գաղափարների վրա ստեղծվող ժողդատարանների հեղինակությունն ամրապնդելու պատճառաբանությամբ: Չնայած Խորհրդային Միության օրոք ստորադաս դատարանների դա-

տական ակտերի բողոքարկման եղանակը եղել է վճռաբեկությունը (լատիներեն «guasso» բառից, որը հայերեն նշանակում է կտրել, ոչնչացնել, վերացնել), բոլոր դեպքերում՝ վճռաբեկ վարույթն իր մեջ ներառում էր նաև վերաքննության տարրեր:

Դատավարության իրավունքի տեսության մեջ ընդունված է վերաքննությունը բաժանել լրիվի և ոչ լրիվի: Լրիվ վերաքննության դեպքում գործը վերանայվում է իր ամբողջ ծավալով, այսինքն՝ նյութերի հետազոտումը կատարվում է առաջին ատյանի դատարանի համար սահմանված կանոններով: Նման պայմաններում կողմերը կարող են վկայակոչել նոր փաստեր, ներկայացնել նոր ապացույցներ, ինչի դեպքում վերաքննիչ դատարանը կախված չի լինում առաջին ատյանի դատարանի դատավարության արդյունքներից: Ոչ լրիվ վերաքննության դեպքում գործը վերանայվում է վերաքննիչ բողոքի սահմաններում և այն ապացույցների հիման վրա, որոնք հետազոտվել են առաջին ատյանի դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ լրիվ վերաքննության խնդիրը կողմերի այն սխալների և վրիպումների ուղղումն է, որոնք բաց են թողնվել ներկայացնելու ամբողջ փաստական նյութն առաջին ատյանի դատարանին՝ գործի վերջնական լուծման համար: Ոչ լրիվ վերաքննության նպատակը ոչ թե կողմերի, այլ դատարանի կողմից թույլ տրված սխալի ուղղումն է: Ոչ լրիվ վերաքննությունը երբեմն նաև անվանում են վերստուգիչ, քանի որ վերստուգիչ վարույթն իր մեջ ներառում է վերաքննության և վճռաբեկության որոշ հատկանիշներ: Այդպիսին են եղել Խորհրդային Միության և միութենական հանրապետությունների բարձրագույն դատական ատյանների վճռաբեկ վարույթները 1918-1991 թվականներին:

Ցանկացած հասարակությունում դատական որոշումների բողոքարկման համակարգը կառուցվում է՝ հաշվի առնելով պետության տնտեսական, քաղաքական և սոցիալական շահերը, և յուրաքանչյուր պետություն ինքն է ընտրում իր համար կիրառելի դատական համակարգ՝ քաղաքացիների իրավունքները և օրինական շահերն արդյունավետ պաշտպանելու տեսանկյունից:

Դատարանակազմության համաշխարհային պրակտիկայի համար ներկայում ավելի բնորոշը բողոքարկման վերաքննության և վճռաբեկության ձևերն են: Չկա երևույթ, որ ունենա ձև, բայց չունենա բովան-

դակություն, և ընդհակառակը: Ուստի՝ վերաքննիչ և վճռաբեկ վարույթները միմյանցից տարբերվում են իրենց ձևով և բովանդակությամբ:

Վերաքննիչ վարույթը Հայաստանի Հանրապետությունում մտցվեց 1998 թվականի հունվարի 12-ին, որտեղ ստեղծվեցին քաղաքացիական, տնտեսական, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ երեք դատարան, իսկ 2010 թվականին՝ տնտեսականի փոխարեն՝ վարչական գործերով վերաքննիչ դատարան: Հայաստանը վերաքննության տեսակը վերցրեց Ֆրանսիայից, իսկ վերաքննության սահմանները՝ Գերմանիայից և Ավստրիայից, այսինքն՝ ընտրեց վերաքննության խառը ձևը, որն իր արտացոլումը գտավ Հայաստանի Հանրապետության 1998թ. քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում և «Դատարանակազմության մասին» օրենքում: ԼՂՀ դատական համակարգը, ընդհուպ մինչև 2002թ. փետրվարի 15-ը, կազմված էր Ստեփանակերտի քաղաքային, հանրապետության շրջաններում տեղակայված շրջանային դատարաններից և Գերագույն դատարանից: Դատարանները հիմնականում ղեկավարվում էին նախկին քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով: Ճիշտ է, 2001թ. հունիսի 1-ից հանրապետության ողջ տարածքում կիրարկման մեջ դրվեց 1998թ. ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, սակայն նրա բազմաթիվ դրույթներ, բնականաբար, չէին կարող կարգավորվել քաղաքացիական դատավարության հին օրենսգրքով:

Գործող դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորման համար սկզբունքային նշանակություն ուներ ԼՂՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասով հռչակված նորմը. «Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված կարգով ունի իր նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունք՝ վերադաս դատարանի կողմից»: Ակնհայտ է, որ այս դրույթն ինքնին կանխորոշում է վերաքննիչ դատարանի գոյություն, որն էլ ամրագրված է Սահմանադրության 109-րդ հոդվածով: Սահմանադրական այս դրույթը լրիվությամբ բխում է մի շարք միջազգային իրավական նորմերից, մասնավորապես, ՄԱԿ-ի կողմից 1948 թվականին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագրից և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԱՊՀ երկրների 1995թ. կոն-

վենցիայից: Ի դեպ՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին և դրան կից ֆակուլտատիվ արձանագրությանը մեր հանրապետությունը միացել է ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ, որն էլ հետագայում հաստատվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից:

ԼՂՀ Սահմանադրությունից բխող դատական իշխանության նոր համակարգի ձևավորումը սկսվեց վերաքննիչ դատարանի ստեղծմամբ, Քաշաթաղի առաջին ատյանի դատարանի գործունեության դադարեցմամբ և ԼՂՀ առաջին ատյանի դատարանի՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան վերանվանմամբ:

2008 թվականի հունիսի 19-ին հանրապետության նախագահի հրամանագրերով նշանակվեցին վերաքննիչ դատարանի նախագահը, վերաքննիչ դատարանի վեց և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի երեք դատավորները:

2008 թվականի հունիսի 26-ին հանրապետության նախագահի և այլ պաշտոնատար անձանց ներկայությամբ կայացավ վերաքննիչ դատարանի նախագահի, դատավորների և առաջին ատյանի դատարանի նորանշանակ դատավորների երդման արարողությունը, իսկ հուլիսի 1-ից վերաքննիչ դատարանի դատավորներն անցան իրենց պաշտոնական պարտականությունների կատարմանը:

Ի տարբերություն Չայաստանի Չանրապետության, որտեղ գործում է երեք, ԼՂՀ-ում ստեղծվեց մեկ վերաքննիչ դատարան: Մինչև ԼՂՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերն ուժի մեջ մտնելու օրը, այսինքն՝ 2009թ. փետրվարի 10-ը, վերաքննիչ դատարանն իր գործունեությունն իրականացրել է լրիվ վերաքննության ձևով, որից հետո անցել ոչ լրիվ վերաքննության:

Այսպիսով՝ ընդամենը երեք տարի է, ինչ կազմավորվել և գործում է Արցախի Չանրապետության վերաքննիչ դատարանը: Ու չնայած մեծ ժամանակահատված չէ, բայց կատարված աշխատանքի արդյունքները վկայում են, որ դրանք շոշափելի են, ու ձեռնարկված քայլերը գլխավորապես ուղղված են եղել արդարադատության ապահովմանն ու քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: Այդ տարիների ընթացքում վերաքննիչ դատարանի կողմից միայն վերջնական դատական

ակտերի կայացմամբ ընթացքավորվել են 380 քաղաքացիական և 141 քրեական գործ, 24 քաղաքացիական և 56 քրեական բնույթի նյութ:

Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ վերաքննության արդյունքում վերաքննիչ բողոքների ավելի քան 50%-ը բավարարվում է: Եվ, չնայած վերաքննության կարգով բողոքարկվող առաջին ատյանի դատարանի որոշումների ոչ շատ քանակին (7-10%), դատական սխալների վերացման արդյունավետությունն ակնհայտ է, իսկ միայն այն փաստը, որ 2010թ. ընթացքում վերաքննությամբ ավարտված և վճռաբեկության կարգով բողոքարկված քաղաքացիական գործերով դատական ակտերի կայունությունը կազմել է 80%, իսկ քրեական գործերով՝ 88%, խոսում է այն մասին, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը կայացել և արդյունավետ արդարադատություն է իրականացնում:

Այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանի ստեղծումն արդարացված է, կարելի է բացատրել մի շարք գործոններով: Եթե մինչև վերաքննիչ դատարանի ստեղծումը վերաքննությունն ու վճռաբեկությունն իրականացվում էր երկրի բարձրագույն դատական ատյանի կողմից, այն էլ՝ մեկ դատավորի կազմով, ինչի պարագայում, որպես կանոն, վերաքննիչ ատյանի վճիռը վճռաբեկ ատյանը թողնում էր անփոփոխ, ապա վերաքննիչ դատարանի ստեղծման պահից վերաքննությունն իրականացվում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով: Գործերի կոլեգիալ քննության դեպքում արդարադատության որակն ավելի բարձր է լինում, սխալի հավանականությունը՝ անհամեմատ քիչ: Նման պայմաններում ավելի մանրակրկիտ և բազմակողմանի են հետազոտվում նյութերը, իսկ կոլեգիալ որոշումը՝ միևնույն հարցի տարբեր տեսակետների և տարբեր կարծիքների բախումների արդյունք է հանդիսանում: Իզուր չի ասված, որ երեք վատ դատավորներ ի վիճակի են լավ դատական կոլեգիա կազմել: Յենց այն փաստը, որ վերաքննության ինստիտուտի գործելու պահից՝ 2002 թվականից մինչև 2008թ. 2-րդ կիսամյակը, վճռաբեկության կարգով վերաքննիչ ատյանի ավելի քիչ գործեր են բեկանվել, քան 2008թ. 2-րդ կիսամյակում կամ հաջորդ տարիների կիսամյակներում առանձին-առանձին վերցրած, խոսում է այն մասին, որ վերաքննիչ դատարանի ստեղծումն արդարացված է: Իսկ այն, որ ԼՂՀ Գեորգույն դատարանը որոշ գործերով վերաքննիչ դատարանի դատական ակտերը բեկանում և օրինական ուժ է տալիս առաջին ատյանի դա-

տարանի դատական ակտերին, վկայում է, որ այս պարագայում գործում է երկու դատարանների դատական ակտերի մրցակցության սկզբունքը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի գոյությունն արդարացված է նաև իրավունքի զարգացմանը նպաստելու՝ ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական առաքելությունն իրականացնելու տեսանկյունից:

Եռաստիճան դատական համակարգի առկայությունը բարձրացնում է հասարակության մեջ դատական իշխանության հեղինակությունը, աջակցում առավելագույնս պաշտպանելու քաղաքացիների իրավունքներն ու շահերը, վերադաս դատական ատյանին հնարավորություն է տալիս ապահովել ստորադաս դատարանի դատական ակտերի ստուգումը, ձևավորել միասնական դատական պրակտիկա, էլ չենք խոսում վերաքննիչ դատարանի հոգեբանական նշանակության մասին: Այն միտքը, որ առաջին ատյանի դատարանի որոշումը վերջնական չէ և այն կարող է վերանայվել ավելի փորձառու և բանիմաց դատավորների կողմից, բարենպաստ և հանգստացնող գործոն է հանդիսանում ինչպես կողմերի, այնպես էլ ամբողջ հասարակության համար՝ բարձրացնելով վերջինիս կայունությունը:

Այսքանով հանդերձ, ներկայումս հնչում են կարծիքներ վերաքննիչ դատարանի ավելորդ լինելու մասին, առանց խորանալու այդ դատավարական ինստիտուտի էության և նշանակության մեջ և տեղյակ չլինելով ԼՂՀ Սահմանադրությանն ու միջազգային իրավունքի մի շարք փաստաթղթերի: Քննարկման այլ հարց է, թե վերաքննության որ տեսակն է արդյունավետ, առավելապես հասարակությանը մոտ և ավելի քիչ բացասական տարրեր պարունակում, դրանցից որը և ինչպիսի սահմաններում է կիրառելի Արցախի Չանրապետությունում:

*«Ազատ Արցախ» ՀԹ, 23 հունիսի 2011թ.*



**ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻՆ ՇՆՈՐՀՎԱԾ  
«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»**

Բոլշևիկյան Ռուսաստանի, բոլշևիզմ խաղացող քեմալական Թուրքիայի և խորհրդային Ադրբեջանի քաղաքական սիրախաղերի արդյունքում ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի հակաօրինական և նորմատիվ ակտի ուժ չունեցող՝ 1921թ. հուլիսի 5-ի կուսակցական որոշմամբ՝ Լեռնային Ղարաբաղը մտցվեց խորհրդային Ադրբեջանի սահմանների մեջ: Նրան տրամադրվեց մարզային ինքնավարություն:

Հայ ժողովրդի ղարաբաղյան հատվածի համար ստորացուցիչ և նվաստացուցիչ այդ որոշմամբ խորհրդային Ադրբեջանը պետք է որոշեր մարզի սահմանները և ինքնավարության շրջանակները: Սակայն Ադրբեջանը չէր շտապում: Եվ այդ երկրի կուսակցական ու պետական մարմինների ղեկավարներն այնքան էին չափ ու սահմանն անցել, որ նույնիսկ դիմել են Կովկասյան բյուրոյին՝ Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը վերանայելու համար:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ ունենալու հարցը բազմիցս քննարկվել է խորհրդային Ադրբեջանի կուսակցական և պետական մարմիններում: Վերջնական արդյունքում Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի նախագահությունը 1924թ. հուլիսի 1-ին ստեղծեց հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի մասին կանոնադրությունը մշակելու համար: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց խորհրդային Ադրբեջանի ներքին գործերի ժողկոմ և Արտակարգ հանձնաժողովի նախագահ Մ. Բաղիրովը, անդամներ՝ Թ.Ալիևը և մարզի գործադիր իշխանության ղեկավար Ա.Կարազյոզյանը: Հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթին տրվեց «Ինքնավար Մարզի Սահմանադրության նախագիծ» հորջորջումը և այն քննարկվեց Ադրբեջանի ԿԿ նախագահության 1924թ. հուլիսի 3-ին կայացած նիստում ու արժանացավ հավանության: Միաժամանակ Ադրբեջանի Կենտգործկոմի նախագահությանն առաջարկվեց Սահմանադրության նախագիծը շտապ բերել «խորհրդային տեսքի» ու հրապարակել թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Սահմանադրությունը

հայերեն և արաբատառ թուրքերեն լեզուներով առաջին անգամ հրապարակվեց Բաքվում հայերեն լեզվով լույս տեսնող՝ Ադրկոմկուսի ԿԿ օրգան «Կոմունիստ» թերթի 1924 թվականի հուլիսի 6-ի համարում: Նույն օրը Բաքվում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Բակինսկի ռաբոչի» թերթը շնորհավորեց Ղարաբաղի գյուղացիությանը՝ «հուլիսի 6-ի» կապակցությամբ: Սահմանադրությունը «Խորհրդային Ղարաբաղ» թերթում արտատպվեց 1924 թվականի հուլիսի 24-ի համարում:

Խորհրդային իրավագիտությունը Սահմանադրության տակ նկատի էր ունենում պետության հիմնական օրենքը, որն արտահայտում էր տիրապետող դասակարգի շահերը և հասարակության մեջ դասակարգային ուժերի հարաբերակցությունը:

Ժամանակակից գիտությունը Սահմանադրությունը բնորոշում է ոչ միայն որպես իրավական, այլև՝ քաղաքական և գաղափարախոսական փաստաթուղթ, որը, օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով, կարգավորում է պետական և հասարակական կյանքի հիմունքները, անձի իրավական կարգավիճակը, ամրապնդում հասարակության մեջ ուժերի հարաբերակցությունը, նրանց պայքարը և համագործակցությունն ու խտացված ձևով արտացոլում հասարակության մեջ տիրապետող կամ ղեկավար ուժերի սոցիալ-քաղաքական ուսմունքը և աշխարհայացքը:

Իհարկե, սահմանադրական մշակույթի տեսակետից Արցախի համար Բաքվում գրված «Սահմանադրությունը» հեռու էր Սահմանադրություն կոչվելուց, բայց, քանի որ այն պետք է ամրագրեր ինքնավար մարզի՝ որպես ԽՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական ազգային պետականության ձևերից մեկի, իրավական կարգավիճակը, ուստի մոտ 9 տասնամյակների հեռավորությունից ավելորդ չէ մի քանի խոսքով անդրադառնալ մեր երկրամասին «շնորհված» փաստաթղթի էությանը և բնորոշ գծերին:

Սահմանադրությունը կազմված էր նախաբանից (պրեամբուլա) և 4 բաժնից՝ 1. Ընդհանուր հիմունքներ, 2. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը, 3. Կենտրոնական իշխանության կազմակերպումը, 4. Իշխանության կազմակերպումը տեղերում:

Նախաբանում նշվում էր, որ «Չամաձայն Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության» որոշման, ընդամենի հայ-

տարարվում է «Ինքնավար Շրջան Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը»:

Այստեղ զավեշտալին այն է, որ Սահմանադրության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղին տրվում էր ոչ թե «մարզի», այլ «շրջանի» կարգավիճակ, և որ Սահմանադրությունը հայտարարվում է Ադրկենտգործկոմի նախագահության որոշման համաձայն: Աիս այսպես է Ադրկենտգործկոմը կատարում Ադրկոմկուսի Կենտկոմի ցուցումը՝ «շտապ խորհրդային տեսքի» բերելով ինքնավար մարզի սահմանադրության նախագիծը: Վարչաքաղաքական ինքնավարության ենթատեքստում խորհրդային Միության պետական շինարարությանը խորթ է եղել «ինքնավար շրջան» ազգային պետականության ձևը, նույնիսկ նրա ստորին օղակը կոչվում էր «ինքնավար օկրուգ»: Սակայն Բաքվի իշխանությունները, անտեսելով ինչպես Կովկասյան բյուրոյի, այնպես էլ իրենց կողմից ընդունված որոշումները, հենց սկզբից էլ հաստատական ու միակամ էին ինքնավար մարզը լուծարելու հարցում:

Սահմանադրության առաջին բաժինը բաղկացած է երեք հոդվածներից: Առաջին հոդվածն արձանագրում է, որ Ինքնավար Լեռնային Ղարաբաղը կազմում է խորհրդային Ադրբեջանի «մի բաղկացուցիչ մասը», իսկ համաձայն երկրորդ հոդվածի՝ «ամբողջ գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը դպրոցներում Ինքնավար Լեռնային Ղարաբաղում կատարվում է մայրենի լեզվով»: Շատ առեղծվածային է «մայրենի լեզու» հասկացությունը: Գոնե ինքնավար մարզ կազմավորելու մասին Ադրկենտգործկոմի դեկրետում նշված էին «հայ-մուսուլմանական», «հայերի և մուսուլմանների», «Լեռնային Ղարաբաղի հայկական մաս» բառակապակցությունները, որոնցից հասկանալի է, որ բառակապակցության առաջին մասը վերաբերում է հազարամյակների խորքից եկող երկրի բնիկ տերերին՝ հայ էթնոսին, իսկ մուսուլման բառը կոնկրետ ազգ կամ ազգություն չի ենթադրում, այլ միայն նշանակում է իսլամի հետևորդներ: Միգուցե Կենտգործկոմը մոռացության էր տվել իր իսկ կողմից 1923 թվականի հուլիսի 7-ին ընդունված «Յիմնարկությունների ազգայնացման մասին» որոշումը, համաձայն որի՝ խորհրդային Ադրբեջանի հիմնարկ-ձեռնարկություններում և կազմակերպություններում գործավարությունը պետք է տարվեր թուրքերեն, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ հայերեն լեզվով: Երրորդ հոդվածն ամրագրում էր, որ Լեռնա-

յին Ղարաբաղը մասնակցում է Խորհրդային Ադրբեջանի «Յանրապետական բոլոր մարմիններում համեմատական չափի սկզբունքով»: Իրավական տեսակետից սա մեծ կռվան է և նշանակում է, որ Խորհրդային Ադրբեջանի ստեղծման պահից պետական իշխանության կրողներից մեկն էլ Արցախի հայ ժողովուրդն է հանդիսացել:

Սահմանադրության երկրորդ բաժնից նկատելի է, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը ստեղծվում էր Շուշիի, Ջիվանշիրի, Կարյագինոյի և Ղուբաթլի գավառների՝ Սահմանադրության մեջ նշված բնակավայրերից: Վոյունտարիզմի տեսակետից իր նախադեպը չունեցող այս ահավոր սահմանադրական նորմը հիմք հանդիսացավ, որպեսզի Բաքվի իշխանությունները որոշեն մարզի սահմանները: Եվ որոշեցին այնպես, որ 11,5 հազար քառ. կմ տարածք ունեցող պատմական Արցախի նահանգից թողնվեց 4,4 հազար քառ. կմ տարածք: Մարզից կտրեցին դաշտային բերրի հողերը, Յյուսիսային Արցախը՝ շփման ոչ մի կետ չթողնելով Մայր Ղայաստանի հետ: Յատկանշական է, որ համարյա բոլոր պատմական հայկական բնակավայրերը Սահմանադրության մեջ նշվել են թուրքացված բառերով կամ էլ հարմարեցվել են թուրքական լեզվի հնչյուններին: Օրինակ, Խանքքը դարձրել են Սարի-Քեշիշ, Քռասնին՝ Դաղդաղան, Վաղուհասը՝ Ղուզլու, Ննգին՝ Ջամեաթ, Քյուրաթաղը՝ Դուրուգչի և այլն: Փաստորեն, բնակավայրերն այնպես են անվանափոխված, որպեսզի Ղարաբաղին անծանոթ մարդու մոտ տպավորություն ստեղծվի, որ դրանք բոլորն էլ թուրքական ծագում ունեն: Ակամայից հիշում ես Վ.Յյուզոյի «այստեղով թուրքն է անցել» իմաստուն խոսքերը:

Սահմանադրության երրորդ և չորրորդ բաժինները նվիրված են կենտրոնական և տեղական իշխանության կազմակերպման, կառուցվածքի և լիազորությունների հարցերին: Նշված բաժինները փաստում են, որ Լեռնային Ղարաբաղում իշխանությունը պատկանում է Խորհուրդների համագումարին, Կենտրոնական գործադիր կոմիտեին և տեղական խորհուրդներին: Երկրամասում իշխանության բարձրագույն մարմին էր հանդիսանում Խորհուրդների համագումարը, որը հրավիրվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Յամագումարների միջև ընկած ժամանակաշրջանում իշխանությունը լիովին անցնում էր Խորհուրդների Կենտրոնական գործադիր կոմիտեին: Այնուհետև նշվում էր, որ իշխանության այդ երկու մարմինների որոշումները կյանքի կոչելու

համար Կենտգործկոմն ընտրում էր Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ օժտելով Կենտգործկոմի նախագահության իրավունքներով: Կենտգործկոմի նախագահը միաժամանակ հանդիսանում էր նաև Ժողկոմխորհի նախագահը:

Ինքնավար շրջանի կառավարության առաջին բաժինները վարելու համար Սահմանադրությամբ սահմանվել էին 10 ժողովրդական կոմիսարիատներ՝ արդարադատության, լուսավորության, աշխատանքի, ներքին գործերի և այլն: Հատկանշական է, որ ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, առողջապահության և երկրագործության կոմիսարիատները նշանակվել են Ղարաբաղի Կենտգործկոմի կողմից և պատասխանատու են եղել նրա առաջ, իսկ զինվորական կոմիսարը, աշխատանքի, ֆինանսների և բանվորագյուղացիական տեսչության լիազորները նշանակվել են Խորհրդային Ադրբեջանի համապատասխան կոմիսարիատների կամ լիազորների կողմից՝ Ղարաբաղի Ժողկոմխորհի համաձայնությամբ:

Սահմանադրության մեջ որևէ խոսք չկա դատարանների և դատախազության մասին, այնինչ առանձին հոդվածով շեշտվում էր, որ պայքարը հակահեղափոխության դեմ մնում է Խորհրդային Ադրբեջանի Չեկայի մարմինների իրավասության ներքո: Սահմանադրությունից դուրս է մնացել նաև «Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղի» կազմավորելու մասին Ադրկենտգործկոմի 1923 թվականի հուլիսի 7-ի հռչակագրի այն դրույթը, որի համաձայն՝ Ինքնավար Մարզի «բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինությունը պահպանվում է ներկայիս տերերի ձեռքում»:

Սահմանադրության չորրորդ բաժնում նշվում էր, որ տեղական իշխանության մարմիններ են համարվում բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների ներկայացուցիչների գյուղական և քաղաքային խորհուրդները և նրանցից ընտրված գործադիր կոմիտեները, գավառական ու գյուղական համագումարները և նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեներն ու նրանց նախագահությունները:

Լեռնային Ղարաբաղի «Սահմանադրությունը» «Բակինսկի ռաբոչի» թերթը տպագրեց իր 1924 թվականի նոյեմբերի 26-ի համարում, որտեղ այդ փաստաթուղթը կոչվում էր ոչ թե «Սահմանադրություն», այլ «Կանոնադրություն», իսկ «Ինքնավար շրջան» բառերը փոխարինվել էին

«Ինքնավար մարզ» բառերով: Չնայած դրան, մարզի ղեկավարներն իրենց որոշումներում և գրագրություններում օգտագործել են «Սահմանադրություն» բառը:

Այսպես, Մարզի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի նախագահ Ա.Կարապյոզյանը 1925 թվականին Ադրկոմկուսի ԿԿ քարտուղար Ս.Կիրովին հասցեագրված նամակում Նախիջևանում Գլխավոր դատարան ստեղծելու կապակցությամբ նպատակահարմար էր համարում Ղարաբաղում ևս ստեղծել նման դատարան՝ հիմնավորելով, որ ինքնավար մարզի Սահմանադրությունն իր բովանդակությամբ ոչնչով չի զիջում Նախիջևանի երկրամասի Սահմանադրությանը:

Պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ գաղութատեր երկրները, չկարողանալով պահպանել տիրապետությունը գաղութների վրա և իրենց գայլային դիմակը քողարկելու նպատակով գաղութների ժողովուրդների համար սահմանադրություններ են մշակել և նվիրել նրանց: Նման սահմանադրությունը կոչվում է «շնորհված» սահմանադրություն: Սակայն հորհրդային Միության կազմավորման արշալույսին Ադրբեջանը մի քայլ առաջ գնաց գաղութատեր երկրներից: Նա 1929 թվականին վերացրեց իր իսկ կողմից Արցախին շնորհված «Սահմանադրությունը»՝ Մարզի մասին նոր կանոնադրության նախագիծ մշակելու պատրվակով և բացահայտ ու անսքող գաղութականացման քաղաքականություն սկսեց հայ ժողովրդի ղարաբաղյան հատվածի դեմ: Արդյունքն եղավ այն, ինչ պետք է լիներ: Երկրամասի ազատասեր ժողովուրդը կարողացավ բռնցքվել և ազգային-ազատագրական պայքարի միջոցով թոթափել գաղութային լուծը, ինքնորոշման իրավունքի հիման վրա հռչակել իր պետական անկախությունն ու Արցախի ժողովրդի անունից ընդունել և հռչակել իր Մայր օրենքը:

*Դատական իշխանություն, «ՀՀ դատավորների միություն» հ/կ,  
4/141, 2011թ., ապրիլ*

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՊԱՅՈՎ ԽԱՎԵՐԻ ՀԱՄԱՐ

**Ի՞նչ է արդարադատության մատչելիությունը: Արցախի բնակչության անապահով խավերի համար որքանո՞վ է այն բավարար: Որքանո՞վ է բարձր պետական տուրքը: Կարելի՞ է նրանից ազատվել կամ՝ կա՞ն որոշակի արտոնություններ: Որո՞նք են դրանք: Ապահովվա՞ծ են, արդյոք, բնակչության անապահով խավերը պետական բյուջեի հաշվին փաստաբանական գործունեությունից օգտվելու հնարավորությամբ: Հանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն մատուցող ինչպիսի՞ ծառայություններ կան:**

Արդարադատության մատչելիության գործառնական սկզբունքը նշանակում է, որ ցանկացած շահագրգիռ անձ իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար և դատավարությունում պաշտպանել դրանք: Արդարադատության մատչելիությունը ենթադրում է շահագրգիռ անձի հնարավորության առկայություն՝ հարուցելու դատական վարույթը և իր իրավունքների ու շահերի պաշտպանության համար օգտվելու դատավարական բոլոր միջոցներից: Նման հնարավորությունը կարող են արգելակել մի շարք գործոններ, մասնավորապես՝ տվյալ երկրի ոչ սոցիալական բնույթը, սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակը, օրենսդրության թերի կամ ոչ կատարյալ լինելը, նորմատիվ ակտերի բարդությունը, դատական իշխանության ոչ լիարժեք և ոչ անկախ կարգավիճակը, դատական որոշումների կատարման անարդյունավետությունը, ցածր իրավական մշակույթը, կոռուպցիան և այլն:

ԼՂՀ Սահմանադրությունը, ամրագրելով արդարադատությանը վերաբերող կարևոր սկզբունքները, հռչակում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, դատարաններն

անկախ են, և արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է:

Դատարան դիմելու կարգը, պայմանները, ձևերը և բովանդակությունը կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից: Դատարաններում քննվող բոլոր գործերով պետական տուրքը գանձվում է պետական բյուջե: Ցանկացած քաղաքացի, հայցադիմումով մտնելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, հայցադիմումին պետք է կցի սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելը հավաստող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Պետական տուրք հասկացությունը, տուրքերի տեսակները և դրույքաչափերը, տուրք վճարող անձանց շրջանակները, տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանված են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով:

Ըստ վերոնշյալ օրենքի՝ բազային տուրքի չափը հավասար է 1000 դրամի: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է առաջին ատյանի դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու բողոքների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը: Այսպես՝ գույքային բնույթի պահանջով պետական տուրքը կազմում է հայցագնի 2 տոկոսի չափը, բայց բազային տուրքի 150 տոկոսից ոչ պակաս, ոչ գույքային բնույթի պահանջով՝ բազային տուրքի քսանապատիկի չափը:

Իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու գործերով դիմումի համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի 250-ապատիկի չա-



փը, իսկ քաղաքացիներին սնանկ ճանաչելու՝ բազային տուրքի 50-ապատիկի չափը:

Հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների՝ անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի չափը, այլ դիմումների համար՝ բազային տուրքի եռապատիկի չափը:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի կրկնապատիկի չափը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար ոչ գույքային պահանջի գործերով պետական տուրքի չափը կազմում է բազային տուրքի 10-ապատիկի չափը, գույքային պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ՝ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա՝ առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով: «Պետական տուրքի մասին» օրենքը սահմանում է նաև պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները և այն անձանց շրջանակները, որոնք դատարաններում ազատվում են պետական տուրքի վճարումից: Մասնավորապես, պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեժերի վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով, դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով, դիմողները՝ ընտրե-

լու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով, դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով, փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց խախտված բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բողոքներով:

Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում: (Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել ԼՂՀ նախագահը, ԼՂՀ կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները, ԼՂՀ արտաքին գործերի նախարարը, դեսպանը կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում: Դատարանը կամ դատավորը, ելնելով քաղաքացու գույքային դրությունից, իրավունք ունի նրան ազատել պետական տուրքի վճարումից):

Պետական տուրքը վճարվում է հայկական դրամով: Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ հանրապետության քաղաքացիները դատարանում իրենց գործերը վարում են մեծամասամբ ներկայացուցիչների (փաստաբանների) միջոցով, իսկ քաղաքացիների մի որոշ հատված՝ անձամբ: Դրանք հիմնականում բնակչության անապահով խավերը, գործազուրկները, թոշակառուները և հաշմանդամներն են, որոնք, ֆինանսական սուղ պայմաններից ելնելով, սահմանափակ հնարավորություն ունեն փաստաբանների ծառայություններից օգտվելու համար: Բնակչության անապահով խավերի համար արդարադատության մատչելիությունն առաջին հերթին կախված է այդ խավերի սոցիալական ապահովվածությունից և պաշտպանվածությունից:

Այժմ տեսնենք, թե այդ հանգամանքը որքանով է կարգավորված ԼՂՀ օրենսդրությամբ:

Ներկայում հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 32.500 դրամ: Հիշեցնենք, որ 2006թ. այն կազմում էր 15000 դրամ:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2004թ. հունվարի 3-ի թիվ 1 որոշման՝ հանրապետությունում հիմնական կենսաթոշակի չափը կազմում է 10.500 դրամ, իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 դրամ: ԼՂՀ կառավարության 2009թ. հունվարի 20-ի թիվ 15 որոշմամբ

առանձին սահմանված է այն անձանց շրջանակը, ովքեր պետական նպաստի իրավունք ունեն: Պետական նպաստի բազային չափը կազմում է 6.000 դրամ: Համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ԼՂՀ օրենքի՝ գործազրկության նպաստի չափը կազմում է 19.500 դրամ:

ԼՂՀ սոցապահովության նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժնի տվյալների համաձայն՝ 2011թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցված են 3576 աշխատանք փնտրողներ (գործազուրկներ):

Ըստ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցագինը որոշվում է դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ բռնագանձվող գումարի չափից, իսկ գույքը պահանջելու հայցերով՝ գույքի շուկայական գնից: Հայցագնի մեջ մտնում են նաև հայցադիմումում նշված տուժանքի (տուգանքի, տույժի) գումարները: Մի քանի ինքնուրույն պահանջներից կազմված հայցագինը որոշվում է բոլոր պահանջների ընդհանուր գումարով:

ԼՂՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը սահմանում են, որ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է:

Այդ առումով՝ եթե հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշման մեջ նշված ժամկետում կողմը միջնորդություն է ներկայացնում պետական տուրքի վճարումից ազատելու կամ նրա չափը նվազեցնելու, կամ էլ նրա վճարումը հետաձգելու մասին, ապա կոնկրետ հանգամանքների առկայության դեպքում դատարանը որոշում է կայացնում պետական տուրքի մասով հայցվորի միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը կամ վերաքննիչ կամ վճարեկ բողոքը համապատասխան դատարանի վարույթ ընդունելու մասին:

Քաղաքացիական գործերով հայցադիմումը վերադարձնելու մասին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում կողմը կարող է այն բողոքարկել

ԼՂՀ վերաքննիչ դատարան, իսկ վարչական գործերով՝ ԼՂՀ Գերագույն դատարան: Տվյալ դեպքում օրինական ուժի մեջ չմտած դատական որոշումների բողոքարկումը կարևոր դեր է խաղում արդարադատության մատչելիության համար, քանի որ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը հնարավորություն չեն տալիս արդարադատության մատչելիությունը լրիվ իրականացնելու համար:

ԼՂՀ Սահմանադրությունը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք: Դատապաշտպանի ծառայության համար վճարման բավարար միջոցներ չունեցող մեղադրյալին, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում անձին իրավաբանական օգնություն է ցույց տրվում պետական բյուջեի միջոցների հաշվին:

«Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքը սահմանում է ԼՂՀ-ում փաստաբանական գործունեություն իրականացնելու և փաստաբանների մասնագիտական միավորում կազմակերպելու հիմունքները և այդ գործունեության իրականացման կարգը: Փաստաբանական գործունեությունը վճարովի ծառայություն է հանդիսանում: Փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի ու վստահորդի միջև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով:

Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է ԼՂՀ փաստաբանների պալատը՝ պետության հաշվին՝ փաստաբանների պալատի կազմում գործող հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Վերջինիս ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հանրային պաշտպանի գրասենյակում, որպես հանրային պաշտպաններ, ընդգրկված են 14 փաստաբան: Հանրապետության բոլոր շրջաններն ապահովված են հանրային պաշտպաններով:

Բացի հանրային պաշտպանի գրասենյակից, հանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն ցույց տվող այլ ծառայություններ չկան:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի վարույթում 2010թ. ընթացքում քաղաքացիական գործերով մուտքագրվել են 114 վերաքննիչ բողոք, նույն ժամանակահատվածում պետական տուրքը չվճարելու պատճառով 9 բողոք հետ է վերադարձվել, որից 6-ը վերստին ներկայացվել և վարույթ է ընդունվել:

Ինչպես ցույց է տալիս անցած տարիների և այս տարվա 8 ամիսների կատարած աշխատանքի վերլուծությունը, վերաքննիչ դատարանի դատական պրակտիկայում առկա են պետական տուրքը չվճարելու պատճառով վերաքննիչ բողոքները վերադարձնելու եզակի դեպքեր, բայց դրանք դատարանի կողմից երբեք չեն օգտագործվել որպես գործիք բնակչության անապահով խավերի դեմ արհեստական պատնեշ ստեղծելու, և դատարանը բոլոր դեպքերում մատչելի է բնակչության բոլոր խավերի համար:

*«Ազատ Արցախ» ՀԹ, 8 սեպտեմբերի 2011թ.*

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾՈՒՅԻՆ

Ներկայում արդարադատության բնագավառում ծառայող յուրաքանչյուր իրավաբանի աշխատասենյակում կարելի է տեսնել սլացիկ կազմվածքով մի կնոջ բրոնզաձուլ արձանիկ, աջ ձեռքին՝ երկսայրի սուր, իսկ ձախ ձեռքին՝ կշեռք: Ո՞վ է նա:

Հունական աստվածների դիցարանում Ֆեմիդան, Թեմիդան, Թեմիսը (հունարեն՝ «Themis» - կանոն, օրենք բառից) համարվում է արդարադատության, իրավունքի, իրավակարգի և կանխագուշակումների աստվածուհին: Ֆեմիդան Ուրանի և Գեայի աղջիկն է եղել, Ջևսի օրինական 2-րդ կինը: Ուրանը համարվել է երկնքի աստվածը, Գեան՝ երկրի աստվածուհին, Ջևսը՝ աստվածների և մարդկանց հայրը: Մինչև աստվածուհի դառնալը, Ֆեմիդան մարմնավորում էր «վարքի» ճիշտ նորմերը: Հետագայում, դադարելով Ջևսի կինը լինելուց, նա դառնում է Գերագույն աստծո խորհրդատուն և հաղորդում մարդկանց Ջևսի պատգամներն ու հրամանները:

Հունական աստվածների դիցարանում Ֆեմիդան հիմնականում պատկերված է նստած վիճակում, որի անկապտելի հատկանիշներն են հանդիսանում հանդերձանքը (պատմուճանը), ձախ ձեռքին՝ կշեռքը, իսկ աջ ձեռքին՝ առատության եղջյուրը:

Հանդերձանքը (պատմուճանը) հանդիսավոր, ծիսական, արարողական հագուստ է, որը նախատեսված է որոշակի գործողություններ, տվյալ պարագայում՝ արդարադատություն իրականացնելու համար: ԼՂՀ Դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստին դատավորը մասնակցում է սահմանված ձևի պատմուճանով: Պատմուճանի նկարագրությունը հաստատում է Դատարանների նախագահների խորհուրդը: Դատավորը, հագնելով պատմուճանը, նշանակում է, որ նա հոգեպես անցում է կատարում իրականացնելու կոնկրետ դատական գործողություններ՝ քաղաքացիական հագուստը թողնելով աշխարհիկ գործերի համար:

Կշեռքը չափի և արդարության հնագույն խորհրդանիշ է: Արդարությունը և արդարադատության խստությունը ենթադրում են արարքների ճիշտ չափակշռում: Հին եգիպտացիների մոտ ճշմարտությունը, արդար-

րությունն ու արդարադատությունը մարմնավորում էին Մաստ աստվածուհու միջոցով, որը նույնն է, ինչը, օրինակ, «Դաո»-ն՝ հին չինական դիցաբանությունում, «Դիկե»-ն՝ հին հույների մոտ և այլն: Մաստը Ռա աստծո աղջիկն էր: Նա մեծ դեր է խաղացել «հանդերձյալ դատարանում» արդարադատության իրականացման գործում: Որպեսզի որոշվեր մահացած մարդու արդարացիության աստիճանը՝ կշեռքի մեկ նժարին դնում էին հանգուցյալի սիրտը, իսկ մյուսին՝ Մաստի արձանիկը: Եվ, եթե հավասարակշռությունն ակնհայտ էր դառնում, նշանակում էր՝ հանգուցյալն արդարացի, ճշմարիտ մարդ էր: Ոչ միայն եգիպտացիների, այլև բոլոր հնագույն ժողովուրդների մոտ ընդունված է եղել, որ անդրշիրիմյան աշխարհի տիրակալները կշռել են մարդկանց բարի և չար արարքներն ու նրանց հետմահու ճակատագիրը կախված էր, թե այդ արարքներից ո՞ր մեկը կշեռքի նժարն ավելի ծանր կդարձնի: Կշեռքն աստվածուհու ձախ ձեռքին գտնվելու հանգամանքը ենթադրում է, որ մարդու մարմնի ձախ կողմն ավելի ընկալունակ է, քան՝ աջը:

Ըստ հունական դիցաբանության, երբ Ջևսը տապալում է իր հորը՝ Քրոնոսին, և աշխարհի տիրակալությունը վերցնում իր ձեռքը, մարդկանց նվերներ է բաժանում ճակատագրի, երջանկության և բարօրության աստվածուհի Տիթեն Ամալթեա աստվածային այծեղջյուրից: Այդ նույն այծի կաթով էր սնվում Ջևսը մանուկ ժամանակ՝ ստանալով անմահություն: Այս ավանդությունից է առաջացել «Առատության եղջյուր» արտահայտությունը, որը հին հունական դիցաբանության մեջ բարեկեցության, առատության և հարստության խորհրդանիշ է հանդիսացել, ինչից ելնելով, հին հույները համարել են, որ առանց օրինականության և իրավակարգի, անիմաստ է մտածել առատության և նյութական բարեկեցության մասին: Ներկայում առատության եղջյուրը պատկերված է Կոլումբիայի, Պանամայի և Պերուի պետական զինանշանների վրա:

Հռոմեական կայսրության դիցարանի մի շարք աստվածներ, այդ թվում, արդարադատության աստվածուհին՝ Ֆեմիդան, փոխառնված են հին հունական դիցարանից և հարմարեցված կայսրության պայմաններին: Հռոմեացիները Ֆեմիդային կոչեցին, «Юстиция» (լատիներեն՝ justitie, ռուսերեն՝ правосудие, հայերեն՝ արդարադատություն) և, որպես աստվածուհու անկապտելի հատկանիշներ, նրա աջ ձեռքին գտնվող առատության եղջյուրի փոխարեն, դրել են երկսայրի սուր և պատ-

կերել փակ աչքերով (ժապավենով աչքերը փակած):

Սուրը հոգևոր ուժի, գործի արդարության խորհրդանիշ է: Արդարադատության աստվածուհու ձեռքի սուրը երկասյրի է, քանի որ օրենքը ոչ միայն պատժում է, այլև՝ զգուշացնում-կանխարգելում: Աջ ձեռքը ևս ուժի, արդար գործի խորհրդանիշ է: Եթե սրի ծայրը բարձրացված է դեպի վեր, ուրեմն ցույց է տալիս երկնայինի կամքը, բարձրագույն արդարությունը, ինչպես նաև մշտապես պատրաստ լինելը՝ կիրառելու այն: Եթե սրի ծայրը իջեցված է, ներդաշնակության առումով մարմինը շահում է, ավելի հեշտ ասած՝ լավ է ընկալվում: Իջեցված սրի խորհրդանշական իմաստն այն է, որ պայքարն ավարտվել է հաղթանակով, այլ խոսքով՝ վերադարձ է կատարվում պատերազմից խաղաղ կյանք:

Ֆեմիդան պատկերված է ժապավենով աչքերը փակած վիճակում: Դա բացատրվում է նրանով, որ փակ աչքերն անաչառություն, անկողմնակալություն են խորհրդանշում: Արդարադատությունը չպետք է տարբերություն դնի մարդկանց միջև, քանզի օրենքի առաջ բոլորը հավասար են: Այդ իմաստով՝ դատավորը կույր է, նա պատշաճը պետք է տա միայն իրավունքին:

Չայոց հեթանոսական աստվածների դիցարանում արդարադատության աստվածը Միհրն էր, ում համարել են նաև որպես լույսի և ջերմության աստված: Նրա մեղանը գտնվել է Արևմտյան Չայաստանի Դերջան գավառի Բագառիձ գյուղում: Միհրը պատկերված էր՝ մի ձեռքին դաշույն (սայր, դանակ), մյուսին՝ ջահ, որը խորհրդանշել է չարի պատժելիությունը և լույսի հավերժությունը: Միհրը պայքարել է ծշմարտության անունից, նրան խոնարհվել են որպես Արևի Աստծո և բարձրագույն դատավորի: Միհրը ձմեռային արևադարձին՝ դեկտեմբերի 22-ի լույս 23-ի գիշերը, փառաբանվել է տիեզերական արդարության և իրավունքի վերահաստատման ակնկալիքով: Չայաստանում քրիստոնեության տարածման շրջանում ոչնչացվել են հեթանոս աստվածներին նվիրված արձանները, քանդակները և մեհենական արժեքները:

Չեթանոսություն դավանող և նժդեհական գաղափարների կրողներ հայ արիների ցեղապաշտական կուսակցության (ՅԱՅԿ) հայ-արիական միաբանությունը դեկտեմբերի 22-ը նշում է որպես հայոց արդարադատության աստված Միհրի ծննդյան օր:

Այսպիսով, ներկայում համարյա բոլոր ժողովուրդների կողմից ըն-



դունված արդարադատության աստվածուհու՝ Ֆեմիդայի, չափորոշիչներն են կշեռքը, սուրը, պատմուճանը և աչքերը փակած ժապավենը: Առաջին երկուսն այնքան հին են, որ սխալ կլինի դրանք վերագրել հին հույներին կամ հռոմեացիներին:

Մի շարք երկրներ Ֆեմիդային բնորոշ չորս հատկանիշների հարցում շեղումներ են կատարում ու յուրովի մեկնաբանում: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում Ֆեմիդայի աչքերը բաց են պատկերված, այն պատճառաբանությամբ, որ նա ամեն ինչ տեսնում և լսում է. ո՛չ քրիստոնեական, ո՛չ իսլամական, ո՛չ բուդդայական և ո՛չ էլ հրեական կրոնները, կնոջից չեն պահանջում փակել աչքերը: Մազերը կարելի է ծածկել, դեմքը՝ որոշ դեպքերում, բայց աչքերը՝ երբեք: Բելառուսիայում Ֆեմիդայի աչքերը բաց են, սուրը՝ իջեցված: Ուկրաինայում նրա աչքերը փակ են, սուրը՝ իջեցված: Թուրքմենստանում արդարադատության աստվածուհին պատկերված է երկրի նախկին նախագահ Սաֆարմուրադ Նիյազովի (Թուրքմենբաշի) մոր դեմքով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 352 որոշմամբ հաստատված պատվավոր կոչումներից մեկն էլ «ԼՂՀ վաստակավոր իրավաբան»-ի կոչումն է: Վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում է շնորհվում այդ բնագավառում առնվազն 15 տարի աշխատած իրավաբաններին՝ իրավագիտության և իրավաբանության զարգացման, օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի և բացառիկ մասնագիտական կարողությունների դրսևորման համար: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի հրամանագրով նման կոչման արժանացած անձին հանձնվում է «ԼՂՀ վաստակավոր իրավաբան» կրծքանշան՝ պատրաստված բրոնզափառ պղնձից: Կրծքանշանի միջին մասում անփայլ մակերեսի վրա գետեղված է արդարադատության աստվածուհու ցայտաքանդակը՝ փայլեցված ողորկ մակերեսով: Վերին մասում Արարատ լեռան ռժավորված ուրվագիծն է, ստորին հատվածում պատկերված է դափնու ճյուղ՝ ներքևում՝ «ԼՂՀ վաստակավոր իրավաբան» գրությամբ: Խորհրդանիշից աջ դաջված է լատիներեն «DURA LEX SED LEX» ասացվածքը, որը թարգմանաբար նշանակում է «Խիստ է օրենքը, բայց օրենք է»: Առայսօր ԼՂՀ-ում վաստակավոր իրավաբանի կոչման են արժանացել չորս անձինք:

Չնայած արդարությունն արդարադատության հոմանիշն են համարում, բայց, իրականում, այդ երկու հասկացությունները տարբերվում են միմյանցից:

Արդարադատությունն իրականացնում են մարդիկ՝ իրենց իսկ ստեղծած համապատասխան օրենքների կիրառմամբ, իսկ արդարությունը մարդուն տրված է ի վերուստ՝ որպես ճշմարտության, անկեղծության, անկողմնակալության արտահայտություն: Միևնույն ժամանակ, եթե արդարադատությունն իրավաբանական կատեգորիա է, ապա արդարությունը՝ բարոյական, քաղաքական և իրավական արժեք: Որպես այդպիսին, վերջինս՝ արդարությունը, պատմական հասկացություն է: Պատիժն արդարադատ արդարություն է անարդարության համար:

*«Ազատ Արցախ» ՅԹ, 9 նոյեմբերի 2013թ.*

## ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

2014թ. հունվարի 20-ին լրանում է Լեռնային Ղարաբաղի /ԼՂԻՄ/ մարզային դատարանի ստեղծման 90-ամյակը և նշվում ԼՂՀ դատական համակարգի աշխատողի օրը:

Պատմության դասերը հուշում են, որ իրավունքը և արդարադատությունը մշտապես խորն արմատավորված են եղել Արցախ աշխարհում: Հատկանշական է, որ պատմության քառուղիներում հանդես գալով որպես ինքնուրույն վարչաքաղաքական միավոր, մեր երկրամասում ստեղծվեցին և իրենց կիրարկումն ունեցան հայ իրավական մտքի այնպիսի խոշոր հուշարձաններ, ինչպիսիք են Վաչագան Բարեպաշտ թագավորի Կանոնական Սահմանադրությունը (486թ.), Դավիթ Ալավկա որդու Կանոնական օրինադրությունը (1130թ.) և Մխիթար Գոշի հռչակավոր Դատաստանագիրքը (1184թ.): Այդ է վկայում նաև, որ հայոց հայրապետների գլխավորությամբ պաշտոնական եկեղեցական-ազգային ժողովներից երեքը տեղի է ունեցել Արցախի հինավուրց Պարտավ մայրաքաղաքում, որի Բ ժողովում (768թ.) ընդունված կանոնները կարգավորել են նաև աշխարհիկ հարաբերությունները:

Մինչև ռուսական կայսրության կազմի մեջ մտնելը, Արցախի աշխարհիկ և հոգևոր իշխանություններն ունեցել են իրենց դատն ու դատաստանը: Ռուսաստանի տիրապետության առաջին տարիների պատմական Արցախում (նրա լեռնային և դաշտային հատվածների ընդգրկմամբ) ստեղծվեց մի ընդհանուր ռազմաշրջանային միավոր՝ Ղարաբաղի մարզ՝ Շուշի կենտրոնով, որտեղ մտցվեց կառավարման պարետային ձև: Այդ նպատակով 1822թ. դեկտեմբերին Շուշիում ստեղծվեց մարզային դատարան, որի նախագահը մարզի պարետն էր, դատարանի երկու անդամ ընտրվել է հարուստ խավից, մեկական անդամ՝ հայ և մահմեդական հասարակ բնակչությունից:

Անդրկովկասում վարչա-դատական բարեփոխումների արդյունքում, 1841թ. Շուշիում ստեղծվեց գավառային դատարան, որը կազմված էր դատավորից, պետական ապարատում աշխատող երկու ատենակալից և քաղաքային հարկատու դասից ընտրվող ևս երկու ատենակալից: Սահմանվեց նաև գավառային դատախազի ինստիտուտը, որը հսկողու-

թյուն էր իրականացնում գավառային ոստիկանության և դատարանի վարույթներում գտնվող գործերի նկատմամբ: Յարական Ռուսաստանում 1864թ. իրականացված դատական բարեփոխումների արդյունքում Շուշի քաղաքում ստեղծվեց հաշտարար դատարան: Վերջինս Աղղամ քաղաքում ուներ մեկ հաշտարար տեղամաս: Ի դեպ, Ջաբրայիլի (1901թ.՝ Կարյագինոյի) գավառի հաշտարար դատարանը 1882թ. սկսած տեղակայված էր Չադրուֆում: Վերոնշյալ դատարաններում դատավարությունը տարվել է ռուսերեն լեզվով, և դատավորներն ու ատենակալները ռուս պաշտոնյաներ են եղել: Շուշիի հաշտարար դատարանը գործել է մինչև 1918 թվականը:

Չոկտեմբերյան հեղափոխությունից հետո Շուշի քաղաքում ստեղծված Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանությունը՝ Միջկուսակցական բյուրոն, 1918թ. ապրիլ ամսին վերանվանվեց Կոմիսարների խորհուրդ, որի կողմից 1918թ. հուլիսի 18-ին Շուշիում հրավիրված Ղարաբաղի հայության առաջին համագումարն ընտրեց Ղարաբաղի ժողովրդական կառավարություն: Նույն թվականի օգոստոսի 2-ի նիստում կառավարությունը հիմնեց 4 հաշտարար դատարաններ. Ջրաբերդ-Գյուլիստանում՝ Մեծ շեն գյուղ, Խաչենում՝ Խանքենդի ավան, Վարանդայում՝ Թաղավարդ գյուղ, Դիզակում՝ Չադրուֆ ավան նստավայրերով: Իբրև վերադաս («վճռաջինջ») ատյան, Շուշիում հիմնվեց շրջանային դատարան, իսկ նրան կից՝ հատուկ գործերի քննիչ հանձնաժողով: Կազմվեց նաև զինվորական հեղափոխական տրիբունալ: Սակայն Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը 1918-1920թթ. չհաջողվեց երկրամասում կայուն վարչաձև, դատական համակարգ ստեղծել, քանի որ 1918թ. հոկտեմբերի սկզբին Շուշի քաղաք մտան օսմանյան Թուրքիայի զորքերը և լուծարեցին գոյություն ունեցող վարչական մարմինները:

Դատական մարմիններ ստեղծելու ևս մի փորձ կատարվեց 1920թ. ապրիլի կեսերին, երբ Վարանդայի Թաղավարդ գյուղում զորավար Դրոյի մասնակցությամբ ստեղծվեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն և նախատեսվեց երկրամասում ստեղծել 6 հաշտարար դատարաններ, սակայն քաղաքական իրավիճակը կտրուկ փոփոխվելու հետևանքով որոշումը չիրագործվեց, քանի որ այդ օրերին ռուսական 11-րդ Կարմիր բանակը մտել էր Ադրբեջան, իսկ մայիսի սկզբներին՝ Ղարաբաղ: Դրված էր երկրամասի խորհրդայնացման հարցը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից հակաօրինական, հետևապես՝ նորմատիվ ակտի ուժ չունեցող ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին՝ տրամադրելով մարզային ինքնավարություն: Ինքնավար մարզում Խորհրդային տիպի շրջանային դատարանների կազմավորումը սկսվել է 1923թ. օգոստոսի 15-ին, մարզի երեք շրջաններում՝ Խաչեն-Վարանդայում (Խաչեն-Վարանդայի ժողդատարանն ընդգրկում էր երեք շրջան, ուստի 1924թ. Խաչենը և Շուշին առանձնացվեցին), Ջրաբերդում ու Դիզակում և ավարտվել նույն թվականի դեկտեմբերին: Մարզային դատարանը ստեղծվել է ինքնավար մարզի կենտրոնական գործադիր կոմիտեի (կենտգործկոմ) 1924թ. հունվարի 20-ի որոշմամբ, որի համաձայն՝ այն կազմված էր նախագահությունից և քրեական ու քաղաքացիական գործերով միացյալ կոլեգիայից: Մարզի կենտգործկոմի որոշմամբ նորաստեղծ մարզային դատարանի նախագահ նշանակվեց Իսահակ Բաղդասարովը, որը մինչ այդ զբաղեցնում էր Խաչեն-Վարանդա շրջանների ժողդատավորի, մարզի կենտգործկոմի արդարադատության բաժնի վարիչի և կենտգործկոմի արդարադատության ժողովրդական կոմիսարի պաշտոնները: Փաստորեն ուղիղ 90 տարի առաջ ձևավորվեց Արցախի մարզային դատարանը և, հիմք ընդունելով այդ իրադարձությունը, ԼՂՀ կառավարության 2011թ. հունվարի 14-ի որոշմամբ հանրապետությունում հունվարի 20-ը սահմանվեց որպես դատական համակարգի աշխատողի օր:

ԼՂ ինքնավար մարզում 1925թ. հոկտեմբերին ստեղծվել և մինչև 1927թ. սեպտեմբերը գործել է մարզի Գլխավոր դատարանը, որը, հետագայում լուծարվելով, իր տեղը զիջել է Կարևոր գործերով դատարանին: Վերջինս գործել է մինչև 1930թ. և փոխարինվել է ԱդրեսՅ Գերագույն դատարանի լիազորով: Գլխավոր դատարանը լուծարվելուց հետո մարզային դատարանը հանդես էր գալիս ԱդրեսՅ Գերագույն դատարանի բաժանմունքի կարգավիճակով:

Խորհրդային Ադրբեջանի 1937թ. Սահմանադրության ընդունումից հետո ԱդրեսՅ Գերագույն դատարանի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դատարանի բաժանմունքը վերանվանվեց ԼՂԻՄ մարզային դատարան, որն իր առաջին և վճռաբեկ ատյաններով գործեց մինչև 1992թ.:

Արցախի նորընտիր խորհրդարանի՝ 1992թ. հունվարի 6-ին հրավիրված առաջին նստաշրջանն ընդունեց սահմանադրական օրենք «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության պետական անկախության հիմունքների մասին»: Նորընտիր խորհրդարանի որոշմամբ Լեռնային Ղարաբաղի մարզային դատարանը վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Գերագույն դատարան՝ ժառանգություն ստանալով մի համակարգ, որն իր մեջ կրում էր խորհրդային արդարադատության ողջ դրոշմը՝ դրական և բացասական կողմերով: Փաստորեն նորաստեղծ ԼՂՀ Գերագույն դատարանը մարզային դատարանի իրավահաջորդը հանդիսացավ:

Անկախության տարիներին նոր դատական իշխանության ձևավորումը շատ դժվար ընթացք է ունեցել, սակայն արժանին պետք է մատուցել երկրի ղեկավարությանը, որը նույնիսկ պատերազմի տարիներին պետական շինարարության հիմնահարցերից մեկն էլ դատարանաշինությունը և պատժիչ քաղաքականությունն է համարել: Այդ տարիներին ընդունվեցին ժամանակի պահանջներին համահունչ օրենքներ և այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնցով կարգավորվում էր նաև դատարանների աշխատանքը: Յանրապետության տարածքում մտցվեց ռազմական դրություն, ստեղծվեցին զինվորական դատարան, ռազմադաշտային դատարաններ, սահմանվեցին ԼՂՀ Գերագույն դատարանի կառուցվածքը և կազմը, համակարգվեց դատարանների և իրավապահ մարմինների աշխատանքը:

2006թ. դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ԼՂՀ Սահմանադրության համաձայն՝ Արցախի դատական համակարգը բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից, վերաքննիչ դատարանից և Գերագույն դատարանից, ինչպես նաև օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններից: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Սահմանադրությունից բխող եռաստիճան նոր դատական համակարգի ձևավորումը սկսվեց ԼՂՀ վերաքննիչ դատարանի ստեղծմամբ: Այն սկսեց գործել 2008թ. հուլիսի 1-ից, դադարեցվեց Զաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի գործունեությունը, ԼՂՀ առաջին ատյանի դատարանը վերանվանվեց ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Ստեղծվեց «Լեռնային Ղարաբաղի Յանրա-

պետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկը, որն ապահովում է դատարաններին, դատավորների ընդհանուր ժողովին, դատարանների նախագահների խորհրդին և արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ու քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը:

Ներկայում ԼՂ-ում գործում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի մեկ դատարան՝ դատարանի նախագահի և տասնմեկ դատավորի կազմով, որի կենտրոնական նստավայրը գտնվում է Ստեփանակերտ քաղաքում: Դատարանը նստավայրեր ունի նաև շրջկենտրոններում: ԼՂ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն օժտված է նույն իրավասությամբ և գործառնություններով, ինչ որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները: Միակ տարբերությունը կայանում է նրանում, որ, ԼՂ-ում վարչական դատարան չստեղծվելու պատճառով, ԼՂ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին ընդդատյա են նաև վարչական գործերը:

Ի տարբերություն ՀՀ-ի, ԼՂ-ում գործում է մեկ վերաքննիչ դատարան՝ նախագահի և վեց դատավորի կազմով, որտեղ առաջին ատյանի դատարանի քաղաքացիական, քրեական և վարչական գործերով դատական ակտերի դեմ ներկայացված բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով: ԼՂ վերաքննիչ դատարանի նստավայրը գտնվում է Ստեփանակերտ քաղաքում: ԼՂ բարձրագույն դատական մարմինը Գերագույն դատարանն է, որը, համաձայն երկրի Հիմնական օրենքի, ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը: Գերագույն դատարանի վրա նաև խնդիր է դրված՝ նպաստելու իրավունքի զարգացմանը: Գերագույն դատարանը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ ատյաններից: Գերագույն դատարանի սահմանադրական ատյանը գործում է 2009թ. հունիսի 28-ից:

ԼՂ դատական իշխանության բարձրագույն ինքնակառավարման մարմինը հանրապետության դատավորների ընդհանուր ժողովն է, որի 2009թ. մարտի 13-ին հրավիրված անդրանիկ նիստը, հաստատելով իր Կանոնադրությունը, հինգ տարի ժամկետով ընտրեց արդարադատու-

թյան խորհրդի հինգ դատավոր անդամների: ԼՂՀ դատական իշխանության ինքնակառավարման մյուս մարմինը՝ Դատարանների նախագահների խորհուրդն է, որը սկսեց գործել 2009թ. մարտի 20-ից՝ իր կողմից հաստատված Կանոնակարգի համաձայն:

ԼՂՀ դատական իշխանության կայացման համար կարևոր քայլ հանդիսացավ 2010թ. հունիսի 22-ին ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողովում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորներ» հասարակական կազմակերպության հիմնադրումը և նրա Կանոնադրության հաստատումը: Նոր երևույթ էր «ԼՂՀ դատական իշխանություն» իրավական տեղեկատվական-վերլուծական հանդեսի ծնունդը, որի առաջին համարը լույս տեսավ 2011թ. մայիսին: Ուղիղ մեկ տարի առաջ սկսեց գործել դատական կարգադրիչների ծառայությունը, գործում է ԼՂՀ դատարանների պաշտոնական ինտերնետ կայքէջը /court.nkr.am/:

Այսպիսով՝ ԼՂՀ Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումների օրենսդրական փաթեթը և դատական իշխանությանը վերաբերող բոլոր նորմերը ներկայում լրիվ ծավալով գործում են, որոնք հիմք են տալիս պնդելու, որ Արցախի Հանրապետությունը վճռական և հաստատական է ժողովրդավարության և իրավական պետություն կառուցելու գործընթացում՝ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները համարելով որպես բարձրագույն արժեք:

Եվրոպական մի այսպիսի ճշմարտություն կա. պետք չէ որևէ երկիր շրջել ծայրից ծայր, բավական է ներկա լինել այդ երկրի որևէ գործով դատաքննությանը և պատկերացում կազմել տվյալ երկրի մասին, այսինքն՝ հասկանալ, թե ինչ է կատարվում դատական համակարգում՝ մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորված լինելու տեսակետից:

Ինչպես ցանկացած նորաստեղծ պետություն, այնպես էլ մեր երկիրը, անկախության տարիներին հասարակական և պետական կյանքի տարբեր ոլորտներում բարեփոխումների ոչ դյուրին ճանապարհ է անցել: Այդ տեսակետից դժվար է առանձնացնել հասարակական կյանքի որևէ ոլորտի առաջնահերթությունը, որովհետև դրանցից յուրաքանչյուրը սոցիալական, պետական շինարարության կամ մեկ այլ բնագավառի կարևորագույն հարցեր է լուծում: Պարզապես իրավական և դատական բարեփոխումների կարևորությունը կայանում է նրանում, որ պետու-



թյան դատական համակարգը, տարբեր սոցիալական վեճեր քննելու և լուծելու ընթացքում, կարգավորիչ դեր է կատարում: Այդ առումով, պետական շինարարության ոլորտում իրականացվող բազմաթիվ հարցերի ու ծրագրերի հաջողությունը մեծ հաշվով կախված է իրավական և դատական բարեփոխումների արդյունքներից: Նման պայմաններում, եթե իրավական և դատական բարեփոխումներն առաջիններից մեկը չեն, ապա և վերջինն էլ չեն: Իրավական և դատական բարեփոխումները ոչ թե դատական իշխանության սովորական բարեփոխումներ են, այլ բավական բարդ, բազմակողմ և բազմանշանակ երևույթ՝ կոչված լինելով կարգավորելու մեր հասարակության և պետության կյանքի կարևորագույն կողմերը: Բարեփոխումների մի հատվածն էլ դատարանաշինությունն է, քանի որ արդարադատության իրականացման ընթացքում պետք է անհրաժեշտ պայմաններ լինեն թե՛ դատավորների, և թե՛ դատական կողմերի ու դատավարության մասնակիցների համար: Փաստ է, որ շենքային պայմանների, կահավորանքի և տեխնիկական հագեցվածության տեսանկյունից ԼՂՀ դատարանների նստավայրերը և դատական նիստերի դահլիճները ժամանակակից պայմաններին չեն համապատասխանում: Հուսանք, որ այս հարցը մոտ ապագայում կստանա իր լուծումը:

Դատաիրավական բարեփոխումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ մի բարեփոխում ամբողջական և վերջնական համարվել չի կարող, քանի որ մարդկային ցանկացած գործունեություն զերծ չի սխալներից և թերություններից: Բացի այդ, կյանքն ինքն է թելադրում բարեփոխումների անհրաժեշտությունը և նրա օրինաչափությունը:

Ներկայում հանրապետությունը թևակոխել է դատաիրավական բարեփոխումների որակական մի նոր փուլ. հանրապետության նախագահի 2013թ. օգոստոսի 16-ի կարգադրությամբ հաստատվեց ԼՂՀ իրավական և դատական բարեփոխումների 2013-2017թթ. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը: Նույն կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, և աշխատանքներն ընթանում են: Քառամյա ծրագիրը, մասնավորապես, ներառում է քրեական, քաղաքացիական, վարչական արդարադատությունը, դատական համակարգը, դատախազությունը, փաստաբանության և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ոլորտները, որոնցից յուրաքանչ-

յուրում առկա խնդիրների լուծման համար նախատեսված են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառական բնույթի միջոցառումներ: Այս բարեփոխումները նախկիններից տարբերվում են նրանով, որ համակարգային բնույթ են կրում, քանի որ եթե դրանք մի համակարգում արվում են, իսկ մյուսը բաց է մնում, ապա այն միանգամից իր ազդեցությունը թողնում է մյուսի վրա: Ծրագրում ուղղակիորեն նշված է, որ դատական իշխանության անաչառությունը և անկախությունը դասվում են տվյալ երկրի ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքների շարքին, քանի որ դատախրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը երկրի ներքին սպառնալիքներից մեկն է հանդիսանում:

Չավելենք, որ ժողովրդավարության ուղին բռնած և անցումային զարգացման փուլում գտնվող պետություններից որևէ մեկին դեռևս չի հաջողվել կարճ ժամկետում ստեղծել անկախ և կենսունակ դատական համակարգ: Իսկ կատարյալ համակարգ երբեք չի լինում, կյանքն է, որ ժամանակի ընթացքում հղկում է ամեն ինչ, որի արդյունքների գնահատականը տալիս է հասարակությունը՝ իր վստահության քվեով:

*«Ազատ Արցախ» ՅԹ, 18 հունվարի 2014թ.*

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱՐԱՐՔՆԵՐՈՒՄ

*Այս օրենքը չի կարող մահանալ, քանի որ շատ  
մարդիկ են մահացել, որպեսզի այն ապրի:*  
**Լեմկին**

Միջազգային իրավունքի հանրահայտ մասնագետներից մեկի, ազգությամբ հրեա Ռաֆայել Լեմկինի վրա մեծ ազդեցություն է գործել Սոդոմոն Թեհլերյանի կողմից 1921 թվականի մարտի 15-ին Բեռլինի մարդաշատ փողոցներից մեկում, Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպչի՝ Թալեաթի ահաբեկումից հետո անցկացված դատավարությունը: Լվովի համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող Լեմկինի այն հարցին, թե ինչու՞ մեծ ոճրագործին շանսատակ անողը ենթարկվում է քրեական պատասխանատվության, իսկ միլիոնավոր անմեղների դահձապետը՝ ոչ...: Դասախոսը հայտնեց, որ հարցի պատասխանը պետք է որոնել պետությունների ինքնիշխանության և «չկա հանցանք, չկա պատիժ, եթե դրանք նախատեսված չեն օրենքով» սկզբունքների համատեքստում և որպես օրինակ, բերեց հավեր պահող գյուղացուն, ով իր հավերին մորթելու դեպքում, հարևանը չպետք է խառնվի: Լեմկինի պատասխանը լակոնիկ էր՝ մարդիկ հավեր չեն: Նա ցնցված էր ինչպես դասախոսի պատասխանից, այնպես էլ հայ ժողովրդի հանդեպ համակարգված ու ծրագրված սպանդից և արդարադատության բացակայությունից: Նրա կանխազգացումը թելադրում էր, որ հայ ժողովրդի հետ տեղի ունեցածը ոչ թե պատերազմի արդյունք է, այլ՝ ինչ որ ահավոր բանի: Նա, ով 14 տարեկանում տիրապետում էր 14 լեզուների, հարցի պատասխանը գտնելու համար թողեց բանասիրությունը և խորացավ իրավագիտության մեջ՝ նվիրվելով մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրմանը:

Միջազգային քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված Մադրիդյան գիտաժողովում /1933թ./, Լեհաստանը ներկայացնում էր Վարշավայի դատախազ Լեմկինը: Նրա ճառը, որում էթնիկական, սոցիալական և կրոնական խմբերի ջարդերն ու կոտորածները բնութագրվում

էին «վանդալիզմ» /հայերեն՝ վայրագություն/ եզրով, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով տարածվեց գիտաժողովում, սակայն գերմանական պատվիրակության դժգոհության պատճառով քննարկման առարկա չդարձավ: Լեհաստանի իշխանությունները նույնպես դժգոհությամբ համակվեցին Լեմկինի նկատմամբ՝ ազատելով նրան զբաղեցրած պաշտոնից:

Լեմկինների տոհմը, որը կազմված էր 49 հոգուց, երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին ոչնչացվեց Վարշավայի հրեական Գետտոյում: Ռաֆայել Լեմկինին հաջողվեց հրաշքով փրկվել Յուդենտի սարսափներից և անցնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ: «Առանցքի պետությունների իշխանությունը բռնազավթված Եվրոպայում» գրքի մեջ, որը լույս տեսավ 1944թ., Լեմկինը, նկարագրելով թուրքերի վայրագությունները հայ ժողովրդի նկատմամբ և նացիստական Գերմանիայի կողմից հրեաների զանգվածային սպանությունները, առաջին անգամ օգտագործեց «գենոցիդ» եզրույթը: Այն կազմված է հունարեն «genos»/ցեղ, ազգ կամ տոհմ/ և լատիներեն «cide» /սպանել/ բառերից, ինչը բառացիորեն նշանակում է «ցեղի, ազգի կամ տոհմի սպանություն»: Գիրքը լույս տեսնելու պահից «գենոցիդ» /հայերեն՝ ցեղասպանություն/ եզրույթը կյանքի իրավունք ստացավ և թվում է, թե հավերժ գոյություն է ունեցել: Անվիճելի է, որ «գենոցիդ» բառի տակ Լեմկինն առաջին հերթին նկատի է ունեցել 1915թ. հայկական կոտորածները՝ որպես ցեղասպանության հիմնարար ապացույց: Մինչ այդ հայ ժողովուրդն օգտագործում էր /ներկայում նաև օգտագործում է/ «Մեծ եղեռն», «Եղեռն», «Մեծ ոճիր», «կոտորած», «ջարդ», «սպանդ», «տեղահանություն», «աքսոր» և համանման այլ եզրույթներ: Սրանք, իմաստային առումով, ինչ որ տեղ զուգորդվում են ցեղասպանության հասկացության հետ կամ մոտ են նրան, բայց իրավական առումով, ցեղասպանություն եզրույթը լրիվությամբ չեն բացահայտում, որովհետև վերջինս միջազգայնորեն ընդունված քրեական հանցագործություն է՝ ենթակա միջազգային դատապարտման, պատժի և հետևանքների վերացման:

Նյուրնբերգյան դատավարությունում /1945-1946թթ./ ԱՄՆ-ի կողմից գլխավոր մեղադրող Ռ.Ջեքսոնի օգնական Լեմկինը հասավ նրան, որ ցեղասպանություն եզրույթն արտացոլվի նացիստական հանցագործ-

ների մեղադրանքում: Նրա ստեղծած բառն առաջին անգամ հնչեց դատավարությունում՝ սակայն որպես մեղադրանքի նկարագրական, այլ ոչ թե իրավական եզրույթ:

Լեմկինը դրանով կանգ չառավ և իր կյանքի մնացորդը նվիրեց ցեղասպանություն բառը միջազգայնացնելու խնդրին: Եվ նա մասամբ հասավ իր նպատակին: Լեմկինի կողմից մշակված ցեղասպանության մասին կոնվենցիայի նախնական բանաձևն ԱՄՆ-ի աջակցությամբ դրվեց ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի քննարկմանը: Փաստաթղթի մշակման հարցում ոչ պակաս հիմնավոր փաստարկ է հանդիսացել հայ ժողովրդի նկատմամբ 1915թ. և դրան հաջորդող տարիներին իրականացված ցեղասպանությունը: Ցեղասպանություն եզրույթն առաջին անգամ ամրագրվեց ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1946թ. դեկտեմբերի 11-ի 96/1 բանաձևում: Իսկ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան /այսուհետ՝ Կոնվենցիա/ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից հաստատվեց 1948թ. դեկտեմբերի 9-ի թիվ 260Ա բանաձևով, որն ուժի մեջ մտավ 1951թ. հունվարի 12-ին, երբ 20 երկրներ վավերացրին այն: Չնայած այդ օրվանից ցեղասպանություն եզրույթը միջազգային իրավունքի կարգավիճակ ստացավ, բայց տևական ժամանակ ՄԱԿ-ի անդամ շատ պետություններ դժկամությամբ էին վավերացնում Կոնվենցիան: ԽՍՀՄ-ն այն վավերացրել է 1954թ., բայց իր օրենսդրության մեջ չմտցնելով որևէ հոդված ցեղասպանության մասին: ԱՄՆ-ը Կոնվենցիան վավերացրել է 1988թ., իսկ Չայնաստանի Չանրապետությունը՝ 1993թ.: Ներկայումս Կոնվենցիային միացած երկրների թիվը 144-ն է:

Չարկ է նշել, որ «գենցիդ» բառի հիմնադիր և հայ ժողովրդին այդքան անհրաժեշտ Կոնվենցիայի նախագծի հեղինակը մահացավ 1959թ., ծայրահեղ աղքատության մեջ: Ճակատագրի հեգնանքով նրա հուղարկավորությանը մասնակցել են ընդամենը 7 հոգի: Շիրմաքարը հպարտությամբ կրում է «Ցեղասպանության Կոնվենցիայի հայրը» փորագրությունը:

Այն, որ Կոնվենցիայի ընդունումը միայն հրեական «Յոլոքոստով» չի եղել պայմանավորված, վկայում է հենց Կոնվենցիայի նախաբանը՝ ազդարարելով, որ միջազգային իրավունքի համաձայն՝ ցեղասպանությունը հանցագործություն է և հակասում է ՄԱԿ-ի ոգուն ու նպատակներին,

և որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն, ընդունելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, ուստի մարդկությունն այդ նողկալի արհավիրքից ազատելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն:

Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի՝ հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար: Հոդվածից նկատելի է, որ պայմանավորվող կողմերն օգտագործել են ոչ թե «որոշում են», «վճռում են», «սահմանում են», այլ «հաստատում են» եզրույթը, դրանով իսկ ընդգծելով նախկինում կատարված՝ պատմությանը հայտնի այն ցեղասպանական գործողությունները, որոնք բնորոշված են Կոնվենցիայում:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ցեղասպանություն է համարում հետևյալ գործողություններից ցանկացածը, որը կատարվում է ազգային, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ՝ ա/ խմբի անդամների սպանություն, բ/ խմբի անդամներին մարմնական կամ մտավոր վնասի պատճառում, գ/ միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծում այդ խմբի համար, որ հաշվարկված են հանգեցնելու նրանց լիարժեք կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, դ/ այնպիսի միջոցառումների պարտադրում, որ կկանխարգելեն այդ խմբի ծնելիությունը, ե/ այդ խմբի երեխաներին հարկադրաբար այլ խումբ տեղափոխելը:

Այսպիսով՝ 1948 թվականից ցեղասպանությունը ՄԱԿ-ի կողմից ճանաչվեց որպես մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություն և պատժելի արարք, որի հանցակազմի իրավական սահմանումը տրվեց Կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

Ցեղասպանությունը ոչ թե սովորական մարդասպանություն է, այլ՝ հանցագործությունների հանցագործություն, և այն պայմանավորված է ոչ թե սպանված մարդկանց քանակով, այլ բացառապես տվյալ խմբին, ազգին, ցեղին, համայնքին ոչնչացնելու ցանկությամբ և վճռականությամբ:

Անդրադառնալով ցեղասպանության հանցակազմի օբյեկտին, ամենից առաջ պետք է նկատի ունենալ այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են ազգային, էթնիկական, ռասայական և կրոնական խմբերի կյանքի անվտանգ պայմանները: Իսկ ցեղասպանության օբյեկտիվ կողմը Կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված գործողություններն են:

Ցեղասպանության հանցագործությունը ոտնձգում է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրերով ամրագրված մարդու իրավունքները:

Հասկանալի է, որ սուբյեկտիվ կողմից հանցագործությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ, որի պարտադիր հատկանիշ է նպատակը՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացումը:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածը ցեղասպանության հանցագործության սուբյեկտ է ճանաչում պետության սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներին, պաշտոնատար և մասնավոր անձանց:

Ամեն դեպքում հարց է ծագում՝ օսմանյան կայսրության վերջին կես դարում հայ ժողովրդի արևմտյան հատվածի դեմ կատարված սպանող, վայրագությունները, կարելի է համարել որպես մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն, որպիսիք նշված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

Նախքան իրավական հարթությունում հարցի քննարկումը, հակիրճ բնորոշենք հայ ժողովրդի նկատմամբ օսմանյան կայսրության վերջին վարչակարգերի վարած քաղաքականությունը:

Դիվանագիտության պատմության մեջ հայկական հարցն ասպարեզ իջավ որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս՝ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Հայկական հարցը Ռուսաստանի և եվրոպական մի շարք երկրների համար հարմար միջոց էր Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, Թուրքիայից զիջումներ և շահույթներ ստանալու համար: Վերջինս քաջ հասկանում էր դա և Հայկական հարցից ձերբազատվելու համար որդեգրեց «երբ չեն լինի հայերը, չի լինի

նան Հայկական հարցը» կարգախոսը: Սուլթան Համիդի օրոք այդ քաղաքականությանը զոհ գնաց ավելի քան 300.000 հայ:

Երիտթուրքերը, կեղծ լոզունգներով իրականացնելով ռազմական հեղաշրջում /1908թ./, իրենց քաղաքականության հիմքում դրեցին պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունը, որի էությունը՝ Բալկանյան թերակղզուց մինչև Ալթայի երկրամաս ձգվող տարածքներում բնակվող բոլոր թուրքալեզու ժողովուրդներին «Մեծ Թուրան» միասնական պետության մեջ միավորելու գաղափարն էր: Երիտթուրքերը քաջ գիտեին, որ իր պատմական հայրենիքում ապրող հայ ժողովուրդը սեպի պես խրված էր իրենց ծրագրերի մեջ՝ աչքի ընկնելով ռուսասիրությանը և բացահայտ ռուսական կողմնորոշմամբ: Այդ մտավախությամբ, ինչպես նաև ցարական Ռուսաստանի և Եվրոպայի կողմից մշտապես բարձրացվող Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս կազմող Հայկական հարցից հավերժ ձերբազատվելու համար, պետական մակարդակով որոշվեց՝ բնաջնջել հայերին:

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության համար առիթ հանդիսացավ ինչպես Բալկանյան թերակղզում, այնպես էլ առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Կովկասյան ռազմաճակատում կրած խոշոր ռազմական պարտությունները, որոնց պատճառներից մեկն էլ թուրքերը համարում էին հայերի համագործակցությունը ռուսների հետ: Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վայրերում հայերի բնաջնջման հարցը քննարկվեց երիտթուրքական կառավարության պարագլուխների և մյուս գործիչների 1915թ. փետրվարին կայացած զաղտնի խորհրդակցությունում, որտեղ ընդունվեց համապատասխան որոշում և հանձնարարվեց կառավարությանը՝ իրականացնել այն բոլոր հնարավոր միջոցներով: Կազմվեց գործադիր կոմիտե և նշանակվեցին լիազորներ վիլայեթներում: Ստեղծվեց հայերի բնաջնջման կազմակերպություն /Թեշքիլթար մահսուսե/՝ լայն ճյուղավորմամբ: Գործի դրվեց ամբողջ պետական մեքենան:

Թեկուզ Օսմանյան կայսրության ցեղասպան գործողությունները հայերի նկատմամբ սկսվել էին դեռևս XIX դարի 80-ական թվականներին, բայց այն իր գագաթնակետին հասավ 1915թ. ապրիլ-մայիս ամիսներին: Պայմանականորեն Հայոց ցեղասպանության օր է համարվում 1915թ. ապրիլի 24-ը, երբ Կոստանդնուպոլսում ձերբակալվեց հայագահ



մտավորականության ծաղիկը: Հայերի ցեղասպանությունն իրականացվեց մի քանի փուլերով: Նախ, թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափեցին և մաս-մաս ոչնչացրին: Այնուհետև, 1915թ. ապրիլի 24-ից մինչև 28-ն ընկած ժամանակահատվածում ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների և մեծ մասին ոչնչացրին՝ չխնայելով անգամ Օսմանյան պառլամենտի հայ անդամներին: Այդքանից հետո անպաշտպան և անօգնական կանանց, ծերունիներին և երեխաներին բռնատեղահանման քողի տակ ենթարկեցին զանգվածային ոչնչացման: Բռնի տեղահանության ընթացքում հարյուր հազարավոր մարդիկ սպանվեցին թուրք զինվորների, ոստիկանների, մահվան հատուկ ջոկատների՝ քրդական և չերքեզական ավազակախմբերի կողմից:

Ցեղասպանության կազմակերպված բնույթը և ծավալը պատկերացնելու համար բավական է միայն մեջ բերել Թալեաթի 1915թ. սեպտեմբերի 15-ի հրահանգը. «Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է: Դրան համապատասխան կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել նույնիսկ օրորոցի մանուկներին»: Տեղական իշխանություններին հրահանգ էր իջեցվել՝ ուշադրություն չդարձնել ո՛չ սեռին, ո՛չ տարիքին և ո՛չ էլ խղճի խայթին, բոլորին ոչնչացնել, բայց լինել ուշադիր, որպեսզի սպանող բնակավայրերից և ժողովրդից հեռու լինի:

Փաստերը վկայում են, որ ցեղասպանության արդյունքում Օսմանյան Թուրքիայում նահատակվեց շուրջ մեկուկես միլիոն հայ, կենդանի մնացածների մի հատված, մանավանդ որք երեխաները, բռնի կերպով հավատափոխ եղան: Սակավաթիվ փրկվածները ցիրուցան եղան աշխարհով մեկ: Հայկական բարձրավանդակի 9/10 մասը զրկվեց իր բնիկ տերերից, թուրքերի ցեղասպան գործողություններից անմասն չմնացին նաև հույները, ասորիները, եզդիները:

Իրենց պատմական հայրենիքում բնակվող հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի կիրառած ցեղասպանության քաղաքականությունն առաջին անգամ միջազգային մակարդակով դատապարտեցին Անտանտի պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը՝ 1915թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրով: Հռչակագիրն ազդարար-

րեց, որ «Ամբողջ վերջին ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում կոտորածներ՝ քրդերի և թուրքերի կողմից, Օսմանյան իշխանությունների բացահայտ թույլտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայկական կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակա հարյուրավոր գյուղերի բնակիչները մորթվել են մինչև վերջին մարդը: Բուն Վանում հայկական թաղամասը պաշարման մեջ են առել քրդերը: Միևնույն ժամանակ, Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը ձերբակալում և աներևակայելի ճնշումների է ենթարկում հայ ազգաբնակչությանը: Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կատարած այս նոր հանցագործությունները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարություններն այսու հրապարակավ հայտարարում են Բարձրագույն դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածի»:

Այս փաստաթղթից նկատելի է, որ դաշնակից երկրներն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վայրերում հայ բնակչության զանգվածային կոտորածները ոչ թե սովորական հանցագործություններ են համարել, այլ՝ ըստ էության, «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված նոր հանցագործություններ»:

Միևնույն ժամանակ, այդ նոր հանցագործությունների վկայակոչումը ցույց է տալիս, որ դրանց օբյեկտն ամբողջ աշխարհի մարդկությունն է, որի մի մասը պատմական հայրենիքում բնաջնջվող հայ ժողովուրդն էր: Հռչակագրում նշված միայն այն հանգամանքը, որ «Վանի շրջակա հարյուրավոր գյուղերի բնակիչները մորթվել են մինչև վերջին մարդը», հուշում է մեզ, որ երիտթուրքերի կառավարության նպատակը հայ ժողովրդի իսպառ բնաջնջումն է եղել /հանցագործության օբյեկտիվ կողմը/: Դրա վառ ապացույցն այն է, որ ներկայում Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում մահմեդականություն ընդունած շատ թե քիչ ծպտյալ հայեր կան /Թուրքիայի տարածքում միակ հայկական բնակավայրը Վաքըֆլը գյուղն է՝ 135 բնակչությամբ. գյուղը տարածված

է Մուսա լեռան փեշերին/։ Չռչակագիրն աներկբա հուշում է, որ հայկական կոտորածների անմիջական պատասխանատուները՝ թուրքական կառավարության բոլոր անդամները և տեղական իշխանությունները /հանցագործության սուբյեկտը/, որոնք գործել են «բացահայտ թույլտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ» /սուբյեկտիվ առումով՝ ուղղակի դիտավորությամբ/, պետք է պատասխանատվություն կրեն իրենց հանցավոր արարքների համար։

Չռչակագրի իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ դաշնակից պետությունները հայկական կոտորածները որակել են ոչ միայն որպես մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված նոր հանցագործություն, այլև բացահայտել են մարդկության դեմ ուղղված այդ նոր հանցագործության հանցակազմը և նրա տարրերը։ Չռչակագիրը, փաստորեն, առաջին միջազգային փաստաթուղթն էր, որն ազդարարեց աշխարհին՝ Օսմանյան կայսրության կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ /տվյալ դեպքում՝ հայերի/ նոր հանցագործության կատարման և դրա կատարման մեջ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու նպատակով միջազգային աստիճանի ստեղծելու մասին։ Արդեն 1918թ. վերջին «Նյու-Յորք Թայմս» թերթը հաղորդում հրապարակեց Գլխավոր զինվորական դատարան ստեղծելու մասին։ Շատ առաջավոր գործիչներ գտնում էին, որ հայակեր ոճրագործներին պետք է դատել Անտանտի երկրների և ԱՄՆ-ի մասնակցությամբ։

Պարտություն կրելով առաջին համաշխարհային պատերազմում, երիտթուրքերի կառավարության և կուսակցության պարագլուխները ճողոպրեցին արտասահման։ Թուրքական նոր կառավարությունը քաջատեղյակ լինելով, որ պատերազմի ավարտից հետո նախատեսվում է ստեղծել միջազգային դատարան, երիտթուրքական կառավարության անդամների և նրանց տեղական ներկայացուցիչների նկատմամբ «բեմականացրին» մի դատավարություն՝ տալով դրան «Օսմանյան կայսրությունն առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար երիտթուրքական կառավարության ղեկավարներին, ինչպես նաև՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին» հորջորջումը։

Մյուս կողմից, նորաստեղծ վարչակազմը, երիտթուրքերից սահմանազատվելու և առաջիկայում կայանալիք հաշտության բանակցություններում մարդկային կերպարանքով երևալու համար, դատավարության գործընթացին հետևյալ ուղղորդումը տվեց: Նախ, կառավարության որոշումով կազմվեցին հարցաքննիչ հանձնախմբեր, որոնց հանձնարարված էր՝ հավաքել հայության կոտորածների վերաբերող մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ և հրամաններ, ինչպես նաև ակնատեսների վկայություններ: Այդ առումով երկրի տարածքը բաժանվեց 10 դատաքննչական շրջանների, յուրաքանչյուրի համար նշանակվելով դատախազներ, հարցաքննիչ դատավորներ և քարտուղարներ: Միևնույն ժամանակ ձերբակալվեցին երիտթուրքական մի շարք նախարարներ և կուսակցության ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազորներ, կուսակալներ, զինվորականներ և այլ պաշտոնատար անձինք:

Այնուհետև, պետական իշխանության բարձրագույն մարմնի որոշումով կազմվեցին երեք ռազմական արտակարգ ատյաններ: Որոշում կայացվեց բոլոր մեղադրյալներին Կ.Պոլսում դատելու մասին: Սուլթան Մեհմեդ 6-րդի հատուկ հրամանագրով երիտթուրքական նախարարները և կուսակցության պարագլուխները հանձնվեցին Կ.Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը: Առաջին ռազմական արտակարգ ատյանը քննության առավ երիտթուրքական կառավարության ղեկավարներին և նրանց կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին առաջադրված մեղադրանքները: Երկրորդ ռազմական ատյանը՝ երիտթուրքերի կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների, իսկ երրորդը՝ Յոզգաթի, Տրապիզոնի, Բույուք դերեի և Խարբերդի տեղահանության և կոտորածների մեջ մեղավոր անձանց արարքները:

Առաջին ռազմական ատյանի դատավարությունը սկսվեց 1919թ. ապրիլի 27-ին: Դատի էին տրվել 20, իսկ հեռակա կարգով՝ 11 մեղադրյալ: Վերջիններիս թվում էին նաև Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, Բեհաէդդին Շաքիր բեյը, դոկտոր Նազըմ բեյը և այլոք: Փաստորեն դատարանի առջև կանգնեց երիտթուրքերի կառավարության մի փոքր մասը: Ծիծաղելի է, որ պատմությանն անծանոթ մեթոդներով մի ամբողջ

ժողովուրդ հոշոտելու համար դատարանի առջև կանգնել էին մի քանի տասնյակ ճիվաղներ:

Մեղադրական եզրակացության համաձայն՝ երիտթուրքերի պարագլուխները՝ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները և նրանց համախոհները, մեղադրվում էին առանց պառլամենտի համաձայնության և գիտության Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներգրավելու և հայերի դեմ կիրառած հանցանքների ու ոճրագործությունների և զանգվածային սպանությունների կազմակերպման մեջ /մեղադրանքի առաջին մասը մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է/: Մեղադրական եզրակացությունը բավարար տվյալներ և փաստեր է պարունակում՝ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ պատկերացում կազմելու համար: Այսպես՝ ըստ հետաքննության և նախաքննության նյութերի, հայերի տեղահանությունը և նրանց նկատմամբ կատարված հանցագործությունները ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են երիտթուրքերի պարագլուխների ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր գաղտնի հրահանգներով: Տեղահանությունը ռազմական կամ կարգապահական նպատակ չի հետապնդել, այլ հիմնական նպատակը՝ «հայերի ոչնչացումն էր», որպես երկրի միակ փրկություն: Այդ նպատակին հասնելու համար երիտթուրքերը ստեղծել են հատուկ մահվան ջոկատներ /Թեշքիլաթը մահուստ/ և բանտերից ազատ արձակված հանցագործների կամավորական խմբեր՝ տեղահանված անգն հայերի դեպի Դեր-Ջոր քայլող քարավանները կոտորելու և ոչնչացնելու համար: Հայերի նկատմամբ կոտորածներն ու վայրագությունները, նրանց ունեցվածքի թալանն ու կողպուտը որոշված է եղել երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Կուսակցության որոշումներին դեմ գնացողները համարվել են հայրենիքի դավաճաններ, իսկ կամակատարները խրախուսվել են: Ռազմական և ներքին գործերի նախարարությունների հովանավորությամբ և ակտիվ մասնակցությամբ հատուկ մահվան ջոկատների՝ հրոսակների կողմից գործադրված սպանդի հետևանքով ամբողջ հայկական բարձրավանդակը և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վայրերը հայազուրկ եղան: Երկրի ճանապարհները լցված են եղել կանանց և երեխաների դիակներով: Դեր-Ջորի սանջակի կառավարիչ Սալիհ Ջեքի բեյը հպարտացել

էր, որ ինքը 10.000-ից ավել հայ է ոչնչացրել: Տեղահանության և կոտորածների ընթացքում գործի է դրվել հայերին, հատկապես երեխաներին կրոնափոխ անելու քաղաքականությունը:

Դատավարության ընթացքում, լսելով մեղադրող և պաշտպանող կողմերին, ուսումնասիրելով դատական բոլոր փաստաթղթերը և հաստատված համարելով ամբաստանյալներին մեղսագրված արարքները, առաջին ռազմական ատյանի 1919թ. հունիսի 26-ի դատավճռով՝ նողկալի արարածներ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները և դոկտոր Նազըմը հեռակա կարգով դատապարտվել են մահապատժի, իսկ Ջավիդը, Մուստաֆա Շերիֆը, Մուսա Քազիմը՝ 15-ական տարի ժամկետով աքսորի, ոմանք արդարացվել են հանցակազմի բացակայության հիմնավորմամբ:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և պաշտոնատար այլ անձանց դատավարության արդյունքում 36 ամբաստանյալներ դատապարտվել են տարբեր ժամկետների ազատազրկման: Այս դատավճռից նույնպես նկատելի է, որ տեղահանության բուն նպատակը հայ ժողովրդի ոչնչացումն էր:

Յոզգատի հայերի կոտորածներն իրականացնողների դատավճռով Յոզգատի գավառապետի տեղակալ Քեմալ բեյը դատապարտվել է մահվան, իսկ ոստիկանապետ Թեվֆիկ բեյը՝ 15 տարվա տաժանակրության: Տրապիզոնի կոտորածներն իրականացնողների դատավճռով նահանգապետ Ջեմալ Ազմի բեյը և երիտթուրքերի կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը հեռակա կարգով դատապարտվել են մահապատժի, մյուսները՝ տարբեր ժամկետներով ազատազրկման: Այդ ձիվաղների մեղադրանքի դրվագներից մեկն էլ այն էր, որ նրանք Տրապիզոնի հայ կանանց և երեխաներին ծովային ճանապարհով ապահով այլ վայրեր տեղափոխելու պատրվակով, խմբերով նստեցրել են նավերը և Սև ծովի խորքերը տանելով՝ թափել են ծովը և ջրահեղձ արել բոլորին: Ջեմալ Ազմի բեյը՝ մարդկային տեսքով այդ բորենին, այդքանից հետո չի խորշել հայտարարել, որ «այս տարի ձկան որսն ավելի առատ կլինի»:

Խարբերի հայերի տեղահանության և կոտորածների դահիձ, հատուկ մահվան ջոկատների նախագահ Բեհաէդդին Շաքիրը հեռակա

կարգով դատապարտվել է մահապատժի, իսկ երիտթուրքերի կուսակցության խարբերդի պատասխանատու քարտուղար Նազիմ բեյը՝ 15 տարի տաժանակրության: Մարդկային ճիվաղ Բ.Շաքիրն իր ծածկագիր հեռագրում չի խորշել նշել, որ «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորն էլ արտաքսվել են Դեր-Ջորի կողմերը»: Տեղահանված հարյուր հազարավոր հայերից շատ քչերն են իրենց մահվան հանգրվանը գտել Դեր-Ջորի անապատում: Մինչ անապատ հասնելը, շատերը մահացել են ճանապարհին՝ բոլորովին հյուծված, տառապալի ուղևորությունից, սովից և ծարավից, իսկ մի մասն էլ աներևակայելի դաժանությամբ բնաջնջվել է երիտթուրքերի կողմից կազմակերպված հրոսակախմբերի կողմից: Փաստորեն, տեղահանությունը շղարշ էր՝ մի ամբողջ ազգ ոչնչացնելու համար:

Ցավալի է, որ մի ամբողջ ազգ բնաջնջելու համար թուրքական դատարանի առաջ կանգնեցին ընդամենը 71 հանցագործ: Երևում էին կազմակերպիչները, բայց չկային կատարողները, դրդիչները, օժանդակողները: Դատավարության գործընթացից դուրս մնացին այն 77 հանցագործները, որոնք անգլիացիների թեթև ձեռքով տեղափոխվել էին Մալթա կղզի և հետագայում փոխանակվել անգլիացի գերի զինվորների հետ:

Մահապատժի դատապարտվածների նկատմամբ դատավճռի ի կատար ածումն իրականացվեց «հայ վրիժառուների ատյան»-ի կողմից: «Նեմեսիս» /վրեժխնդրության հին հունական աստվածուհու անունը/ գործողության իրականացման արդյունքում ոչնչացվեցին Թալեաթ, Էնվեր և Ջեմալ փաշաները, երիտթուրքական կառավարության առաջին վարչապետ Սայիտ Յալիմը, հատուկ մահվան ջոկատների հիմնադիր Շաքիրը, Տրապիզոնի նախկին նահանգապետ Ազմին, ինչպես նաև այն հայ մատնիչները և գործակալները, որոնք համագործակցել էին հայակեր դահիճների հետ: Վերջիններիս ձակատագրին արժանացան 1918թ. սեպտեմբերին Բաքվի 30 և 1920թ. մարտի 23-ին Շուշիի 35 հազար հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներ խան խոյսկին, խաս Մահմեդովը և այլոք:

Երիտթուրքերի դատավարությունը մեզ ցույց է տալիս, որ, չնայած, թուրքական պետության կողմից օրինական կարգով ձևավորված հա-

տուկ ռազմական ատյանների առջև կանգնած է եղել հանցագործների մի շատ փոքր հատված, բայց դատավարությունում ստուգված և իրենց հաստատումը գտած փաստաթղթերը և տվյալները վկայում են, որ հայերի տեղահանությունը և կոտորածները բնավ ռազմական կամ կարգապահական միջոցառումներ չեն եղել, այլ իրականում հայ ժողովրդի բնաջնջման նպատակով է կատարվել՝ իրականացնելով այն պետական մակարդակով և կանխամտածված: Ճիշտ է, «ցեղասպանություն» եզրույթը չէր կարող տեղ գտնել երիտթուրքերի նկատմամբ կայացված դատական ակտերում, սակայն առաջադրված մեղադրանքները և ձեռք բերված ապացույցները որևէ կասկածանքի տեղիք չեն տալիս, որ դատապարտված անձանց արարքներում առկա են ցեղասպանության հանցակազմի այն բոլոր տարրերը, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-5-րդ կետերում: Յենց միայն դատավարության նյութերում բազմիցս օգտագործվող «կանխամտածված հանցագործություններ», «վայրագություններ», «զազանություններ», «տեղահանման հիմնական նպատակը հայերի ոչնչացումն է», «կոտորածի գործադրման որոշում», «քրեական հանցագործ հրոսակախմբերը ստեղծված էին տեղահանված հայերի քարավանները կոտորելու և ոչնչացնելու համար», «կանոնավոր ու խիստ կազմակերպված հայերի կոտորած, ոչնչացում», «ամայի վայրերում անգեն հայերի քարավանների ոչնչացում», «հայ ժողովրդի իսպառ ոչնչացում» եզրույթները և դատական նիստերում հրապարակված հեռագրերն ու ծածկագրերը վկայում են, որ Արևմտյան Չայաստանի և Թուրքիայի հայաշատ այլ վայրերի հայերի տեղահանման մասին որոշումը հայ ժողովրդին իր պատմական հայրենիքից արմատախիլ անելու և նրան իսպառ բնաջնջելու նպատակով է կայացվել և իրականացվել, ինչն էլ հայերի նկատմամբ գործադրած ցեղասպանության բաղկացուցիչ մասն է կազմում:

Թեկուզ «բռնությամբ տեղահանել» եզրույթը Կոնվենցիայի 2-րդ հոդվածում չի արձանագրված, բայց համարձակորեն կարող ենք պնդել, որ ոչնչացման նպատակով մարդկային խմբի բռնի տեղահանությունը հանդիսանում է այն գործողություններից մեկը, որը բավարար պայմաններ է ստեղծում խմբի վերացման համար: Եվ պատահական չէ, որ Չայաստանի Չանրապետության քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի դիսպոզիցիան /ԼՂՅ քրեական օրենսգրքի 419-րդ հոդված/ ցեղաս-



պանության առանձին հանցակազմ է համարում նաև ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի բռնությամբ վերաբնակեցնելը: Մեր կարծիքով «վերաբնակեցնել» /mուսերեն՝ переселение/ եզրույթը լրիվությամբ չի արտահայտում ցեղասպանության բաղադրիչներից մեկի՝ բռնի տեղահանության էությունը, որի դեպքում մեծ մասը հենց տեղահանության ժամանակ են մահանում: Այդ առումով նպատակահարմար ենք գտնում ԼՂՀ քրեական օրենսգրքում ցեղասպանության մասին հոդվածի դիսպոզիցիայում վերաբնակեցնել բառը փոխարինել «տեղահանել» եզրույթով:

Օսմանյան կայսրության ռազմական արտակարգ առյուծների կողմից կայացված դատավճիռներն այս կամ այն չափով տվեցին հայ ժողովրդի դեմ գործած ծանր ոճրագործության իրավական գնահատականը: Այդ դատական ակտերը հետագայում չեն գանգատարկվել կամ բողոքարկվել: Դրանց հիմնավորվածությունն ու օրինականությունն ընդունվել են նաև Թուրքիայի կողմից, ինչը կարող է միայն վկայել, որ Թուրքիան ժամանակին ընդունել և ճանաչել է հայերի նկատմամբ գործած ցեղասպանությունը: Նման պայմաններում, մեր կարծիքով, ներկայում անիմաստ է ինչ որ հանձնաժողովներ ստեղծել, արխիվներ բացել և բանավիճել՝ պատասխանելու այն հարցին՝ ցեղասպանություն եղե՞լ է, թե ոչ: Եթե իր պատմական հայրենիքում բնաջնջվել է մի ամբողջ ժողովուրդ, ինչ արխիվներ բացելու մասին կարող է խոսք գնալ: Արևմտյան Չայաստանն առանց հայերի, աշխարհասփյուռ հայությունը և թուրքական դատարանների կողմից հաստատված իրավական փաստերը Չայոց ցեղասպանության անհերքելի ապացույցներ են:

Երիտթուրքերի դատավարությունը լուծեց ցեղասպանության հետևանքների վերացման ընդամենը մեկ բաղադրիչ՝ չլուծելով հայ ժողովրդի արևմտյան հատվածի նյութական, հոգևոր, մտավոր, արյան կորստի հատուցման հարցերը: Այդպես էլ մնաց չլուծված հայերի՝ իրենց պատմական հայրենիք վերադառնալու և այնտեղ ապրելու իրավունքը: Չնայած դատավարության հիմնական մասը պտտվում էր հայերի բռնի տեղահանության և կոտորածների շուրջ, բայց պահանջատեր հայ ժողովրդի որևէ ներկայացուցիչ ներգրավված չէր երիտթուրքերի դատավարությունում:

Չետագայում ցեղասպան Թուրքիայի հանդեպ միջազգային սանկ-

ցիաների կիրառման անհրաժեշտությունը ծագեց 1920թ. օգոստոսի 10-ի՝ Սևրի հաշտության պայմանագրով, որի «Պատիժներ» բաժնում թուրքական կառավարությունը ճանաչեց դաշնակից տերությունների իրավունքը՝ ռազմական ատյանին հանձնելու պատերազմի օրենքներն ու կանոնները խախտած, ջարդերի մեջ մեղավոր անձանց, ինչպես նաև նրանց կատարած ոճրագործությունների վերաբերյալ տեղեկություններն ու փաստաթղթերը: Դաշնակից պետություններին իրավունք վերապահվեց ստեղծել միջազգային ատյան՝ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Թուրքիան ստորագրությունը դնելով Սևրի պայմանագրի տակ, դրանով իսկ ընդունել է հայերի նկատմամբ կատարած ցեղասպանության պատասխանատվությունը:

Սևրի պայմանագիրը և ԱՄՆ նախագահ Վ.Վիլսոնի իրավարար վճիռը կարող էին նպաստել հաղթահարելու Հայոց ցեղասպանության հետևանքները, սակայն այդ երկու փաստաթղթերը քաղաքական նոր իրադրության պայմաններում մնացին թղթի վրա:

Հայոց ցեղասպանության անպատժելիությունը ծնեց նոր ցեղասպանություններ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Հիտլերը՝ փորձելով արդարացնել իր հանցավոր գործողությունները հրեաների և սլավոնական բնակչության նկատմամբ, լկտիոյամբ հայտարարել է, որ ներկայում հայերի կոտորածների մասին որևէ մեկը չի հիշում: Միգուցե նման մտքերով էին ներշնչված ազերի թուրքերը, երբ Խորհրդային Միության փլուզման նախօրյակին՝ Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և Ադրբեջանի հայաշատ ու հայաբնակ այլ վայրերում շարունակեցին իրենց ցեղասպան գործողությունները, որոնց անպատժելիությունից ոգևորված՝ 1992թ. ապրիլի 10-ին գազանային մեթոդներով իրականացրին Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղի բնակիչների արյունալի սպանող, որին զոհ գնացին գյուղի շուրջ 100 կանայք, երեխաներ և ծերեր:

Թուրքական պատմագիտության այն կեղծ տեսակետը, թե իբր 1915թ. «ցեղասպանություն» հասկացությունը գոյություն չունենալու պատճառով Կոնվենցիան հետադարձ ուժ ունենալ չի կարող, զուրկ է առողջ տրամաբանությունից: Նախ, ինչպես նշեցինք, ցեղասպանությունը նոր հանցագործություն չէ, այն Լեմկինը չի ստեղծել, պարզապես Լեմկինն իրերն իրենց անունով է կոչել և ընտրել ամենաճիշտ եզրույթն

արդեն իսկ գոյություն ունեցող անանուն հանցագործությանն անուն տալու համար՝ առաջին հերթին նկատի ունենալով հայերի հանդեպ կատարած ցեղասպանությունը: Այդ առումով, ՄԱԿ-ի Մարդու իրավունքներին հանձնաժողովն իր հատուկ հետազոտության մեջ նշել է, որ «ցեղասպանություն» բառն առաջացել է վերջերս որպես նելոգիզմ /նորաբանություն/, որը բնորոշում է հին հանցագործությունները: Ուստի Կոնվենցիան հետադարձ ուժ ունի և լիովին կիրառելի է Հայոց ցեղասպանության համար: Դրա հիմնարար օրինակ կարող է ծառայել հրեական կոտորածների /«Հոլոքոստ»/ դատապարտումը Միջազգային Ռազմական դատարանի կողմից /Նյուրնբերգյան դատավարություն/: Վերջինիս կանոնադրությունում ամրագրված է, որ պատժի ենթակա են մարդկության դեմ ուղղված այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են «պատերազմից առաջ կամ դրա ընթացքում քաղաքացիական բնակչության հանդեպ կատարված սպանությունները, ոչնչացումը, ստրկացումը, աքսորումը և այլ դաժանությունները կամ հետապնդումները քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով»: Եվ պատահական չէ, որ Նյուրնբերգյան դատավարությունում Մեծ Բրիտանիայի կողմում գլխավոր մեղադրող Շոուկրոսը հայերի դեմ կիրառված ոճրագործությունները բնութագրել է որպես «մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար պատասխանատվության իրավունքի Նյուրնբերգյան նորմերի հիմքերից մեկը»:

Միջազգային իրավունքը ցեղասպանության հանցագործության համար վաղեմության ժամկետ չի նախատեսում: Այդ է վկայում 1968թ. փետրվարի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիան, որը մասնակից պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել ամեն մի օրենսդրական կամ այլ միջոցներ, որպեսզի ազգային օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը և այլ սահմանափակումները չկիրառվեն փաստաթղթերում թվարկված հանցագործությունների համար հետապնդման և պատժի դեպքում: Կոնվենցիան մարդկության դեմ ուղղված հանցագործությունների թվին է դասում ցեղասպանությունը: Հաշվի առնելով, որ այս կոնվենցիան վկայակոչում է 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության

հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, նշանակում է, որ 1966թ. կոնվենցիան 1948թ. լրացումն է, որն էլ ցեղասպանության հանցագործություններով օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքի հարցում վերջակետ է դնում: Թուրքական պետությունն առաջիններից մեկն է, որ վավերացրել է 1948թ. Կոնվենցիան:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագիրը մի շարք կարևոր խնդիրներ տեղափոխում է իրավական դաշտ: Նրա 6-րդ կետից նկատելի է, որ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցի համար մշակվում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

Պատմական արդարության համար մղվող պայքարը պարտություն կրել չի կարող: Ազգերն իրենց համար կենսական նշանակություն ունեցող իրավունքները նվաճում են պայքարի միջոցով:

*ԼՂՀ դատական իշխանություն  
իրավական տեղեկատվական-վերլուծական /ԻՏՎ/ հանդես,  
հ1. /17/, 2015թ.*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆՆԵՐԸ

Միջազգային դատական ատյանները կամ միջազգային դատարանները միջպետական համաձայնությունների հիման վրա ստեղծված, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից հիմնադրված դատական մարմիններ են՝ պետությունների և պետությունների ու անհատ անձանց միջև ծագած վեճերը լուծելու համար: Այդ մարմինների պարտականությունն է կիրառել միջազգային իրավունքն այն վիճակում, ինչպես այն դատարանն է գտնում, այլ ոչ թե ստեղծել միջազգային իրավունք: Բոլոր դեպքերում նրանց կողմից ընդունված դատական ակտերը որոշակի ներգործություն ունեն միջազգային իրավունքի զարգացման կամ նախադեպային պրակտիկայի ձևավորման վրա:

Բնականաբար հարց է առաջանում. երբ է երևան եկել իրավունքի հիման վրա միջպետական վեճերի լուծման գաղափարը: Այն իր արմատներով հազարամյակների խորքերն է հասնում և հանդես է գալիս որպես «իրավարարություն», «իրավարար» /լատիներեն-Arbitr-արդարացի որոշում/ եզրույթներով: Իրավարարությունը հայտնի է եղել հին Չնդկաստանում և Չունաստանում, վաղ իսլամական քաղաքակրթությանը, ուչ միջնադարյան Եվրոպային:

Ընդունված է համարել, որ իրավարարության ժամանակակից պատմությունը սկսվում է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև 1974թ. Լոնդոնում պայմանագրի կնքմամբ: Այն պատմության մեջ է մտել «Դժեյի /ԱՄՆ-ի ներկայացուցիչը/ պայմանագիրը» անունով: Բարեկամության, առևտրի և ծովագնացության վերաբերյալ այդ պայմանագրով նախատեսվեց ստեղծել կողմերի հավասար ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողով՝ մի քանի չլուծված հարցերի կարգավորման համար: Շնորհիվ խառը հանձնաժողովի կատարած աշխատանքի՝ իրավարարության ինստիտուտը XIX դարում որոշակի առաջընթաց արձանագրեց:

Իրավարար քննության հաջորդ որոշիչ փուլը նշանավորվեց «Ալաբամա» անունը կրող նավի վերաբերյալ գործով, երբ 1872թ. ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան իրավարար քննությանը հանձնեցին Միացյալ Նահանգների այն պահանջները, որոնք կապված էին ամերիկյան մայրցա-

մաքում քաղաքացիական պատերազմի ընթացքում Մեծ Բրիտանիայի կողմից չեզոքության չպահպանման ենթադրյալ խախտումների հետ: Իրավարար դատարանը, կազմված լինելով կողմերի և երեք այլ երկրների կողմից նշանակված անդամներից, որոշեց, որ Մեծ Բրիտանիան պետք է հատուցում տա, այսինքն՝ վնասը վերականգնի: Վերջինիս կողմից իրավարար որոշման պատշաճ կատարումը ցույց տվեց իրավարարության արդյունավետությունը խոշոր վեճերի կարգավորման հարցում:

Այդ հաջողությունը խոշոր պետություններին ստիպեց մտածել մշտական միջազգային դատարան ստեղծելու մասին: Եվ այն տվեց իր իրական արդյունքները Չաազայի միջազգային համաժողովում, որը 1899 և 1907թթ. հրավիրվեց Ռուսաստանի Նիկոլայ II թագավորի նախաձեռնությամբ: Առաջին համաժողովում 26 պետություններ համաձայնագիր ստորագրեցին՝ միջազգային բախումների խաղաղ կարգավորման և միջնորդ դատարանի դատական պալատի ստեղծման մասին, որին միացան ավելի քան 90 պետություններ: Դատական պալատը, որը սկսեց գործել 1902-ին, միջազգային կառույցներից անկախ մարմին է հանդիսանում: Չաազայի դատական պալատի ծառայությունները ժամանակի ընթացքում ավելի ընդլայնվեցին և ներկայում տնտեսական վեճերով պալատին կարող են դիմել ոչ միայն պետությունները, այլ նաև միջազգային կազմակերպությունները, մասնավոր իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Չաազայի իրավարար դատարանում ընթացակարգերը տեղի են ունենում բացարձակապես կողմերի համաձայնության հիման վրա: Եվրոպական էներգետիկ խարտիայի վերաբերյալ պայմանագիրը, բացառության կարգով, հայցվորին հնարավորություն է տալիս դիմելու դատարան՝ առանց պատասխանող երկրի համաձայնության և առանց պատասխանող երկրի ազգային դատարանում հայցի նախնական քննարկման: Երևի այդ լույսի ներքո պետք է դիտարկել դատարանի 2014թ. հունիսի 18-ի վճիռը, համաձայն որի՝ Ռուսաստանի Դաշնությունը պարտավոր է ՅՈՒԿՕՍ-ի գործով որպես փոխհատուցում փայտերերին վճարել 50 միլիարդ ԱՄՆ դոլար: Ռուսաստանը հրաժարվեց կատարել Չաազայի տնտեսական դատարանի վճիռը՝ Եվրոպական էներգետիկ խարտիայի վերաբերյալ պայմանագիրն իր կողմից չվավերացված լինելու պատճառաբանությամբ:

Չանրահայտ փաստ է, որ միջազգային վեճերի լուծման տեսակներից մեկն էլ դատաքննությունն է: Այդ նպատակով համապատասխան դատական մարմինները ձևավորվում են միջազգային պայմանագրերով կամ այնպիսի միջազգային կազմակերպության հեղինակության ներքո, ինչպիսին Միավորված Ազգերի Կազմակերպությունն է /ՄԱԿ/: Այդ դատարանները լինում են ինչպես համապարփակ, այնպես էլ տարածաշրջանային բնույթի:

Կախված վեճի բնույթից միջազգային դատարանները կոչված են լուծելու՝

1. միջպետական վեճերը /ՄԱԿ-ի Միջազգային դատարանը/,
2. ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պետությունների և միջազգային կազմակերպությունների դեմ հարուցված վեճերը /Մարդու իրավունքների եվրոպական դատարանը/,
3. միջազգային կազմակերպությունների շրջանակներում ծագած աշխատանքային վեճերը /ՄԱԿ-ի վարչական դատարանը/,
4. ֆիզիկական անձանց պատասխանատվության ենթարկելու հարցերը /1945թ. ստեղծված Նյուրնբերգի և Տոկիոյի զինվորական դատարանները/:

Նշված դատարաններից ամենահամապարփակը ՄԱԿ-ի Միջազգային դատարանն է, որին նախորդել է ՄԱԿ-ի հովանու ներքո ստեղծված միջազգային արդարադատության մշտական պալատը /ՄԱՄՊ/:

ՄԱՄՊ-ի աշխատանքն արտակարգ հաջող է եղել իր գործունեության 18 տարիների ընթացքում /1922-1940թթ./, որը որոշումներ է ընդունել պետությունների միջև ծագած 29 վեճերի կապակցությամբ և տվել 27 խորհրդատվական բնույթի եզրակացություններ, որոնք բոլորն էլ փաստորեն կատարվել են: Պալատի աշխատանքն ընդհատվել է երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով և 1946թ. Ազգերի լիգայի հետ միաժամանակ ցրվել է:

Միավորված Ազգերի կազմակերպության ստեղծման հիմնական նպատակն էր՝ խաղաղության ու միջազգային անվտանգության պահպանումը և պետությունների համագործակցության ամրապնդումը: Չամաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 1-ին կետի՝ միջազգային վեճերը պետք է լուծվեն «արդարության և միջազգային իրավունքի» սկզբունքներին համապատասխան:

ՄԱԿ-ի շրջանակներում գործող Արդարադատության միջազգային դատարանը հիմնադրվել է 1945թ., իսկ իր գործունեությունը սկսել է 1946թ. ապրիլին: Դատարանի նստավայրը Չաագայի /Նիդեռլանդներ/ խաղաղության պալատն է: Այն ՄԱԿ-ի վեց հիմնական մարմիններից միակն է, որ տեղակայված չէ Նյու Յորքում:

Դատարանն օժտված է երկու կարևոր գործառույթներով: Առաջինն այնպիսի վեճերի լուծումն է, որոնք կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով: Դատարանի որոշումները պարտադիր իրավական ուժ ունեն և բողոքարկման ենթակա չեն: Երկրորդ կարևոր գործառույթը ՄԱԿ-ի մարմիններին և համակարգի մյուս կառույցներին իրավական խնդիրների վերաբերյալ խորհրդատվական կարծիքների տրամադրումն է:

Դատարանը կազմված է 15 անկախ դատավորներից, որոնք ընտրվում են 9 տարի ժամկետով՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Գլխավոր վեհաժողովի կողմից: Դատարանի պաշտոնական լեզուներն են հանդիսանում անգլերենը և ֆրանսերենը:

Երբ Կոսովոյի խորհրդարանն արտահերթ նստաշրջանի ժամանակ ընդունեց անկախության հռչակագիր՝ Կոսովոն «անկախ, ինքնիշխան և ժողովրդավարական պետություն» հայտարարելու մասին, Սերբիան, որից միակողմանիորեն անջատվել էր այլաբանակալ այդ երկրամասը, վիճարկեց Կոսովոյի անկախության հռչակման իրավաչափությունը միջազգային իրավունքի տեսանկյունից: Չարցը մտավ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան, որը 2010թ. հուլիսի 22-ին հրապարակեց Կոսովոյի կողմից միակողմանիորեն հռչակված անկախության օրինականության վերաբերյալ իր դիրքորոշումը, համաձայն որի՝ Կոսովոյի կողմից անկախության հռչակումը միանգամայն օրինաչափ է և չի հակասում միջազգային իրավունքի սկզբունքներին:

Միջազգային հանրությունը վաղուց ձգտում էր ունենալ մշտապես գործող միջազգային քրեական դատարան, որովհետև ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը, հանդիսանալով քաղաքացիական դատարան, քրեական իրավագործությամբ չի օժտված և, հետևաբար, չի կարող ֆիզիկական անձանց /օրինակ՝ ռազմական հանցագործներին/ քրեական պատասխանատվության ենթարկել: Այդ խնդիրը մտնում է ազգային դատական մարմինների իրավասության ներ-



քո: Սակայն, տարածայնությունների պատճառով, այդ հարցը երկար ժամանակ ձգձգվել է:

Դեռևս 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովն իր բանաձևում նշել է հատուկ իրավաբանական մարմին ստեղծելու անհրաժեշտության մասին, որը մշտական հիմունքներով կզբաղվեր այն անձանց գործերով, որոնք պատասխանատու կլինեն ցեղասպանության և համանման ծանրության այլ հանցագործությունների կատարման համար: Սակայն հետագա աշխատանքներն անարդյունք եղան՝ «ագրեսիա» /նախահարձակում/ հասկացությունը բնորոշելու հարցում համաձայնության չգալու պատճառով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային հանրությունն ընդհանուր հայտարարի եկավ միայն «ցեղասպանության» հանցագործության բնորոշման հարցում, որի կապակցությամբ համապատասխան փաստաթղթեր ընդունվեցին: Միջազգային քրեական իրավունքի վրա մեծ ներգործություն ունեցան Նյուրնբերգի և Տոկիոյի դատավարություններն այն անձանց նկատմամբ, որոնք մեղավոր էին ռազմական և աշխարհի ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար: շետագայում, աշխարհի միաբնեռության և «սառը պատերազմի» պայմաններում, միջազգային քրեական դատարանի ստեղծման հարցն օրակարգից հանվեց: Միայն «սառը պատերազմը» վերջանալուց կետո այդ հարցը դարձյալ հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում և ցեղասպանությունների ու քաղաքացիական պատերազմների ընթացքում կատարված հանցագործությունների հետաքննության համար ստեղծվեցին իրավիճակային դատարաններ՝ ad hoc, որոնց ստեղծման հիմքերը, գործունեության ժամկետները և աշխարհագրական շրջանակներն էականորեն տարբերվում են միջազգային դասական դատարաններից: Նման դատարանների օրինակ կարող են ծառայել նախկին Հարավսլավիայի Միջազգային քրեական տրիբունալը Հաագայում, որը հիմնադրվել է 1993թ. ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 827 բանաձևի համաձայն և Ռուանդայի /Տանզանիա/ Միջազգային քրեական տրիբունալը, որը նույնպես հիմնադրվել է ՄԱԿ-ի կողմից /1994թ./:

Այս երկու միջազգային քրեական դատարանների փորձը ցույց տվեց անկախ և հիմնական դատարան ստեղծելու անհրաժեշտության մասին:

Այդ առումով, ՄԱԿ-ի նախաձեռնությամբ, Յժուժի համաժողովում /1998թ./ ընդունվեց Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը /այսուհետ՝ Կանոնադրություն/:

Կանոնադրության նպատակն է՝ դրանում նշված առավել ծանր հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությունը բացառելու և դրանով իսկ այդպիսի հանցագործությունների կանխմանը նպաստելու համար ներպետական քրեական իրավազորության մարմիններին լրացնող Միջազգային քրեական դատարանի հիմնադրումը:

Կանոնադրության հիման վրա ձևավորվում է մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարան: Վերջինս միջազգային իրավասություններով օժտված անկախ միջազգային դատարան է, որը կոչված է քրեական արդարադատություն իրականացնելու միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործությունների համար պատասխանատու ֆիզիկական անձանց նկատմամբ և, ըստ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի և 1-ին հոդվածի, լրացնում է ներպետական քրեական իրավազորության մարմինների համակարգը:

Կանոնադրության 5-րդ հոդվածը սահմանում է դատարանին ընդդատյա հանցագործությունների շրջանակը: Դրանք են՝ ցեղասպանության հանցագործությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ընդ որում՝ դատարանին ընդդատյա են ոչ միայն միջազգային բնույթ ունեցող զինված ընդհարումների ժամանակ կատարված պատերազմական հանցագործությունները, այլև միջազգային բնույթ չունեցող զինված ընդհարումների ժամանակ կատարված պատերազմական հանցագործությունները, ինչպես նաև ագրեսիայի հանցագործությունը: Կանոնադրությունն ամրագրում է, որ ագրեսիայի նկատմամբ դատարանն իր իրավազորությունը կիրականացնի միայն այն ժամանակ, երբ Կանոնադրության 121-րդ և 123-րդ հոդվածների համաձայն կընդունվի այդ հանցագործությունը սահմանող և այն պայմաններն ամրագրող դրույթը, որոնց դեպքում դատարանն իրականացնում է իր իրավազորությունն այդ հանցագործությունների նկատմամբ:

Կանոնադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ դատարանին ընդդատյա հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառ-

վում: Կանոնադրության այս դրույթը համահունչ է պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չլիարառելու մասին կոնվենցիային /Չայաստանի Չանրապետությունը դրան միացել է 1993թ./, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1973թ. դեկտեմբերի 3-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատու անձանց հայտնաբերման, ձեռքբերման, հանձնման և պատժի հետ կապված հարցերում միջազգային համագործակցության սկզբունքների մասին» բանաձևին:

Չայաստանի Չանրապետությունը, 1999թ. Կանոնադրությունը ստորագրելիս, պարտավորվել էր ճանաչել Միջազգային քրեական դատարանը որպես ներպետական քրեական իրավագործության մարմինները լրացնող ինստիտուտ: Սակայն, ՀՀ Սահմանադրական դատարանը, քննության առնելով «1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում /կից հայտարարությամբ/ ամրագրված պարտավորությունների՝ Չայաստանի Չանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, Կանոնադրության նախաբանի 10-րդ մասը և 1-ին հոդվածը համարել է ՀՀ Սահմանադրության 91-րդ և 92-րդ հոդվածներին հակասող, հիմնավորելով, որ արդարադատության իրականացումը միայն ՀՀ դատարանների բացառիկ իրավասությունն է, որոնք արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Կարևոր է նշել, որ Միջազգային քրեական դատարանը դա միջազգային արդարադատության «վերջին ապաստանն է»: Դատարանը գործում է միայն այն դեպքում, եթե պետությունը, որի տարածքում կատարվել է հանցագործությունը կամ էլ, որի քաղաքացին է հանդիսանում հանցագործը, չի ցանկանում կամ, փաստորեն, չի կարողանում քրեական հետապնդում իրականացնել կամ նրան որպես մեղադրյալ ներգրավել: Ցանկացած ենթադրյալ հանցագործության նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ մեխանիզմները.

- մասնակից պետություններից մեկը դատարանին որոշակի նյութեր է տրամադրում,

- ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դատարանին որոշակի նյութեր է տրամադրում,

- դատարանն իր նախաձեռնությամբ, ՄԱԿ-ի որևէ մասնակից պետության նկատմամբ հետապնդում է սկսում:

Դատախազի կողմից տրված յուրաքանչյուր սանկցիա և առաջադրված յուրաքանչյուր մեղադրանք պետք է հաստատված լինեն 3 դատավորի կողմից: Սուդանի նախագահ Օմար Ալ Բաշիրը, ով մեղավոր էր ԴարՖուրի հակամարտության կապակցությամբ ցեղասպանության կատարման մեջ, առաջին գործող պետության գլուխն էր, որին միջազգային արդարադատությունը 2008թ. կալանավորեց և ենթարկեց քրեական պատասխանատվության:

Միջազգային քրեական դատարանի կողմից դատապարտված անձինք պատիժը կրում են Չազայի բանտում, որի պահպանման պայմանները վերահսկվում են Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից:

Միջազգային քրեական դատական մարմինների թվին կարելի է դասել նաև այսպես կոչված «հիբրիդային դատարանները»: Նրանք ունեն ազգային և միջազգային իրավունքի իրավական հիմք և բաղկացած են ազգային և միջազգային դատավորներից: Վերջիններս հիմնականում նշանակվում են ՄԱԿ-ի կողմից: Այդ հիբրիդային դատարանները հիմնականում տվյալ երկրում գործող դատական համակարգի մասն են կազմում: Այդպիսի հիբրիդային դատարանների օրինակներ են Արևելյան Թիմորի /2000թ./, Կոսովոյի /2000թ./, Իրաքի /2005թ./ միջազգային դատարանները:

Չարկ է նշել, որ գոյություն ունեն նաև հանցագործության դեմ պայքարի միջազգային կառույցներ: Դրանց թվին դասվում են Ինտերպոլը, Եվրոպոլը և Ամերիպոլը: Ինտերպոլը քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն է, որի հիմնական խնդիրն է մասնակից երկրների ազգային իրավապահ մարմինների ջանքերը միավորել ընդհանուր հանցագործության դեմ պայքարում, իսկ Եվրոպոլը կոորդինացնում է ահաբեկչության, զենքի ապօրինի առևտրի, թմրադեղերի առևտրի, թրաֆիքինգի, երեխաներին պոռնոգրաֆիայի մեջ ներգրավելու և փողերի լվացման դեմ պայքարը:

Միջազգային դատական կառույցների շարքում իր ուրույն դերն ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը /ՄԻԵԴ/, որը ստեղծ-

վեց 1959թ. Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ հիման վրա: ՄԻԵԴ-ը կազմված է վերաքննիչ և բարձրագույն դատական ատյաններից: Գանգատարկման մարմինը դատարանի Մեծ պալատն է: Դատարանի իրավազորությունը տարածվում է Կոնվենցիան վավերացրած Եվրախորհրդի անդամ 47 պետությունների վրա: Յուրաքանչյուր երկիր ներկայացված է մեկ դատավորով, որին ընտրում է Եվրախորհրդարանի վեհաժողովը՝ անդամ պետության առաջադրած 3 թեկնածուների թվից: ՄԻԵԴ-ի իրավազորությունը հենվում է բացառապես Կոնվենցիայի և դրան կից 12 արձանագրությունների դրույթների վրա: Կոնվենցիայում ամրագրված են՝ կյանքի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքը, խոշտանգումների արգելումը և այլն: Ինչ վերաբերում է աշխատանքային, բնակարանային և այլ սոցիալական իրավունքներին, ապա դրանք դուրս են գտնվում ՄԻԵԴ-ի իրավազորությունից: ՄԻԵԴ-ը չի քննում նաև Կոնվենցիայի մասնակից պետությունների ներպետական իրավունքի կիրառման և մեկնաբանման հետ կապված հարցերը:

ՄԻԵԴ-ն իրավասու է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, եթե նրանք պնդում են, որ Եվրախորհրդի անդամ պետության կողմից դարձել են Կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում ամրագրված իրենց իրավունքների խախտման «զոհ»: Մասնավոր անձանց և կազմակերպությունների դեմ տրվող գանգատները չեն քննարկվում:

Գանգատների ընդունելության հիմնական պայմանների թվին են դասվում իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցների սպառումը, դիմելու ժամկետի /6 ամիս/ և գանգատի տրման կանոնների պահպանումը:

ՄԻԵԴ-ը տարածքային իրավազորություն ունի Եվրախորհրդի անդամ պետությունների ինքնիշխանության ներքո գտնվող տարածքների սահմանների և այն տարածքների վրա, որոնց նկատմամբ պետությունն արդյունավետ կառավարման հնարավորություն ունի: Դա հնարավորություն է տալիս հստակորեն սահմանազատել ՄԻԵԴ-ի իրավազորության ներքո գտնվող աշխարհագրական տարածքը: Որպես կա-

նոն, ՄԻԵԴ-ի իրավագործությունը տարածվում է տվյալ երկրի միջազգայնորեն ճանաչված սահմանների վրա, եթե նա չի հայտարարում, որ ինքն այն պետք է տարածի նաև այլ տարածքի վրա:

ՄԻԵԴ-ի իրավագործության աշխարհագրական սահմանների ճանաչման հարցը որոշում են իրենք՝ անդամ պետությունները: Օրինակ, 2002թ. Կոնվենցիային միանալիս, Չայաստանի Չանրապետությունը, քաղաքական նկատառումներից ելնելով, այդ հարցի հետ կապված Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ որևէ հայտարարություն չի արել: Եվ դա ճիշտ է, քանի որ Լեռնային Ղարաբաղը գտնվում է ՀՀ միջազգայնորեն ճանաչված սահմաններից դուրս: Դրանից հետևում է, որ Կոնվենցիան ԼՂՀ-ի նկատմամբ կիրառելի չէ: Դեռ ավելին, երբ Ադրբեջանը 2002թ. նույնպես միացավ Կոնվենցիային, հատուկ նշեց, որ իր երկիրը չի կարող երաշխավորել Կոնվենցիայի դրույթների կիրառումը ՀՀ կողմից գրավյալ տարածքների նկատմամբ: Փաստորեն, ստեղծվել է մի այնպիսի անտրամաբանական վիճակ, որը ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ Վ.Յովհաննիսյանի բնորոշմամբ. «Ադրբեջանի և Չայաստանի հակասությունների տիրույթում գտնվող ԼՂՀ-ի տարածքի վրա Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի իրավագործությունը չի տարածվում՝ զրկելով այդ չճանաչված հանրապետության քաղաքացիներին օգտվել Եվրոպայի խորհրդի կոնվենցիոն մարմինների պաշտպանությունից»:

Չնայած Չայաստանը Կոնվենցիային միանալիս որևէ վերապահում չի արել ԼՂՀ տարածքի նկատմամբ, բայց դատարանը գործնական աշխատանքում անտեսեց Չայաստանի դիրքորոշումը և կոնկրետ գործերով քաղաքական շեշտադրումներ կատարեց: Այսպես. ՄԻԵԴ-ի Մեծ պալատը 2015թ. հունիսի 16-ին հրապարակեց երկու վճիռ՝ «Զիրագովն ընդդեմ Չայաստանի» և «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» գործերով, համապատասխանաբար ԼՂՀ Բերձորի /Լաչին/ շրջանից ազգությամբ քուրդ Չիրագովների ընտանիքի և Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող ԼՂՀ Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղի Սարգսյանների ընտանիքի՝ իրենց տները վերադարձնելու և ունեցվածքի իրավունքները վերականգնելու կամ արդար փոխհատուցում ստանալու հարցերի վերաբերյալ:

Դատարանը բավարարեց կողմերի պահանջները և պարտավորեց-

րեց Յայաստանին ու Ադրբեջանին՝ հետամուտ լինել երկու ընտանիքների խախտված իրավունքների վերականգնման հարցում: Միաժամանակ, դատարանը ճանաչեց Յայաստանի իրավազրոյությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, փաստելով, որ Յայաստանը ԼՂՀ-ի նկատմամբ ունի քաղաքական, տնտեսական և ռազմական զգալի ազդեցություն, որի արդյունքում վերջինիս նկատմամբ «իրականացնում է արդյունավետ վերահսկողություն» և, հետևաբար, Յայաստանն է պատասխանատվություն կրում Արցախի տարածքում տեղի ունեցող իրավախախտումների համար: Մեր կարծիքով, դա սխալ մոտեցում էր, որովհետև Չիրագովն ունեցել է բոլոր միջոցները՝ ԼՂՀ դատական ատյաններում իր իրավունքները պաշտպանելու համար: Այս երկու դատական գործերի վճիռներից ոչ պակաս կարևոր էին Յայաստանը ներկայացնող դատավոր, ներկայումս ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ա.Գյուլումյանի և Պ.Ալբուկերկենի /Պորտուգալիա/ հատուկ կարծիքները: Ուշադրության արժանի է հատկապես վերջինիս նկատառումներն Արցախի անկախության պայքարի արդարացիության և Յայաստանի աջակցության հիմնավորվածության վերաբերյալ. «Որևէ ժամանակ, երբ երկրի բնակչության մի մասը ներկայացված չէ իր կառավարության կողմից, և բնակչության իրավունքները շարունակաբար խախտվում են, իր կառավարության կողմից զոհ դարձած բնակչությունը «որպես մի վերջին միջոց կարող է դիմել ապստամբության ընդդեմ բռնակալության և ձնշումների»՝ ըստ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանի հզոր ձևակերպման»:

Դատավորը նաև ավելացրել է, որ երբ բռնությունը շարունակաբար ոտնահարում է իր կազմից դուրս եկած բնակչության իրավունքները, ապա մեկ այլ պետության համար օրինական է ռազմական գործողության ձեռնարկումը՝ ի նպաստ անջատված բնակչության, վերջինիս կողմից իր տարածքում վերահսկողություն հաստատելուց և իր անջատումը հռչակելուց հետո: Փառք ու պատիվ այդ դատավորին:

Կարծում ենք՝ միջազգային հանրությանը պետք է մտահոգի չճանաչված պետություններում բնակվող քաղաքացիների իրավիճակը և դրանից բխող անհրաժեշտ մեխանիզմներ մշակի՝ միջազգային կառույցներում իրենց օրինական շահերը պաշտպանելու համար:

Միջազգային դատարաններն էապես տարբերվում են միջազգային

իրավարար /արբիտրաժային/ մարմինները, որոնք ոչ թե միջպետական, այլ մասնավոր քաղաքացիական և առևտրական գործերով կառույցներ են, և նրանց որոշումները պարտադիր ուժ ունեն վիճող կողմերի համար, օրինակ, Ստոկհոլմի առևտրաարդյունաբերական պալատը, միջազգային առևտրական արբիտրաժային դատարանը և այլն:

Կայացման բարդ և դժվարին ճանապարհ է անցել Անկախ պետությունների համագործակցության /ԱՊՅ/ Տնտեսական դատարանը: Այն ստեղծվեց 1992թ.՝ ԱՊՅ անդամ պետությունների միջև ծագած տնտեսական վեճերը լուծելու նպատակով: Հայաստանն ԱՊՅ-ին միացավ 1993թ., իսկ 2006թ. հայտարարեց ԱՊՅ Տնտեսական դատարանից դուրս գալու մասին, պատճառաբանելով, որ այդ կառույցն էական դեր չի խաղում համագործակցության երկրների տնտեսական կյանքում և տնտեսական խնդիրների կարգավորման հարցում:

Հայաստանը 2015թ. սկզբին դարձավ Եվրասիական Տնտեսական Միության /ԵՏՄ/ անդամ, որի չորս կառույցներից մեկն էլ ԵՏՄ Տնտեսական դատարանն է: Դատարանը քննում է Միության պայմանագրի հետ հնարավոր հակասություն ունեցող վեճերը և ապահովում է ԵՏՄ-ի մասին պայմանագրերի և այլ միջազգային պայմանագրերի կատարումը Միության անդամ պետությունների և մարմինների կողմից:

Ի դեպ, Հայաստանի ստորագրած միջազգային պայմանագրերը կարող են վիճարկվել ու չեղյալ համարվել ԵՏՄ Տնտեսական դատարանում: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանի Ազգային ժողովը, որևէ օրենք վավերացնելուց կամ նախաձեռնելուց առաջ, պետք է հաշվի առնի ԵՏՄ-ի առջև ստանձնած պարտավորությունները:

Ի տարբերություն ՄԻԵԴ-ի, որի վճիռների կատարումը վերահսկվում է Եվրախորհրդի կողմից, ԵՏՄ Տնտեսական դատարանի վճիռներն ունեն խորհրդատվական բնույթ:

ԵՏՄ տնտեսական դատարանը գործում է Բելառուսի մայրաքաղաք Մինսկում: ԵՏՄ յուրաքանչյուր պետությունից /Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ռուսաստան, Ղրղզստան/ ներկայացված է երկու դատավոր:

Ներկա պայմաններում, միջազգային իրավունքի և պետությունների ազգային իրավունքի փոխներգործության գործընթացը լայն թափ է առնում և համակարգային բնույթ է կրում: Դրա նշանակությունն այնքան է



աճում, որ շատ պետություններ այդ գործընթացին կարևորագույն դեր են հատկացնում և ամրագրում իրենց հիմնական օրենքներում:

Այսպես՝ ԼՂՀ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներ համահունչ են միջազգային կոնվենցիոն նորմերով պաշտպանվող իրավունքների նորմերին և սկզբունքներին: ԼՂՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը հռչակում, ազդարարում է, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սահմանադրության 7-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը հռչակում են, որ ԼՂՀ միջազգային պայմանագրերը ԼՂՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Օրենքներն ու այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին: Սահմանադրական այս նորմերը կարելի է դիտել որպես միջազգային իրավունքի հետ արցախյան իրավական համակարգի փոխներգործության սահմանադրական հիմք: Այդ առումով, միջազգային իրավական նորմերը, այդ թվում՝ Արցախի Հանրապետության կողմից վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերն ազգային իրավունքի այլ նորմերի նկատմամբ օժտված են գերակայությամբ:

Անվիճելի պետք է համարել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության *de facto* գոյությունը պատմական իրողություն է և ինքնին կարգավորիչ գործոն է տարածաշրջանում: Անտեսել այդ փաստերը՝ աղետաբեր կլիներ ինչպես ԼՂՀ քաղաքացիների, այնպես էլ տարածաշրջանի մյուս ժողովուրդների համար:

Միջազգային իրավական հարթակներից օգտվելու համար ԼՂՀ-ն ուշադրության արժանի ծանրակշիռ քայլեր է կատարում՝ ելնելով միջազգային և ազգային իրավունքի դիրքերից: Այդ քայլերին միտված է նաև հանրապետության նախագահի դիմումների հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանի կողմից քննության առնված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում, Եվրոպայի ճարտարապետական ժառանգու-

թյան պահպանության մասին կոնվենցիայում և Ջնագիտական ժառանգության պահպանության մասին Եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների՝ ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոնց քննության արդյունքներով որոշվել են, որ դրանք համապատասխանում են երկրի Սահմանադրությանը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող այդ փաստաթղթերը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2015թ. մայիսի 15-ին հանրապետության նախագահի կողմից վավերացվել են:

*ԼՂՀ դատական իշխանություն /ԻՏՎ/ հանդես, 3 /19/, 2015թ.*

**ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*Այն միտքը, որ ինչ որ մեկը մեզ երկուսիս  
լսում է, ինձ կատաղության է բերում: Առանց  
քաղաքական ազատության կարելի է ապրել,  
առանց ընտանեկան անձեռնմխելիության՝ հնարավոր չէ...  
**Պուշկինի՝ կնոջը գրած նամակից***

Գիտության և տեխնիկայի ներկա առաջընթացի պայմաններում ստեղծվել են այնպիսի միջոցներ և հարմարանքներ /հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում, գաղտնասարքերի, թաքնված խցիկների տեղադրում և այլն/, որոնք հնարավորություն են տալիս խառնվել, միջամտել անհատի անձնական կյանքին: Տեղեկատվական բնագավառում անձնական տվյալների լայնորեն օգտագործումը, մի կողմից հնարավորություն է ստեղծում արդյունավետ սոցիալական կառավարում իրականացնել, մյուս կողմից, այն նոր հիմնախնդիրներ է ստեղծում՝ տեղի տալով անհատի մասնավոր կյանքի անհարկի միջամտությանը:

Այդ համընդհանուր հիմնախնդրի նկատմամբ զարգացած պետությունների ուղենշած լուծումը կայանում է նրանում, որպեսզի նոր տեխնոլոգիաներ ստեղծելու գործընթացում իրենց երկրների քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն օրենսդրությամբ հուսալիորեն պաշտպանված լինեն:

**Իսկ ինչ է նկատի ունեցվում «մասնավոր կյանք» եզրույթի տակ:**

Միջազգային փաստաթղթերում օգտագործվող «մասնավոր կյանք», «ընտանեկան կյանք», «անձնական կյանք» եզրույթները սովորաբար օգտագործվում են որպես հոմանիշներ: Սակայն, իր բովանդակությամբ, մասնավոր կյանքն ավելի լայն հասկացություն է, քան վերջին երկուսը: Սկզբունքորեն դրանք կարելի է համարել որպես մասնավոր կյանքի բաղադրիչներ, տարատեսակներ:

Մասնավոր կյանքը, որպես որոշակի իրողություն, ընդգրկում է անձնական և ընտանեկան կյանքի, ազգակցական, ընկերական կապերի,

տնային ապրելաձևի, ինտիմ և անձնական ուրիշ հարաբերությունների, մտերմության, համակրությունների և հակակրությունների ամբողջ ոլորտը, մարդու մտքերի նկարագիրը, նրա վարքագծի պահելաձևը, աշխարհայացքը, ստեղծագործությունը, տարվածությունը և այլն:

Ընդհանուր առումով, մասնավոր կյանքը ֆիզիկական և հոգևոր այն բնագավառն է, որը վերահսկվում է հենց անհատի կողմից, այսինքն՝ գտնվում է պետության և հասարակության վերահսկողությունից դուրս և անձեռնմխելի է շրջապատի համար: Փաստորեն, այդ ոլորտում անհատն ինքն է որոշում իր վարքագիծը, իր գործողությունների ձևերը և շրջանակները: Իհարկե, այստեղ խոսքը գնում է չափահաս անհատի մասին, ով ընդունակ է իր արարքների համար լրիվությամբ բարոյական պատասխանատվություն կրել: Երեխայի մասնավոր կյանքի մասին խոսք լինել չի կարող:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավական ինստիտուտը սերտորեն առնչվում է բնակարանի անձեռնմխելիության, դավանանքի ազատության, պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության ինստիտուտների հետ:

Դժվար է ասել՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտը ե՞րբ է ծագել, սակայն փաստերը հուշում են, որ դրա արմատները գնում են խոր հնադար՝ մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերում ունենալով յուրահատուկ դրսևորումներ:

Հնադարյան իրավական հուշարձանների՝ Բաբելոնի արքա Յամմուրաբիի և Ասորեստանի օրենքների մի շարք նորմեր մարդուն պաշտպանել են զրպարտությունից. չապացուցված մեղադրանքի դեպքում մեղադրողը ենթարկվել է պատասխանատվության: Հին հռոմեական «12 աղյուսակների օրենքները» մահապատիժ էր նախատեսում ուրիշին զրպարտելու կամ արատավորելու դեպքում: Օրինաչափ էր համարվում գիշերային ժամին ուրիշի բնակարանում հայտնված անձի սպանությունը:

Բժշկությունը, երևի առաջին մասնագիտությունն է, որին ծառայողները մշտապես առնչվելով մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիքներին, պարտավոր են եղել չհրապարակել դրանք: Մեջբերենք մի հատված բժշկագիտության հայր Հիպոկրատի երդման տեքստից. «Ինչ էլ որ տեսնեմ կամ լսեմ իմ բժշկական գործունեության ըն-

թացքում կամ նրանից դուրս, մասնավոր կյանքում, որ չպետք է հրապարակ հանվի, երդվում են լռության մատնել ու այն համարել սրբազան գաղտնիք»:

Մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանները նույնպես իրազեկ են դառնում իրենց վստահորդների կյանքի ներաշխարհին, սակայն «փաստաբանական գաղտնիքը» որպես հնագույն իրավական ինստիտուտ, կանոնակարգում է այն դեպքերը, որոնց պարագայում միայն փաստաբանը կարող է հրապարակել փաստաբանական գաղտնիք համարվող տեղեկությունները և ապացույցները:

Ուշ միջնադարում բժիշկներին և փաստաբաններին «միացան» հոգևոր դասի այն ներկայացուցիչները, ովքեր անհատական խոստովանության կանոնական ինստիտուտի ջատագովներ էին հանդիսանում: Միաժամանակ հաստատվեց խոստովանության գաղտնիությունը, որի դեպքում մեղքերը խոստովանեցնող քահանան /խոստովանահայր/ պարտավոր էր պահպանել խոստովանողի անձնական կյանքի գաղտնիքը:

Պատմության մեջ մարդու իրավունքների առաջին հռչակագիրը համարվում է պարսից արքա Կյուրոս Մեծի անունից գլանի ձև հիշեցնող ադյուսի վրա աքքադերեն լեզվով փորագրված հայտարարությունը: Երբ Կյուրոս Մեծը մ.թ.ա. 539թ. գրավեց Բաբելոնը, դիմեց մի աներևակայելի քայլի՝ ազատ արձակելով բոլոր ստրուկներին: Դեռ ավելին, նա հայտարարեց, որ յուրաքանչյուր ոք ազատ է ընտրելու իր կրոնը, այսինքն՝ հռչակեց ռասայական իրավահավասարության սկզբունքը:

Մարդու իրավունքների գաղափարը Բաբելոնից դուրս եկավ և տարածվեց դեպի Չնդկաստան, Չոնաստան, Չոնոմ և եվրոպական այլ երկրներ՝ հանդես գալով տարբեր փաստաթղթերի՝ Մեծ Բրիտանիայի Ազատությունների մեծ խարտիայի /1215թ./ և իրավունքների մասին Խնդրագրի /1628թ./, ԱՄՆ-ի Սահմանադրության /1787թ./, Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի /1789թ./, ԱՄՆ-ում 1791թ. ընդունված իրավունքների մասին բիլի /անգլոսաքսոնական իրավունքի ընտանիքի երկրներում՝ օրենք/ տեսքով:

Կյուրոս Մեծի հայտարարությունը թարգմանված է ՄԱԿ-ի պաշտոնական 6 լեզուներով, իսկ նրա դրույթներն արտացոլված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին 4 հոդվածներում:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության առաջին բնորոշումը տրվել է դեռևս XX դարի սկզբին, ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Լուի Բրանդի կողմից, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իրեն չանհանգստացնեն, որպեսզի ոչ ոք չհամարձակվի մտնել անհատի կյանքի անձնական ոլորտը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը /այսուհետ՝ ՅՋՀակագիր/ առաջին փաստաթուղթն է, որում ամրագրված իրավունքները վերապահված են յուրաքանչյուր անհատի:

ՅՋՀակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական միջամտության իր անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ, իր բնակարանի, նամակագրության կամ իր պատվի ու համբավի դեմ կամայական ոտնձգության: Ամեն ոք ունի օրենքով պաշտպանվելու իրավունք ընդդեմ նման միջամտության կամ ոտնձգության:

Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում ՅՋՀակագիրը յուրաքանչյուր անձի օժտում է այդ իրավունքներն իրավասու ազգային դատարանի միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու իրավունքով:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը նույնպես կարևոր դրույթներ է պարունակում անձի անձնական կյանքի պաշտպանության մասին: Յամաձայն դաշնագրի 17-րդ հոդվածի՝ արգելվում է անձի անձնական, ընտանեկան կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ անօրինական միջամտությունը, ինչպես նաև ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվելու իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 8-րդ հոդվածը հռչակելով անձնական կամ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, շեշտում է, որ՝

«1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը, ապահովվեն իր բնակարանի անձեռնմխելիությունը, նամակագրության գաղտնիությունը:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքների իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությանը՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունք»:

Կոնվենցիայի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու մասնավոր կյանքի պաշտպանության միջազգային իրավական համակարգի իրացումը կախված է կոնկրետ պետությունից և այդ առումով յուրաքանչյուր պետություն իր օրենսդրության մեջ ինքն է որոշում միջազգային հանրության կողմից ճանաչված մարդու իրավունքների և ազատությունների ծավալը:

Պետության ժողովրդավարական ռեժիմը ենթադրում է, որ իրավունքները և ազատությունները ոչ միայն պետք է ճանաչվեն և ամրագրվեն օրենսդրությամբ, այլև իրապես ապահովվեն նրանց իրականացման համար ինչպես իրավական, այնպես էլ փաստական պայմաններ ստեղծելու միջոցով: Դա նշանակում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հռչակումը դեռևս բավարար չէ, անհրաժեշտ է նրա երաշխավորվածությունը և պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 23-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված էր, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 31-րդ հոդվածն օգտագործում է «մասնավոր կյանք» եզրույթը: Նշված հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք, իսկ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ մասնավոր և ընտանե-

կան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ԼՂՀ Սահմանադրությունը, չնայած «մասնավոր կյանք» եզրույթը չի օգտագործում, բայց հենվելով միջազգային փաստաթղթերի վրա՝ Սահմանադրությունը բովանդակում է մի շարք նորմեր՝ մարդու մասնավոր կյանքի ապահովման վերաբերյալ: Դիմենք Սահմանադրության 23-րդ հոդվածին.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունք:

2. Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ կարող են հավաքվել, օգտագործվել կամ տարածվել միայն օրենքով նախատեսված տեղեկություններ: Արգելվում է անձի վերաբերյալ տեղեկությունների օգտագործումը և տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալ իր վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում առկա տեղեկություններին և պահանջել դրանց ճշգրտում կամ վերացում՝ օրենքով նախատեսված դեպքերում:

4. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով՝ դատարանի որոշմամբ»:

Կարծում ենք, որ առաջիկա սահմանադրական փոփոխությունների ընթացքում Սահմանադրության 23-րդ հոդվածը լրամշակման կենթարկվի, որում հստակորեն կարտացոլվի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, նրա գաղտնիության իրավական ռեժիմը և պաշտպանությանն ուղղված կառուցակարգերը:

Իրավունքների պաշտպանության երաշխիքների տակ նկատի է ունեցվում միջազգային իրավական ակտերում, սահմանադրություններում և օրենքներում ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների



և ազատությունների իրացման կառուցակարգերը և դրանց պաշտպանությունը:

Ներպետական երաշխիքների հիմքը երկրի սահմանադրությունը և գործող օրենսդրությունն են: Այդ առումով մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված կառուցակարգերը կարելի է բաժանել 2 խմբի.

ա/ պաշտպանության պետական ձևեր,

բ/ պաշտպանության ոչ պետական ձևեր:

Պաշտպանության պետական ձևերից ամենաառաջնայինը դատական պաշտպանությունն է, որը նախատեսված է ինչպես միջազգային փաստաթղթերով, այնպես էլ տվյալ երկրի սահմանադրությամբ:

Այսպես՝ ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուրին վերապահում է հավասարության պայմաններում, արդարադատության բոլոր պահանջների նկատմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Նշված հոդվածի 2-րդ մասի ուժով՝ դատավարության մասնակիցների անձնական և ընտանեկան կյանքի, անչափահասների շահերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, հանրության բարոյականության կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվամիջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննությանը կամ դրա մի մասին կարող է արգելվել դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության դատական պաշտպանության իրավունքն անձը կարող է իրացնել քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների միջոցով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասը ոչ նյութական բարիքների թվին է դասում նաև անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Նույն հոդվածի 2-րդ մասը նշում է, որ ոչ նյութական բարիքները, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան, պաշտպանվում են դրանցով նախատեսված դեպքերում ու

կարգով, ինչպես նաև այն դեպքերում ու այն սահմաններում, որոնցում քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների օգտագործումը /հոդված 14-րդ/ բխում է խախտված ոչ նյութական իրավունքի էությունից և այդ խախտումների հետևանքների բնույթից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձը /անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով/ իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ԼՂՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Նույն օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ գործի քննությունը դռնփակ դատական նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում:

Անձի անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ գործերով դռնփակ դատական նիստում գործի քննության սահմանադրական նորմն իր արտացոլումն է գտել նաև ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ և ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 131.1-րդ հոդվածների 2-րդ մասերում:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու կապակցությամբ: Ինչպես նկատելի է, տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտն անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովող հասարակական հարաբերություններն են:

ԼՂՀ քրեական դատավարության մի շարք հոդվածների /93-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ, 99-րդ, 181-րդ և այլն/ դրույթներ վերաբերվում են անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանը և պաշտպանությանը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրքը մատնանշում է այն

հիմքերը, որոնց առկայության դեպքում դատարանի որոշմամբ, հարուցված քրեական գործի շրջանակներում, քննիչի կողմից կարող են վերահսկվել կասկածյալի կամ մեղադրյալի նամակագրությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ու լսվել հեռախոսային խոսակցությունները: Քաղաքացու այդ իրավունքի ապահովման երաշխիք է հանդիսանում ԼՂՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Նամակագրություն» հասկացության մեջ, բացի գրավոր հաղորդակցվելու ավանդական ձևերից, ինչպիսիք են փոստը, հեռագիրը, հեռախոսագրույցը, ներառվում են նաև կապի ժամանակակից մյուս ձևերը՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստը: Հեռախոսային խոսակցությունների հետ կապված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թեև հեռախոսագրույցները կոնկրետ նշված չեն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետում, դատարանը գտնում է, որ նման գրույցները ներառվում են այդ հոդվածներում բովանդակվող «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ:

Ամեն պարագայում, քաղաքացու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը պետք է պայմանավորված լինի միայն օբյեկտիվ անհրաժեշտությամբ և իրականացվի նախնական դատական վերահսկողության ինստիտուտի նորմերով նախատեսված օրինականության շրջանակներում:

Քննարկվող հարցի առնչությամբ այլ մոտեցում է նախատեսվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել արտաքին դիտում, ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական այլ միջոցառումներ:

ԼՂՀ-ում այսօրվա դրությամբ նման օրենք չի ընդունվել:

Դատական պաշտպանության հետ սերտորեն առնչվում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, առանց որի արդյունավետ աշխատանքի դատական ամբողջ գործունեությունը կարող է հավասարվել զրոյի:

Դատական պաշտպանությունից բացի, պետական իշխանության մի շարք մարմիններ պարտավոր են իրավական պաշտպանություն իրականացնել: Պետական իշխանության մարմինների համակարգում հանրապետության նախագահն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, ով պաշտոնն ստանձնելիս, երդվում է. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները... ի փառս Լեռնային Ղարաբաղի Յանրապետության և ի բարօրություն ժողովրդի:

Այդ բնագավառում լուրջ դերակատարություն ունեն Ազգային ժողովը, կառավարությունը, դատախազության և տեղական ինքնակառավարման մարմինները, մարդու իրավունքների պաշտպանը /օմբուդսմեն/: Վերջինս Սահմանադրությամբ օժտված է անկախ պաշտոնատար անձի կարգավիճակով և կոչված է իրականացնելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության ուժով յուրաքանչյուր անձ իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով ու կարգով ստանալ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Բացի դրանից, Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի օժտել է իր իրավունքները և ազատություններն օրենքով չհարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունքով: Այստեղ խոսքը վերաբերում է իրավունքների պաշտպանության «ոչ յուրիսդիկցիոն» ձևերին /մեթոդներին/: Դրանց թվին կարող են դասվել՝ իրավապաշտպան բազմաթիվ կազմակերպությունները, երթերը, ցույցերը, հանրահավաքները, զանգվածային լրատվության միջոցները, ինքնապաշտպանության տարբեր դրսևորումները և այլն:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանությանն է ուղղված Սահմանադրության 44-րդ հոդվածի 4-րդ մասը, որի դեպքում, երբ

անհատը սպառում է իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Դրանց թվին կարելի է դասել՝ ՄԱԿ-ը, վերջինիս կողմից ստեղծված տնտեսական ու սոցիալական խորհուրդը և դրա կողմից հիմնված Մարդու իրավունքների հանձնաժողովը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարը, Եվրոպական մի շարք կառույցներ, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգում գործող Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը /ԵԱՅԿ/, Եվրոպայի խորհուրդը /ԵԽ/, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և այլն:

*ԼՂՅ դատական իշխանություն /ԻՏԿ/ հանդես, 1 /20/, 2016թ.*

## ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացին, ամենօրյա կյանքի հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում՝ ֆինանսական, հարկային, կենսաթոշակային, սոցիալական, բժշկության և այլն, կոնկրետ նպատակներով տեղեկություններ է հայտնում իր անուն-ազգանվան, հասցեի, աշխատավայրի, բնակավայրի, ընտանիքի կազմի, հեռախոսահամարի և այլնի մասին:

Անձնական տվյալների յուրահատկությունը կայանում է նրանում, որ դրանք պատկանում են ֆիզիկական անձին, օտարման ենթակա չեն և քաղաքացիական շրջանառության օբյեկտներ լինել չեն կարող: Այլ խոսքերով, մարդկանց վերաբերյալ տվյալներն էլ առուվաճառքի առարկա չեն կարող դառնալ: Սակայն դա չի բացառում օրենքով սահմանված կարգով կամ անձի համաձայնությամբ նրա անձնական տվյալների օգտագործումը:

Անձնական տվյալների պաշտպանության հարցի պատմությունն սկսվում է 1976 թվականից, երբ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն ձեռնամուխ եղավ ֆիզիկական անձանց իրավունքների պաշտպանության նպատակով համապատասխան կոնվենցիայի նախապատրաստմանը: Այն արդեն 1981 թվականից պատրաստ ու բաց էր մասնակից պետությունների կողմից ստորագրվելու համար և կոչվում է «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա: Դա առաջին միջազգային իրավական պարտադիր փաստաթուղթն է, որում տրված են այն ստորագրած մասնակից պետությունների քաղաքացիների պաշտպանության մեխանիզմները, որոնք կարող են խախտվել նրանց անհատական տվյալների հավաքման և մշակման գործընթացում:

Կոնվենցիան արձանագրում է, որ անձնական տվյալները, որոնք բացահայտում են ռասայական ծագումը, քաղաքական կարծիքները, կրոնական կամ այլ համոզմունքները, ինչպես նաև առողջությանը կամ սեռական կյանքին առնչվող անձնական տվյալները, չեն կարող մշակվել ավտոմատ կերպով, եթե ներպետական իրավունքը չի ապահովում համապատասխան երաշխիքներ: Նույնը կարող է կիրառվել դատվա-

ծությանն առնչվող անձնական տվյալների նկատմամբ:

Մեր հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Անհատական տվյալների մասին» 2003թ. հոկտեմբերի 17-ի ՅՕ-65 օրենքով, որը լրիվությամբ կրկնում է ներկայում ուժը կորցրած՝ Չայաստանի Չանրապետության նույնանուն օրենքի դրույթները: Համաձայն օրենքի՝ անհատական տվյալ է համարվում նյութական կրիչի վրա գրավոր կամ այլ կերպ ամրագրված ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը:

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ոլորտն ընդհանրական ձևով ամրագրված է նաև ԼՂՀ Սահմանադրությամբ, որի 23-րդ հոդվածի համաձայն՝ առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ կարող են հավաքվել, օգտագործվել կամ տարածվել միայն օրենքով նախատեսված տեղեկություններ: Արգելվում են անձի վերաբերյալ տեղեկությունների օգտագործումը և տարածումը, եթե դրանք հակասում են տեղեկությունների հավաքման նպատակներին: Սահմանադրությունը յուրաքանչյուրին իրավունք է վերապահում ծանոթանալու իր վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում առկա տեղեկություններին և պահանջել դրանց ձգարտում կամ վերացում՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Հարկ է նշել, որ տասներեք տարի առաջ ընդունված՝ «Անհատական տվյալների մասին» ԼՂՀ օրենքում կատարվել է ընդամենը մեկ ոչ էական փոփոխություն: Այդ այն դեպքում, երբ Չայաստանի Չանրապետությունում 2015 թվականին ընդունվեց ժամանակին համահունչ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» նոր օրենքը:

Գտնում ենք, որ «Անհատական տվյալների պաշտպանության մասին» Արցախում գործող օրենքը չի համապատասխանում ժամանակակից չափանիշներին, չի կարգավորում իրավունքի պաշտպանության ձևերը, օրենքի մի շարք նորմեր խնդրահարույց են, քանի որ հստակեցված չեն անհատի և նրա անձնական տվյալները մշակողների փոխադարձ իրավունքները և պարտականությունները, բացակայում են անձնական տվյալներ մշակելու օրինականության նկատմամբ հսկողություն

իրականացնող մարմինը, անձնական տվյալները երրորդ անձանց և այլ պետություններ փոխանցելու մեխանիզմները:

Բոլոր դեպքերում, օրենքի գլխավոր գործող անձը պետք է լինի մարդը՝ իր անձնական տվյալների գաղտնիության սահմաններով:

Աշխատողի անձնական տվյալների վերաբերյալ հարաբերություններն առավել չափով կարգավորված են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով, որտեղ տրված են աշխատողի անձնական տվյալների մշակման ներկայացվող ընդհանուր պահանջները և այդ տվյալների պաշտպանության երաշխիքների, աշխատողի անձնական տվյալների փոխանցումը, աշխատողների իրավունքները՝ կապված գործատուի մոտ պահպանվող տվյալների պաշտպանության հետ և այլն:

Արցախի Սահմանադրության դրույթները վկայում են, որ երկիրը հաստատակամ է ժողովրդավարական պետություն կառուցելու հարցում, որտեղ բարձրագույն արժեքը մարդն է հանդիսանում: Այդ համատեքստում ողջունելի պետք է համարել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում ամրագրված այն դրույթը, որ «Ժամանակակից միջազգային կարգավորումներին համահունչ՝ պետք է կարգավորել անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ անդրադառնալով անձնական տվյալներ հավաքելու, մշակելու և դրանց ծանոթանալու հարցերին»:

Յուսանք, որ ԼՂՀ նոր Սահմանադրության նախագծում առանձին նորմ կհատկացվի անձնական տվյալների պաշտպանության իրավական ինստիտուտին, որում և դրանից բխող սահմանադրական օրենքում հստակորեն նշված կլինեն այդ ոլորտի իրավական կարգավորման հարցերը, մասնավորապես՝ անձնական տվյալների՝ հանրությանը հասանելիության սահմանները, դրանց անօրինական մշակման և կանխման վերահսկողական, պատժիչ-պաշտպանիչ մեխանիզմները և այլն:

*«Ազատ Արցախ» ՅԹ, 3 նոյեմբերի 2016թ.*



**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ**

*ԱՄՆ-ի Գերագույն դատարանի 9 դատավորի  
ձեռքում է գտնվում երկրի հանգստությունը,  
բարեկեցությունը և բուն գոյությունը:  
**Ա.Թորվիլ***

Անկախ դատական իշխանության առկայությունը ժողովրդավարական պետության պարտադիր հատկանիշն է: Նման պետությունում իրավունքի գերակայությունն առաջին պլան է մղվում, որտեղ հասարակության յուրաքանչյուր անդամ պաշտպանված է այլոց հակաիրավական քայլերից, այդ թվում՝ պետության, նրա մարմինների և պաշտոնատար անձանց անօրինական գործողություններից: Այդ առաքելության իրականացման հասցեատերն անկախ դատական իշխանությունն է, առանց որի պետությունն իրավական համարվել չի կարող: Իսկ իրավական պետությունում Ֆեմիդայի՝ արդարադատության սուրը հավասարապես պաշտպանում է իրավունքի բոլոր սուբյեկտներին:

Սակայն դա միշտ այդպես չի եղել: Հանրահայտ է, որ հնում դատարանների և արդարադատության գործառույթները գտնվել են թագավորների, միապետերի, արքաների և հոգևոր դասի ղեկավարների վերահսկողության ներքո, որտեղ ինքնուրույն և անկախ դատարանների մասին խոսք լինել չէր կարող:

Հայ ժողովրդի արցախյան հատվածի արդարադատության պատմությունն իր արմատներով հասնում է դարերի խորքերը՝ սնուցում ստանալով Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունից, Դավիթ Ալավկա որդու Կանոնական օրինադրությունից, Մխիթար Գոշի Դատաստանագրքից և հայ իրավական մտքի այլ հուշարձաններից:

Խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դատական համակարգը, որը ձևավորվել էր 1923-1924թթ., կազմված էր Շուշիի, Հադրութի, Մարտունու, Մարտակերտի, Ստեփանակերտի շրջանային ժողովրդական դատարաններից և մար-

գային դատարանից: Ասկերանի շրջան ստեղծվելու կապակցությամբ, 1978թ. ստեղծվեց Ասկերանի շրջանային ժողդատարան, իսկ Ստեփանակերտում՝ Ստեփանակերտի քաղաքային ժողդատարան: Դատական այդ համակարգը, որը ղեկավարվում էր ԽՍՀՄ և Խորհրդային Ադրբեջանի օրենսդրությամբ և դատական ակտերը կայացնում հանուն Խորհրդային Ադրբեջանի Չանրապետության, գործեց մինչև Խորհրդային Միության փլուզումը:

Արցախի Չանրապետության դատական իշխանության ստեղծումը կապված է հանրապետության անկախության հռչակման հետ: «Դատական իշխանություն» եզրույթը, որն առաջին անգամ օգտագործվել է ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրության մեջ, մեր հանրապետության փաստաթղթերում իր ամրագրումն ստացավ Արցախի նորընտիր Գերագույն խորհրդի /այսուհետ՝ Ազգային ժողով/ առաջին նստաշրջանում՝ 1992թ. հունվարի 6-ին ընդունված՝ «Լեռնային Ղարաբաղի Չանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքում:

Նորընտիր Ազգային ժողովի մեկ այլ որոշմամբ՝ Լեռնային Ղարաբաղի մարզային դատարանը վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի Չանրապետության Գերագույն դատարան, իսկ մարզային դատախազությունը՝ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության դատախազություն:

Այսպիսով, Արցախի բարձրագույն դատական ատյանն իր ներկայիս «Գերագույն դատարան» անվանումը կրում է Ազգային ժողովի 1992թ. հունվարի 6-ի Յ.Ն. 0011-1 որոշման հիման վրա: Յետևաբար, 1992թ. հունվարի 6-ը պետք է համարել Արցախի Գերագույն դատարանի ծննդյան օր, որի 25 տարին լրանում է 2017թ. հունվարի 6-ին: Այդ քառորդ դարի ընթացքում Արցախի դատական իշխանության և հատկապես Գերագույն դատարանի աշխատանքում շատ բան է փոխվել, չնայած դրանք ոչ հասարակ պայմաններում են տեղի ունեցել:

Արցախի Գերագույն դատարանի ստացած ժառանգական համակարգը, սակայն, ի սկզբանե կրում էր խորհրդային արդարադատության ողջ դրոշմը:

Չանրապետական մարմինների կազմավորման սկզբնական ամիսներին Արցախի դատարանները և իրավապահ մարմինները սեփական

օրենսդրության կիրառման համապատասխան բազա չեն ունեցել: Այդ հարցում Ազգային ժողովն իր 1992թ. հունիսի 6-ի որոշմամբ հստակություն մտցրեց և մինչև սեփական Սահմանադրության ու օրենքների ընդունումն Արցախի տարածքում կիրարկման մեջ դրվեց Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, իսկ օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունների համար որոշվեց կիրառել նախկին ԽՍՀՄ այն օրենսդրական ակտերը, որոնք չեն հակասում ԼՂՀ անկախության Ռեչակագրին, այդ ակտերի կիրառման ընթացքում «Հայաստանի Հանրապետություն» կամ «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն» եզրույթները փոխարինելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» եզրույթով:

Չնայած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքը հռչակեց հանրապետության տարածքում ինքնուրույն դատական իշխանության իրականացման մասին, բայց արցախյան գոյամարտի տարիներին դատական իշխանության վերաբերյալ որևէ հիմնարար փաստաթուղթ չընդունվեց, որի պատճառով բավական ակնհայտ մնաց գործադիրի կողմից դատական իշխանության վրա ներգործելու դեռևս Խորհրդային Միությունից մնացած ժառանգությունը: Հանրապետության պետական շինարարության առաջին տարիներին երկրում ձևավորվել էր երկաստիճան դատական համակարգ, որի ստորին օղակը հանդիսացել են Հադրութի, Մարտունու, Շուշիի, Ասկերանի և Մարտակերտի շրջանային, Ստեփանակերտի քաղաքային ժողդատարանները, ինչպես նաև դրանց հավասարեցված Արցախի զինվորական դատարանը:

Հետպատերազմյան տարիներին Արցախի դատական իշխանության մասին առաջին օրենքն ընդունվեց 1996թ. մայիսի 6-ին: Ասել, թե օրենքն արմատական բարեփոխումներ կատարեց պետական իշխանության երրորդ ճյուղի համար, ճիշտ չէր լինի, քանի որ օրենքը միայն արձանագրեց գործնականորեն ստեղծված դատական համակարգը և շատ թե քիչ տարբերակ մշակեց Գերագույն դատարանի տարբերատյանների /դատական կոլեգիա, դատական պալատ, պլենում/ դատական գործառույթները դատավորների ավելի քիչ քանակով իրականացնելու համար: Օրենքն ընդամենն ամրագրեց հանրապետությունում ձևավոր-

ված երկաստիճան դատական համակարգը:

Չետպատերազմյան տարիներին սահմանադրական արդարադատության ինստիտուտի ընթացակարգերի բացակայությունը Գերագույն դատարանի համար նման հարցերի վերաբերյալ իր գրավոր դիրքորոշումն արտահայտելու արգելք չի եղել ամենևին: Այդ առումով, թերևս սահմանադրական արդարադատության իրականացման մեկնարկ պետք է համարել Արկադի Ղուկասյանի՝ 1997թ. ԼՂՀ նախագահ ընտրվելու կապակցությամբ ԼՂՀ նախագահի թեկնածու Ալբերտ Ղազարյանի կողմից ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության հարցով Գերագույն դատարան դիմելը: Չունենալով տվյալ ոլորտը կանոնակարգող որևէ նորմատիվ ակտ, Գերագույն դատարանը ղեկավարվել է քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերով և իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Հարկ է նշել, որ սահմանադրական արդարադատության ինստիտուտը ԼՂՀ-ում մտցվեց 1999թ. ընդունված «Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքով (օրենքն ուժը կորցրած ճանաչվեց «Դատարանակազմության մասին» ԼՂՀ 2008թ. ապրիլի 16-ի ՅՕ-21 օրենքով), համաձայն որի՝ «Գերագույն դատարանը ԼՂՀ սահմանադրական դատարանի լիազորություններ իրականացնող ատյան է: Մինչև «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը Գերագույն դատարանը սահմանադրական արդարադատության լիազորություններն իրականացնում էր ԼՂՀ օրենսդրությանը չհակասող «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերով: Գերագույն դատարանը սահմանադրական վերահսկողության լիազորություններն իրականացնելիս գործերը քննել է կոլեգիալ, բայց ոչ պակաս, քան հինգ դատավորի կազմով:

Կարծում ենք՝ սեփական Սահմանադրության բացակայության պայմաններում, դա ճիշտ լուծում էր: Այսպես՝ երբ Ազգային ժողովի 2000 և 2005թթ. ընտրությունների արդյունքներից դժգոհ պատգամավորների որոշ թեկնածուներ դիմեցին Գերագույն դատարան, վերջինս նրանց դիմումների քննությունն ընթացքավորել է՝ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նորմերով:

Հանրապետության դատական մարմինների և արդարադատության

զարգացման նոր փուլը կապված է Արցախի Սահմանադրության ընդունման հետ: Սահմանադրությունը, որն ընդունվեց 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեով, ամրագրեց դատական իշխանության կազմակերպման և գործունեության ուղենշող ելակետային սկզբունքները և դրույթները: Սահմանադրության 6-րդ հոդվածն ազդարարեց, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Սահմանադրության 6-րդ գլուխը, որը կրում է «Դատարանները» անվանումը, ամբողջությամբ վերաբերում է Արցախի դատական իշխանությանը: Սահմանադրությունն արձանագրեց, որ Արցախում դատական իշխանությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, և որ դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և օրենքով նախատեսված այլ դատավարության միջոցով: Այստեղից բխում է, որ պետական իշխանության մարմինների համակարգում դատական իշխանություն իրականացնող միակ մարմինը դատարաններն են, որոնք, օժտված լինելով հատուկ լիազորություններով, հանդես են գալիս պետության անունից: Այստեղից բխում է նաև, որ դատական իշխանությունը պետական իշխանության ձև է, այն պատկանում է միայն դատարաններին, որի կրողները և իրականացնողները դատավորներն են: Իհարկե, արդարադատության իրականացումը դատական իշխանության գլխավոր և հիմնական, բայց ոչ միակ գործառնություն է: Այդ շրջանակներում Գերագույն դատարանն օժտված է սահմանադրական վերահսկողության գործառնությամբ, դատարանների կողմից վերահսկողություն է իրականացվում մինչդատական վարույթի նկատմամբ, տրվում են իրավական նորմերի մեկնաբանումներ, հաստատվում իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, սահմանվում դատական նախադեպեր և այլն:

Սահմանադրության «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերառությամբ 12-րդ գլուխը կանխորոշեց նաև ԼՂՀ դատական մարմինների գործունեությունն անցումային շրջանում և նոր մարմինների կազ-

մավորման ժամկետները: Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումների համատեքստում 2008թ. ընդունվեց «Դատական ծառայության մասին» ԼՂՀ օրենքը, որի համաձայն՝ դատական ծառայությունը համարվեց օրենքով դատարաններին, ինչպես նաև դատական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող մասնագիտական գործունեություն և պետական ծառայության մաս: Դատական ծառայությունն իրականացվում է դատական դեպարտամենտի միջոցով, որը գործում է Գերագույն դատարանի նախագահի հաստատած կանոնադրության հիման վրա:

ԼՂՀ բարձրագույն դատական մարմինը Գերագույն դատարանն է, որն ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը: Այդ սահմանադրական առաքելության տակ ԼՂՀ դատական օրենսգրքի համաձայն՝ Գերագույն դատարանի վրա նաև խնդիր է դրված՝ նպաստելու իրավունքի զարգացմանը: Բացի այդ, ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Փաստորեն, Արցախի օրենսդիրների կողմից անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի երկրներում կիրառվող դատական նախադեպի ինստիտուտը և սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելը ներմուծվել են մեր երկրի իրավունքի համակարգ և ներդրվել հանրապետության բարձրագույն դատական ատյանի գործառույթների մեջ:

Համաձայն Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գերագույն դատարանը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից:

Պրակտիկայում հակասություններից խուսափելու նպատակով Արցախի օրենսդիրները «Սահմանադրական դատավարության մասին»

ԼՂՀ օրենքում ամրագրել են, որ «սահմանադրական պալատը կազմավորվում է յուրաքանչյուր գործով՝ Գերագույն դատարանի նախագահի կողմից»: Օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվեց 2009թ. մայիսի 27-ին: Այն հրապարակվեց հունիսի 15-ին և ուժի մեջ մտավ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, իսկ սահմանադրական արդարադատություն իրականացնելու մասին կանոնակարգն ընդունվեց Գերագույն դատարանի 2009թ. հունիսի 28-ի թիվ 3 աշխատակարգային որոշմամբ: Այսինքն՝ այդ օրվանից սկսեց գործել Գերագույն դատարանի սահմանադրական ատյանը:

ԼՂՀ և ՀՀ Սահմանադրությունների բոլոր էական տարբերությունները հասկանալի պետք է համարել, քանի որ ԼՂՀ Սահմանադրության հեղինակներն աչքի առաջ են ունեցել ՀՀ Սահմանադրությունը՝ 2005թ. փոփոխություններով:

Օրենսդրության մեջ «դատական իշխանություն» և «արդարադատություն» հասկացություններն օգտագործվում են գրեթե նույն իմաստով, չնայած առաջինն իր մեջ ներառում է երկրորդին, քանի որ արդարադատությունը դատական իշխանության իրականացման եղանակներից մեկն է:

Դատաիրավական բարեփոխումները հարափոփոխ և ամբողջական գործընթացներ են և ունեն իրենց ներքին զարգացման ընթացքը: Բարեփոխումները պետք է կատարվեն ոչ միայն դատական համակարգում, այլև բոլոր իրավապահ կառույցներում: Հաղորդակից անոթների օրենքը գործում է ամենուրեք:

Բարեփոխումները, որպես կանոն, փոխում են ոչ թե հասարակական հարաբերությունների հիմքերը, այլ՝ նրա ձևն ու բովանդակությունը: Այն մի արմատական և երկարատև գործընթաց է: Դա այն դեպքում, երբ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական բարեփոխումների գործընթացը, Արցախի քաղաքական ուժերը 2016թ. փետրվարին սահմանադրական բարեփոխումների թեմայով 2 անգամ քաղաքական խորհրդատվություններ են անցկացրել, որի արդյունքում խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունները գրավոր դիմել են հանրապետության նախագահ Բ. Սահակյանին՝ առաջարկելով ստեղծել սահմանադրական բարեփո-

խումների հանձնաժողով: Արձագանքը չուշացավ:

Հանրապետության նախագահը՝ ելնելով իրավունքի գերակայության և ժողովրդաիշխանության սկզբունքների իրացման կառուցակարգերը բավարարելու, իշխանության ճյուղերի լիազորությունների հավասարակշռումը կատարելագործելու, հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից ու հաշվի առնելով Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների և արտախորհրդարանական մի շարք քաղաքական ուժերի առաջարկը և ղեկավարվելով Սահմանադրության 68-րդ հոդվածի 10-րդ կետով՝ մարտի 21-ին ստորագրել է հրամանագիր՝ հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին: Հրամանագրով հաստատվել է հանձնաժողովի անհատական կազմը՝ Ազգային ժողովի նախագահ Ա.Ղուլյանի գլխավորությամբ:

Արցախի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը հաստատվեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի 2016թ. հուլիսի 30-ի նիստում, իսկ նոր Սահմանադրության նախագծի աշխատանքային տարբերակը նույն 8-ին տեղադրվեց Ազգային ժողովի պաշտոնական կայքում:

Նախագիծը երկրի պետական և հասարակական կյանքի բնագավառների համար լուրջ փոփոխություններ է նախատեսում, մասնավորապես՝ երկրի կառավարման ձևի, մարդու իրավունքների և արդարադատության իրականացման ոլորտում: Առաջարկվող նախագծի առանցքային հարցը թերևս այն է, որ Արցախում նախատեսվում է կիսանախագահական համակարգից անցում կատարել դեպի նախագահական համակարգ՝ որոշակի առանձնահատկություններով, որտեղ նախագահին իրավապես և փաստորեն ղեկավարելու է գործադիր իշխանությունը:

Նախագծում Արցախի եռաստիճան դատական համակարգը պահպանվել է: Նախագիծն ավելի որոշակիություն է տվել Արցախի բարձրագույն դատական ատյանի՝ Գերագույն դատարանի գործառնություններին: Ըստ նախագծի հեղինակների՝ Գերագույն դատարանն իրականացնում է սահմանադրական արդարադատություն՝ ապահովելով Սահմանադ-



րության գերակայությունը: Որպես բարձրագույն դատական ատյան՝ Գերագույն դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Ընդլայնվել է նաև սահմանադրական արդարադատության հարցերով Գերագույն դատարան դիմելու սուբյեկտների շրջանակը: Այսպես՝ նման հարցերով Գերագույն դատարան կարող են դիմել նաև Ազգային ժողովի խմբակցությունը՝ հանրաքվեի արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով:

Յստակեցվել են դատավորների կարգավիճակը, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, նրանց և դատավորների, դատարանների նշանակման կարգն ու պաշտոնավարման ժամկետը:

Դատական իշխանության շրջանակներում արմատական փոփոխություն պետք է համարել այն, որ Արցախի արդարադատության խորհրդի փոխարեն ստեղծվում է բոլորովին մի նոր անկախ սահմանադրական մարմին՝ Բարձրագույն դատական խորհուրդ, որը երաշխավորելու է դատարանների և դատավորների անկախությունը:

Նախագծի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է հինգ անդամից, որի երեք անդամը, այսինքն՝ մեծամասնությունը, դատավորներ են: Վերջիններիս ընտրում է Արցախի դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն հինգ տարվա փորձառություն ունեցող գործող դատավորների կազմից: Ընդ որում, Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Բարձրագույն դատական խորհրդի մյուս երկու անդամները նշանակվում են հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից: Նրանք պետք է մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառությամբ իրավաբաններ լինեն՝ օժտված բարձր մասնագիտական որակներով:

Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվելու են հինգ տարի ժամկետով և իրավունք չեն ունենալու վերստին ընտրվելու այդ պաշտոնում: Նրա կազմում դատարանների նախագահների ընդգրկումը բացառվում է:

Նախագիծը մեզ հուշում է, որ Բարձրագույն դատական խորհուրդն առանցքային դերակատարում ունեցող պետական անկախ կառույց է լինելու: Սահմանադրական այդ մարմինն է կազմելու և հաստատելու դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները: Այդ մարմինն է Ազգային ժողովին առաջարկելու նշանակման ենթակա դատարանների նախագահների և դատավորների թեկնածուներին: Այդ մարմինն է վերապահված լուծելու դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու, ինչպես նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը: Վերջին լիազորության իրականացման դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալու որպես դատարան:

Բարձրագույն դատական խորհուրդը զբաղվելու է նաև Արցախի դատական իշխանության բյուջեի հարցերով: Ինքն է հաստատելու դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնելու կառավարությանը՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Վերջապես, նախագծի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդին տրվելու են նաև «այլ լիազորություններ», որոնք սահմանվելու են Դատական օրենսգրքով:

Ինչպես նկատելի է, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման հարցում մասնակցում են պետական իշխանության բոլոր երեք ճյուղերը, բայց վերջնական որոշում կայացնելու իրավունքը, որը պարտադիր բնույթ է կրելու, պատկանում է Բարձրագույն դատական խորհրդին: Դա խոսում է այն մասին, որ Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումը և անկախ գործունեությունը կարևոր նախապայման կհանդիսանան Արցախի դատական իշխանության ներքին և արտաքին անկախությունն ապահովելու համար:

Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթների ուժով Արցախի

դատարաններին վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի կողմից ընտրված հանրապետության նախագահի լիազորությունների ստանձման օրը /07.09.2017թ./, իսկ Դատական օրենսգիրքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում մինչև Ազգային ժողովի կողմից ընտրված հանրապետության նախագահի լիազորությունների ստանձման օրը:

Նախագիծն ազդարարում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը կազմավորվում է Դատական օրենսգրքի համապատասխան դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ հանրապետության նախագահի լիազորությունների ստանձումից հետո՝ երեք ամսվա ընթացքում, այսինքն, մինչև 2017թ. դեկտեմբերի 7-ը:

Յանրահայտ ճշմարտություն է՝ դատական մարմինների համակարգը և դատական իշխանությունը նույնական հասկացություններ չեն: Դատական իշխանությունը հնարավոր չէ առանց դատական համակարգի, սակայն դատական մարմինների համակարգի առկայությունը դեռևս չի ասում, որ տվյալ երկրում դատական իշխանություն կա: Այդ երկու բացառիկ երևույթների արտաքին նմանությունը միահյուսվում է նրանով, որ դատական իշխանության առկայության կամ բացակայության պայմաններում դատարանների որոշումները պարտադիր բնույթ են կրում և դրանց կատարումն ապահովվում է պետական հարկադրանքով: Վերջապես, դատական իշխանության առկայությունը ենթադրում է մեկ միասնական պետական իշխանության բաժանում, տարանջատում հարաբերականորեն անկախ երեք ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատականի, որտեղ յուրաքանչյուրը գործում է իր լիազորությունների շրջանակներում և չի խառնվում մյուսի գործերին:

Ամեն պարագայում դատական համակարգն այն դեպքում է դատական իշխանություն դառնում, երբ նա օժտված է իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ ներգործման որոշակի հնարավորություններով, հակակշիռներով և զսպումներով, որոնք ի չիք են դարձնում իշխանության որևէ ճյուղի կամ անձի կողմից մեկ այլ ճյուղի իշխանությունը յուրացնելու՝ դրանով իսկ իշխանության եռաթև ճյուղերի միջև պահպանելով անհրաժեշտ կապը և համաձայնեցվածությունը:

Սահմանադրական բարեփոխումների մեծ ծամփաբաժիններում Ար-

ցախի Գերագույն դատարանն իր 25-ամյա հոբելյանը դիմավորում է ժողովրդի մոտ հարգանքի, հեղինակության և վստահության ձեռքբերմամբ, իսկ այդ տարիների դատական իշխանության կայացման և զարգացման գլխավոր ձեռքբերումն այնպիսի բազային սկզբունքների և ինստիտուտների հաստատումը պետք է համարել, ինչպիսիք են դատական իշխանության ինքնավարությունը, դատական քննության մրցակցությունը, արդարադատության մատչելիությունը, հրապարակայնությունը և նախադեպային իրավունքի ներդրումը, որոնց ուժով Գերագույն դատարանի որոշումը պարտադիր բնույթ է կրում և պետք է կիրառվի համանման բոլոր գործերի լուծման ժամանակ:

*ԼՂՀ դատական իշխանություն /ԻՏՎ/ հանդես, 3 /22/, 2016թ.*

**Լույս է տեսել «ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ» գիրքը**

2016թ. օգոստոսի 2-ին «Վալլենթս Գարդեն» հյուրանոցի միջոցառումների սրահում տեղի է ունեցել ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր, վաստակավոր իրավաբան Վլադիմիր Յովսեփյանի «Իրավունքը և արդարադատությունն Արցախում» գրքի շնորհանդեսը, որը վարում էր ԼՂՀ դատավորների միության նախագահ Յասմինկ Խաչատրյանը: Ծնորհանդեսին ներկա էին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, Գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարիմանյանը, ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Մարատ Մուսայեյանը և այլ պաշտոնատար անձինք: Գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարիմանյանը շնորհավորելով արժեքավոր աշխատության լույս ընծայման առթիվ, ասել է, որ մենագրությունը հեղինակի տարիներ շարունակ կատարած պատմաիրավական տարբեր աղբյուրների ուսումնասիրությունների արդյունք է: «Չտարանջատելով հայ իրավունքից՝ Վ.Յովսեփյանը խոր և համակարգված վերլուծության միջոցով ընթերցողի դատին է ներկայացրել Արցախում իրավունքի զարգացման պատմությունը վաղ միջնադարից մինչև մեր օրերը: Տարբեր ժամանակաշրջաններում ներկայացնելով Արցախի իրավունքի պատմությունը և արդարադատության համակարգը՝ դրան զուգընթաց հեղինակը գրքում կրկին շեշտում է Արցախի բացառապես հայկական ծագումը: Այս առումով ևս գիրքն արժանի նվեր է Արցախի Յանրապետության հռչակման 25 ամյակին», - նշել է Ն.Նարիմանյանը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի նախագահ Անատոլի Թադևոսյանի հավաստմամբ՝ առաջին անգամ է մենագրության մակարդակով ամբողջացվել իրավունքի պատմությանը վերաբերող առանցքային և կարևոր հարցերը, քանի որ մենագրությունը հատկապես աչքի է ընկնում հայոց աշխարհի իրավունքի աղբյուրների բովանդակալից և համապարփակ վերլուծությամբ՝ պարունակելով հարուստ տեղեկատվություն՝ Արցախում իրավունքի, արդարադատության մասին:

Յեղինակին շնորհավորել են նաև ԼՂՀ Ազգային ժողովի պատգա-

մավորներ Արզիկ Մխիթարյանն ու փոխնախագահ Վահրամ Բալայանը: Վերջինիս խոսքով՝ եթե հասարակությունը չի ապրում օրենքով և հասարակական սկզբունքով, ապա ազգը դատապարտված է կործանման: Հեղինակի ձգտումն է, որ հայկական երկու պետությունները խարսխվեն իրավունքի և արդարադատության վրա, քանզի այդ ձևով կարելի է միայն զարգանալ և հզորանալ,- համոզված է Վ.Բալայանը: Գրքի վերաբերյալ իր տեսակետն է հայտնել նաև ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը: Նրա խոսքով, «քանի դեռ այսօր ամբողջ աշխարհում առկա է իրավունքի և սահմանադրականության ճգնաժամ, ու հաճախ անտեսվում են իրավունքի ակունքները, հերթական փորձությունների և նոր մարտահրավերների առաջ կանգնած հայ ժողովուրդը երբեք չպետք է հրաժարվի այն արժեքներից, որոնց արարողն ու կրողն է նա»:

Միջոցառման վերջում ելույթ է ունեցել Վ.Հովսեփյանը: Նա շնորհակալություն է հայտնել երկրի իշխանություններին, բոլոր նրանց, ովքեր նպաստել են գրքի լույս ընծայմանը:

## ԿԱՄՔԻՉԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԿԱՄ ԾԱԽՈՒ ԴԱՏԱՎՈՐԻ ՄՈՐԹԱԶԵՐԾՈՒՄԸ

Պարսիկները դատավոր նշանակել են հմուտ և գիտակ մարդկանց, ովքեր ուրիշների խորհրդի կարիքը շատ քիչ են զգացել:

Կամբիզ երկրորդ արքան իրական անձնավորություն է եղել, ով Պարսկաստանը կառավարել է մ.թ.ա 6-րդ դարի 20-ական թվականներին: Նա հայոց թագավոր Վահագն Երվանդունու հասակակիցն էր:

Իր «Պատմություն» 5-րդ գրքի 25-րդ գլխում հույն պատմիչ Յերոդոտը մի այսպիսի դեպք է նկարագրել. երկրի շրջագայությունից վերադառնալով պալատ, Կամբիզ թագավորին զեկուցում են, որ Սիսամն անունով դատավորը, դատավարության կողմերից մեկից կաշառք է վերցրել և վեճը լուծել նրա օգտին: Թագավորի հրամանով դատավորին բռնում, կենդանի մորթազերծ են անում և այդ մորթով պատում նրա բազկաթոռը: Թագավորի մեկ այլ հրամանով մահապատժի ենթարկված Սիսամնի փոխարեն դատավոր է նշանակվում նրա որդին՝ Օթանը: Նրան նստացնում են հոր աթոռին, որպեսզի վերջինս հիշի, թե նա ինչ աթոռի վրա նստած պետք է դատ անի:

Յենց այս պատմությունն է նկատի առել բելգիացի նկարիչ Դավիթ Գերհարդն իր «Կամբիզի դատաստանը» նկարում /1460թ./: Նկարը կազմված է 2 մասից: Այն կարծես թե ներկայացնում է անցյալը, ներկան և ապագան: Թեկուզ դեպքերը տեղի են ունեցել անտիկ դարաշրջանում, բայց նկարում արտացոլված անձնավորությունները XV-XVI դարերի հագուստով են, ինչը բնավ չի նսեմացնում նկարի բովանդակությունը:

Նկարի ձախակողմյան մասի հետին պլանում նկատելի է, որ ոմն անձ փողի քսակը հանձնում է դատավորին և ականջին բան շշնջում /անցյալ/:

Ներկան արտահայտում է կաշառք վերցնելու համար դատավորին ձերբակալելու պահը: Կամբիզ թագավորը, աջ ձեռքի մատներով թվարկում է, թե դատավորը քանի անարդարացի որոշումներ է կայացրել: Զինվորներից մեկը բռնել է դատավորի աջ ձեռքը, որով նա վերցրել էր փողի քսակը: Դատավորի դեմքը լրիվությամբ ճնշված և թուլացած է:

Նկարի աջակողմյան մասում պատկերված է դատավորի մորթա-

զերծման տեսարանը: Երևում է, թե իրենց գործին գիտակ դահիճներն ինչպես են դատավորին քերթում, մաշկահան անում, որին ներկա է նաև թագավորը: Եվ դահիճներն այնքան վարպետորեն են կատարում իրենց գործը, որ կենդանի դատավորից նույնիսկ արյուն չի ծորում:

Նկարի վերևի մասում արդեն ապագայից մի դրվագ է, որտեղ Կամբիզ թագավորը մահվան դատապարտվածի որդուն՝ Օթանին հռչակում է դատավոր: Որդին նստած է հոր բազկաթռռին և ինչ որ մեկը՝ կարմիր անդրավարտիքով, ձեռքում փողի քսակ հիշեցնող մի բան ունի բռնած, սակայն Օթանը, հիշելով հոր ճակատագիրը, դեպի նրա կողմը չի նայում:

Նկարի ձախ մասում, դռան մուտքից վերև, կախված են Բրյուգե քաղաքի զինանշանները:

Նկարը, որի վրա Դավիթ Գերհարդն աշխատել է 4 տարի, կախված է եղել Բրյուգե քաղաքի դատական նիստերի դահլիճում /այժմ նկարը գտնվում է Բելգիայի պատկերասրահում/ և կոչ էր հիշեցնելու դատավորներին՝ արդար դատելու անհրաժեշտության մասին: Չնայած դատավորի նկատմամբ անմարդկային պատիժ է կայացվել, բայց նկարն արժե կախել դատական նիստերի դահլիճում, որը, դատավորի մոտ որոշում կայացնելուց առաջ, անշուշտ, պատասխանատվության և արդարության զգացում կառաջացնի:

*Լ Ղ Յ դատական իշխանություն /ԻՏՎ/ հանդես, 3/22/, 2016թ.*



## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բարոյական գրկանքներն առավել ծանր են,  
քան ֆիզիկական տանջանքները:*  
**Վ.Բելինսկի**

Բարոյականությունը /լատիներեն՝ *morailtas*, ռուսերեն՝ *мораль, нравственность*, լատիներեն՝ *mores*՝ հասարակական բարքեր, չգրված կանոններ/ պատմական երևույթ է, որի սկզբունքները դրվել են Արիստոտելի կողմից և ժամանակակից հասկացությամբ իր ձևակերպումն է ստացել Ցիցերոնի աշխատություններում:

Արդի հայերենի բացատրական բառարանը բարոյականությունը բնորոշում է որպես՝ «1. Մարդու վարքագծի, վարվելակերպի՝ հասարակության մեջ իրեն պահելու նորմերի ամբողջությունը: 2. Մարդու բարոյական հատկանիշները: 3. Նեղ իմաստով՝ առաքինություն, ընտանեկան ու սեռական անպարսավելի վարքագիծ: 4. Բարոյական նորմերին համապատասխան լինելը», իսկ վնասը՝ որպես «1. Նյութական կորուստ: 2. Ձախողում, գործի՝ աշխատանքի տուժում: 3. Որևէ կարգի ձախորդություն՝ փորձանք, չարիք, աղետ: 4. Մարդկային ու նյութական կորուստներ, մահ ու ավեր: 5. Դրամական տույժ, որ մեկը պահանջում է որպես հատուցում իր կրած կորստի՝ արած ծախսերի նն»:

Բարոյական վնասի ինստիտուտը պատմական խոր արմատներ ունի, բայց այն օրենսդրության մեջ ամրագրվել է ոչ վաղ անցյալում: Այդ ինստիտուտը սկզբնապես սաղմնավորվել է քրեական իրավունքում, սակայն ժամանակի ընթացքում անցել է քաղաքացիական իրավունքին: Խնդրո առարկա ինստիտուտը նույնիսկ խորթ է եղել ցարական Ռուսաստանի օրենսդրությանը, չնայած ռուս իրավագետների կողմից քննարկվող հարցի վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր հրապարակումներ են կատարվել: Նույն վիճակն արձանագրվել է նաև Խորհրդային Միության կազմավորման սկզբնական շրջանում, ընդհուպ մինչև XX դարի 50-ական թվականների վերջերը: Խորհրդային սոցիալիստական իրավունքի զարգացման առաջին երեսուն տարիներին գիտնական

իրավագետները բարոյական վնասը համարում էին որպես սոցիալիստական իրավագիտակցությանը խորթ երևույթ և անհիմն հարստացման աղբյուր: Որպես հիմնավորում, նրանք գտնում էին, որ խորհրդային մարդկանց արժանապատվությունն անհնարին է չափել անհարգ մետաղով /ոսկով/:

Խորհրդային Միության օրենսդրության մեջ «բարոյական վնաս» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից 1958 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների քրեական դատարանակազմության Յիմունքների 24-րդ հոդվածում: Յետագայում, Յիմունքների հիման վրա միութենական հանրապետություններն ընդունեցին քրեական դատավարության սեփական օրենսգրքերը, որոնցում ամրագրեցին, որ տուժող համարվում է այն անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի տեսակների տարանջատումը կարող է միայն վկայել խորհրդային Միության քրեադատավարական օրենսդրության առաջընթաց զարգացման մասին: Ի դեպ, խորհրդային Միության միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերը «բարոյական վնաս» եզրույթը չեն օգտագործել:

Մեղավորի գործողությամբ տուժողին պատճառված վնասն իր ամրագրումն ստացավ նաև միութենական հանրապետությունների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում: Այսպես՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /օրենսգիրքը կատարված լրացումներով և փոփոխություններով հանդերձ ներկայումս գործում է Հայաստանի Հանրապետությունում՝ կոչվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք/ 268-րդ հոդվածում ամրագրված է, որ տուժող համարվում է այն անձը, որին վարչական իրավախախտման հետևանքով բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս է պատճառվել:

Ակտենք, որ օրենսգրքի վերոնշյալ հոդվածում ընդգծված «բարոյական վնաս» եզրույթը դեկլարատիվ բնույթ է կրում, քանի որ վարչական իրավախախտման վերաբերյալ ապացուցման ենթակա հանգամանքների, գույքային վնասի հատուցման մասում որոշման կատարման

կարգի ու ժամկետների և այն չկատարելու հետևանքների վերաբերյալ հոդվածներում /279-րդ, 326-րդ, 327-րդ հոդվածներ/ բարոյական վնասի մասին որևէ խոսք չկա:

Չարկ է նշել, որ, եթե 1961թ. դեկտեմբերի 8-ին ընդունված ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների օրենսդրության Չիմունքներում խոսվում էր միայն սոցիալիստական գույքը փրկելու ընթացքում պատճառված վնասի հատուցման մասին, ապա 1991թ. մայիսի 31-ին ընդունված ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության Չիմունքների 131-րդ հոդվածը նվիրված էր հենց բարոյական վնասի հատուցման հարցին, ըստ որի՝ «անօրինական գործողություններով քաղաքացուն պատճառված բարոյական վնասը /բարոյական կամ ֆիզիկական տառապանքներ/ հատուցվում է վնաս պատճառողի կողմից՝ մեղքի առկայության դեպքում: Բարոյական վնասը հատուցվում է դրամական կամ այլ նյութական ձևով և չափով, որը որոշում է դատարանը, անկախ փոխհատուցման ենթակա գույքային վնասից»: Սակայն, այս առաջավոր ինստիտուտը չմտավ միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի մեջ, քանզի Խորհրդային Միությունն արդեն իր մայրամուտն էր ապրում:

ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային երկրներից առաջինը Ռուսաստանի Դաշնությունն էր /այսուհետ՝ ՌԴ/, որ անդրադարձավ բարոյական վնասի իրավական ինստիտուտի հարցերին և դրանք մտցրեց իր օրենսդրության մեջ: ՌԴ Գերագույն դատարանի պլենումը 1994թ. դեկտեմբերի 20-ին որոշում ընդունեց, որի համաձայն՝ բարոյական վնասի տակ պետք է հասկանալ բարոյական և ֆիզիկական տառապանքները, որոնք պատճառվել են գործողության /անգործության/ հետևանքով և ոտնահարում են քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքները /կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, գործարար համբավը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը և այլն/ նրա անձնական ոչ գույքային /անվան օգտագործման իրավունքը, հեղինակային իրավունքը և այլն/ կամ էլ գույքային իրավունքները:

ՌԴ Գերագույն դատարանի պլենումի որոշմամբ նաև արձանագրվեց, որ բարոյական վնասը կարող է արտահայտվել հարազատների կորստի, ակտիվ հասարակական կյանք վարելու անհնարինության, աշ-

խատանքի կորստի, անձնական, բժշկական գաղտնիքի բացահայտման, պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածման կապակցությամբ կրած տառապանքների մեջ:

Լեռնային Ղարաբաղի Չանրապետության /այսուհետ՝ նաև ԼՂՀ կամ Արցախի Չանրապետություն/ անկախության հռչակումից հետո սեփական օրենսդրություն ունենալու խնդիրն առաջնահերթ պլան մղվեց: Այդ հարցում կարևոր նշանակություն ունեցավ երկրի օրենսդիր մարմնի 1992թ. հունիսի 6-ի որոշումը, որի ուժով՝ մինչև սեփական Սահմանադրության և օրենքների ընդունումը ԼՂՀ տարածքում կիրարկման մեջ դրվեց Չայաստանի Չանրապետության օրենսդրությունը:

Առաջին իրավական ակտը, որի մեջ բարոյական վնասի ինստիտուտի վերաբերյալ համապատասխան դրույթներ սահմանվեցին, դա «Գովազդի մասին» ԼՂՀ օրենքն է, որի 23-րդ հոդվածի 1-ին մասի գ/ կետում սահմանվեց, որ այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնց իրավունքները խախտվել են անբարեխիղճ գովազդի հետևանքով, իրավունք ունեն սահմանված կարգով դիմել դատարան, պահանջելով բարոյական վնասի հատուցում:

Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը՝ Արցախի Չանրապետության ողջ տարածքում 2001թ. հուլիսի 1-ից կիրարկման մեջ դրված՝ 1998թ. ընդունված Չայաստանի Չանրապետության /այսուհետ՝ նաև ՉՀ/ քաղաքացիական օրենսգիրքն էր /լրացումներով և փոփոխություններով հանդերձ/, որը վերանվանվեց «Լեռնային Ղարաբաղի Չանրապետության քաղաքացիական օրենսգիրք»: Մինչև 2014թ. երկու հայկական հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերը կարգավորում էին միայն նյութական վնասի հատուցման հարցերը, օրենսգրքերում ոչ նյութական /բարոյական/ վնասի վերաբերյալ նորմեր չեն եղել, չնայած դրանցում ոչ նյութական վնասի մասին դրույթներ կային: Այսպես՝ ՉՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասում նշված էր, որ քաղաքացին, ում մասին տարածվել են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի այդ տեղեկությունները հերքելու հետ միասին պահանջել հատուցելու դրանց տարածմամբ պատժառված վնասները: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը գնում է ոչ նյութական վնա-

սի հատուցման մասին: Քննարկվող հարցն ինչ որ չափով կարգավորվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2010թ. հունիսի 15-ի ՀՕ-97-Ն օրենքով, որի ուժով օրենսգրքի 19-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ և լրացվել՝ «Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.1-րդ հոդվածով:

ՀՀ օրենսդրության մեջ բարոյական վնասի ինստիտուտի ներդրման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2013թ. նոյեմբերի 5-ի որոշումը, որի ուժով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման հիման վրա, ՀՀ օրենսդիրները ոչ նյութականի վնասի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարեցին մի շարք էական լրացումներ և փոփոխություններ: Մասնավորապես՝ 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. «Վնասներ են իրավունքները խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց թողնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը»:

Հատկանշական է, որ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը /2014թ. մայիսի 19-ի խմբագրությամբ/ ամրագրել էր, որ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենսգրքով նախատեսված դեպքում, ապա 30.12.2015 ՀՕ-184 օրենքով կատարված փոփոխությամբ հոդվածի 4-րդ մասի «սույն օրենսգրքով» բառերը փոխարինվեց «օրենքով» բառով՝ դրանով իսկ ընդլայնելով ոչ նյութական վնասի ինստիտուտի հատուցման օրենսդրության շրջանակները:

Մինչույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը լրացվեց 5-րդ մասով, որի համաձայն՝ խոշտանգումից տուժած անձի կրած վնասի փոխհատուցման բովանդակությունը, կարգն ու պայմանները սահմանվեցին նույն օրենսգրքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում կատարված բովանդակային փոփոխությունները ցույց են տալիս, որ չնայած օրենսդիրը խուսափել է քաղաքացիաիրավական իմաստով «բարոյական վնաս» եզրույթն օգտագործելուց, այնուհանդերձ, նա վնասը բաժանել է երկու տեսակի՝ նյութական /իրական վնաս և բաց թողնված օգուտ/ և ոչ նյութական՝ վերջինիս մեջ մտցնելով բարոյական վնասը: Առաջինը գնահատվում է դրամական ձևով, հակառակ դեպքում դառնում է ոչ նյութական կամ՝ ոչ գույքային վնաս: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի փոփոխությունը նշանակում է, որ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը գործում է ոչ միայն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում, այլ նաև իրավունքի այլ ճյուղերում, այսինքն, եթե, օրենսգրքից բացի, այլ օրենսդրական ակտերում նշված ոչ նյութական վնասը նույնպես ենթակա է հատուցման:

Բարոյական վնասի ինստիտուտի կայացման գործընթացում կարևոր քայլ հանդիսացավ ոչ նյութական վնասի հասկացության սահմանումը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի՝ օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքին կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ: Օրենսգրքի նշված հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերով, 1087.1-րդ, 1087.2-րդ հոդվածներով և 60-րդ գլխի 2.2-րդ պարագրաֆով սահմանվեցին ոչ

նյութական վնասի /պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը, հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը, և խոշտանգումից տուժած անձի վնասը/ փոխհատուցման կարգը, պայմանները, չափը, պահանջի ներկայացման ժամկետները, ինչպես նաև այդ ինստիտուտի հետ կապված հետադարձ պահանջի /ռեգրեսի/ իրավունքը:

Մտահոգիչ է, թե ինչու՞ Արցախի օրենսդիրները ոչ նյութական վնասի վերաբերյալ ՅՅ քաղաքացիական օրենսգրքում 2015 և 2016թթ. կատարված փոփոխությունները և լրացումներն առայսօր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքում չեն կատարել: Ժամանակը ոչ թե եկել է, այլ՝ միգուցե անցել է:

Քննարկվող ինստիտուտի կարգավորման շրջանակներում գտնվում է նաև ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը, որը, համաձայն ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՅՅ օրենքով սահմանված կարգով:

2002թ. փետրվարի 15-ից Արցախի Հանրապետության ողջ տարածքում կիրարկման մեջ դրվեց 1998թ. ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը /լրացումներով և փոփոխություններով հանդերձ/, այն վերանվանվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» /այսուհետ՝ նաև ՔրԴՕ/:

«Բարոյական վնաս» հասկացության բնորոշումը ՔրԴՕ-ում չի տրված, մինչդեռ այդ եզրույթն օրենսգրքում չորս անգամ հիշատակվում է: Այսպես՝ ՔրԴՕ-ի 6-րդ հոդվածի 48-րդ կետը «վնաս» հասկացության տակ նկատի է ունենում դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնասը: Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույ-

լատրված արարք կատարելը: Նույն օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տուժող կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը:

Փաստորեն, օրենսդիրը քրեական դատավարությունում նախատեսել է հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի երեք տեսակ, որոնցից ոչ մեկի բնորոշումը քրեական դատավարության օրենսդրությամբ չի տրված: Չարցի պատասխանը, ինչ որ չափով պետք է որոնել քրեական իրավունքում, որովհետև այդ երկու իրավունքներից յուրաքանչյուրի գոյությունը պայմանավորված է մեկը մյուսով: Իսկ դրանից բխում է, որ տուժողը քրեական դատավարությունում կարող է հանդես գալ միայն այն դեպքում, եթե նրան պատճառած վնասը քրեորեն պատժելի արարքի կատարման հետևանք լինի:

Ֆիզիկական վնասը դրսևորվում է հանցագործությամբ տուժողի առողջությանը տարբեր աստիճանի ծանրության մարմնական վնասվածքներ, ծեծ, ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք պատճառելու մեջ: Ֆիզիկական վնասի տեսակներն ամրագրված են ԼՂՅ քրեական օրենսգրքի՝ «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 16-րդ գլխի 111-121-րդ, 124-րդ, 127-րդ և 128-րդ հոդվածների վարկածներում /հիպոթեզ/, որոնցից կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը ֆիզիկական վնաս է համարում ծեծը, խոշտանգումը /ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք/, դիտավորությամբ առողջությանը թեթև, ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, անզգուշությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը: Ակնհայտ է, որ մեղքի ձևերը և տեսակները կարող են ազդել միայն հանցավոր արարքի որակավորման վրա:

Գույքային վնասը ծագում է քաղաքացու գույքային իրավունքների և շահերի նկատմամբ հանցավոր ոտնձգությամբ, որի արդյունքում նա կրում է որոշակի վնաս, զրկվում որոշակի նյութական բարիքներից:

«Բարոյական վնաս» հասկացության բնորոշումը նույնպես ԼՂՅ օրենսդրության մեջ չի տրված և, մեր կարծիքով, քրեական իրավուն-



քում ու քրեական դատավարությունում ամրագրված այդ ինստիտուտը, որը մեծ հաշվով առնչվում է տուժողի կարգավիճակին, որոշակի առանձնահատկություններով և դրսևորումներով պետք է համարժեք համարել ոչ նյութական վնասին, որի բնորոշումն ամրագրված է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասով, որի տակ օրենսդիրը նկատի է առել ֆիզիկական և հոգեկան տառապանքները:

Հարց է ծագում. հնարավոր է արդյոք բարոյական վնաս պատճառել իրավաբանական անձին, չէ որ ֆիզիկական և հոգեկան տառապանքները կարող է կրել միայն ֆիզիկական անձը: Ինչի հիման վրա և ղր դեպքում իրավաբանական անձը կարող է բարոյական վնասի փոխհատուցում պահանջել: Նշված հարցերին ինչ որ չափով պատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ «Քաղաքացու գործարար համբավի պաշտպանության մասին սույն հոդվածի կանոնները համապատասխանաբար կիրառվում են իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության նկատմամբ»: Այս հարցի վերաբերյալ ՀՀ-ում դեռևս դատական պրակտիկա չի ձևավորվել, իսկ Եվրոպական դատարանն արդեն իսկ մի շարք գործերով ընդունել է իրավաբանական անձանց բարոյական վնաս պատճառելու և վնասը գույքային ձևով փոխհատուցելու հնարավորությունը:

Բարոյական վնասի իրավական ինստիտուտի հարցի կարևորությունից ելնելով, միջազգային մի շարք կառույցներ անդրադարձել են հանցագործությամբ տուժողին պատճառված բարոյական վնասի հատուցման հարցերին: Հանցագործությամբ տուժած անձանց բնորոշումը, նրանց շրջանակը և իրավունքները, միջազգային մակարդակով առաջին անգամ սահմանվել են 1985թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 40/34 բանաձևով ընդունված՝ հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների Հռչակագրով: Հռչակագիրը «զոհեր» եզրույթի տակ նկատի առավ անձանց, որոնց անհատապես կամ կոլեկտիվ անդամ պետությունների գործող ազգային քրեական օրենքների, ներառյալ իշխանության հանցավոր չարաշահումն արգելող օրենքների խախտմանը հանգեցնող գործողության կամ գործողության բացակայության հետևանքով վնաս է հասցվել, ներառյալ մարմնական վնաս-

վածքները, բարոյական և նյութական վնասները, հոգեկան ապրումները կամ հիմնարար իրավունքների էական խախտումները:

Որևէ կասկած լինել չի կարող, որ Հռչակագրում օգտագործվող «գոհ» եզրույթը վերաբերում է ոչ միայն տուժողին, այլև՝ արդարացվածին և խոշտանգումից տուժած անձանց:

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1985թ. հունիսի 28-ին ընդունված՝ «Քրեական իրավունքի և քրեական դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի մասին» NR/85/11 հանձնարարականում մասնավորապես նշվել է, որ արդարադատության հիմնական գործառույթը պետք է հանդիսանա տուժողների շահերի պաշտպանությունը, և որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տուժողին հասցված ֆիզիկական, հոգեկան, նյութական և սոցիալական վնասին ու քննարկել, թե ինչպիսի քայլեր են ձեռնարկվել այդ կապակցությամբ նրա պահանջների բավարարման համար:

Ինչպես ՀՀ 1995թ., այնպես էլ ԼՂՀ 2006թ. սահմանադրությունը տուժողին պատճառված վնասի հատուցումը ճանաչում էր որպես սահմանադրաիրավական ինստիտուտ: Այնինչ ՀՀ 2015 և ԼՂՀ 2017թթ. սահմանադրությունները հրաժարվեցին տուժողի՝ վնասի հատուցման իրավունքը սահմանադրորեն ամրագրելուց, ինչը, մեր կարծիքով, նահանջ է նախկին սահմանադրությունների համեմատ:

Ինչևէ, երկու հայկական հանրապետությունների սահմանադրությունների 62-րդ հոդվածներում արձանագրվեց միայն վարչարարությամբ պատճառված և դատական սխալի հետևանքով տուժած անձանց վնասի հատուցման իրավունքի մասին՝ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը թողնելով բաց:

Եթե քաղաքացիաիրավական առումով, վնասն այն անբարենպաստ բացասական հետևանքն է, որ վրա է հասնում օրենքով պահպանվող գույքային իրավունքի կամ ոչ նյութական բարիքի խախտման դեպքում և այն կարող է արտահայտվել առկա գույքը ոչնչացնելու, վնասվելու, եկամտից զրկվելու, տուժողի կողմից աշխատունակությունից զրկվելու կամ որոշ մասով այն կորցնելու, կերակրողին կորցնելու, չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելու, ֆիզիկական և բարոյական տառապանքներ պատճառելու ձևով, ապա բարոյական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ միաժամանակյա պայ-

մանները՝ բարոյական վնասի առկայություն, վնաս պատճառողի գործողությունների հակաիրավականություն, հակաիրավական գործողությունների և բարոյական վնասի միջև պատճառական կապի առկայություն և վնաս պատճառողի մեղքի առկայություն:

Այս հարցում կարևորվում է, թե քրեական դատավարությունում ովքեր կարող են բարոյական վնասի հատուցման պահանջ ներկայացնել: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրքը դրանց թվին դասում է արդարացվածին, քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից անօրինական հարկադրանքի միջոցների ենթարկված յուրաքանչյուր անձի և տուժողին, որոնց կապակցությամբ եթե առաջին երկուսի համար ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1094-րդ հոդվածը ոչ նյութական /բարոյական/ վնասի հատուցման եղանակ, կարգ, պայմաններ և չափ է սահմանել, ապա տուժողի դեպքում այս հարցերը մնացել են բաց, այսինքն՝ չկարգավորված:

Մինչդեռ, տուժողի կարգավիճակը քրեական դատավարությունում առավելագույնս հստակեցված է: Այսպես՝ նախաքննության և դատաքննության ընթացքում տուժող ճանաչվում է այն անձը, որի նկատմամբ համապատասխան դատավարական փաստաթուղթ /որոշում/ է ընդունվում: Նման փաստաթուղթ իրավասու են ընդունել հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը: Ժամկետը, որի ընթացքում հանցագործությամբ տուժած անձը պետք է տուժող ճանաչվի, օրենքով չի սահմանված: Համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 22-րդ և 34-րդ կետերի՝ տուժողը հանդիսանում է դատավարությանը մասնակցող անձ և մեղադրանքի կողմ:

Տուժողը, որպես քրեական դատավարության մասնակից, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի ուժով օժտված է մի շարք իրավունքներով, մասնավորապես, նա իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը:

Հանցագործությամբ պատճառված վնասի դեպքում տուժողը ԼՂՀ քրեական դատավարության 20-րդ գլխի կանոններով սահմանված կարգով քաղաքացիական հայց հարուցելու իրավունք է ձեռք բերում: Ընդ որում, քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվու-

թյուն դրվել մեղադրյալի գործողությունների համար: Այդպիսի անձինք են հանդիսանում, օրինակ՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները, շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեություն իրականացնող անձինք, որոնք օրենքի ուժով պատասխանատու են մեղադրյալի գործողությունների համար և այլն: Այն դեպքերում, երբ հանցագործությունը չի բացահայտվել կամ մեղադրյալը թաքնվել է քննությունից, ապա վնասի հատուցումը կախված կլինի հանցագործության բացահայտումից և մեղավորին հայտնաբերելուց:

Ինչպես նշեցինք, ՔրԴՕ-ում մի ամբողջ գլուխ է հատկացված այնպիսի կարևոր իրավական ինստիտուտի, ինչպիսին քրեական դատավարությունում քաղաքացիական հայցն է: Եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է հայցադիմումը, ապա այդ պահից տուժողը նաև քաղաքացիական հայցվորի կարգավիճակ է ձեռք բերում, որի իրավունքները և պարտականությունները, ընդհանուր առմամբ, մերձենում են հայցվորի իրավունքներին և պարտականություններին:

Համաձայն ՔրԴՕ-ի 55-րդ հոդվածի՝ քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս: Քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը:

Ուշագրավն այն է, որ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի երեք տեսակները հստակորեն ամրագրված են ՔրԴՕ-ի 53-րդ հոդվածում: Ընդ որում, հոդվածում բարոյական վնասն առաջինն է նշված և այն մյուս երկու վնասներից բաժանված է ստորակետով, իսկ ֆիզիկական և գույքային վնասները հանդես են գալիս «կամ» կապակցող շաղկապով:

Համաձայն Իրավական ակտերի մասին ԼՂՀ օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ կետի 6-րդ և 7-րդ պարբերությունների՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը: Իսկ

եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետներով, ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

Ամեն պարագայում, հանցագործությամբ պատճառված վնասի յուրաքանչյուր տեսակի առկայությունը պետք է հիմք հանդիսանա անձին քրեական գործով տուժող ճանաչելու համար: Տուժող ճանաչվելու դեպքում անձն օժտվում է ՔրԴՕ-ի 54-րդ հոդվածով ամրագրված իրավունքներով և պարտականություններով, որոնցից մեկն էլ տուժողի՝ օրենքով սահմանված կարգով քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքն է: Տուժողի հենց այդ իրավունքն է պարտադրում քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ միջոցներ ձեռնարկել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումն ապահովելու ուղղությամբ /ՔրԴՕ-ի 50-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ, 52-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետ/:

Օրենսդիրն ապացուցման ենթակա հանգամանքների մեջ պարտադիր պայման է համարում քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքների պարզումը: Այդ առումով, ԼԴՅ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է համարում՝ «հանցագործությամբ պատճառված գույքային և բարոյական վնասը կամովին հատուցելը կամ վերացնելը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված այլ գործողությունները»: ԼԴՅ քրեական օրենսգրքի այլ հոդվածներում բարոյական վնասի մասին հիշատակում չկա, բայց նրա 71-րդ և 72-րդ հոդվածներում նշվում է հանցանք կատարած անձի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու մասին: Մեր կարծիքով, այդ երկու հոդվածներում ամրագրված՝ վնասը հարթելուն ուղղված գործողությունները, կարելի է բարոյական վնասի հատուցման տարատեսակներ համարել:

Իսկ ի՞նչ է ստացվում: Մի կողմից, Սահմանադրությունը հռչակում է, որ Արցախի Յանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է և նա իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք ունի, մյուս կողմից, երբ բարոյական կամ ֆիզիկական վնաս կրած տուժողը հայց է ներկայացնում քրեական վա-

րույթն իրականացնող մարմնին, ապա վերջինս տուժողի հայցադիմումը չի ընդունում, պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում ՔրԴՕ-ի պահանջներին:

Փաստորեն, ՔրԴՕ-ն նշելով, որ տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով, միևնույն ժամանակ բարոյական վնասի հատուցման որևէ ձև, կարգ, եղանակ չի սահմանում և չի նախատեսում /նույնն էլ կարելի է ասել ֆիզիկական վնասի վերաբերյալ/: Այնինչ ցանկացած տեսակի վնասի բնույթը և չափը որոշելը ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև քրեաիրավական նշանակություն ունի, որովհետև այդ կարևորագույն հանգամանքի պարզման դեպքում մի շարք հանցակազմերում առավելագույնս հստակեցվում են անձի մեղավորության աստիճանը և նրա նկատմամբ նշանակվող պատժատեսակի և պատժաչափի հարցերը:

Այս համատեքստում, գտնում ենք, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տուժողի հայցադիմումն ընդունելուց հրաժարվելը կարող է տեղի ունենալ միայն ներկայացված քաղհայցի և կատարված հանցագործության միջև պատճառական կապի բացակայության դեպքում:

Անվիճելի է, որ քրեական դատավարության ընթացքում ներկայացված քաղհայցը մի շարք առավելություններ ունի քաղաքացիական դատավարության կարգով դատարան ներկայացված հայցի նկատմամբ: Օրենսդրորեն հենց քրեական վարույթն իրականացնող մարմնի վրա է դրված հանցագործությամբ պատճառված վնասի բնույթի և չափի որոշման պարտականությունը, որի կապակցությամբ այդ մարմիններն ապացույցներ հավաքելու, դրանք ստուգելու և գնահատելու նպատակով իրականացնում են այնպիսի օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումներ ու կատարում քննչական գործողություններ, որպիսիք տուժողի համար ինքնուրույն դրանց կատարումն անհնար է լինում: Այդ առումով, քրեական վարույթն իրականացնող մարմինը զգալիորեն թեթևացնում է տուժողի վիճակը և քաղհայցի ապացուցման բեռի զգալի մասը վերցնում իր վրա:

Չպետք է նաև անտեսել, որ տուժողի վիճակն ավելի է վատթարանում, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը, հրաժարվելով ընդունել տուժողի հայցադիմումը, համաներման ակտի ուժով կարճում է

գործի վարույթը, դրանով իսկ տուժողին տեղ չթողնելով քաղաքացիական դատավարության կարգով պաշտպանելու իր իրավունքները: Այդ այն դեպքում, երբ համաձայն ՔրԴՕ-ի 35-րդ հոդվածի 8-րդ մասի՝ համաներման ակտի հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ՝ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

Քննարկվող հարցը դժվարության տեղիք է տալիս նաև, որ երբ դատարանում, համաներման ակտի ուժով, քրեական գործի վարույթը կարճվում է և կալանքի տակ գտնվող հանցագործություն կատարած անձն ազատ է արձակվում, ապա տուժողի համար լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծվում, որովհետև ծագած նոր պայմաններում տուժողն իր պահանջներն արդեն կարող է իրականացնել քաղաքացիական դատավարության կարգով:

Պատկերը պարզ լինելու համար, նշենք, որ Արցախի Յանրապետության կազմավորման շուրջ 26 տարիների ընթացքում, տարբեր իրադարձությունների և տարեդարձերի կապակցությամբ, երկրի օրենսդիր մարմնի կողմից համաներման 9 ակտ է ընդունվել, որոնց հիման վրա պատժի կրումից և քրեական պատասխանատվությունից ազատված անձանց նկատմամբ հանցագործությամբ տուժած անձինք զրկվել են բարոյական վնասի հատուցման պահանջ ներկայացնելուց, իսկ ազատության մեջ հայտնված անձինք, որպես կանոն, կամավոր կերպով վնասը հատուցելու ցանկություն չեն դրսևորել և խուսափել են դրանից:

Այսքանից պարզ է դառնում, որ Արցախի Յանրապետությունում բարոյական վնասի հատուցման ինստիտուտի լիարժեք ներդրման անհրաժեշտությունը ոչ թե կա, այլ այն հրատապ է և շուտափույթ լուծում է պահանջում: Հաշվի առնելով, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը, ըստ էության համալիր իրավական ինստիտուտ է և սերտորեն կապված է քրեական, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքների հետ, ուստի առաջին հերթին, այդ ինստիտուտի կայացման համար, պետությունը խնդիր ունի կանոնակարգելու իր քրեական և քաղաքացիական քաղաքականությունը, որի կապակցությամբ առաջարկում ենք օրենսդրության մեջ կատարել

ուշադրության արժանի հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1. Ոչ նյութական վնասի վերաբերյալ ՅՅ 21.12.15 ՅՕ-184-Ն և 16.12.16 ՅՕ-241-Ն օրենքներով ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ /Վնասների հատուցում/, 19-րդ /Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը/, 162.1-րդ /Ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը/, 1087.2-րդ /Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները/ և 1087.3-րդ /Խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցման հասկացությունը, բովանդակությունը, կարգն ու պայմանները/ հոդվածներում կատարած լրացումները և փոփոխությունները ԼՂՀ համար կիրառելի համարել և դրանք կատարել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներում:

2. ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում /Վնասների հատուցում/ արձանագրել, որ «բարոյական» և «ոչ նյութական» վնասները համարժեք հասկացություններ են:

3. ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ գլխի 3-րդ պարագրաֆում /ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ/ մտցնել «Հանցագործության հետևանքով պատճառված ոչ նյութական /բարոյական/ վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ նոր /1093.1-րդ/ հոդված:

4. ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը /Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները/ լրացնել 48.1-րդ կետով, որում տալ բարոյական, ֆիզիկական և զույքային վնասներ հասկացությունների բնորոշումը:

5. Նույն օրենսգրքի 54-րդ հոդվածի /Տուժողի իրավունքները և պարտականությունները/ 1-ին մասի 15-րդ կետում «պատճառված» բառից հետո լրացնել «բարոյական, ֆիզիկական, նյութական» բառերը:

6. Նույն օրենսգրքի 55-րդ հոդվածի /Քաղաքացիական հայցվորը/ 1-ին մասում «ենթակա» բառից հետո լրացնել «բարոյական, ֆիզիկական» բառերը և հոդվածի 1-ին մասում ավելացնել հետևյալ նախադասությունը. «Քաղաքացիական հայցվորը կարող է նաև քաղաքացիական հայց ներկայացնել բարոյական վնասի նյութական հատուցման համար»:

7. Նույն օրենսգրքի 6-րդ բաժնի վերնագրում /ԳՈՒՅԶԱՅԻՆ ՀԱՐՑԵ-



ՐԸ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ/ «ԳՈՒՅՔԱՅԻՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ /ԲԱՐՈՅԱԿԱՆ/» բառերը:

8. Նույն օրենսգրքի 116-րդ հոդվածում /Ապացուցման ենթակա հանգամանքները/ քրեական գործով որպես ապացուցման պարտադիր հանգամանք նշել՝ «Չանցագործության հետևանքով պատճառված վնասի բնույթի և չափի պարզումը»:

9. Նույն օրենսգրքի 169-րդ հոդվածի /Քաղաքացիական հայցի հարուցումը/ 2-րդ մասում «գույքային» բառից հետո լրացնել «և ոչ գույքային» բառերը:

Բարոյական վնասի ինստիտուտի վերաբերյալ ամբողջական օրենսդրական կարգավորումը, որը բխում է միջազգային մի շարք փաստաթղթերից և Արցախի Չանրապետության Սահմանադրության էությունից, հնարավորություն կտա երկրի քաղաքացիներին լիարժեք օգտվելու իրենց՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության, վնասի արդար փոխհատուցման սահմանադրական իրավունքներից, որի արդյունքում այդ խնդրահարույց հարցի առնչությամբ կունենանք կայուն և միասնական դատական պրակտիկա:

*Լ Դ Չ դատական իշխանություն /ԻՏՎ/ հանդես, N2 /24/ 2017թ.*

## ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Միակ ընկերը, որն ուղեկցում է մարդուն անգամ  
հետմահու, արդարադատությունն է, քանզի  
մնացյալ ամեն ինչ մահանում է մարմնի հետ:  
**Մանուի օրենքների 8-րդ գլխի 17-րդ կետ***

Սկսած անտիկ դարաշրջանից մինչև մեր օրերը, դատական իշխանության հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են /և գտնվում են/ իրավաբանների, փիլիսոփաների, սոցիոլոգների և այլ հետազոտողների ուշադրության կենտրոնում, որովհետև ցանկացած երկրի պետական իշխանության կառուցվածքում դատական իշխանությունը հատուկ տեղ է զբաղեցնում: Եվ պատահական չէ, որ աշխարհի բոլոր սահմանադրությունները դատական իշխանության վերաբերյալ բաժիններ /գլուխներ/ են պարունակում: Իսկ ներկա պայմաններում, անկախ և ինքնուրույն դատական իշխանությունը, իրավական պետության հիմնական հատկանիշներից մեկն է հանդիսանում:

«Դատական իշխանություն» արտակարգ երևույթը բնորոշելու համար, նախ, պարզենք, թե ի՞նչ է նկատի առնվում իշխանության հասկացության տակ՝ առհասարակ և, պետական իշխանություն հասկացության տակ, մասնավորապես:

Ս.Մալխասյանի բառարանում իշխանությունը բնորոշվում է որպես «իրավունք, ուժ, հնարավորություն... մի բան անելու ըստ իր կամքի կամ ըստ պաշտոնի... վարչություն կամ անձ, որը ըստ պաշտոնի կատարում է այս կամ այն գործը...», իսկ ժամանակակից հայոց լեզվի բառարանն իշխանությունը համարում է «պետություն կառավարելու իրավունք, քաղաքացիական տիրապետություն..., կառավարելու՝ կարգադրելու՝ հրամայելու իրավունք, հնարավորություն..., իրավասություն, ղեկավարում, զորություն, ուժ, ազդեցություն, պարտադրանք»: Այս լեզվաբանական ստուգաբանություններից բխում է, որ իշխանությունը սուբյեկտի /սուբյեկտների/ կամքն այլ սուբյեկտին /սուբյեկտներին/ պարտադրելու կամ

ներգործելու հնարավորություն է, իսկ պետական իշխանությունը՝ պետության կամքի, ուժի և հզորության խտացված արտահայտություն՝ մարմնավորված պետական մարմիններում և հաստատություններում:

Ինքնին «իշխանություն» եզրույթը նշանակում է լիազորությունների առկայություն և դրանց իրականացման հնարավորություն, իսկ «դատական» ածականը հստակեցնում է, թե այդ լիազորություններն ում են պատկանում, տվյալ դեպքում՝ դատական իշխանության մարմիններին՝ դատարաններին: Այլ խոսքերով, եթե «դատական իշխանություն» հասկացությունը ենթադրում է պետական իշխանության ճյուղերից մեկը՝ օժտված գործառնություններով և լիազորություններով, ապա դատարանը հանդես է գալիս որպես իշխանության այդ ճյուղի լիազորությունները կրող մարմին: Այս երկու հասկացությունները տարբերվում են նաև իրենց պատմական արմատներով: «Դատական իշխանություն» եզրույթը համեմատաբար նոր հասկացություն է և այն առաջին անգամ ամրագրվել է ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրության մեջ, իսկ դատարանի /դատավորի/ գաղափարը ծագել է դեռևս հազարամյակներ առաջ: Այդ պատկերացումը, առաջին հերթին, մեզ տալիս է Յին Կտակարանի «Ելից» գիրքը: Երբ Մովսես մարգարեն, նկատելով իրար հետ կռվող երկու հրեաների, մեղավորին նկատողություն է անում ընկերոջը ծեծելու համար, ստանում է հետևյալ պատասխանը. «Ո՞վ քեզ մեր վերայ իշխան կամ դատավոր դրավ» կամ «Եվ Մովսեսն ասեց իր աներին. թե ժողովուրդը գալիս է ինձ մոտ Աստուածանից դատաստան հարցնելու: Երբ որ նորանք մի բան են ունենում՝ գալիս են ինձ մոտ, եւ ես նորանց մեջ տեղը դատաստան եմ անում և Աստուծոյ կանոնները և նորա օրենքները նորանց հասկացնում»:

Արցախի Չանրապետության օրենսդրության մեջ «դատական իշխանություն» եզրույթն առաջին անգամ իր արտացոլումը գտավ երկրի օրենսդիր մարմնի կողմից 1992 թվականի հունվարի 6-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Չանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքում: Օրենքն ազդարարեց, որ Չանրապետության «ինքնիշխանությունն արտահայտվում է իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ ի շահ հանրապետու-

թյունում ապրող բոլոր ազգերի»: Հաջորդ իրավական ակտը, որում նույնպես ամրագրվեց «դատական իշխանություն» եզրույթը՝ «Դատական իշխանության մասին» Արցախի Հանրապետության 1996 թվականի օրենքն է: Վերջինս, չնայած չպարզաբանեց դատական իշխանության հասկացությունը, բայց մատնանշեց նրա խնդիրները, նպատակները և գործունեության հիմնական ուղղությունները: Դեռ ավելին, օրենքը հստակորեն արձանագրեց, որ հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները, իսկ դատական իշխանությունը, որն անկախ և ինքնուրույն է, իրականացվում է քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների միջոցով:

«Դատարանակազմության մասին» Արցախի Հանրապետության 1999 թվականի օրենքում օրենսդիրն ընդհանրապես խուսափեց «դատական իշխանություն» եզրույթն օգտագործելուց, սակայն նշեց, որ դատարաններն արդարադատությունն իրականացնում են Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան: Նույն վիճակն արձանագրվեց նաև «Դատարանակազմության մասին» Արցախի Հանրապետության 2008 թվականի օրենքում:

Հարկ է նշել, որ ինչպես 2006, այնպես էլ Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրությունը «դատական իշխանություն» եզրույթի կապակցությամբ միայն արձանագրեց, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Ըստ երևույթին, դատական իշխանության հասկացության ճիշտ բնորոշումը պետք է որոնել իրավաբան գիտնականների մասնագիտական և ուսմունքային /դոկտրինալ/ մեկնաբանություններում, չնայած խնդրո առարկա հարցի վերաբերյալ դեռևս միասնական տեսակետ չկա: Որոշ հետազոտողներ նույնիսկ այն կարծիքին են, որ դատական իշխանությունն աստվածային բնույթ ունի՝ իրականացնելով աստվածային արդարադատություն: Այդ պլանում նրանք վկայակոչում են Հին Կտակարանի «Դատավորաց» գիրքը, որի անվանումն իբրև ցույց է տալիս, որ գրքի հեղինակները բոլոր գործողություններից կարևորը համարել են

արդարադատության իրականացումը, իսկ ժողովրդի հոգևոր և իրավական արժեքները պահպանելու և նրանց միավորելու առումով՝ դատավորների համար՝ առավել կարևոր:

Մեր կարծիքով, առավել հաջող բնորոշումը տվել է Ի.Պետրովսիինը, ըստ որի՝ դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, որը կոչված է՝ 1/ օրենքի հիման վրա լուծելու պետության, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև ծագած սոցիալական վեճերը, 2/ վերահսկելու օրենքների սահմանադրականությունը, 3/ պաշտպանելու քաղաքացիների իրավունքները՝ նրանց և գործադիր իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց փոխհարաբերություններում, 4/ վերահսկելու, պահպանելու քաղաքացիների իրավունքները մինչդատական ոլորտում, 5/ քննելու և լուծելու առանձին տեսակի վարույթներով նախատեսված հարցերը:

Բոլոր դեպքերում դատական իշխանությունը միասնական պետական իշխանության դրսևորումներից մեկն է, հանդիսանալով որպես անկախ և ինքնուրույն ճյուղ:

Դատական իշխանության սահմանադրական հիմունքներն ամրագրված են Արցախի Հանրապետության Սահմանադրության տարբեր գլուխներում և դրանք կարելի է բնորոշել որպես առաջատար, գլխավոր դրույթներ, որոնք հատկանշում են դատական իշխանության, որպես պետական իշխանության գործունեության հատուկ ձևի էությունը, նրա մարմինների և պաշտոնատար անձանց կարգավիճակը, նրանց կազմակերպման սկզբունքները և այլն:

«Սահմանադրական հիմունքներ» եզրույթն իր իրավաբանական բնույթով ավելի բարդ է, որովհետև այն իրավական առումով համապատասխանում է Հիմնական օրենքի «բարդությանը», որը դրսևորվում է սահմանադրական կարգավորման բացառիկ առաջնայնության ու բազմակողմանիության և իրավական նորմերի աստիճանակարգում Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժ ունենալու առանձնահատկությունների մեջ:

Սահմանադրական հիմունքները հանդես են գալիս նույնանման իրավական նորմերի տեսքով, կազմելով խոշոր ինքնուրույն պետաիրավական ինստիտուտներ:

Դրանցից մեկն էլ դատական իշխանության ինստիտուտն է, որի սահմանադրական հիմունքներն օժտված են մի շարք առանձնահատկություններով:

1. Դատական իշխանության իրավահարաբերություններն ամրագրող և նրա բովանդակությունը բնորոշող նորմերն ամրագրված են Արցախի Յանրապետության Սահմանադրության 1-ին /«Սահմանադրական կարգի հիմունքները»/, 2-րդ /«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները»/, 4-րդ /«Յանրապետության նախագահը»/, 5-րդ /«Ազգային ժողովը»/, 6-րդ /Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը/, 7-րդ /«Դատախազությունը»/ և 12-րդ /«Եզրափակիչ և անցումային դրույթներ»/ գլուխներում: Ինչպես նկատելի է, Արցախի Յանրապետության Սահմանադրությունը դատական իշխանությանը հատուկ գլուխ է հատկացրել: Դատական իշխանությանը վերաբերող մի շարք առանցքային հարցեր՝ դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները, դատավորի կարգավիճակը և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետները, Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մանրամասները, անկախ պետական այդ մարմնի՝ Սահմանադրության մեջ չնշված այլ լիազորությունները, գործունեության կարգը և այլն, Սահմանադրությունը վերապահել է նոր Դատական օրենսգրքին: Վերջինս պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի մինչև 168-րդ հոդվածին համապատասխան ընտրված հանրապետության նախագահի կողմից իր պարտականությունների ստանձման օրը:

2. «Դատական իշխանություն» սահմանադրական ինստիտուտի նորմերն ընդգծված ձևով ուղորդված են պաշտպանելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները: Բավարար է միայն նշել, որ Սահմանադրությունը հստակ հռչակում է այն իրավունքները և ազատությունները, որոնց խախտման պարագայում անձը դատական պաշտպանության իրավունք է ձեռք բերում:

3. Ի տարբերություն իրավունքի մյուս ճյուղերի, Սահմանադրությամբ դատական իշխանության մարմինների կազմավորման և գործունեության հիմունքներն առավել լրիվությամբ հստակեցված են: Կարևորելով

դատական իշխանության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, Արցախի սահմանադիրները Սահմանադրության մեջ ամրագրել են, որ դատական իշխանության սահմանադրական հիմունքները կարգավորող հոդվածների մեջ կարող են փոփոխություններ մտցվել միայն հանրաքվեի միջոցով:

4. Եթե Սահմանադրությամբ օրենսդիր և գործադիր իշխանությունների պաշտոնատար անձանց կարգավիճակը բավարար չափով հստակեցված չէ կամ թույլ է նշված, ապա նույնը չի կարելի ասել դատական մարմինների պաշտոնատար անձանց՝ դատավորների կարգավիճակի մասին:

Դատական իշխանությունը, որպես միասնական պետական իշխանության ճյուղ, արտահայտում է պետության կամքը և օժտված է իշխանության մյուս ճյուղերին բնորոշ հատկանիշներով ու գծերով: Միևնույն ժամանակ, դատական իշխանությունն ունի այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ չեն օրենսդիր և գործադիր իշխանություններին: Սակայն դա չի նշանակում, որ դատական իշխանությունն առանձնացված է իշխանության մյուս ճյուղերից, նրա մարմիններից: Իշխանության բոլոր երեք ճյուղերը պետական իշխանության մեկ միասնական համակարգ են կազմում՝ իրենց գործունեությամբ փոխազդելով միմյանց և հավասարակշռելով մեկը մյուսին: Դրա հետ մեկտեղ, դատական իշխանությունն առանձնանում է իրեն յուրահատուկ հետևյալ գծերով և հատկանիշներով.

1. Դատական իշխանությունն իրականացվում է հատուկ պետական մարմինների կողմից, որոնք կոչվում են դատարաններ, իսկ այդ իշխանության կրողները դատավորներն են հանդիսանում:

2. Դատական իշխանությունը հիմնականում իրականացվում է արդարադատության ձևով: Սահմանադրության 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Յանրապետությունում արդարադատությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրությունն արդարադատության իրականացման ձևերից միայն սահմանադրական արդարադատությունն է նշում, մնացած ձևերը թողնելով սահմանադրական օրենքներին: Չաշվի առնելով, որ դատարաններին վերաբերող մի շարք առանց-

քային հարցերի կարգավորումը Սահմանադրությունը վերապահել է նոր ընդունվելիք Դատական օրենսգրքին, ապա քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության օրենսգրքերը մեզ հուշում են, որ բացի սահմանադրական արդարադատությունից, Արցախի Յանրապետությունում արդարադատությունն իրականացվում է նաև քաղաքացիական, վարչական և քրեական արդարադատությունների ձևերով:

3. Յաջորդ հատկանիշը բխում է նախորդից և դրսևորվում է արդարադատության իրականացման դատավարական կարգով՝ կարգավորման հիմք ընդունելով Սահմանադրությունից բխող դատավարության օրենսգրքերը և օրենքները: Այսպես՝ Արցախի Յանրապետությունում քաղաքացիական արդարադատությունն իրականացվում է քաղաքացիական դատավարության, վարչական արդարադատությունը՝ վարչական դատավարության, քրեական արդարադատությունը՝ քրեական դատավարության օրենսգրքերով, իսկ սահմանադրական արդարադատությունը՝ «Սահմանադրական դատավարության մասին» օրենքով:

4. Արդարադատության իրականացման դատավարական կարգը, որը կարգավորում է դատական ընթացակարգերի կանոնները, դատական իշխանության գործունեության, դատական որոշումների հիմնավորվածության և արդարացիության կարևոր երաշխիք է հանդիսանում: Արդարադատության իրականացման այս կամ այն դատավարական կարգը որոշվում է սահմանադրական օրենքներով, որոնք մանրամասն կարգավորում են կոնկրետ գործեր քննելու ընթացքում դատարանի գործողությունները և նրա կողմից ընդունվող որոշումները:

5. Արցախի Յանրապետության դատական իշխանությունը միասնական է, ինչն էլ որոշվում է միասնական դատական համակարգով: Սահմանադրությունը և Դատական օրենսգիրքը սպառնիչ թվարկում են հանրապետության տարածքում գործող դատարանները, նրանց կազմավորման և գործունեության կարգը: Յամաձայն Սահմանադրության 136-րդ հոդվածի՝ Արցախի Յանրապետությունում գործում են Գերագույն դատարանը, վերաքննիչ դատարանը և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:



6. Դատական իշխանության կարևոր հատկանիշներից մեկն էլ նրա անկախությունը, ինքնուրույնությունը և ամանձնացվածությունն է:

Անկախության էությունը դրսևորվում է նրանում, որ, արդարադատության իրականացման ընթացքում որոշում կայացնելիս, դատավորը որևէ մեկի կարծիքից կախված չի լինում: Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ նշված է Սահմանադրության 137-րդ հոդվածի 1-ին մասում: Դրա հետ մեկտեղ, դատավորի անկախությունը չի նշանակում, որ այս կամ այն գործը /նյութը/ նոր քննության ուղարկելու դեպքում, դատավորը չպետք է ուշադրություն դարձնի վերադաս դատական ատյանի որոշման մեջ նշված պարզման ենթակա հանգամանքներին: Իհարկե, դրանք չպետք է նույնացնել խորհրդային Միության Գերագույն դատարանի պլենումի «ցուցումներ»-ի և ղեկավար պարզաբանումների հետ: Չնայած դատական համակարգում դատարանների աստիճանակարգությունը ենթադրում է բարձրագույն դատական ատյանի հեղինակություն, այնուհանդերձ, բարձրագույն դատական ատյանը, գործը /նյութը/ նոր քննության ուղարկելու դեպքում, իրավասու չէ կանխորոշելու գործի /նյութի/ վերջնական ճակատագիրը: Նույնիսկ իրավական հարցերի վերաբերյալ Դատարանների նախագահների խորհրդի մեկնաբանումները ոչ թե պարտադիր, այլ խորհրդատվական բնույթ ունեն դատարանների և դատավորների համար: Այստեղ խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ վերադաս դատական ատյանի որոշումն ուղղված է լինում նոր քննության ընթացքում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը ճիշտ պարզելուն և գնահատական տալուն: Մինչդեռ դատական պրակտիկան վկայում է, որ ստորադաս դատարանների կողմից դրանք միշտ չէ, որ կատարվում են կամ էլ կատարվում են ոչ պատշաճ կերպով: Դա այն դեպքում, երբ Սահմանադրության 141-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գերագույն դատարանը՝ որպես բարձրագույն դատական ատյան, դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառումը: Բացի այդ, համաձայն Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մա-

սի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները /այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները/ պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Ջետևաբար, ստորադաս դատարանների կողմից Գերագույն դատարանի հիմնավորված և օրինական որոշման պահանջների չկատարումը սասանում է դատական իշխանության հեղինակությունը և խաթարում արդարադատության բուն էությունը:

Բնութագրելով դատավորների անկախությունը, հայտնի ռուս իրավաբան Ի.Ֆոյնիցկին նշել է, որ «այն կայուն համոզմունքի և բարձր անբասիր բարոյականության արգասիք է»:

Դատական իշխանության ինքնուրույնությունը նշանակում է, որ արդարադատության իրականացման ընթացքում դատավորները գործում են ինքնուրույն՝ Սահմանադրությամբ, հանրապետության դատական և դատավարության օրենսգրքերով և օրենքներով իրենց տրված լիազորությունների շրջանակներում: Դատավորը չպետք է թույլ տա խառնվելու իր գործերին, նա չպետք է կատարի ո՛չ իր դատարանի, ո՛չ վերադաս դատական ատյանի և ո՛չ էլ պետական իշխանության որևէ ճյուղի ղեկավարի «հանձնարարականները»: Դատավորը պետք է ծառայի իրավունքին, այլ ոչ թե իր ղեկավարին: Նա պատասխանատու է օրենքի և իր խղճի առջև: Այդ սկզբունքից հրաժարվող դատավորը դառնում է կախյալ «աստիճանավոր»: Սահմանադրության 135-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է: Արդարադատություն իրականացնելիս դատավորը չի կարող իր գործառույթները կիսել պետական իշխանության այլ մարմինների հետ: Դատական իշխանության ինքնուրույնությունը նշանակում է նաև, որ ստորադաս դատարանի դատական ակտերը վերադաս դատական ատյանի կողմից հաստատման կարիք չունեն: Օրինական ուժի մեջ մտնելով, դատական ակտերը դառնում են պարտադիր կատարման բոլոր այն անձանց համար, ովքեր դրանց հասցեատերն են:

Դատական իշխանության առանձնացվածությունը կայանում է նրանում, որ դատական համակարգը չի ենթարկվում և չի հարում պետական իշխանության որևէ այլ համակարգի, իսկ դատավորները՝ կազմակերպչական առումով, այլ պետական մարմնի մեջ չեն մտնում: Սակայն, դա դատական իշխանության մեկուսացվածություն չի ենթադրում, քանի որ դատարանները ղեկավարվում են ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենսգրքերով և օրենքներով:

Դատական իշխանության առանձնացվածությունը ենթադրում է նաև, որ դատարաններից և դատավորներից բացի, պետական իշխանության այլ մարմիններ և պաշտոնատար անձինք արդարադատություն իրականացնել չեն կարող: Այսպես՝ միայն դատարանը կարող է մարդուն մեղավոր /անպարտ/ ճանաչել կատարած արարքի մեջ և ենթարկել քրեական պատժի /կամ պատժից ազատել/:

7. Դատական մարմինների որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար: Իսկ դա նշանակում է, որ դատարանի որոշումն իշխանական բնույթ ունի և ենթակա է ձիշտ ու անշեղ կատարման Արցախի Չանրապետության ամբողջ տարածքում: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը դիտավորությամբ չկատարելն առաջ է բերում հանրապետության քրեական օրենսգրքի 379-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվություն:

8. Դատական իշխանությունն իրականացվում է Արցախի Չանրապետության Սահմանադրությամբ ամրագրված և Սահմանադրությունից բխող սկզբունքներով:

Այդ սկզբունքները Սահմանադրությամբ և սահմանադրական օրենքներով ամրագրված առավել ընդհանուր բնույթի հիմնական, ելակետային, ղեկավար դրույթներ և գաղափարներ են, որոնք դրված են հանրապետության դատական համակարգի կազմավորման և զործունեության հիմքում: Ընդ որում, բոլոր սկզբունքները փոխկապակցված են միմյանց հետ՝ ձևավորելով միասնական համակարգ:

Սահմանադրությունը հռչակում է հետևյալ համընդհանուր սկզբունքները. օրինականությունը /6-րդ հոդված/, դատավարության պետական

լեզուն /20-րդ հոդված/, օրենքի առջև ընդհանուր հավասարությունը /28-րդ հոդված/, դատավորի ապակուսակցականացվածությունը /46-րդ հոդվածի 2-րդ մաս/, դատական պաշտպանության իրավունքը /61-րդ հոդվածի 1-ին մաս/, արդար, հրապարակային և ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը /63-րդ հոդվածի 1-ի մաս/, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը /64-րդ հոդված/, ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը /65-րդ հոդված/, արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից /135-րդ հոդված/, դատական համակարգի միասնականությունը /136-րդ հոդված/, դատավորի կարգավիճակը /137-րդ հոդված/:

Բացի դատական իշխանության իրականացման համընդհանուր սկզբունքներից, Սահմանադրությունը նշում է նաև մի շարք հատուկ սկզբունքներ, որոնք գործում են դատավարության առանձին տեսակներում: Օրինակ, անմեղության կանխավարկածը /66-րդ հոդված/, մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը /67-րդ հոդված/, կրկին դատվելու արգելքը /68-րդ հոդված/, դատապարտվածի բողոքարկման իրավունքը /69-րդ հոդված/, մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը /71-րդ հոդված/, հանցագործություն սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը /72-րդ հոդված/ գործում են միայն քրեական դատավարությունում, իսկ վնասի հատուցման իրավունքը /62-րդ հոդված/ տարբեր դրսևորումներով իրացվում է քաղաքացիական, վարչական և քրեական դատավարություններում:

Պետական մարմնի լիազորությունների կոնկրետ բնույթը և քանակը կախված են այն գործառույթներից, որոնց կատարումը դրված է նրա վրա:

Դատական իշխանության գործառույթի տակ նկատի են առնվում նրա գործունեության իրականացման այն հիմնական ուղղությունները, որոնք արտացոլում են իշխանության էությունը, սոցիալական նշանակությունը և խնդիրները:

Օրենսդրությամբ դատարանների կողմից իրականացվող գործառույթների սպառիչ ցանկը չի սահմանված: Դատական իշխանությունը, օժտված լինելով իրավակիրառ և իրավապաշտպան գործունեություն իրականացնելու իրավազորությամբ, կատարում է հետևյալ գործառույթները.

1/ արդարադատության իրականացում,

2/ դատավարական հարկադրանքի առանձին միջոցներ կիրառելու և քննչական գործողություններ կատարելու թույլտվություն,

3/ դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, հետաքննիչի գործողությունների /անգործության/ և որոշումների օրինականության ու հիմնավորվածության ստուգում,

4/ անձանց իրավունքները սահմանափակող առանձին տեսակների օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու թույլտվություն,

5/ քաղաքացիների բողոքների քննում և լուծում այն գործողությունների և որոշումների վերաբերյալ, որոնք խախտում են նրանց իրավունքները և ազատությունները,

6/ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատում,

7/ որոշակի դեպքերում որոշումների ընդունում քաղաքացիների իրավունակության և գործունակության վերաբերյալ,

8/ օրենքի նորմի մեկնաբանում:

Իհարկե, դատական իշխանության հիմնական գործառույթն արդարադատության իրականացումն է, որովհետև միայն տվյալ գործառույթի ընթացքում հետազոտվում և լուծվում են, մասնավորապես, հասարակական կյանքի տարբեր մասնակիցների միջև ծագած վեճերը, հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատիժ նշանակելու, հանցանք չկատարած անձանց անպարտ ճանաչելու և նրանց արդարացնելու հարցերը:

Ցանկացած հարցի՝ դատարանի իրավասությանը ենթակա լինելը որոշում է դատարանը՝ օրենքի հիման վրա:

Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ ենթակա են բոլոր քաղաքացիական, քրեական և վարչական գործերը: Առաջին ատյանի դատարանը վարում է սնանկության գործեր:

Քրեակատարողական հարկադրանքի միջոցներ կիրառելու և առանձին քննչական գործողություններ կատարելու թույլտվությունը վերապահված է միայն Առաջին ատյանի դատարանին, որոնց կապակցու-

թյամբ միայն դատարանի որոշման հիման վրա կիրառվում են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, մեղադրյալին գրավով կալանքից ազատելու, կալանքի տակ մեղադրյալին պահելու ժամկետը երկարացնելու, բնակարանի խուզարկություն կատարելու, բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկություն կամ առգրավում կատարելու, քրեական գործի նախնական քննության ավարտից հետո գույքի վրա կալանք դնելու, կասկածյալի կամ մեղադրյալի նամակագրությունը վերահսկելու, նրանց հեռախոսային խոսակցությունները լսելու ու ձայնագրառելու և Արցախի Չանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք այլ հարցեր:

Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում՝ միջանկյալ դատական ակտերը:

Գերագույն դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտերը:

Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և Գերագույն դատարանների դատական ակտերը՝ Գերագույն դատարանը: Չանրապետության բարձրագույն դատական ատյանը սահմանադրական արդարադատություն իրականացնելու միջոցով ապահովում է Սահմանադրության գերակայությունը, ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնում մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները:

Այսպիսով՝ կախված իրականացվող գործառնություններից, Արցախի Չանրապետության դատարաններն օժտված են արդարադատության իրականացման սահմանադրական, վարչական, մինչդատական /քրեադատավարական/ վերահսկողության, ինչպես նաև կոնկրետ գործերի քննության ընթացքում Սահմանադրության, օրենքների և իրավական նորմերի մեկնաբանման իրավազորություններով:

Ճիշտ է, Աստվածաշնչում խոսք չկա դատարանների «սողմոնյան

բյուջեի» մասին, բայց նշված է Սողոմոն իմաստունի դատը /երեխայի պատկանելության վերաբերյալ երկու կանանց միջև ծագած վեճը/: Իսկ դա նշանակում է, թե նույնիսկ հնում մարդկանց համար որքան կարևոր է եղել արդարացի դատն ու դատաստանը: Մարդիկ դատարան են գնացել, գնում և գնալու են արդարություն որոնելու նպատակով: Դատարանների տեղի և դերի մասին դիպուկ կարծիք է հայտնել Յեզեյը, ըստ որի՝ «Քաղաքացիական հասարակության անդամն իրավունք ունի դիմել դատարան և պարտավոր է կանգնել դատարանի առաջ ու միայն դատարանի միջոցով ստանալ վիճարկվող իրավունքը»:

Դատարանը, հանդիսանալով դատական իշխանության մարմին, օժտված է հետևյալ բնորոշիչ հատկանիշներով.

1. Դատարանը պետական մարմին է, որովհետև դատական իշխանությունը պետական իշխանության անքակտելի մասն է կազմում և առանց իշխանության պետությունը չի կարող իր գործառնություններն իրականացնել: Արցախի Յանրապետության Սահմանադրությամբ հստակորեն նշված է հանրապետությունում գործող դատական համակարգը և օրենքով նախատեսված դեպքերում այլ մասնագիտական դատարաններ ստեղծելու հնարավորությունը: Ընդ որում, յուրաքանչյուր դատարանի դատական տարածքը հանրապետության ողջ տարածքն է, իսկ նստավայրը՝ Ստեփանակերտ քաղաքը: Առաջին ատյանի դատարանը կարող է ունենալ նաև նստավայրեր հանրապետության այլ բնակավայրերում:

2. Դատարանների կազմավորման հատուկ կարգն էականորեն տարբերվում է պետական իշխանության մյուս մարմինների կազմավորումից: Դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն ոչ միայն օրենսդրության /տարիքը, քաղաքացիությունը/, այլև մի շարք սուբյեկտիվ /կրթությունը, բարոյական հատկանիշները, դատվածություն չունենալը/ բնութագրիչների: Բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը դեռևս իրավունք չի տալիս դատավոր աշխատելու: Դրա համար անհրաժեշտ է ունենալ որոշակի աշխատանքային /իրավաբանի մասնագիտական/ ստաժ, հանձնել որակավորման քննություններ և մասնագիտական պատրաստման անցնել համապատասխան ուսումնական հաստատությունում: Դատավոր նշանա-

կելու սահմանափակումները, դատավորների թեկնածուների ցուցակների կազմման և ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման հարցերը կարգավորվում են Դատական օրենսգրքով:

3.Օրենսդրությամբ հատուկ կարգ է սահմանված դատարանների անկախության ապահովման համար: Արցախի Չանրապետության քրեական օրենսգրքի 368-րդ և 373-րդ հոդվածները քրեական պատասխանատվություն են սահմանում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու կամ դատավորի նկատմամբ սպառնալիք կամ բռնի գործողություններ կատարելու համար:

4.Չանրապետության դատավորներին, ինչպես նաև դատական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով գործում է դատական ծառայության ինստիտուտը, որն իրականացվում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Դատական դեպարտամենտի կազմում գործում է դատական կարգադրիչների ծառայությունը, որոնց խնդիրները կարգավորվում են Դատական օրենսգրքով:

5.Արդարադատության իրականացման յուրաքանչյուր ձև, բացի սահմանադրականից, տարվում է համապատասխան դատավարության օրենսգրքով. քաղաքացիական արդարադատությունը՝ քաղաքացիական դատավարության, վարչականը՝ վարչական դատավարության, քրեականը՝ քրեական դատավարության օրենսգրքերով, իսկ սահմանադրականը՝ «Սահմանադրական դատավարության մասին» օրենքով:

6.Դատական իշխանությունն իրականացվում է որոշակի դատական կազմով: Չանրապետության քաղաքացիական, վարչական, քրեական, դատական օրենսգրքերը և «Սահմանադրական դատավարության մասին» օրենքը սահմանում են, թե դատական համակարգի ղր ատյանում այս կամ այն գործը /նյութը/, բողոքը, դիմումը միանձնյա կամ կոլեգիալ պետք է քննության առնվի:

7.Դատարանը, որպես դատական իշխանության մարմին, իրականացնում է նաև այլ լիազորություններ: Այսպես՝ համաձայն Դատական օրենսգրքի 20.1-ին հոդվածի՝ դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվո-



դականությունն ապահովելու նպատակով դատարանները վարում են դատական վիճակագրություն, որոնց հավաքումն ու վարումն իրականացնում է Դատական դեպարտամենտը:

Այսպիսով՝ դատարանը հանդիսանալով դատական իշխանության մարմին, պետական ապարատի մասն է կազմում, հանդես է գալիս պետության անունից և հանձնարարությամբ, օժտված է պետա-իշխանական և ներքին կազմակերպչական լիազորություններով՝ կիրառելով գործունեության հատուկ ձևեր և մեթոդներ:

Ի տարբերություն օրենսդիր և գործադիր իշխանության, դատական իշխանության կրողը ոչ թե դատական մարմինն է, այլ կոնկրետ դատական կազմը կամ միանձնյա դատավորը, որոնք հանդես են գալիս պետության անունից: Սահմանադրությունը բավական բարձր պահանջներ է ներկայացնում դատական պատմուձանը կրողին՝ օժտելով նրան անկախությամբ, անաչառությամբ, անձեռնմխելիությամբ և անփոփոխելիությամբ:

Սահմանադրության 135-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է: Արդարադատությունն իրականացնում են միայն Արցախի Հանրապետության դատարանները, ոչ ոք իրավունք չունի որևէ ձևով միջամտելու դատարանի /դատավորի/ գործունեությանը: Հենց դրան է ուղղված Արցախի Հանրապետության քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածը /արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը/, որի առաջին մասով նախատեսված հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը դատարանների օրինական գործունեության անկախությունն ապահովող հասարակական հարաբերություններն են:

Արցախի Հանրապետության դատական իշխանության իրականացումն ապահովվում է մի շարք երաշխիքներով, որոնցից կարևորվում են ժողովրդավարական և իրավական պետության հռչակումը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, Սահմանադրության գերակայությունը և բարձրագույն իրավաբանական ուժով օժտված լինելը, անկախ և ինքնուրույն դատական համակարգի կայունությունը, արտակարգ դատարանների ստեղծման արգելքը, Սահմանադրությամբ՝ դատավորի բարձր կարգավիճակին և պատասխանատ-

վությանը համապատասխանող վարձատրության ամրագրումը, անկախ պետական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումն ու գործունեությունը և այլն:

Չավելենք, որ անկախությունը և ինքնուրույնությունը դատական իշխանությանն անհրաժեշտ են ոչ թե անվերահսկելի և անկառավարելի դառնալու, այլ եռաթև իշխանության ճյուղերի միջև հավասարակշռությունն ապահովելու և որևէ ճյուղի ձեռքում պետական իշխանության կենտրոնացումը խափանելու համար:

*ԼՂՅ դատական իշխանություն /ԻՏՎ/ հանդես, 1 /23/, 2017թ.*

## ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Դատավորը պետք է անկաշառ լինի, որ  
համարձակ լինի դատական ատյանում  
և ուղիղ վճիռ կայացնի, որ այն լսողների  
հավանությանն արժանանա:*

### **Մխիթար Գոշ**

Պետության և իրավունքի ծագման ու զարգացման բոլոր ժամանակահատվածներում արդարադատություն իրականացնող անձանց առաջադրվող պահանջները և նրանց վարքագիծը մշտապես գտնվել են պետության և հասարակության ուշադրության ու վերահսկողության ներքո: Մեր դրկից հարևանները՝ պարսիկները, դեռևս անտիկ դարաշրջանում, դատավոր նշանակել են հմուտ և գիտակ մարդկանց: Նույն մոտեցումը եղել է նաև հին Հայաստանում:

Պատմական Հայաստանի աշխարհիկ դատավորների մասին ուշագրավ տվյալներ կարող ենք գտնել միջնադարյան հայ պատմիչների աշխատություններում, բայց նրանց «կարգավիճակի» վերաբերյալ այնպիսի հույժ կարևոր մտքեր է հայտնել XII դարի հռչակավոր գիտնական Մխիթար Գոշն իր հանրահայտ Դատաստանագրքում, որպիսիք, նույնիսկ ժամանակի հեռվից, իրենց նշանակությունը չեն կորցրել և համապատասխանում են ներկայիս պահանջներին: Մասնավորապես, Գոշը գտնում է, որ դատավորն աշխատանքի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ պետք է ունենա, լինի իր գործի մեջ անկաշառ, համբերատար, աննախանձ, անհիշաչար, ուշադիր լսի կողմերին և նոր միայն որոշում կայացնի: Կոռուպցիոն երևույթների դեմն առնելու պայքարում Գոշի Դատաստանագրքում մի այսպիսի միտք կա. «և հարկ է, որ դատավորը թագավորներից մշտապես ստանա պարգևներ, որ չլինի թե հանկարծ, ընտանիքը տուժելու համար նա գայթակղություններ ունենա»:

Ներկա առումով «կարգավիճակ» /լատիներեն՝ status-վիճակ, դրություն/ եզրույթը նշանակում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դրությունը, իսկ իրավական կարգավիճակը դա իրավունքի սուբյեկտի՝

օրենսդրական նորմերով սահմանված իրավունքների և պարտականությունների համակցությունն է: Այստեղից բխում է, որ դատավորի կարգավիճակը՝ դատավորի՝ որպես պաշտոնատար անձի, ներպետական օրենսդրությամբ և միջազգային իրավունքի նորմերով ամրագրված իրավական դրությունն է:

Դատավորի կարգավիճակին վերաբերող միջազգային չափորոշիչների հիմքում ընկած են այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը /10 դեկտեմբերի 1948թ./, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան /4 նոյեմբերի 1950թ./, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թ.թ. 40/32/ և 40/46/ բանաձևերով 1985թ. հաստատված՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը, «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիան /10 հուլիսի 1998թ./, Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին Եվրախորհրդի նախարարների կոմիտեի թիվ R /94/12 հանձնարարականը /13 հոկտեմբերի 1994թ./ և այլն:

Խորհրդային իշխանության տարիներին դատավորների և ժողովրդականատենակալների կարգավիճակի մասին առաջին և վերջին փաստաթուղթն ընդունվեց 1989 թվականին և մնաց թղթի վրա, քանի որ Խորհրդային Միությունն արդեն փլուզման եզրին էր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության /այսուհետ՝ ԼՂՀ/ անկախության հռչակումից և պետական իշխանության մարմինների կազմավորումից հետո պետական ապարատի կատարելագործման հարցերն առաջնահերթ պլան մղվեցին՝ ընդգրկելով նաև դատական համակարգը: Առաջին փաստաթուղթը, որն ամրագրեց դատավորի կարգավիճակը մեր երկրում, դա օրենսդիր մարմնի կողմից 1996թ. մայիսի 6-ին ընդունված «Դատական իշխանության մասին» ԼՂՀ օրենքն էր, որի III գլուխը նվիրված էր դատավորների և ժողովրդականատենակալների կարգավիճակի հարցերին: Մասնավորապես, օրենքն ազդարարեց, թե ովքեր կարող են լինել հանրապետության դատավորներ և ժողատենակալներ՝ կարգավորելով նրանց անվտանգության ապահովման, դատական գործերի լուծման ընթացքում միջամտության անթույլատրելիության, դատավորների և ժողովրդականատենակալների անձեռնմխելի-

ության, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջների, նրանց ընտրության կարգի ու ժամկետների և մի շարք այլ հարցեր:

1999-2000թթ. ԼՂՀ-ում ընդունվեց դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրական ակտերի մի ամբողջ փաթեթ՝ միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության, դատարանակազմության, դատավորի կարգավիճակի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, փաստաբանական գործունեության, դատախազության, դատական մագիստրատուրայի խորհրդի մասին և այլն:

Հարկ է նշել, որ դատավորի կարգավիճակին վերաբերող մեր օրենսդիրների կողմից ընդունված վերոնշյալ երկու օրենքների դրույթներն ընդամենը մի ծաղկաքաղ էր «Դատավորի կարգավիճակի մասին» ԽՍՀՄ օրենքից և հարմարեցված նորաստեղծ հանրապետության դատական իշխանությանը:

ԼՂՀ-ում դատավորի կարգավիճակի սահմանադրաիրավական հիմունքների /առաջատար, գլխավոր դրույթներ/ ձևավորումը սկսվեց 2006թ. ԼՂՀ Սահմանադրության և 2008թ. ԼՂՀ Դատական օրենսգրքի ընդունումից հետո: Այս երկու խոշոր փաստաթղթերում՝ դատավորների կարգավիճակին վերաբերող սկզբունքներն իրենց ամրագրումը ստացան 2017թ. փետրվարի 20-ի հանրաքվեով ընդունված Արցախի Հանրապետության /այսուհետ՝ նաև ԱՀ/ Սահմանադրությունում, իսկ մանրամասները շարադրվեցին 2017թ. հուլիսի 21-ին ընդունված և նույն թվականի սեպտեմբերի 7-ին ուժի մեջ մտած ԱՀ Դատական օրենսգրքում /այսուհետ՝ Դատական օրենսգիրք/:

Այժմ տեսնենք հայրենական օրենսդրությունն ինչ պահանջներ է ներկայացնում այն անձանց, ովքեր հավակնում են դատավորի կարգավիճակ ձեռք բերել: Սահմանադրությունը դատավորների թեկնածուների ցուցակի կազմումը և հաստատումը վերապահել է իր նախադեպը չունեցող մի այնպիսի անկախ պետական մարմնի, ինչպիսին Բարձրագույն դատական խորհուրդն է /այսուհետ՝ ԲԴԽ/, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման նպատակով որակավորման ստուգումներ անցկացնելու գործընթացը կազմված է 4 փուլից՝ հայտեր ներկայացնելուց, գրավոր

քննությունից, հոգեբանական թեստից և ԲԴԽ-ի կողմից անցկացվող հարցազրույցից: Որակավորման ստուգումների արդյունքների հիման վրա դատավորների թեկնածուների ցուցակի կազմումը և հաստատումը կատարվում է ԲԴԽ-ի կողմից:

Ինչպես ՉՅ-ում, այնպես էլ ԱՅ-ում դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները նույնանման են: Որակավորման ստուգումներին կարող են մասնակցել 28-60 տարեկան ԱՅ այն քաղաքացիները, որոնք ունեն ընտրական իրավունք, ԱՅ-ում ստացել են բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ձանաչումն ու համարժեքության հաստատումն ԱՅ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, տիրապետում են հայերենին, ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ և առկա չեն Դատական օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասի սահմանափակումները: Իսկ սահմանափակումները հանգեցնում են նրան, որ դատավոր չի կարող նշանակվել այն անձը`

1/ ով դատապարտվել է հանցագործության կատարման համար` անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից.

2/ ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով.

3/ ով ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն /դրանց ցանկը սահմանվել է կառավարության 2009թ. օգոստոսի 18-ի N 514-Ն որոշմամբ/.

4/ ով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն` բացառությամբ այն անձանց, ովքեր ազատվել են նման ծառայությունից կամ ունեն տարկետում` օրենքով նախատեսված կարգով ու հիմքով.

5/ ով չունի ԱՅ քաղաքացիություն.

6/ ով օրինական ուժի մեջ մտած վճռով ձանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող:

Դատավորների թեկնածուների ցուցակից թեկնածուին հանելու հիմքերը նույնպես նախատեսված են Դատական օրենսգրքով, որի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` թեկնածուն հանվում է ցուցակից, եթե`

1/ նա նշանակվել է դատավորի պաշտոնում.

2/ նա դիմում է այդ մասին.

3/ լրացել է նրա 65 տարին.

4/ նա ընդգրկվել է ցուցակում Դատական օրենսգրքի պահանջների խախտմամբ.

5/ նա առանց հարգելի պատճառի չի անցել տարեկան վերապատրաստման ծրագիրը.

6/ Դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված դեպքերում չի համաձայնում նշանակվել իրեն առաջարկված դատավորի պաշտոնում.

7/ նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

8/ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

9/ օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

10/ նա կորցրել է ԱՅ քաղաքացիությունը.

11/ ի հայտ է եկել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն.

12/ համապատասխան կազմակերպությունում ուսումն ավարտելուց հետո ավելի քան չորս ամիս անընդմեջ չի զբաղվում իրավաբանի մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքով և չի դիմել Դատական դեպարտամենտ՝ աշխատանքի անցնելու համար.

13/ համապատասխան կազմակերպությունում ուսումնառության ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 20 տոկոսից.

14/ համապատասխան կազմակերպությունում ուսումնառության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 50 տոկոսից՝ բացառությամբ տարկետում տրամադրելու դեպքերի.

15/ համապատասխան կազմակերպությունում ուսումնառության ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքում ստացած քննության միավորը պակաս է կուրսը հանձնված համարելու համար համապատասխան կազմակերպության իրավասու մարմնի սահմանած նվազագույն միավորից, կամ նա չի անցել օրենքով նախատեսված փորձաշրջանը.

16/ Ազգային ժողովի կողմից թեկնածությունը երկու անգամ մերժվել է:

Քննարկվող հոդվածի 1-ին մասի 12-15-րդ կետերում նշված «համապատասխան կազմակերպությունում» եզրույթից չի երևում, թե դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման և վերապատրաստման դասընթացները որ ուսումնական հաստատությունում են կատարվում: Այդ հարցի պատասխանը պետք է գտնել ԼՂՀ դատարանների նախագահների խորհրդի և ՀՀ «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև 2015թ. ապրիլի 10-ին կնքված փոխըմբռնման հուշագրում, որով կարգավորված են հուշագրի նպատակները, համագործակցության առարկան, ուսուցման կազմակերպումը, իրականացումը, ֆինանսավորումը և այլն:

Դատական օրենսգիրքը հստակորեն կարգավորում է դատավորների թեկնածուների ցուցակում նախկին դատավորների, իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող և գիտական գործունեությամբ զբաղվող անձանց ընդգրկման կարգը և պայմանները:

Դատական օրենսգիրքն ընդգծում է, որ դատավոր է Գերագույն, վերաքննիչ, առաջին ատյանի դատարանների նախագահների և դատավորների պաշտոնում Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով նշանակված անձը: Իսկ մայր օրենքով այդ կարգը սահմանված է, որ դատարանի նախագահները և դատավորները նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ:

Դատարանի նախագահների և դատավորների նշանակման այլ կարգ է սահմանված ՀՀ Սահմանադրությամբ, որտեղ ՀՀ նախագահն իշխանության դատական թևի կազմավորման գործընթացում ակտիվ դերակատարություն ունի: Այսպես՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են հանրապետության նախագահի, երեքը՝ կառավարության, երեքը՝ Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կա-



րող է ընտրվել միայն մեկ անգամ: Սահմանադրական դատարանն իր կազմից՝ վեց տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:

Վճռաբեկ դատարանի դատավորներին և պալատների նախագահներին նշանակում է հանրապետության նախագահը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ, իսկ վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ:

Վճռաբեկ դատարանի նախագահը և դատարանի պալատների նախագահները պաշտոնավարում են վեց տարի ժամկետով:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է հանրապետության նախագահը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ: Նույն կարգը գործում է նաև դատարանների նախագահների նկատմամբ, սակայն երեք տարի պաշտոնավարման ժամկետով, որի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, դատարանի նախագահը չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

Չնայած ԱԶ Սահմանադրությունն արձանագրում է, որ դատարանների նախագահների համար Դատական օրենսգրքով կարող է սահմանվել պաշտոնավարման ժամկետ, սակայն Դատական օրենսգրքով դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետ չի սահմանվել: Մեր կարծիքով նման մոտեցումը խաթարում է դատավորների անկախության և հավասարության սահմանադրական պահանջի իրագործումը, իմաստազրկում ռոտացիոն սկզբունքը և տևական ժամանակահատվածում դատավորներին կախվածության մեջ պահում դատարանների նախագահներից:

Համաձայն ԱԶ Սահմանադրության 138-րդ հոդվածի՝ Գերագույն դատարանի դատավոր կարող է նշանակվել 35 տարին լրացած, ԱԶ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը, իսկ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավոր կարող է նշանակվել ԱԶ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Դատավորների թեկնածուները պետք է տիրապետեն հայերենին:

Ինչպես նկատելի է, Սահմանադրությունն առաջին ատյանի և վե-

րաքննիչ դատարանների համար տարիքային ցենզ չի սահմանել՝ դրա և այլ լրացուցիչ պահանջների լուծումը թողնելով Դատական օրենսգրքին: Սահմանադրական այս նորմը վերցված է ՀՀ Սահմանադրությունից, միայն այն տարբերությամբ, որ ՀՀ Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի դատավորների տարիքային ցենզի ստորին շեմը սահմանել է 40 տարին:

ԱՀ-ում դատավորի պաշտոնում նշանակված անձը դատավորի պաշտոնն առաջին անգամ ստանձնելիս Ազգային ժողովի նիստում /ՀՀ դատավորները՝ ԲԴԽ-ի նիստում/ Արցախի Հանրապետության /Հայաստանի Հանրապետության/ ժողովրդի առջև երդվում են դատավորի պարտականությունները կատարել Արցախի Հանրապետության /Հայաստանի Հանրապետության/ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան, լինել անկախ, անաչառ ու սկզբունքային, արդարացի և մարդասեր, սրբորեն պահպանել դատավորի կարգավիճակին ներկայացվող բոլոր պահանջները՝ ապահովելով օրենքի գերակայությունը և բարձր պահելով դատական իշխանության հեղինակությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի նիստում տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև երդվում եմ՝ գործել հանուն Հայաստանի Հանրապետության շահի, անշեղորեն պահպանել Սահմանադրությունը, գործել բարեխղճորեն, լինել անաչառ, հավատարիմ մնալ Սահմանադրական դատարանի դատավորի բարձր կոչմանը»:

Սահմանադրությունը հռչակում է, որ ԱՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է: Իսկ ի՞նչ է արդարադատությունը: Այն պետական գործունեության անկախ բնագավառ է, դատական իշխանության մարմինների /դատարանների և դատավորների/ գործունեություն, որն իրականացվում է պետության անունից՝ քաղաքացիական, վարչական, քրեական և սահմանադրական դատավարությունների միջոցով դատական նիստերում կոնկրետ գործեր քննելու ձևով: Եթե դատական իշխանությունն իրականացվում է դատարանների կողմից, ապա այդ իշխանության կրողները դատավորներն են հանդիսանում:

Գործող Սահմանադրությունը, 2006թ. Սահմանադրության համեմատ, առանձնահատուկ կարևոր նշանակություն է տալիս դատավորի անկախության սկզբունքին և ընդգծում, որ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Դատական օրենսգրքի 9-րդ հոդվածը, զարգացնելով Սահմանադրության 137-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթները, սահմանում է, որ

«1. Արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատարաններն անկախ են պետական իշխանության այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և գործում են միայն Սահմանադրությանը և օրենքին համապատասխան:

2. Դատավորը գործը կամ հարցը /այսուհետ նաև՝ գործ/ քննում և լուծում է Սահմանադրությանը, Արցախի Յանթարապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան, գործի հանգամանքների անաչառ վերլուծության վրա հիմնված իր ներքին համոզմամբ՝ հաշվի առնելով Արցախի Յանթարապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

3. Արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս և դրանից հետո դատավորը հաշվետու չէ որևէ մեկին, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ:

4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են հարգել դատական իշխանության անկախությունը և ձեռնպահ մնալ այնպիսի հայտարարություններից կամ գործողություններից, որոնք կարող են վնասել կամ վտանգել դատական իշխանության անկախությունը կամ հեղինակությունը:»

Այստեղ տեղին է նշել Ազգային ժողովի կողմից 2005թ. փետրվարի 9-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված այն դրույթը, որը վերաբերվում է Մարդու իրա-

վունքների պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու և դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքին: Փաստորեն օրենքի այդ դրույթն Արցախի օմբուդսմենին դատարաններին վերահսկելու գործառույթ է վերապահում, ինչը խաթարում է արդարադատության իրականացման բուն էությունը: Խնդրո առարկա օրենքը լրիվությամբ քաղված է ՅՅ-ում 2003թ. ընդունված համանուն օրենքից: Եվ պատահական չէ, որ օրենքը պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու և դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքի մասով վիճարկվեց ՅՅ Սահմանադրական դատարանում և վերջինիս 2005թ. մայիսի 6-ի որոշմամբ այն համարվեց միջամտություն դատական իշխանության գործառույթներին և ճանաչվեց հակասահմանադրական:

Համոզված ենք, որ «Ազգային ժողովը Սահմանադրությունն ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում գործող օրենսդրությունը համապատասխանեցնում է Սահմանադրությանը», սահմանադրաիրավական նորմի պահանջի շրջանակներում հանրապետությունում ժամանակահունչ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» նոր սահմանադրական օրենք կընդունի:

Դատավորի անաչառությունը /անկողմնակալություն, արդարամտություն, օբյեկտիվություն/ աջակցում է դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահությանը և սահմանադրաիրավական երաշխիք հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Դրա հետ մեկտեղ, դատարանի /դատավորի/ անաչառության մակարդակը կարող է պատկերացում տալ պետության զարգացման աստիճանի մասին:

Անաչառության սկզբունքը նաև ենթադրում է, որ պետությունը պետք է համապատասխան պայմաններ ստեղծի դատավորների համար, որոնց դեպքում նրանք պարտավոր են հավատարիմ լինել հանդիսավոր պայմաններում տված իրենց երդմանը:

Դատավորի անաչառության ինստիտուտը գալիս է հազարամյակների խորքից՝ արժանանալով պետության և հասարակության դրվատանքին: Օրինակները բազմաթիվ են: Հայոց թագավոր Աշոտ Երկաթի այն հարցին, թե «դատավորն աչառող պիտի լինի, թե՛ անաչառ», թագուհին պատասխանել է՝ «անշուշտ՝ անաչառ»: Երբ Սանկտ-Պետերբուրգի քա-

ղաքագլուխ Տրեպովի դեմ մահափորձ կատարելու քրեական գործի դատաքննության արդյունքներով մայրաքաղաքի օկրուգային դատարանի նախագահ, հռչակավոր իրավաբան Անատոլի Կոնին արդարացրել է կալանքի տակ գտնվող Վերա Ջասուլիչին և հետագայում մի հանդիպման ժամանակ արժանացել Ալեքսանդր թագավորի ցասումնալից /խոժոռ/ հայացքին, Կոնինի պատասխանն անչափ շիտակ էր՝ ինքն արդարադատության ծառան է, այլ ոչ թե՝ իշխանության սպասավորը:

Դատավորի անաչառության մասին նշվում է նաև Դատական օրենսգրքի՝ «Դատավորի վարքագծի կանոնները» գլխի 48-րդ, 50-րդ և 52-րդ հոդվածներում: Այս վերջին հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով կամ հարցով նրա անաչառության մեջ:

Դատավորի անկախությունը սակայն չի նշանակում դատական հայեցողության ազատություն, քանի որ անկախությունը բացառապես հիմնված է Սահմանադրության, նյութական և դատավարական օրենքների վրա:

Օրինականությունը և դատավորի անկախությունը միևնույն մեղալի հակառակ կողմերն են: Դրանից բխում է, որ դատավորների անկախությունը հնարավոր է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան գործելու դեպքում: Հակառակ դեպքում, անկախությունը կարող է կամայականություն ծնել: Այդ համատեքստում «Մի դատիր, որ չդատվես» աստվածաշնչյան պատվիրանը մեզ հորդորում է անարդարացի չդատել, որպեսզի մենք էլ անարդարացիաբար չդատվենք:

Հավելենք, որ դատավորի անաչառությունը խորհրդանշում է արդարադատության աստվածուհի Ֆեմիդային՝ աչքերը փակած վիճակում:

Համաձայն Սահմանադրության 137-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար՝ բացառությամբ այն դեպքի, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սպառիչ թվարկված են Դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով: Դրանք են՝

1/ արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմերը դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը.

2/ դատավորի կողմից Դատական օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը.

3/ դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունները չկատարելը:

Քննարկվող հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն:

Դատավորի վարքագծի կանոնները սահմանված են Դատական օրենսգրքի 47-56-րդ հոդվածներով: Մասնավորապես, «կարծիք» եզրույթի իմաստով 49-րդ հոդվածում նշված է, որ դատավորը պարտավոր է զերծ մնալ որևէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ կարծիք հայտնելուց կամ զերծ մնալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը և իր գործընկերների գործողությունները, մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ դնելուց:

Դատական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով կարգապահական պատասխանատվության վարույթ կարող է հարուցվել, եթե նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտմամբ կայացված դատական ակտը բեկանվել /վերացվել/ է և բեկանող /վերացնող/ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ: Չարկ է նշել, որ դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը հիմք չէ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Վերջինս վրա է հասնում միայն այն դեպքում, երբ արդարադատություն իրականացնելիս օրենքի սխալ մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների սխալ գնահատումը դատավորը կատարում է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն դատավորների ընդհանուր ժողովի կողմից ձևավոր-

ված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը /հանձնաժողովի կազմում ընդգրկվում են առաջին ատյանի, վերաքննիչ և Գերագույն դատարանների դատավորներից ընտրված մեկական անդամներ/ և արդարադատության նախարարը:

Դատավորի պատասխանատվության ինստիտուտը հայտնի է դեռ վաղ ժամանակներից: Այդ հարցին անդրադարձել է նույնիսկ Մ.Գոշն իր Դատաստանագրքում: Բայց օրինաչափ է արդյոք արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցումը: Մեր համոզմամբ՝ ոչ: Արդարադատության նախարարությունը գործադիր իշխանության մարմին է, իսկ «արդարադատություն» եզրույթը բնավ չի նշանակում, որ նախարարությունն օժտված է արդարադատության գործառույթներով: Այդ իրավունքը Սահմանադրությունը վերապահել է միայն դատական իշխանությանը, տվյալ դեպքում՝ դատարաններին, ուստի «արդարադատություն» գոյականը ենթադրում է արդար դատելը, արդար դատավարություն, անաչառ, ուղղամիտ դատավարություն: Չետևաբար, մեր կարծիքով, սխալ է արդարադատության նախարարին օժտել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությամբ: Թերևս ձիշտ կլինի հրաժարվել Խորհրդային իշխանության տարիներից իներցիայի ուժով եկող այս ինստիտուտից:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները, առիթները, հարուցման ընթացքը և այլն, կարգավորված են Դատական օրենսգրքի 120-123-րդ հոդվածներով:

Չամաձայն Սահմանադրության՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող ԲԴԽ-ն, որը նման պայմաններում հանդես է գալիս որպես դատարան: Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում ԲԴԽ-ն կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

1/ նախազգուշացում,

2/ նկատողություն,

3/ խիստ նկատողություն:

Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավո-

րի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն ԲԴԽ-ի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց ԲԴԽ-ի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել 72 ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է ԲԴԽ-ի նախագահը:

Սահմանադրաիրավական այս նորմի մանրամասները սահմանված են Դատական օրենսգրքով, որից նկատելի է, որ լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցով ԲԴԽ է դիմում հանրապետության գլխավոր դատախազը:

Գլխավոր դատախազը ԲԴԽ-ին է ներկայացնում դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու համար հիմք հանդիսացող բոլոր նյութերը:

Դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին ԲԴԽ-ի որոշումը չի նշանակում դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու հիմքերի առկայության հաստատում և չի կաշկանդում իրավասու դատարանին համապատասխան հարցն օրենքով սահմանված կարգով լուծելիս:

ԲԴԽ-ի կողմից դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից դատավորի լիազորությունները համարվում են կասեցված՝ նախաքննության և դատաքննության ժամկետում:

Դատավորի լիազորությունների կասեցման ընթացքում դատավորը ստանում է հատուցում՝ որպես ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող:

Դատավորի կարգավիճակով պայմանավորված՝ նրա գործունեու-



թյան անհամատեղելիության պահանջներն իրենց արտացոլումն են գտել Սահմանադրության 137-րդ հոդվածի 4-րդ մասում, համաձայն որի, դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Քննարկվող հոդվածը, ըստ էության, ունի չորս արգելող նորմ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց կարգավիճակի վերաբերյալ հարցերը սահմանված են «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքով: Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների սահմանումները տրված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասով: Հարց է ծագում. կարո՞ղ է, արդյոք, դատավորը ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնել: Հարցին պատասխանում է Դատական օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը, որից նկատելի է, որ դատավորը կարող է զբաղեցնել ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն, եթե՝

1/ իր գործունեությունն այդ պաշտոնում իրականացվում է անհատույց.

2/ համապատասխան դատարանում կամ ստորադաս դատարանում չի քննվում կամ ողջամտորեն չի ակնկալվում գործ, որը կապված է այդ կազմակերպության շահերի հետ.

3/ այդ պաշտոնը չի ենթադրում ֆինանսական միջոցների տնօրինում, կազմակերպության անունից քաղաքացիաիրավական գործարքների կնքում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպության գույքային շահերի ներկայացուցչական իրականացում:

Դատական օրենսգրքի նույն հոդվածի 3-րդ մասը նշում է, որ դատավորը չի կարող գործել որպես գույքի հավատարմագրային կառավարիչ կամ կտակակատար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա անհատույց գործում է իր մերձավոր ազգականների կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի գույքի կապակցությամբ, եթե

հավատարմագրային կառավարիչ լինելը չի ենթադրում ձեռնարկատիրական գործունեության իրականացում:

Դատավորը չպետք է հանդես գա որպես ներկայացուցիչ կամ տրամադրի խորհրդատվություն, այդ թվում՝ անհատույց հիմունքներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա հանդես է գալիս որպես օրինական ներկայացուցիչ կամ իր մերձավոր ազգականներին կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց անհատույց իրավաբանական խորհրդատվություն է մատուցում:

Ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը և նրա բնորոշ գծերը տրված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ և 26-րդ հոդվածներով, իսկ դատավորի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի սահմանափակումները մանրամասնված են Դատական օրենսգրքի 54-րդ հոդվածով, որը սահմանում է՝

1. Դատավորն իրավունք չունի լինելու անհատ ձեռնարկատեր:
2. Դատավորն իրավունք չունի լինելու տնտեսական ընկերությունների մասնակից /բաժնետեր/ կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու, եթե՝

1/ բացի ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելուց, դատավորը ներգրավվում է նաև այդ կազմակերպության կարգադրիչ կամ կառավարման այլ գործառնությունների իրականացմանը, կամ

2/ ողջամտորեն ենթադրվում է, որ առևտրային կազմակերպությունը համապատասխան դատարանում հաճախ հանդես է գալու որպես գործին մասնակցող անձ,

3/ դատավորը կամ նրա ընտանիքի անդամները /ամուսին, ծնող, զավակ, պապ, թոռ, որդեգրող, որդեգրված/ կամ վերջիններս միասին տիրապետում են ընկերության կանոնադրական կապիտալի կամ ընկերակցության բաժնեհավաք կապիտալի 10 տոկոսից ավելին:

4/ դատավորը պետք է ձգտի կառավարել իր ներդրումներն այնպես, որ նվազագույնի հասցնի այն գործերի քանակը, որոնցով պետք է ինքնաբացարկ հայտնի:

Ինչ վերաբերվում է դատավորի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանք կատարելուն, ապա Դատական օրենսգիրքը շեշտում է, որ այդ աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գոր-

ծունեության համար համանման որակներ ունեցող, բայց դատավոր չհանդիսացող անձը կարող էր հավակնել:

«Կուսակցության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորները չեն կարող լինել կուսակցության անդամ: Այդ արգելքը բխում է Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասից, որից նկատելի է, որ դատավորները, դատախազները չեն կարող լինել կուսակցության անդամ: Այդ առումով դատավորի կարգավիճակի էական տարրերից մեկն էլ այն է, որ դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը կարող է անդամակցել դատավորների միությանը կամ դատավորների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների՝ ազատորեն կատարելով դրանց կանոնադրություններից բխող գործողություններ:

Դատավորի կարգավիճակի հիմունքների թվում Սահմանադրությունն առանձնահատուկ տեղ է հատկացնում նրա լիազորությունների դադարման և դադարեցման դեպքերին: Մեր կարծիքով, Սահմանադրությամբ նշված հիմքերով դատավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը՝ կոնկրետ պայմանների և իրավաբանական փաստերի վրա հասնելու կամ իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման ուժով դատավորի՝ զբաղեցրած պաշտոնից մշտապես հեռանալը կամ նրան պաշտոնեական պարտականությունների կատարումից արձակելն է: Երկու դեպքերում էլ դատավորը զրկվում է իր սահմանադրական պարտականությունները կատարելուց՝ դադարեցնելով դատարանի հետ իր աշխատանքային հարաբերությունները:

Սահմանադրության 137-րդ հոդվածի 6-րդ մասը լիազորությունների դադարման խմբի մեջ դասում է դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելու, ԱԶ քաղաքացիությունը կորցնելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի և մահվան դեպքերը, իսկ նույն հոդվածի 7-րդ մասը լիազորությունների դադարեցման խմբի մեջ մտցնում է անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարի-

նության և էական կարգապահական խախտում կատարելու դեպքերը:

Ինչպես նկատելի է, Սահմանադրության հեղինակները դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքում ելակետ են ընդունել այն, որ դադարման դեպքերը վրա են հասնում իրավաբանական փաստերի /դատավորի 65 տարին լրանալը, նրա մահը և այլն/, իսկ դադարեցման դեպքերում՝ իրավունքի ուժով /անհամատեղելիության պահանջները խախտելը, քաղաքական գործունեությամբ զբաղվելը և այլն/: Դժվար չէ նաև նկատել, որ դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հետևանքներից կախված, 13 դեպքերից 5-ի հիմքում դրված են դատավորին արատավորող, վարկաբեկող /նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով արդարացնելը, անհամատեղելիության պահանջները խախտելը, քաղաքական գործունեությամբ զբաղվելը, էական կարգապահական խախտում կատարելը/, իսկ մնացած 9-ի հիմքում, այսպես ասած, ոչ արատավորող /նաև հարգելի/ պատճառներ:

Դատական օրենսգրքի 136-րդ հոդվածը, մանրամասնելով դատավորի կարգավիճակին վերաբերող սահմանադրաիրավական նորմերը, շեշտում է, որ դատավորի պաշտոնավարումը դադարում է՝ նրա 65 տարին լրանալու հաջորդ օրվանից, Արցախի Չանրապետության քաղաքացիությունը կորցնելու հաջորդ օրվանից, դատարանի համապատասխան վճիռը, դատավճիռը կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, հրաժարական ներկայացնելու կամ մահվան հաջորդ օրը:

Առաջին հայացքից թվում է, թե դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը համընկնում են մեկը մյուսի հետ, սակայն, ինչպես նշեցինք, դրանք նույնական չեն, ուստի Սահմանադրությունը դատավորի լիազորությունների դադարեցման 4 հիմք է սահմանել, իսկ Դատական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը Սահմանադրությամբ նախատեսված՝ «առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության» հիմքի տակ նկատի է ունենում 2 դեպք, երբ «ժամանակավոր անաշխատունակության հետևանքով դատավորն ավելի քան 4 ամիս անընդմեջ կամ ավելի քան 6 ամիս օրացուցային տարվա ընթացքում ի վիճակի չի եղել կատարելու իր պաշտոնե-

ական պարտականությունները» և «նշանակումից հետո ձեռք է բերել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն»:

Այս երկու դեպքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում համապատասխան դատարանի նախագահին այդ մասին հայտնում է ԲԴԽ-ին: Երկրորդ հիմքի դեպքում համապատասխան դատարանի նախագահը դիմում է արդարադատության նախարարին՝ դատավորի բժշկական զննությունն իրավասու մարմնի միջոցով կազմակերպելու համար: Դատավորը պարտավոր է անցնել բժշկական զննությունը: Եթե զննության արդյունքում հիմնավորվում է, որ դատավորը նշանակումից հետո ձեռք է բերել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, ապա համապատասխան դատարանի նախագահին այդ մասին հայտնում է ԲԴԽ-ին:

Դատավորի կողմից Սահմանադրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու և քաղաքական գործունեությամբ զբաղվելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման վարույթի և որոշումների ընդունման կարգի, ինչպես նաև ԲԴԽ-ի որոշումների վերանայման նկատմամբ կիրառվում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի նորմերը, որի քննարկման արդյունքում ԲԴԽ-ն ընդունում է որոշում դատավորի լիազորությունները դադարեցնելու կամ գործի վարույթը կարճելու մասին: Այս երկու հիմքով թույլ տված խախտումները կարող են վկայել, որ թույլ է տրվել ոչ միայն դատավորի կարգավիճակին ներկայացվող, այլև դատավորի երդման պահանջների խախտում:

Էական կարգապահական խախտում կատարելու հիմքով դատավորի լիազորությունների դադարեցումը նրբանկատ հարց է, որն էլ ուշադիր, մանրակրկիտ մոտեցում է պահանջում: Դատավորին պատժելու ընթացակարգը հասարակ գործընթաց չէ, սակայն այն պետք է, քանի որ ամենաթողությունն անհամատեղելի է դատավորի գործունեության հետ: Դատական օրենսգիրքն էական կարգապահական խախտում է համարում՝

1/ Դատական օրենսգրքով սահմանված կարգապահական խախտումներն այն դատավորի կողմից կատարելը, որը կարգապահական խախտումները դիտավորությամբ կատարելու համար երկու նկատողու-

թյուն կամ խիստ նկատողություն ունի.

2/ Դատական օրենսգրքով սահմանված կարգապահական խախտումներն այն դատավորի կողմից կատարելը, որը կարգապահական խախտումները կոպիտ անփութությամբ կատարելու համար երեք նկատողություն կամ խիստ նկատողություն ունի.

3/ դատավորի կողմից այնպիսի արարքներ կատարելը, որով հեղինակագրվում է դատական իշխանությունը կամ որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Եթե ԲԴԽ-ն հիմնավորված չի համարում էական կարգապահական խախտում կատարելու մասին եզրակացությունը, սակայն դատավորին վերագրվող արարքում առկա են կարգապահական խախտման հատկանիշներ, ապա կիրառում է կարգապահական տույժ /նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն/:

Եթե ԲԴԽ-ն նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով ուժը կորցրած է ճանաչում դատավորի լիազորությունները դադարելու կամ դադարեցնելու մասին որոշումը, ապա որոշում է կայացնում այդ դատավորին իր նախկինում զբաղեցրած պաշտոնում վերականգնելու մասին: Մինչև վերականգնումը նշանակում կատարված լինելու և տվյալ դատարանում դատավորի թափուր այլ հաստիք չլինելու դեպքում անձին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարվում է հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով՝ մինչև ԲԴԽ-ի դատական խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելը, և դատավորի պաշտոնում չվերականգնելու դիմաց հատուցում՝ նրա միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Դատական օրենսգրքը նախատեսում է դատավորի լիազորությունների կասեցման միայն մեկ դեպք: Դա տեղի է ունենում, երբ ԲԴԽ-ի կողմից դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից դատավորի լիազորությունները համարվում են կասեցված՝ նախաքննության և դատաքննության ժամկետով:

Դատավորի լիազորությունների կասեցման ընթացքում դատավորը ստանում է հատուցում, որպես ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող:

Սահմանադրության 137-րդ հոդվածի 8-րդ մասը նշում է, որ դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով: Դատական օրենսգիրքը, վկայակոչելով սահմանադրաիրավական այս նորմը, միևնույն ժամանակ ավելացնում է, որ դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարման ընթացքում:

Դատավորի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ԼՂՀ օրենքով, որից նկատելի է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և նույն օրենքի N1 հավելվածով սահմանված համապատասխան գործակցի արտադրյալով: Համաձայն N1 հավելվածի՝ կառավարության նախարարի գործակիցը /պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի չափը որոշելու համար բազային աշխատավարձն այդ թվով բազմապատկելու համար սահմանված մեծություն/, որը 9,60 է, ավելի բարձր է Գերագույն դատարանի դատավորի գործակցից /9,20/, իսկ Ազգային ժողովի պատգամավորի գործակցից /8,00/ հավասարեցված է ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավորի գործակցին: Այնպես որ, դատավորի վարձատրության մասին դրույթը սահմանադրաիրավական նորմի աստիճանի բարձրացնելը կարող է հասարակության մեջ կարծիք ձևավորել, որ դատավորի աշխատավարձն անհամեմատ բարձր է բարձրաստիճան պաշտոնատար անձանց աշխատավարձից: Այդ այն դեպքում, երբ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար դատավորին վճարվում էր հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով, սակայն 2016թ. դեկտեմբերի 22-ի ԼՂՀ ՀՕ-37-Ն օրենքով այդ նորմն ուժը կորցրած ճանաչվեց:

Դատավորի զինվորական ամրագրման, նրա արձակուրդի, կրթական ծրագրերին մասնակցելու իրավունքի, անվտանգության ու անձնական

պաշտպանության միջոցների և գործունեության մյուս երաշխիքներն ամրագրված են Դատական օրենսգրքով, իսկ սոցիալական երաշխիքներին առնչվող հարաբերությունները՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ԼՂՀ օրենքով:

«Դատավորների կարգավիճակի մասին» Եվրոպական Խորհրդի կողմից 1998թ. հուլիսի 10-ին ընդունված Եվրոպական խարտիան և վերջինիս պարզաբանման հուշագիրը, անդրադառնալով դատավորների աշխատանքի վարձատրության և սոցիալական հարցերին, ընդգծել են, որ իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում դատավորի կարգավիճակը պետք է երաշխիքներ նախատեսի՝ կապված հիվանդության, երեխայի խնամքի, հաշմանդամության, ծերության, մահվան և այլ սոցիալական վտանգների հետ: Մասնավորապես, դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում նրա ծերության կենսաթոշակի չափը պետք է հնարավորինս մոտ լինի արդարադատության իրականացման նրա վերջին անգամ ստացած աշխատավարձի չափին:

Դատավորի կենսաթոշակի չափը և դրա հաշվարկման կարգը տարիների ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Ընդ որում, այդ փոփոխությունները՝ մի վիճակից մյուսին անցնելու առումով, էվոյուցիա համարել չի կարելի: ԼՂՀ օրենսդրության մեջ առաջին փաստաթուղթը, որն անդրադարձավ դատավորի կենսաթոշակի հարցերին, դա «Դատավորի կարգավիճակի մասին» 1999թ. դեկտեմբերի 29-ի ԼՂՀ ՅՕ-79 օրենքն էր, որի 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ դատավորն իրավունք ուներ ստանալ աշխատանքային կենսաթոշակ դատավորի՝ իր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի 75 տոկոսի չափով:

Ներկայում այն կարգավորված է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» 2014թ. դեկտեմբերի 29-ի ԼՂՀ ՅՕ-68-Ն օրենքով, որի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալու, նշանակումից հետո դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չա-



փը հաշվարկվում է մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի /պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի/ և 0,85 գործակցի /ՅՅ-ում գործակիցը 0,9 է/ արտադրյալի 55 տոկոսի չափով: Այս կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 85 տոկոսը:

Դատավորի կարգավիճակի հիմունքները դասվում են դատական իշխանության հրատապ հարցերի շարքին և դրանք որքան մոտ լինեն դատավորի կարգավիճակի միջազգային չափորոշիչներին, այնքան էլ իրավական և անկախ կլինի Արցախի Յանրապետության դատական իշխանությունը, առանց որի անիմաստ է խոսել ժողովրդավարական և իրավական պետության մասին: Պարզ ճշմարտություն է՝ դատական իշխանությունը կարող է անկախ լինել միայն դատավորների անկախության պայմաններում: Այդ դեպքում արդարադատության իրականացման ոլորտում «ուժեղի մոտ միշտ թույլն է մեղավոր» սկզբունքն անելիք չի ունենա:

## ԱՐՅԱԽԻ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

*Ցանկացած պետություն դադարում է  
պետություն լինելուց, եթե նրանում  
դատարանները կազմակերպված են  
ոչ պատշաճ ձևով:*

**Պլատոն**

Հայերենում «ինքնակառավարում» հասկացության տակ նկատի է ունեցվում ինքն իրեն կառավարելը՝ ղեկավարելը, իրեն պատշաճ վիճակում պահել կարողանալը, ինքնագույնելը: Այդ եզրույթն օգտագործվում է հասարակական կյանքի մի շարք ոլորտներում, որից ելնելով մասնագիտական բառարանները և գիտության տարբեր բնագավառներ՝ քաղաքագիտություն, սոցիալական, տնտեսագիտական, փիլիսոփայություն և այլն, տարբեր բնորոշումներ են տալիս:

Ռուսաստանի Դաշնության «Իրավաբանական մեծ բառարան»-ը «ինքնակառավարում» եզրույթը բնորոշում է որպես սեփական գործերի կառավարման հարցերում որևէ սոցիալական ընդհանրության կազմակերպված ինքնուրույնություն:

Ամեն դեպքում, ինքնակառավարումը կառավարման տարատեսակ է, որտեղ կառավարման օբյեկտը և սուբյեկտը համընկնում են և ինքնակառավարման առարկան կոլեկտիվի սեփական ներքին գործերն են հանդիսանում:

Պետական միասնական իշխանության համակարգում դատական իշխանության առանձնացումը ենթադրում է նաև ինքնակառավարման հատուկ մարմինների ստեղծում: Այդ առումով, դատական ինքնակառավարումը դատարանների և դատավորների ինքնուրույնության ապահովման երաշխիքներից մեկն է համարվում և կյանքի է կոչված՝ աջակցել դատական իշխանության իրականացմանը, պաշտպանել դատավորների իրավունքներն ու օրինական շահերը, որոշել նրանց նշանակ-

ման, տեղափոխման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը, մասնակցել դատական գործունեության կազմակերպչական, կադրային, ֆինանսական միջոցների ապահովմանը և այլն:

Եվրոպական երկրների մեծամասնությունում XX դարի երկրորդ կեսը բնութագրվում է արդարադատության կառավարման բնագավառում արդարադատության նախարարության առաջատար դերի կորստով: Այդ գործառույթների մի մասն աստիճանաբար անցնում է դատական ինքնակառավարման մարմիններին, որոնք տարբեր երկրներում տարբեր անուններով են կոչվում: Ֆրանսիայում, Պորտուգալիայում, Իտալիայում, Ռումինիայում և Մոլդովայում դրանք կոչվում են Մագիստրատուրայի Բարձրագույն Խորհուրդ, Սերբիայում, Բուլղարիայում, Ղազախստանում և Ուզբեկիստանում՝ Բարձրագույն Դատական Խորհուրդ, Լեհաստանում՝ համալեհական Բարձրագույն Դատական Խորհուրդ, իսկ Ռուսաստանի Դաշնությունում ներկայում դատական ինքնակառավարման մարմիններ հանդիսանում են դատավորների համագումարները, դատավորների ընդհանուր ժողովները, դատավորների խորհուրդները և քննական հանձնաժողովները:

Մասնագետները հակված են ցարական Ռուսաստանի դատական ինքնակառավարման պատմության սկիզբ համարել XIX դարի կեսերը, երբ երկրում 1864թ. կատարվեցին աննախադեպ դատաիրավական բարեփոխումներ, որոնց արդյունքում ընդունված նորմատիվ ակտերը վերաբերվել են նաև դատական ինքնակառավարման ինստիտուտին: Կառավարական սենատում ստեղծվեց «Դատական դեպարտամենտ» մարմինը՝ օժտված կարգապահական ատյանի լիազորություններով: Սկսեցին գործել հաշտարար դատավորների համագումարները, որոնց նախագահի պաշտոնն ընտրովի էր: Սահմանվեց հաշտարար դատավորների նշանակման նոր կարգ: Հաշտարար դատավորների և դատարաններին կից դատական քննիչների թափուր պաշտոն առաջանալու դեպքում թեկնածուի հարցը՝ դատախազի մասնակցությամբ, քննարկվել է դատական պալատի ժողովում և, պալատի նախագահի ներկայացմամբ, նշանակումը կատարվել է արդարադատության նախարարի կողմից: Վերջինս միայն կայսրության ծայրամասերում և գաղութային

շրջաններում միանձնյա դատավոր նշանակելու իրավասություն ուներ: Այսպես՝ Շուշիի գավառը ծայրամասի կարգավիճակ ուներ, որի հաշտարար դատավորն արդարադատության նախարարի կողմից նշանակվել է միանձնյա:

Յուրաքանչյուրի հեղափոխությանը հաջորդած սկզբնական տարիներին դատական համակարգի ինքնակառավարման ինստիտուտը հետին պլան մղվեց և դրա մենիշխանությունը հանձնվեց արդարադատության ժողկոմատներին՝ հանրապետություններում և արդարադատության վարչություններին՝ տեղերում: ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրությունը հռչակեց, որ դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Սահմանադրական այդ նորմը դեկլարատիվ բնույթ ուներ, քանի որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը վերապահված էին գործադիր իշխանության արդարադատության մարմիններին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1948թ. հուլիսի 15-ի հրամանագրով հաստատված «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» Կանոնադրության ուժով դատավորներին գործադիր իշխանության կախվածությունից դուրս բերելու իրավական հիմք դրվեց: Դատավորների կողմից թույլ տրված կարգապահական խախտումների քննարկման գործառնությունները հասցեագրվեցին մարզերի, երկրամասերի, ինքնավար մարզերի և օկրուգների, ինքնավար և միութենական հանրապետությունների բարձրագույն դատական ատյաններում և ԽՍՀՄ Գերագույն դատարանում ստեղծվող կարգապահական կոլեգիաներին: Յետագայում, ավելի քան 40 տարի, Խորհրդային Միության օրենսդիրները դատական ինքնակառավարման վերաբերյալ որևէ նորմատիվ ակտ չեն ընդունել:

Վերակառուցման տարիներին դատական իշխանության և դրա ինքնակառավարման վերաբերյալ ընդունվեցին մի շարք առաջավոր փաստաթղթեր, մասնավորապես՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ԽՍՀՄ օրենքը, «ԽՍՀՄ դատարանների դատավորների որակավորման կոլեգիայի մասին», «Դատավորների որակավորման հանձնաժողովի մասին», «Դատավորների և ժողովրդական ատենակալների կարգապահական պատասխանատվության, հետկանչման և վաղաժամկետ

ազատման մասին» կանոնադրությունները: Ճիշտ է, այդ փաստաթղթերը ժամանակահունչ էին, բայց շատ քիչ կյանք ունեցան, որովհետև Խորհրդային Միության սրընթաց փլուզումն արդեն տեսանելի էր:

ԼՂՀ անկախության հռչակումից հետո առաջին փաստաթուղթը, որն առնչվում էր դատական իշխանության ինքնավարության իրավունքին, դա ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1994թ. մայիսի 13-ի հրամանագրով հաստատված՝ «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դատախազության, արդարադատության պետական վարչության, դատարանների, պետական նոտարիատի աշխատողներին դասային կոչումներ շնորհելու, ինչպես նաև հանրապետության դատարանների դատավորներին որակավորման դասեր սահմանելու և դրանց համապատասխան դրամական հավելավճարներ տալու մասին» Կանոնադրությունն էր: /ՀՀ-ում համանման կանոնադրությունը ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել էր ավելի վաղ՝ 1993թ. հուլիսի 30-ին:/ Կանոնադրությամբ սահմանվեցին ԼՂՀ դատարանների դատավորների որակավորման դասերը, շնորհման կարգը, որակավորման դաս կրող դատավորներին աշխատանքային ստաժի համար վճարվող հավելավճարները և այլն: Կանոնադրության համաձայն՝ որակավորման դասերը շնորհվել են ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից՝ դատավորների որակավորման հանձնաժողովի ներկայացմամբ՝ հաշվի առնելով Գերագույն խորհրդի իրավական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը: Կանոնադրությունը նշում էր, որ «դատավորների որակավորման հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է ԼՂՀ օրենսդրությամբ»:

Ըստ ՀՀ 1995թ. Սահմանադրության՝ դատական մարմինների անկախության երաշխավորը հանրապետության նախագահն էր, ով գլխավորել է արդարադատության խորհուրդը, իսկ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն են եղել: Խորհրդի կազմի մեջ մտնել են հանրապետության նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: Խորհրդի երեքական անդամ նշանակվել են առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի դա-

տավորներից: Դատավորների ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տեղի համար գաղտնի քվեարկությամբ առաջադրել է երեքական թեկնածու: Խորհրդի դատախազ անդամների թեկնածություններն առաջադրել է գլխավոր դատախազը:

ՀՀ 1995թ. Սահմանադրությունից և «Արդարադատության խորհրդի մասին» 1995թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ օրենքից դժվար չէ նկատել, որ դատական համակարգից ելնող ցանկացած նախաձեռնություն կամ առաջարկություն պետք է համաձայնեցված լիներ արդարադատության նախարարի հետ:

ՀՀ 1995թ. Սահմանադրությունից բխող նոր դատական համակարգի կազմավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեցան 1998թ. ընդունված և 1999թ. հունվարի 12-ից ուժի մեջ մտած «Դատավորի կարգավիճակի մասին» և «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքները: Վերջին օրենքի 5-րդ գլուխը նվիրված էր Դատարանների նախագահների խորհրդին, որը կազմված էր վճռաբեկ դատարանի, նրա պալատների, տնտեսական դատարանի, վերաքննիչ դատարանների և առաջին ատյանի դատարանների նախագահներից:

Դատարանների նախագահների խորհրդի լիազորությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ, թեկուզ այդ մարմինն օժտված էր դատական ինքնակառավարման որոշ գործառնություններով, բայց այն միջազգային չափանիշների իմաստով դատական ինքնակառավարման մարմին լինել չէր կարող:

1999-2001թթ. ԼՂՀ-ում ընդունվեց դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրական ակտերի մի ամբողջ փաթեթ, այդ թվում՝ դատարանակազմության, դատավորի կարգավիճակի և դատական մագիստրատուրայի մասին: Առաջին երկու օրենքների հենքը եղել է ՀՀ համանուն օրենքները, միայն այն տարբերությամբ, որ ԼՂՀ-ում երկաստիճան դատական համակարգի դեպքում, բնականաբար, Դատարանների նախագահների խորհուրդ չէր կարող ստեղծվել: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված արդարադատության խորհրդի փոխարեն ԼՂՀ-ում ստեղծված մարմնին տրվեց «Դատական մագիստրատուրայի խորհուրդ» հորջորջումը: Դա մի ամորֆ մարմին էր, որը, ինչպես ժողովուրդը կասեր՝ անունը կա, բայց ամանու-

մը չկա: Չնայած խորհրդի կազմի 7 անդամներից 4-ը դատավորներ են եղել և խորհրդի նիստերը հրավիրել ու վարել է Գերագույն դատարանի նախագահը, բայց գործադիր իշխանությունը՝ ի դեմս արդարադատության պետական վարչության /2004 թվականից՝ արդարադատության նախարարություն/, լրիվությամբ վերահսկել է դատավորների կարգապահական պատասխանատվության դաշտը, իր իրավասության տակ պահելով նաև դատավորների թեկնածությունների նախնական հաշվառման և ընտրության հարցերը:

Դատական մագիստրատուրայի խորհուրդն օրենքով նախատեսված իր լիազորություններն իրականացրեց մինչև ԼՂՀ 2006թ. Սահմանադրությամբ նախատեսված դատական նոր համակարգի և արդարադատության խորհրդի ձևավորումը:

Նոր դատական համակարգը սկսեց գործել 2008թ. հուլիսի 1-ից, իսկ արդարադատության խորհուրդը՝ 2009թ. մայիսի 22-ից: Արդարադատության խորհրդի կազմը, նրա ձևավորման կարգը և լիազորությունների շրջանակը շատ ընդհանրություններ ունեն ԶՀ Սահմանադրությամբ /2005թ. փոփոխություններով/ նախատեսված արդարադատության խորհրդի հետ: Կազմի առումով տարբերությունը կայանում էր նրանում, որ ԶՀ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են 9 դատավոր, ԼՂՀ-ում՝ 5 դատավոր, իսկ լիազորությունների առումով, եթե ԶՀ-ում արդարադատության խորհուրդը մասնակցում է երկրի բարձրագույն դատական ատյանի դատավորների նշանակման գործընթացին, ապա ԼՂՀ-ում այդ մենաշնորհը պատկանում էր միայն հանրապետության նախագահին: Չնայած ԶՀ 2006թ. և ԼՂՀ 2009թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած դատական օրենսգրքերում նշված էր, որ դատական իշխանությունը գործում է ինքնակառավարման սկզբունքի հիման վրա, և որ դատական ինքնակառավարման մարմիններ են համարվում դատավորների ընդհանուր ժողովը և Դատարանների նախագահների խորհուրդը, բայց ակնհայտ էր, որ արդարադատության խորհուրդը նույնպես դատական ինքնակառավարման մարմին էր և որպես այդպիսին, իր լիազորություններն իրականացրել է Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով նախատեսված կարգով:

2015թ. դեկտեմբերի 6-ին իրականացված սահմանադրական փոփո-

խությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխով առանձին կարգավորում ստացած դատական համակարգի և Բարձրագույն դատական խորհրդի հետ կապված հարցերը: Նույն մոտեցումը ցուցաբերվեց նաև 2017թ. փետրվարի 20-ին հանրաքվեով ընդունված Արցախի Հանրապետության նոր Սահմանադրությամբ:

Թեև Արցախի սահմանադիրները Սահմանադրության մեջ դատական ինքնակառավարման վերաբերյալ ուղղակիորեն որևէ նորմ չեն ամրագրել, սակայն սահմանադրաիրավական մի շարք նորմեր մեզ հուշում են, որ դրանց վերաբերող կարգավորման մանրամասները սահմանվում են հանրապետության Դատական օրենսգրքով: Վերջինս ուժի մեջ մտավ 2017թ. սեպտեմբերի 7-ից, որում ամրագրվեց, որ դատավորների մասնագիտական շահերի պաշտպանության և դատարանների ներքին գործունեության հետ կապված հարցերի լուծումը վերապահված է դատական իշխանության ինքնակառավարման մարմիններին: Ինքնակառավարման մարմիններն են Դատավորների ընդհանուր ժողովը, Բարձրագույն դատական խորհուրդը և Դատարանների նախագահների խորհուրդը:

Դատավորների ընդհանուր ժողովը կազմված է հանրապետության բոլոր դատավորներից: Այն հրավիրվում է տարին առնվազն մեկ անգամ՝ Գերագույն դատարանի նախագահի կողմից: Արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել դատավորների առնվազն մեկ երրորդի կամ Գերագույն դատարանի նախագահի կողմից: Ընդհանուր ժողովն ընտրում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին և իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ: Ընդհանուր ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան: Ընդհանուր ժողովը նախագահում է Գերագույն դատարանի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Գերագույն դատարանի նախագահին փոխարինող անձը:

Ընդհանուր ժողովի կողմից ձևավորվում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են առաջին ատյանի, վերաքննիչ և Գերագույն դատարանների դատավորներից ընտրված մեկական անդամներ: Դատարանների նախագահները և Բարձրագույն դատական խորհրդի անդամները չեն կարող լինել էթի-



կայի և կարգապահական հանձնաժողովի անդամներ: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն օժտված է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքով: Ընդհանուր ժողովին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովում է Դատական դեպարտամենտը:

Արցախի դատական իշխանության ինքնակառավարման հաջորդ մարմինը Դատարանների նախագահների խորհուրդն է /ԴՆԽ/, որի անդամներն են առաջին ատյանի, վերաքննիչ և Գերագույն դատարանների նախագահները: Խորհրդի անդամի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է նրան դատարանի նախագահի պաշտոնում փոխարինող անձը: ԴՆԽ-ի հերթական նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ: ԴՆԽ-ի արտահերթ նիստ գումարվում է խորհրդի մեկ անդամի պահանջով՝ նրա սահմանած օրակարգով:

Դատական օրենսգրքով սահմանված ԴՆԽ-ի լիազորությունները վերաբերվում են դատարանների գործունեության բարելավման, նորմատիվ ակտերի կատարելագործման, դատավորների գործունեության գնահատման, դատարանների գործավարության, դատարաններում դատական կազմերի և դրանցում նախագահող դատավորների նշանակման կարգի, դատավորների նստավայրերը սահմանելու հարցերին, ինչպես նաև դատական ծառայության, դատական կարգադրիչների ծառայության և Դատական դեպարտամենտի գործունեությանն առնչվող բնագավառներին:

Արցախի Սահմանադրությունը դատական իշխանության անկախության և ինքնակառավարման ապահովման ոլորտում առաջնահերթ պլան է մղում իր նախադեպը չունեցող մի նոր անկախ պետական մարմնի, ինչպիսին Բարձրագույն դատական խորհուրդն է: Այն փոխարինելու եկավ 2006թ. Սահմանադրությամբ նախատեսված արդարադատության խորհրդին: Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը, կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունների շրջանակը նախատեսված են Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով:

Սահմանադրությունը Բարձրագույն դատական խորհրդին դատա-

րանների և դատավորների անկախության երաշխավորի գործառույթ է վերապահել: Սահմանադրական այս մարմինն է լիազորված կազմելու ու հաստատելու դատավորների թեկնածուների՝ ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները, Ազգային ժողովին առաջարկելու նախագահների և դատավորների թեկնածուներին, լուծելու դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու, դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը: Վերջին դեպքում խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: Պետական այս անկախ մարմինն է հաստատելու դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնելու կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգծելու համար:

Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է հինգ անդամից, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց անընդմեջ վերընտրվելու իրավունքի: Բարձրագույն դատական խորհրդի երեք անդամներին ընտրում է Դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն հինգ տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Խորհրդի մեկական անդամ նշանակում են հանրապետության նախագահը և Ազգային ժողովը: Խորհուրդն իր դատավոր անդամների կազմից ընտրում է խորհրդի նախագահ:

Եթե իրավահամեմատական վերլուծության ենթարկենք ՀՀ և ԱՀ դատական իշխանությունների ինքնակառավարման մարմինների ստեղծման կարգը, կարգավիճակը և լիազորությունների շրջանակը, ապա կտեսնենք, որ ՀՀ Դատական օրենսգրքի նախագծով /Օրենսգիրքը նախատեսված է ընդունել 2018թ. փետրվար ամսին/ Դատարանների նախագահների խորհուրդը վերանում է և այդ մարմնի լիազորություններն անցնում են ԲԴԽ-ին: Դա միանգամայն ճիշտ մոտեցում է, որովհետև ՀՀ Սահմանադրությունը «Դատարանների նախագահների խորհուրդ» անունը կրող մարմին չի նախատեսել: Նույնը կարելի է ասել նաև ԱՀ Սահմանադրության մասին: Դեռ ավելին, ԱՀ Դատական օրենսգրքով ԴԽ-ն քաղաքականություն կերտող մարմին է հանդիսա-

նում: Այսպես՝ Դատական օրենսգրքի 82-րդ հոդվածից նկատելի է, որ դատական իշխանությունն այլ մարմինների հետ հարաբերություններում ներկայացնելու իրավունքը վերապահված է ԴՆԽ-ի նախագահին, տվյալ դեպքում՝ Գերագույն դատարանի նախագահին: Եթե հաշվի առնենք, որ ԴՆԽ-ն տնօրինում է ԱԶ դատարանների պահուստային ֆոնդը և համաձայն ԴՆԽ-ի 2017թ. դեկտեմբերի 1-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Արցախի Յանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության՝ վերջինիս հիմնադիրն ԱԶ-ն է՝ ի դեմս ԴՆԽ-ի, որն էլ կառավարում է նրան, ապա, սեփական աշխատակազմ չունենալու պայմաններում, դժվար է պատկերացնել, թե ԲԴԽ-ն որքանով կարող է արդյունավետ իրականացնել իր սահմանադրական գործառնությունները՝ հանդես գալով որպես ԱԶ դատարանների և դատավորների անկախության երաշխավոր: Ճիշտ է, Դատական օրենսգրքը նշում է, որ Սահմանադրությամբ և նույն օրենսգրքով ԲԴԽ-ին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովում է դատական դեպարտամենտը, բայց պետք է հաշվի առնել, որ այդ մարմնի ղեկավարի նշանակման և ազատման հարցում ԲԴԽ-ն որևէ առնչություն չունի: Դեպարտամենտի ղեկավարը ենթակա և հաշվետու է միայն ԴՆԽ-ին:

Սահմանադրությունն արձանագրում է, որ ԲԴԽ-ն կազմավորվում է Դատական օրենսգրքի համապատասխան դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնումից /07.09.2017թ./ հետո՝ երեք ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 7-ը:

Այս համատեքստում 2017 թվականի նոյեմբերի 28-ին հրավիրված Դատավորների արտահերթ ընդհանուր ժողովում ԲԴԽ-ի առաջին կազմի դատավորներ են ընտրվել Դավիթ Ավանեսյանը՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից, Նորայր Գրիգորյանը՝ վերաքննիչ դատարանից և Գայանե Գրիգորյանը՝ Գերագույն դատարանից: Երկու օր անց հանրապետության նախագահի 2017թ. նոյեմբերի 30-ի հրամանագրով նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ-պետաիրավական վարչության պետ Կարեն Դանիելյանը և Ազգային ժողովի նույն օրվա որոշմամբ Վերաքննիչ պալատի աշխատակազ-

մի ղեկավար Շուշանիկ Չայրապետյանը նշանակվել են ԲԴԽ-ի անդամներ:

Բարձրագույն դատական խորհրդի անդրանիկ նիստը կայացավ ղեկտեմբերի 5-ին, որտեղ Գերագույն դատարանի դատավոր Գ.Գրիգորյանն ընտրվեց խորհրդի նախագահ:

Անխոչընդոտ և բարի երթ մաղթենք նորաստեղծ այս անկախ պետական մարմնին՝ իրեն յուրահատուկ սահմանադրական լիազորությունների իրագործման բարդ ու պատասխանատու աշխատանքում:

## Հ Ա Ր Ց Ա Ձ Ր ՈՒ Յ Ց Ն Ե Ր

### ԱՐԴԱՐ ԴԱՏԻՐ, ԽՂՃՈՎ ԴԱՏԻՐ, ՈՐ ՉԴԱՏՎԵՍ

- Պարոն Յովսեփյան, նախ, թույլ տվեք «Օրենք և իրականություն» հանդեսի խմբագրական կոլեկտիվի և ընթերցողների անունից Ձեզ շնորհավորել նոր նշանակման առթիվ և հաղորդել մեր լավագույն բարեմաղթանքները:

- Շնորհակալություն: Ի դեպ, նույնպես բարեմաղթանքներ հղելով «Օրենք և իրականությանը», կցանկանայի գոհունակությունս հայտնել ԼՂՅ օրենսդրական, քաղաքական և իրավական դաշտերի, մեր պարագայում՝ դատաիրավական համակարգի զարգացումներին հանդեսի կողմից վերջին շրջանում ցուցաբերվող հետևողական ուշադրության համար: Հավաստիացնում եմ՝ հանդեսը հարածուն հետաքրքրություն է հարուցում արցախցիներիս շրջանում:

- Ինչպես հայտնի է, վերջերս ԼՂՅ Ազգային ժողովի ընդունած դատաիրավական բնույթի օրենքները կոչված են ավարտելու համակարգի բարեփոխումների անցումային փուլը: Ի՞նչ տեղաշարժեր է այն ապրել վերջին տարիներին և ինչպիսին է իր ամփոփ տեսքով:

- Նախ, հիշեցնեմ, որ ԼՂՅ դատական համակարգը, ընդհուպ մինչև այս տարվա փետրվարի 15-ը, կազմված էր քաղաքային ու շրջանային դատարաններից և Գերագույն դատարանից: Ինչպես գիտեք, վերջինս, բացի առաջին ատյանի կարգով քրեական և քաղաքացիական գործեր քննելուց, օժտված էր նաև վճռաբեկ ու հսկողական ատյանների, բացի այդ, նաև արբիտրաժային ու սահմանադրական դատարանի լիազորություններով: Դատարանները հիմնականում ղեկավարվում էին նախկին քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

Ճիշտ է, 2001թ. հունիսի 1-ից հանրապետության ողջ տարածքում կիրարկման մեջ դրվեց 1998թ. ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, սակայն նրա բազմաթիվ դրույթներ, բնականաբար, չէին կարող կարգավորվել դատավարության հին օրենսգրքով:

Եթե «Դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում վճռաբեկ դատարանի գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված էր վեցամսյա ժամկետ, ապա ԼՂՀ դատարաններն այդ ժամանակահատվածը պետք է հատեն 45 օրում, այսինքն՝ մինչև ապրիլի 1-ը:

**- Պարոն Յուզիպյան, այժմ, երբ ԼՂՀ դատաիրավական համակարգը, ինչպես ասում են, այլևս անցել է Ռուբիկոնը, ինչպես է զգում «Երրորդ իշխանությունն» օրենսդիրի և գործադիրի մերձավոր հարևանությամբ, մանավանդ այն նրբանկատ հանգամանքի առկայությամբ, որ անմիջականորեն նրանց՝ առաջին երկուսի կողմից է կազմավորվել իշխանության ձեր ճյուղը:**

- Բնականոն՝ լավ: Չմոռանանք, որ խոսքը վերաբերում է մեկ միասնական պետական իշխանությանը, որի պարտադիր, փոխարացնող և անխզելի բաղկացուցիչներն են երեք ճյուղերն էլ: Հակառակ դեպքում կխախտվի պետական ինքնիշխանության կայացման ու զարգացման գլխավոր նախապայմանը: Իշխանությունների տարանջատման սկզբունքի էությունը նրանց լիազորությունների բանական և օրենսդրական սահմանազատումն է՝ հակակշիռների համակարգի ստեղծման միջոցով: Թե ինչ աստիճան հաջողված է այն, այնքան էլ հեշտ են ապահովվում ժողովրդի լիիշխանության իրականացումը և պետության ներդաշնակ կառավարումը:

Չնայած «Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ դատավորներին նշանակում է հանրապետության նախագահը, սակայն նույն օրենքի անցումային դրույթների ուժով նոր դատական համակարգի կազմավորման փուլում դատավորներին՝ նախագահի առաջադրմամբ, պաշտոններում նշանակում է Ազգային ժողովը: Տվյալ պարագայում թե՛ պետության ղեկավարը, և թե՛ խորհրդարանը հավասարապես մասնակցում են իշխանության երրորդ ճյուղի՝ դատականի կազմավորմանը, և նման պայմաններում իշխանության տարբեր ճյուղերի փոխհամաձայնության, հակակշռելիության ավելի օպտիմալ տարբերակ, կարծում եմ, չես գտնի:

Եվ ապա՝ արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Այս առումով, բնականա-

բար, դատավորը հաշվետու չէ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի: Դատարանը գործը քննում և լուծում է՝ ղեկավարվելով օրենքով, իրավագիտակցությամբ և ներքին համոզմունքով: Պետական մարմինների համակարգում օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ դատարանների կապվածությունն արտահայտվում է սոսկ օրենսդիր և նորմատիվ ակտերը կիրառելու պարտականությամբ և դատավորների նշանակման ընթացակարգով: Միևնույն ժամանակ դատարանն օժտված է այնպիսի լիազորություններով, որպիսիք չունեն ռչ օրենսդիր, ռչ էլ գործադիր իշխանությունները: Մասնավորապես, դատարանը պետական մարմնին կարող է պարտադրել վերացնելու իր անօրինական որոշումը: Ի վերջո, դատական իշխանության ուժը կայանում է բոլորի կողմից դատարանի որոշումները հարգելու և կատարելու մեջ: Էլ չեմ ասում, որ դատարանի նկատմամբ անհարգալի վերաբերմունքը պատժվում է օրենքով:

Ինչ խոսք, դատական իշխանության անկախության երաշխիքներից մեկն էլ այն է, որ դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ, իսկ դատական իշխանության իրականացման ընթացքում քաղաքական կամ որևէ այլ ճնշում պետք է բացառվի:

**- Չայտնի է, որ կենսագործունեության տարբեր բնագավառներում ՅՅ և ԼՂՅ ինտեգրման դրսևորումներից մեկն էլ միասնական կամ, այսպես ասած, հնարավորինս համահունչ օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացն է, այդ թվում՝ նաև դատաիրավական ասպարեզում: Այնուամենայնիվ, կան, արդյոք, էական տարբերություններ ՅՅ և ԼՂՅ դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրությունների միջև և եթե՝ այո, ապա որոնք են դրանք և ինչո՞վ է պայմանավորված երևույթը:**

- Իրոք, հայտնագործություն արած չեմ լինի, եթե ասեմ, որ ԼՂՅ դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրության հենքը եղել ու մնում է Մայր հայրենիքի՝ Չայաստանի Չանրապետության օրենսդրությունը: Արցախի օրենսդիրները դա միշտ էլ աչքի առաջ են ունեցել և ունեն: Միաժամանակ, իհարկե, կան նաև էական տարբերություններ, որոնց մի մասը կապված է Արցախի հասարակական-քաղա-

քական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ առանձնահատկությունների հետ: Չորորինակ, հայտնի ռազմաքաղաքական իրավիճակի պարտադրանքով առայսօր մեր հանրապետությունում պահպանվում է ռազմական դրության ռեժիմը, ինչը, բնականաբար, ինքնին որոշակի օրենսդրական տարբերությունների տեղիք է տալիս:

Ինչ վերաբերում է անմիջականորեն մեր ասպարեզին, ապա ԼՂՀ դատական համակարգը, ի տարբերություն Չայաստանի, կազմված է առաջին ատյանի և Գերագույն դատարաններից:

Փաստորեն, երկրում գործում է առաջին ատյանի մեկ դատարան՝ նախագահի և վեց դատավորի կազմով, որի դատական տիրույթը հանրապետության ողջ տարածքն է և որը, ըստ էության, քննում է բոլոր քաղաքացիական, տնտեսական, քրեական, զինվորական, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Այլ է խնդիրը Գերագույն դատարանի պարագայում: Կազմված լինելով նախագահից և վեց դատավորից, այն արդարադատություն է իրականացնում վերաքննության կարգով՝ մեկ դատավորի, և վճռաբեկության կարգով՝ կոլեգիալ, ոչ պակաս, քան երեք դատավորի կազմով: Գերագույն դատարանը նաև սահմանադրական դատարանի լիազորություններ իրականացնող ատյան է, որը գործերը քննում է կոլեգիալ, բայց ոչ պակաս, քան հինգ դատավորի կազմով:

Յետևապես, Ղարաբաղում գործում է երկաստիճան դատական համակարգ, որտեղ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունները զուգակցված են Գերագույն դատարանի ներքո:

Եվ ապա՝ ի տարբերություն Չայաստանի, որտեղ գործը վերաքննության կարգով քննվում է երեք դատավորի կազմով, մեզ մոտ այն պետք է քննվի մեկ դատավորի կազմով: Չեմ պնդում, որ այս պարագայում արդարադատությունն անպայման անթերի է լինելու, քանզի հնարավոր է, որ միանձնյա քննությամբ ընդունված որոշումները նաև սխալներ պարունակեն: Տվյալ պարագայում մեր խնդիրը դրանց հնարավորինս բացառումն է դատական պրակտիկայում:

Եթե ՀՀ վճռաբեկ դատարանը կազմված է դատարանի նախագահից ու երկու պալատներից՝ իրենց նախագահներով, ապա մեր հանրապետության օրենսդիրները Գերագույն դատարանի համար նման կառույցներ չեն նախատեսել, նկատի ունենալով դատավորների սակավ քանա-



կը: Փաստորեն ստացվում է, որ Գերագույն դատարանի նախագահը կոնկրետ գործերով, իր մակագրությամբ ստեղծում է վերաքննիչ և վճռաբեկ ատյաններ ու նշանակում դրանց կազմը:

Կան նաև այլ տարբերություններ, ես թվարկեցի դրանցից միայն մի քանիսը:

**- Որքան հայտնի է, հանրապետությունում ներկայումս աշխատանքներ են տարվում Դատական մագիստրատուրայի խորհրդի կազմավորման ուղղությամբ: Կարելի է ասել, թե այն ԼՂՀ իրավական դաշտի նշված տարբերություններից է: Առհասարակ, ինչ կարգի իրավական հարցեր է կոչված կարգավորելու այդ մարմինը:**

- «Դատական մագիստրատուրայի խորհրդի մասին» ԼՂՀ օրենքը, ինչ խոսք, շփման որոշ եզրեր ունի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված «Արդարադատության խորհրդի մասին» օրենքի հետ: Սակայն վերջինից այն առանձնանում է իր կազմով, ձևավորման կարգով ու լիազորությունների շրջանակով:

Այսպես՝ Դատական մագիստրատուրայի խորհրդի կազմի մեջ մտնում են հանրապետության նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակված յոթ անդամ, որից մեկական ներկայացուցիչ՝ նախագահի, Ազգային ժողովի և կառավարության առաջադրմամբ, ապա՝ Գերագույն դատարանի նախագահը և երեք դատավորներ, որոնցից երկուսը՝ առաջին ատյանի դատարանից, մեկը՝ Գերագույն դատարանից: Խորհրդի ոչ դատավոր ներկայացուցիչները, որպես կանոն, պետք է իրավաբանական կրթություն ունենան: Խորհրդի նիստերը, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, հրավիրում է Գերագույն դատարանի նախագահը: Խորհուրդը հանրապետության նախագահին առաջարկություններ է ներկայացնում դատավորներին որակավորման դասեր շնորհելու մասին: Նշված իրավունքներից օգտվում է նաև արդարադատության պետվարչության պետը: Դատարանների նախագահների և դատավորների թեկնածությունները խորհրդում կարող է առաջադրել խորհրդի յուրաքանչյուր անդամ և արդարադատության պետվարչության պետը: Խորհրդի հավանությանն արժանացած թեկնածությունը ներկայացվում է հանրապետության նախագահին:

Նշված օրենքը նախատեսել է նաև ինչպես խորհրդի անդամների, նույնպես և դատավորների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմքերը:

Իրավաբանական տեսակետից՝ խորհուրդն ընդունում է որոշումներ և եզրակացություններ, որոնք հանրապետության նախագահին իր առարկություններով և առաջարկություններով կարող է ետ վերադարձնել:

**- Պարոն Յուզեպյան, Ձեր խոսքի տրամաբանությունը հուշում է, թե Արցախի պայմաններում նախընտրվել է բնագավառի կայացման ու զարգացման առավել օպտիմալ մեթոդաբանություն: Ուստի, արդեն իսկ կարելի է ասել, թե ԼՂՀ բարեփոխված դատաիրավական համակարգը վաղը կարդարացնի իրեն:**

- Երևի ձիշտ չի լինի որևէ կանխակալ մտահանգում կատարել: Կարծում եմ, այդ հարցին հարկ է անդրադառնալ մեկ տարվա կտրվածքով դատական արդյունքներն ամփոփելուց հետո միայն: Արտաքուստ որքան էլ կատարյալ թվան օրենքները, սովորաբար, դրանց թեր և դեմ կողմերը երևան են հանվում գործածության ժամանակ, և կատարելագործման կարիքը հենց ժամանակի պրակտիկան է պարտադրում: Այդ է հուշում պատմությունը: Եթե հիշում եք, մինչև դատաիրավական բարեփոխումները կյանքի կոչելը Յայաստանի իրավագետներն այլ կարծիքի էին եռաստիճան դատական համակարգի վերաբերյալ, իսկ նախկին երկաստիճան համակարգը, որին, բացի ՅՅ-ից, հարազատ մնացին հետխորհրդային տարածքի մյուս բոլոր պետությունները, ենթարկվում են խիստ, կարծես թե լիովին փաստարկված քննադատության: Յագիվ երկու-երեք տարի է անցել և, ահավասիկ, քննադատության թիրախը հետզհետե ուղղվում է դեպի նոր դատական համակարգը, որը երբեմն բնորոշվում է իբրև «մի անվերջ շղթա» կամ «տարօրինակ կարուսել»:

Ըստ իս, մեր օրենսդիրները ձիշտ մոտեցում են ցուցաբերել՝ «Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքում Գերագույն դատարանի նախագահին օժտելով օրենսդրական նախաձեռնության իրավունքով: Դա մի կարծ ճանապարհ է՝ համակարգի թերություններն ի հայտ բերելու պարագայում Ազգային ժողով մտնելու համար:

**- Այնուամենայնիվ, անգամ այս էական պարագայով հանդերձ, ունե՞ք որևէ վերապահում նոր համակարգի վերաբերյալ, թե...: Այ, օրինակ, ԼՂՀ առաջին ատյանի դատարանին ընդդատյա՞ են, արդ-յոք, զինծառայողների կողմից կատարված զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերը:**

- Կոնկրետ այս առումով որոշակի նրբանկատ հանգամանք, չասեմ՝ պարադոքս, կա: Մի կողմից՝ «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն, հանրապետության տարածքում տեղակայված կոնկրետ կայազորների զինվորական դատախազությունները, որպես կառուցվածքային ստորաբաժանումներ, մտնում են ԼՂՀ դատախազության մեջ: Մինչդեռ, իրականում, զինծառայողների կողմից կատարված զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվում են՝ չպահպանելով «քրեական դատավարական օրենքի ներգործությունը տարածության վրա» սկզբունքը:

Եվ ապա՝ առայժմ միանշանակ մոտեցում չկա կալանավորման, խուզարկության կամ, այսպես ասած, «սանկցիայի» հարցերում:

Այսպես՝ «Դատարանակազմության մասին» օրենքի համաձայն՝ ԼՂՀ առաջին ատյանի դատարանին այդ լիազորությունները չեն վերապահված, իսկ «Դատախազության մասին» օրենքով կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվության, նամակագրության, հեռախոսագրույցների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցերը լուծում է դատախազությունը: Միևնույն ժամանակ, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի ուժով նշված լիազորությունները պատկանում են դատարանին: Դրանք ամրագրված են նաև քրեական դատավարության մի շարք սկզբունքներում:

Ըստ երևույթին, այս հարցականների լուծումը դարձյալ ժամանակի խնդիր է:

**- Եվ վերջին հարցը. ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահն ինչպե՞ս է վերաբերում Աստվածաշնչի «Մի դատիր, որ չդատվես» պատգամին:**

- Այս դեպքում ովքե՞ր պետք է արդարադատություն իրականացնեն երկրում: Իսրայելի առաջնորդներն իրենց ժողովրդի մեծագույն դատա-

վորներն էին: Մովսես մարգարեն էր, որ իր 10 պատվիրաններում սահմանեց գործերի ընդդատությունը, ձևակերպեց դատավորի ինստիտուտը, իսկ կոնկրետ միջադեպի կապակցությամբ դատավորներ և ոստիկաններ կարգեց: Հիշենք Սողոմոն Իմաստունի վճիռը երեխայի պատկանելության վեճի վերաբերյալ:

Խորը հարգանք տածելով արդարադատության աստվածաշնչյան պատգամ-սկզբունքների հանդեպ, ես, այնուամենայնիվ, կողմնակից եմ «Արդար դատիր, խղճով դատիր, որ չդատվես» սկզբունքին: Չէ որ հայկական առածն է ասում՝ լինում է ն խղճով դահիճ, լինում է ն անխիղճ դատավոր:

*Հարցազրույցը վարեց Մուշեղ Շամախյանը  
«Օրենք և իրականություն» իրավաբանական-  
գիտահանրամատչելի հանդես, թիվ 5/43/ մարտ 2002թ.*

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՀՈԳ ՏԱՆԵԼ ԻՐԵՆՑ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

*Փետրվարի վերջին ԼՂՀ երկու դատական աստանների 14 նորանշանակ դատավորները երդում տվեցին աշխատել՝ ծառայելով օրենքին և մարդու իրավունքների պաշտպանմանը: Գերագույն դատարանի նախագահ Վլադիմիր Հովսեփյանը պատասխանեց մեր հարցերին:*

**- Պարոն Հովսեփյան, վերջապես իրագործվել է դեռ երկու տարի առաջ ընդունված «Դատարանակազմության մասին» օրենքը, և նշանակվել են դատավորներ: Ներկայացրեք, խնդրեմ, դատարանի նոր կառուցվածքը:**

- ԼՂՀ նոր դատական համակարգի կազմավորման փուլն ավարտվեց Ազգային ժողովի կողմից 14 դատավորներին պաշտոններում նշանակելուց հետո: Փետրվարի 15-ին նրանք իրենց պաշտոններն ստանձնեցին հանդիսավոր պայմաններում՝ հանրապետության նախագահի ներկայությամբ տված երդմամբ:

Համակարգը կազմված է առաջին աստանի դատարանից և Գերագույն դատարանից: Ինչպես տեսնում եք, հանրապետությունում գործում է առաջին աստանի մեկ դատարան, որի դատական տարածքը հանրապետության ողջ տարածքն է, իսկ նստավայրը՝ Ստեփանակերտ քաղաքը: Սակայն քաղաքացիների դատական պաշտպանության իրավունքը ժամանակին և անշեղ ապահովելու նպատակով օրենքն առաջին աստանի դատարանի նստավայրեր է նախատեսել նաև հանրապետության շրջկենտրոններում:

Գերագույն դատարանը կազմված է վերաքննիչ և վճռաբեկ աստաններից: Այն օժտված է նաև սահմանադրական վերահսկողություն իրականացնելու լիազորություններով: Առաջին աստանի դատարանը, ըստ էության, քննում է բոլոր քաղաքացիական, տնտեսական, քրեական, զինվորական, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Վերաքննիչ աստանը վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատ-

յանի դատարանի քննած գործերը վերստին քննող ատյան է: Վճռաբեկության կարգով վերանայվում են առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ ատյանի՝ օրինական ուժի մեջ մտած կամ չմտած դատավճիռները, վճիռները և որոշումները: Առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ ատյանում գործերը քննվում են միանձնյա, իսկ վճռաբեկ և սահմանադրական դատարանի լիազորություններ իրականացնող ատյաններում՝ կոլեգիալ:

**- Դատական բարեփոխումներն ավարտված են: Բարձրացել է, արդյոք, դատարանի անկախության աստիճանը:**

- Դատական իշխանությունը պատկանում է ոչ թե ինչ-որ դատական հաստատության, այլ միանձնյա դատավորին կամ դատական կոլեգիային: Ժողովրդավարական բոլոր երկրներում մեկ միասնական պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա: Դատական իշխանության մարմինների խնդիրը ոչ միայն մեղավորներին դատելու և անմեղներին արդարացնելու մեջ է, այլև մարդու և քաղաքացու, պետության իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մեջ:

Դատական իշխանությունը նպաստում է սահմանադրական կարգի անսասանության, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, օրենքի նկատմամբ հարգանքի դաստիարակմանը: Չէ որ յուրաքանչյուրն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի որակական պաշտպանության իրավունք ունի:

Դատական իշխանության անկախության երաշխիքները սահմանված են օրենսդրությամբ: Այսպես՝ արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Դատարանի լիազորությունների յուրացումն արգելվում է օրենքով: Այն ամրագրում է նաև դատավորի գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվություն սահմանելը, դատավորի ապաքաղաքականացվածությունը, այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը, անփոփոխելիությունը և անձեռնմխելիությունը: Վերջապես,

հանրապետության նախագահը, ապահովելով իշխանության երեք թևերի բնականոն գործունեությունը, հանդիսանում է դատական մարմինների անկախության երաշխավորը:

**- Դատարանն աշխատում է օրենսդրության սահմաններում: Դատարանի աշխատանքի հաջողությունը պայմանավորված է օրենսդրական դաշտի կատարելիությամբ: Ինչպես եք գնահատում օրենսդրական դաշտը ԼՂՀ-ում:**

- Որքան գիտեմ, ԼՂՀ-ն իր անկախության տարիների ընթացքում ընդունել է 250-ից ավելի օրենքներ, որոնք կանոնակարգում են երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և հոգևոր-մշակութային ոլորտներում ծագած հարաբերությունները:

Օրենսդրական դաշտը որքան էլ կարգավորված լինի, ժամանակի և իրականության պահանջները ստիպում են կոնկրետ օրենքների կատարելագործում: Այլ ճանապարհ չկա, քանզի նորանկախ մեր հանրապետությունը բռնել և թևակոխել է շուկայական հարաբերությունների, բիզնեսի զարգացման և օտարերկրյա ներդրումների խրախուսման ուղին: Ակներև է, որ նման պայմաններում ծագում և ծագելու են հասարակական կյանքը կարգավորող նոր հարաբերություններ, հետևաբար, նոր օրենքների կարիքը միշտ էլ լինելու է:

**- Որքան մեզ հայտնի է, դատավորների ընտրությունը բավականին բարդ է ընթացել: Ձեր կարծիքով, ինչքանով է սուր կադրային հարցը ձեր համակարգում:**

- Նորաստեղծ Գերագույն դատարանը կազմված է նախագահից և վեց դատավորից, որոնցից երեքը կանայք են: ԼՂՀ օրենսդրությամբ՝ դատավորի պաշտոնում նշանակվում են բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող, 25 տարին լրացած ԼՂՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն իրավաբանի առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ և կարող են աշխատել որպես դատավոր: Գերագույն դատարանի բոլոր դատավորներն ունեն աշխատանքի հարուստ փորձ, աշխատել են տարբեր իրավապահ մարմիններում: Չնայած դրան, նրանք պարտավոր են հոգ տանել իրենց մասնագիտական գիտելիքների մակարդակի և աշխատանքի որակի բարձրացման ուղղությամբ:

**- Պաշտպանի կարգավիճակը Ղարաբաղի դատարանակազմության մեջ, փաստորեն, համապատասխան բարձրության վրա չէ: Մինչդեռ նա մարդու իրավունքների պաշտպանության ամենակարևոր երաշխիքներից է:**

- Փաստաբանի ինստիտուտը ԼՂՀ դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրության մի օղակն է հանդիսանում: «Փաստաբանական գործունեության մասին» ԼՂՀ օրենքն ընդունվել է 1999թ. հունիսի 12-ին: Այդ գործունեությունն օրենսդրությամբ ճանաչված իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Նշված օրենքը մանրամասն կարգավորում է փաստաբանի իրավունքները, պարտականությունները, գործունեության արտոնագրումը և երաշխիքները, փաստաբանների միության ստեղծման, գրանցման և լուծարման պայմանները: Ի դեպ, փաստաբանների միության գրանցումն իրականացվում է ԼՂՀ Գերագույն դատարանում: Պաշտպանի գործունեության կարևորագույն երաշխիքը կայանում է նրանում, որ նա ենթարկվում է միայն սահմանադրությանը և օրենքներին: Բացի այդ, մրցակցության սկզբունքի ուժով, փաստաբանը քրեական դատավարության ընթացքում մեղադրողի հետ հանդես է գալիս որպես հավասար կողմ: Գերագույն դատարանում գրանցված հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանն իրավունք ունի բողոքարկել օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները: Մի իրավունք, որով օժտված են միայն ԼՂՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները:

**- Եվ վերջին հարցը, դատարանի գործունեությունն ինչքանով պետք է բաց լինի մամուլի, այսինքն՝ հասարակայնության համար:**

- ՁԼՄ-ները քաղաքական համակարգի օղակներից մեկն են, իսկ տեղեկություններ ու գաղափարներ փնտրելը և ստանալը յուրաքանչյուր մարդու իրավունքն է: Կասկած չկա, որ հասարակության լայն զանգվածները ՁԼՄ-ների միջոցով ցանկանում են հաղորդակից լինել դատարանների գործունեությանը, սակայն իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություններ հրապարակելը, սուբյեկտիվ մոտեցումը կարող են բացասաբար անդրադառնալ կոնկրետ գործի ճակատագրի վրա:



Չպետք է մոռանալ, որ համաձայն անմեղության կանխավարկածի սկզբունքի՝ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ուստի, գտնում եմ, որ մինչև դատավճռի, վճռի, որոշման օրինական ուժի մեջ մտնելը ՁԼՄ-ների միջոցով ցանկացած տեղեկատվություն տարածելու նպատակահարմարությունը և ծավալը պետք է համաձայնեցնել գործը քննող դատավորի և դատարանի նախագահի հետ:

*Հարցազրույցը վարեց Նաիրա Հայրումյանը  
«Ազատ Արցախ» ՀԹ, 12 մարտի 2002թ.*

**ԳՈՐԾՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ  
ՉԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Անցած տարին Ղարաբաղի համար դատաիրավական բարեփոխումների տարի էր: Մարտ ամսից սկսել է գործել նոր դատական համակարգ. առաջին ատյանի դատարան և Գերագույն դատարան: Անցած տարվա տասն ամսվա աշխատանքն ամփոփում է Գերագույն դատարանի նախագահ Վլադիմիր Հովսեփյանը:*

**- Պրն. Հովսեփյան, ինչ միտումներ կարձանագրեիք այդ ժամանակաընթացքում կատարած ձեր աշխատանքի մեջ:**

-Պետք է ասեն, որ մեր բոլոր ջանքերը նպատակաուղղված են, առաջին հերթին, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանմանը, ինչպես նաև դատական իշխանության հեղինակության բարձրացմանը: Եվ եթե նշված վերջին ուղղությամբ մենք անելիք դեռ շատ ունենք, ապա վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2002թ. բարեփոխումների հետ կապված, Գերագույն դատարանում քրեական և քաղաքացիական գործերի քանակը զգալիորեն նվազել է: Այսպես՝ եթե 2001թ. Գերագույն դատարանի քննությանն է հանձնվել 196 գործ, ապա 2002թ.՝ ընդամենը 154-ը: Դա կարելի է բացատրել ն Գերագույն դատարանի գործառույթների փոփոխությամբ, ն քաղաքացիների անվճարունակությամբ:

Քննարկվող ժամանակաշրջանում վերաքննության կարգով բողոքարկվել են 89 քաղաքացիական գործ, որը կազմում է առաջին ատյանի դատարանի քննած գործերի 9,2 տոկոսը, որոնցով փոփոխված վճիռները կազմում են 42 տոկոս: Դրա պատճառը կայանում է նրանում, որ որոշ դատավորներ գործի քննությունը տանում են թերի, միակողմանի և հանգում սխալ եզրակացության: Վերաքննության կարգով բողոքարկված 31 քրեական գործից 8-ի վերաբերյալ դատավճիռները ենթարկվել են փոփոխության:

Այդ ժամանակաշրջանում վերաքննիչ ատյանի կողմից քաղաքացի-

ական գործերով կայացված վճիռների և որոշումների նկատմամբ բերվել են 20 վճռաբեկ բողոք, որոնցից 14-ը քննության առարկա են դարձվել, ընդ որում, բողոքարկված բոլոր վճիռները մնացել են անփոփոխ: Չեն փոփոխվել նաև այդ ատյանում քննված 5 քրեական գործերով կայացված դատական ակտերը:

**- Ի՞նչ տվեցին դատաիրավական բարեփոխումները, դրանք կարելի է ավարտված համարել, և այդ բնագավառում ի՞նչ անելիքներ կան:**

- Դատաիրավական բարեփոխումները ԼՂՀ-ում պարտադրված են եղել ժամանակի պահանջով: Արդեն 2-րդ տասնամյակն է, ինչ երկիրը թևակոխել է անկախության հաստատման և շուկայական հարաբերությունների ուղին: Մեր երկրի օրենսդրությամբ երաշխավորվում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը: Մարքս-լենինյան գաղափարախոսության և երկրի տնտեսական հիմքը կազմող հանրային սեփականության սկզբունքների վրա կառուցված խորհրդային օրենսդրությունը, բնականաբար, նոր հասարակական հարաբերությունները կարգավորել չէր կարող: Իրենց հերթին, նոր հարաբերություններն էլ բերում են համընդհանուր ճանաչում գտած նոր սկզբունքների՝ կողմերի մրցակցություն, անձի և սեփականության անձեռնմխելիություն, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիություն, խախտված իրավունքի վերականգնման ապահովում, դրանց դատական պաշտպանություն և այլն: Նոր դատական համակարգի պայմաններում դեռ քիչ ժամանակ ենք աշխատում, ուստի, չեմ ցանկանում վաղաժամ կանխագուշակումներ անել, չնայած համակարգի թեր և դրական կողմերն ավելի շուտ նկատելի են դատավորներին: Սակայն նկատելի է նաև, որ նոր դատական համակարգը գտնվում է իր կայացման ճիշտ ուղու վրա և գործում է իր գործառույթներին համապատասխան: Ուստի, գերխնդիրը մնում է դատական իշխանության հեղինակության բարձրացումը, որին դատավորներս մեր գործունեությամբ պետք է հասնենք պետական իշխանության մյուս ճյուղերի հետ համագործակցած: Չէ որ արդարադատությունը ցանկացած երկրի հիմնական հե-

նասյուններից մեկն է: Իսկ ժողովրդավարական պետականության հիմքերից մեկն էլ դատական իշխանության անկախությունն է: Դատաիրավական բարեփոխումները միանգամվա գործողություններ չեն, այլ հարափոփոխ գործընթացներ են և ունեն իրենց ներքին զարգացման դինամիկան: Նույնիսկ անցած տարվա 10 ամսվա ընթացքում Խորհրդարանի կողմից դատավարական բարեփոխումներն ապահովող օրենսդրության մեջ կատարվել են մի շարք էական փոփոխություններ և լրացումներ: Էլ չեն ասում, որ դեռևս չունենք նոր քրեական և աշխատանքային օրենսգրքեր: Մի խոսքով, իրավական դաշտում անելիք դեռ շատ կա:

**- Ձեր կարծիքով, ժողովրդի մեջ հավատ կամ, արդյոք, դատական իշխանության նկատմամբ:**

- Շատ տեղին հարց եք տալիս: Գիտեմ, որ հասարակության մի մասը բացասական կարծիք ունի դատական իշխանության նկատմամբ: Դատարանն էլ վերնաշենքային հաստատություն է: Պետք է նշել, որ դժգոհությունների մի մասը սուբյեկտիվ մոտեցումների հետևանք է: Չէ որ քաղաքացիական գործերով դատավեճը, վերջին հաշվով, լուծվում է կողմերից որևէ մեկի օգտին: Այստեղ ես նկատի ունեմ, որ «հաղթող կողմը» արդարադատությունն է լինում, իսկ «պարտվող կողմը» միշտ դժգոհ է լինում դատարանից՝ այն պատկերացումն ունենալով, որ դատարանը «կաշառված է եղել» կամ կատարել է «վերադասի պատվերը»: Կան նաև այլ պատճառներ. երկրում դեռևս չի ձևավորվել կայուն քաղաքացիական հասարակություն, թույլ են քաղաքացիների իրավագիտակցությունը և իրավական կուլտուրան: Միաժամանակ, հեռու եմ դատավորներին իդեալական համարելու մտքից. մենք էլ ունենք թերություններ և բացթողումներ: Պետք է ինքնաձերբազատվենք, ինքնամաքրվենք դատարանի վրա ստվեր զցող ամեն տեսակի նեգատիվ երևույթներից:

**- Իսկ որտեղ են այն երաշխիքները, որոնք բացառում են դատարանների կողմից «վերադասի պատվերները» կատարելը:**

- Նախ ասեմ, որ արդարադատությունը և ճնշումը միասին չեն կարող «յուլա» գնալ, ժողովրդավարությանն անհարիր են ճնշումն ու բռնությունը: Պետք է լինի օրենքի դիկտատուրա, այսինքն՝ բոլորը հավասար լի-

ներս օրենքի առջև և հավասարապես պաշտպանված օրենքով:

Ինչ վերաբերում է երաշխիքներին՝ դրանք ամրագրված են ԼՂՀ օրենսդրությամբ: Այսպես՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է և ենթարկվում է միայն օրենքին, դատավորը հաշվետու չէ որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, օրենքով արգելվում է միջամտությունը դատավորի գործունեությանը՝ արդարադատություն իրականացնելիս: Պատասխանատվություն է նախատեսվում նաև դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար: Դատավորը պարտավոր չէ բացատրություններ տալ իր վարույթում գտնվող գործի կամ նյութի վերաբերյալ և այլն:

Այս սկզբունքներից շեղվող դատավորն անօրինականության կամավոր ստրուկն է դառնում:

Չարկ է նշել, որ չպետք է նոր «իզմեր», անձի պաշտամունքներ պեղենք. դրա հետևանքները մենք՝ արցախցիներս, տեսել և զգացել ենք մեր կաշվի վրա:

**- Ինչպես հայտնի է, վերաքննիչ դատարանը գործում է մեկ դատավորի կազմով, այսինքն՝ միանձնյա: Ինչու՞ ժողատենակալների ինստիտուտը ներկայումս չի գործում:**

- Խորհրդային օրենսդրության դրույթների ուժով քրեական օրենսգրքի 491-րդ հոդվածում թվարկված՝ հանցագործությունների վերաբերյալ գործերը դատարանների կողմից քննվել են օրենքով սահմանված կարգով ընտրված դատավորի և ժողատենակալների կազմով: Վերջիններս արդարադատություն իրականացնելիս օժտված են եղել դատական նիստում նախագահող դատավորի բոլոր իրավունքներով: Գործող օրենսդրությունը հրաժարվել է այդ ինստիտուտներից՝ ընդունելով դատավորների կոլեգիալության սկզբունքը, այն էլ՝ միայն վճռաբեկ դատարանում:

Գաղտնիք չէ, որ միանձնյա ընդունված որոշումները, հնարավոր է, զերծ չեն սխալներից: Տվյալ պարագայում մեր խնդիրը դրանց հնարավորինս բացառումն է դատական պրակտիկայում: Չամենայն դեպս, ես գտնում եմ, որ ժողատենակալների ինստիտուտը ոչ թե պետք է վերականգնվի, այլ վերաքննությանը տրվի կոլեգիալ կարգավիճակ:

**- Կայացված դատական որոշումների վերանայման ինչ՞ կարգ է սահմանված նոր օրենսդրությամբ:**

- Օրինական ուժի մեջ մտած վճիռների, դատավճիռների և որոշումների վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն ԼՂՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները, ինչպես նաև հատուկ արտոնագիր ունեցող և Գերագույն դատարանում գրանցված փաստաբանները: 2002 թվականին Գերագույն դատարանում գրանցվել են հատուկ արտոնագիր ունեցող 3 փաստաբան՝ Վազգեն Չայրապետյանը, Էլմիրա Չարությունյանը և Գրիգորի Բաղդյանը: Անցած տարվա ընթացքում բերվել են 2 վճռաբեկ բողոք, որից մեկը մինչև քննարկումը հետ է պահանջվել, մյուսը թողնվել է առանց բավարարման:

**- Գործող աշխատանքային օրենսգիրքը որքանով՞ է կարգավորում ներկա աշխատանքային հարաբերությունները:**

- Շատ նրբանկատ հարց եք տալիս: Այսօրվա դրությամբ դեռևս ղեկավարվում ենք խորհրդային տարիներից եկող աշխատանքային օրենսգրքով, որը կարևորում է բանվորների և ծառայողների աշխատանքային հարաբերությունները՝ վերջնական նպատակ ունենալով հանրային արտադրության արդյունավետության բարձրացման միջոցով կոմունիզմ կառուցել նախկին ԽՍՀՄ տարածքում: Ուստի, գործող աշխատանքային օրենսգիրքը գրեթե չի կարող կարգավորել գործատուի և աշխատողի միջև ծագող հարաբերությունները: Նման պայմաններում որոշ հարցերում ղեկավարվում ենք նոր քաղաքացիական օրենսգրքով, մյուսներում՝ իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նոր աշխատանքային օրենսգրքի ընդունումը ժամանակի հրատապ հարց է:

**- Դատավորների աշխատանքի վրա չի՞ ազդում, արդյոք, տեղայնության գործոնը. չէ՞ որ մենք փոքր հանրապետություն ենք, բոլորս ճանաչում ենք միմյանց: Դուք կուզենայիք՞ աշխատել մեծ քաղաքում:**

- Դատավորը տեղայնության մեջ ընկնելու իրավունք չունի և որպես դատական իշխանության կրող՝ պետք է պետական մտածողություն ունենա, խստագույնս պահպանի էթիկայի և բարոյականության նորմերը՝ հարազատ մնալով հանրապետության նախագահի ներկայությամբ տված իր երդմանը:

**- Որքանով է նպատակահարմար ԼՂՀ-ում տնտեսական դատարանի ստեղծումը:**

- Վիճակագրական տվյալները վկայում են, որ ԼՂՀ առաջին ատյանի դատարանի կողմից մեկ ամսվա կտրվածքով քննված քաղաքացիական գործերի 10%-ը կազմում են, այսպես ասած, տնտեսական վեժերի վերաբերյալ գործերը: Այնինչ նկատի պետք է առնել, որ այդ կատեգորիայի գործերը շուկայական հարաբերությունների և օտարերկրյա ներդրումների զարգացմանը զուգընթաց մեծ թիվ կկազմեն: Իսկ ներդրումների և շուկայական հարաբերությունների հաջողությունները ոչ քիչ չափով կախված են նաև առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի միջև ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ծագող վեժերի ճիշտ և արագ լուծումից: Տնտեսական գործերի քաջքշուկն առաջ է բերում ներդրումային քաղաքականության սառեցում: Կարելի է հարցի լուծման մի շարք տարբերակներ գտնել՝ մտածել դատավորների մասնագիտացման ուղղությամբ, ստեղծել նոր դատարան կամ ԼՂՀ Գերագույն դատարանի վերաքննիչ ատյանին վերապահել առաջին ատյանի կարգով քննել այդ կատեգորիայի գործերը: Իսկ դրանցից բխող բողոքները կվերանայվեն վճռաբեկ ատյանում: Խնդիրը կա. քննարկման արդյունքում կգտնվի լավագույն լուծում:

*Հարցազրույցը վարեց Նաիրա Հայրումյանը  
«Ազատ Արցախ» ՀԹ, 6 փետրվարի 2003թ.*

**«ԹԱՓԱՆՑԻԿ ՈՒ ԱՆԿԱՇԱՌ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՄԻԱՅՆ  
ԿՇԱՐԵՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՅՈՒԹՅՈՒՆԸ»  
Վերաքննիչ դատարանի նախագահին ամփոփում է 100 օրը**

*Իրավական ու ժողովրդավարական պետության կերտման ծանա-  
պարհի կարևոր քայլ էր ընթացիկ տարվա ամռանը ԼՂՀ վերաքննիչ  
դատարանի կազմավորումը, որն իրականացվող դատաիրավական  
բարեփոխումների լուրջ նախապայման կարելի է համարել: Օրերս լրա-  
ցավ վերոհիշյալ պետական մարմնի գործունեության 100 օրը: Օգտա-  
գործելով խորհրդանշական առիթը՝ վերաքննիչ դատարանի նախագահ  
Վ. Հովսեփյանը հրավիրեց մամլո ասուլիս՝ քննարկելու և ամփոփելու  
կատարված աշխատանքները:*

Ներկայացնելով հանրապետությունում առկա դատաիրավական  
դաշտի բարեփոխումները՝ նա նշեց, որ մեր երկրում արդեն երրորդ ան-  
գամ են իրականացվում համակարգի բարեփոխումներ: Առաջին փուլն  
սկսվել էր 1999-2002թթ., երբ գործող դատական համակարգը երկաս-  
տիճան էր՝ կազմված առաջին ատյանի և Գերագույն դատարաններից:  
Հայաստանը, Սահմանադրության ընդունումից հետո, անմիջապես ան-  
ցավ եռաստիճան համակարգի: Ժամանակը ցույց տվեց, որ թե՛ ներպե-  
տական, թե՛ միջազգային իրավունքի տեսակետից գոյություն ունի ան-  
համապատասխանություն, ուստի մեզ մոտ ևս Սահմանադրությունից  
բխող լուրջ փոփոխություններ կատարվեցին, որոնց մեջ առաջինը հենց  
վերաքննիչ դատարանի ստեղծումն էր:

«Հանրապետության նախագահի հրամանագրով ստեղծվել է աշխա-  
տանքային խումբ, որը մշակում է դատաիրավական բարեփոխումների  
հայեցակարգ, որի հիմքի վրա էլ կատարվում են առաջադիմական քայ-  
լեր մեր երկրում արդարադատությունը եվրոպական չափանիշներին  
մերձեցնելու համար: Հուլիսին դատական համակարգը համալրվել է 10  
դատավորներով, որոնք ԼՂՀ նախագահի ներկայությամբ երդում են  
տվել և անցել պարտականությունների կատարմանը: Վերաքննիչ դա-  
տարանի յոթ դատավորներից երեքը կանայք են, որոնք ոչնչով չեն զի-  
ջում տղամարդկանց», - նշեց դատարանի նախագահը: Ներկայացնելով



դատավորներին՝ բանախոսը նշեց, որ իրենց մոտ առկա է կադրերի երիտասարդացում. Երեք դատավորներ դեռ չեն բոլորել երեսուն տարին: Դատարանի նախագահը դա համարում է արդարացված և իրատեսական, քանզի այդպես ոլորտի սերնդափոխությունն ավելի թափանցիկ հունով կընթանա:

Մինչև վերաքննիչ դատարանի ստեղծումը, վերաքննության ինստիտուտը գործում էր նաև Գերագույն դատարանում: Սակայն վերաքննիչ և վճռաբեկ ատյանների միջև հստակ տարանջատում չլինելու պատճառով դատավորն իրականացնում էր և՛ վերաքննություն, և՛ վճռաբեկություն: «Երեք ամսվա ընթացքում դատարան է մտել 97 բողոք: Դա այն դեպքում, երբ 2003 թվականին նմանատիպ 117 բողոք է գրանցվել: Տարվա վերջին, կարծում եմ, կգերազանցենք բոլոր ցուցանիշները: Մեր դատարանն անկախ իրավական մարմին է, որի գոյությունը վստահության մթնոլորտ է ստեղծել քաղաքացիների շրջանում: Դատական մարմինները միայն թափանցիկ ու անկաշառ աշխատանքով կարող են շահել հասարակության վստահությունը», -ասաց նա:

Վ.Յովսեփյանի խոսքերով, արդեն պատրաստ նախագծեր կան, որոնք ներկայացվելու են Խորհրդարանի քննարկմանը: 2009թ. հունվարի 1-ից ԼՂՀ-ն կունենա դատական, քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքեր, դատական իշխանությունը կունենա սեփական ինքնակառավարման մարմինները՝ դատավորների ընդհանուր ժողով, դատարանների նախագահների խորհուրդ, դատական դեպարտամենտ: Կգործի նաև արդարադատության խորհուրդը, որը դատավորների համար կկատարի կարգապահական ատյանի դեր: Վերաքննիչ դատարանի նախագահը շեշտեց, որ առաջին ատյանի դատավորի որոշումն իրենց կողմից բեկանվելու դեպքում դժգոհություններ չպիտի լինեն, քանի որ ցանկացած պարագայում վերջնական արդյունքում շահողն օրենքն է և արդարադատությունը: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ Վ.Յովսեփյանը նշեց, որ դատարան մտած 97 բողոքներից 77-ը քաղաքացիական գործերով են, 20-ը՝ քրեական: Քրեական գործերով ամբաստանյալները, վերջին հաշվով, խնդրում են առավել մեղմ վերաբերվել: Քաղաքացիական գործերը, հիմնականում ամուսնալուծության, գույքային և ժառանգության վերաբերյալ գործեր են, մի մասն էլ՝ շուկայական նոր իրավահարաբերությունների արդյունքում ծնված:

Նշվեց, որ ակտիվ փոխհամագործակցություն կա Հայաստանի դատական համակարգի համանուն կառույցների հետ, դեռևս 2005թ. ԼՂՀ Գերագույն և ՀՀ վճռաբեկ դատարանների կողմից ստորագրվել է համագործակցության և իրավական օգնության վերաբերյալ համաձայնագիր: Մեր հանրապետության դատավորներից շատերը կատարելագործվել են Հայաստանի վճռաբեկ դատարանին առընթեր գործող դատական դպրոցում:

Ասուլիսի ընթացքում դատարանի նախագահին այն կարծիքը հայտնեց, որ մեր քաղաքացիներն իրավաբանական գիտելիքների տեսակետից խիստ թերանում են. սա դրսևորվում է փոխառության, առուվաճառքի գործարքների ժամանակ, երբ բացակայում է գրավոր պայմանավորվածությունը, և քաղաքացին ստիպված դատարանից դատարան է դիմում:

Դատարանի առավել արդյունավետ աշխատանքի համար նախագահը որպես կարևոր նախապայման շեշտեց ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցությունը, որը և հնարավորություն կտա առավել թափանցիկություն հաղորդել իրականացվող գործընթացներին: Հասարակական հնչողություն ունեցող գործերի քննությանը հրապարակային բնույթ հաղորդելու համար Վ.Հովսեփյանը պատրաստակամություն հայտնեց համագործակցել բոլոր լրատվամիջոցների հետ: «Նույնիսկ մի փոքրիկ օբյեկտիվ լրագրողական հետաքննությունը կարող է նպաստել արդարության հաստատմանը», - հավելեց վերաքննիչ դատարանի նախագահը:

*«Ազատ Արցախ» ՀԹ, 14 հոկտեմբերի 2008թ.*

## ՈՐՔԱՆՈՎ Է ԼՂՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՅՍՕՐ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ

«Դատարանակազմության մասին» նոր օրենքի համաձայն՝ հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ: ԼՂՀ Սահմանադրության համապատասխան հոդվածով երկրի նախագահը հունիսի 19-ին նախօրոք կազմակերպված քննության արդյունքների և դատական մագիստրատուրայի խորհրդի եզրակացությունների հիման վրա նշանակեց ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին ու վերաքննիչ դատարանի նախագահին: 2008թ. հունիսի 26-ին էլ կայացավ բոլոր ինը դատավորների երդման արարողությունը, իսկ հուլիսի 1-ից արդեն գործում է վերաքննիչ դատարանը, որի նախագահ է նշանակվել Վլադիմիր Յովսեփյանը:

**- Պարոն Յովսեփյան, այսօր ԼՂՀ դատական համակարգում իրականացվում են բարեփոխումներ. ինչ նպատակներ են դրանք հետապնդում, առաջիկայում ևս կշարունակվեն դրանք, եթե այո, ապա ինչպիսին կլինի այդ փոփոխությունների բնույթը:**

- ԼՂՀ-ում ընթացող դատաիրավական բարեփոխումները հանրապետության Սահմանադրությունից բխող հրամայական պահանջ են: Սահմանադրությունը մի ամբողջ գլուխ է հատկացրել դատական իշխանությանը, իսկ այդ իշխանության ոլորտի հարաբերությունները կարգավորող սկզբունքներն ու դրույթներն ամրագրված են Մայր օրենքի տարբեր գլուխներում: Այնպես, որ բարեփոխումները նպաստելու են անկախ և ինքնակառավարվող դատական համակարգի ձևավորմանը, որն իր լիարժեք գործառնություններով մեծ դեր կխաղա հանրապետության կյանքում:

Ինչ վերաբերում է առաջիկա բարեփոխումներին, կարող եմ ասել, որ դրանք կունենան շարունակական բնույթ: Իսկ Սահմանադրության եզրափակիչ և անցումային դրույթների համաձայն՝ երկու տարվա ընթացքում գործող օրենքները պետք է համապատասխանեցվեն Սահմանադրությանը: Եվ այսպես՝ ԼՂՀ-ում գործում է եռաստիճան դատական հա-

մակարգ, որը բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից, ինչպես նաև Գերագույն դատարանից: Դատական իշխանության նոր համակարգի ձևավորումն սկսվեց վերաքննիչ դատարանի ստեղծումով: Արդեն սույն թվականի հուլիսի 1-ից գործում է ԼՂՀ վերաքննիչ դատարանը, որի դատական տարածքը հանրապետության տարածքն է, իսկ նստավայրը՝ Ստեփանակերտ քաղաքը /Ազատամարտիկների փողոց 42/: Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմաններում կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով վերանայում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերը: Իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվելու պահից կքննի նաև վարչական գործերը: 2008, ինչու չէ՝ նաև 2009 թվականները դատական համակարգին առաջադրում են լուրջ խնդիրներ: Արդեն գործում է «Դատական ծառայության մասին» ԼՂՀ օրենքը, որի ուժով կստեղծվի «Դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկն իր կառուցվածքային ստորաբաժանումներով: Այն կապահովի դատարաններին, դատավորների ընդհանուր ժողովին՝ առաջիկայում ստեղծվելիք դատարանների նախագահների խորհրդին և արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ու քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը:

**- ԼՂՀ քաղաքացիները հստակ պատկերացում չունեն վերաքննիչ դատարանի, վերաքննության վերաբերյալ: Որքանով է արդարացված վերաքննության ինստիտուտի ներդրումը ԼՂՀ դատական համակարգում:**

- Վերաքննությունը /ապելյացիա/ ծանոթ է եղել դեռևս հին հռոմեական իրավունքից և նկատի է ունեցել գործի՝ ըստ էության նոր քննություն և նոր դատական ակտի կայացում՝ 2-րդ ատյանի դատարանի կողմից: Վերաքննության ինստիտուտը կիրառվել է ռուսական կայսրությունում՝ մինչև 1917 թվականը: Ներկայումս այն կիրառվում է ռոմանոգերմանական իրավունքին պատկանող երկրներում, մասնավորապես՝ լրիվ վերաքննության ձևով՝ Ֆրանսիայում և Իտալիայում և ոչ լրիվ վերաքննության ձևով՝ Ավստրիայում ու Գերմանիայում:

Գաղտնիք չէ, որ ԼՂՀ-ն վերաքննության ձևը վերցրել է Չայաստանի

Հանրապետության դատական համակարգից: Բոլոր դեպքերում՝ վերաքննության ինստիտուտը դիմակայել է ժամանակի փորձությանը, ուստի ԼՂՀ-ն չէր կարող չամրագրել այն իր Մայր օրենքում: Տեղին է նշել, որ սեփական դատավարության օրենսգրքերն ունենալու պարագայում /այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են/ ԼՂՀ վերաքննիչ դատարանը, որոշակի առումով, ստանձնելու է այն լիազորությունները, որ այսօր կատարում է Գերագույն դատարանը:

**- Իսկ որո՞նք են գործող դատական համակարգի առավելությունները հին համակարգի համեմատությամբ:**

- Ժամանակը ցույց կտա նոր համակարգի առավելությունները և խոցելի կողմերը: Որքան էլ օրենքները գեղեցիկ լինեն գրված, այնուամենայնիվ, միայն կիրառման ընթացքում են ի հայտ գալիս արդյունքները, թե դրանք որքանով են ճիշտ կարգավորում գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, և միայն ժամանակն է թելադրում անհրաժեշտ հստակեցումներ, լրացումներ և փոփոխություններ մտցնել կիրառվող օրենքներում և համակարգերում: Բոլոր դեպքերում նոր համակարգի առավելություններն ակնհայտ են: Այսպես՝ կյանքը ցույց տվեց, որ հանրապետությունում գործող երկաստիճան դատական համակարգը, որտեղ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորություններն իրականացվել են մեկ ատյանի կողմից, իրեն չի արդարացրել, և ատյանների տարանջատման խնդիր է առաջացել: Եթե մինչև վերաքննիչ դատարանի ստեղծումը Գերագույն դատարանում վերաքննությունն իրականացվում էր մեկ դատավորի կազմով, ապա ներկայումս այն ընթանում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով: Գործերի կոլեգիալ քննության դեպքում արդարադատության որակն ավելի բարձր է լինում, սխալի հավանականությունը՝ ավելի փոքր: Միանձնյա որոշումը շատ դեպքերում լինում է միակողմանի, իսկ սխալի հավանականությունը՝ ավելի շատ:

Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումների արդյունքում արդարադատությունը, որպես կանոն, պետք է իրականացվի երկու ատյանով: Դրանով է պայմանավորված, որ վերաքննիչ դատարանի դատական ակտերն անմիջապես մտնում են օրինական ուժի մեջ: Իսկ վճռաբեկության կարգով քննած գործերով դատական ակտերը պետք է ունենան նախադեպային նշանակություն:

**- Պարոն Յովսեփյան, դատաիրավական այդ բարեփոխումների արդյունքում ԼՂՁ քաղաքացիները որքանով իրենց պաշտպանված կզգան:**

- Գիտե՞ք, վերջին դատաիրավական բարեփոխումները վերաբերում են ոչ միայն դատարաններին կամ դատական իշխանությանը, այլև բոլոր իրավապահ, ավելի ճիշտ՝ բոլոր իրավունք կիրառող մարմիններին: Այդ բարեփոխումները խորքային և բազմաշերտ գործընթաց են, ինչի արդյունքում քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքներն ու ազատություններն ավելի պաշտպանված կլինեն: Բավական է նշել, որ 2009թ. հուլիսի 1-ից կգործի Գերագույն դատարանի սահմանադրական պալատը, ուր կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով. երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականությունը:

Պետությունը մեծ հույսեր է կապում դատաիրավական բարեփոխումների, նորաստեղծ վերաքննիչ դատարանի և նորանշանակ դատավորների հետ: Ցանկացած դատարան և դատավոր պետք է պետական մտածողության կրողը լինեն: Նման վարքագիծ դրսևորելու դեպքում մենք կշահենք մեր քաղաքացիների համակրանքը, և նրանք իրենց ավելի պաշտպանված կզգան, իսկ դատական համակարգը կնպաստի Արցախի պետականության հզորացմանը:

*«Ազատ Արցախ» ՅԹ, 19 հուլիսի 2008թ.*

## ՎԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍԸ ԼՐԱՑՆԵԼ Է ՊԵՏՔ

«Չնայած դատաիրավական համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունքում այսօր մենք ունենք անհամեմատ թափանցիկ և օրենսդրորեն առավել մատչելի դատական համակարգ, քան, ասենք, 10 տարի առաջ էր, սակայն ժողովրդի պահանջը շարունակում է մեծ մնալ դատական իշխանության նկատմամբ: Անշուշտ հուսադրող հանգամանք է, որ վերջին շրջանում քաղաքացիների վստահությունը սկսել է աճել, բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե մարդիկ ոգևորված են դիմում դատական ատյաններին, և հուսախաբվելու առիթները քիչ են, երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ, ամփոփելով հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները, նշել է ԼՂՀ վերաքննիչ դատարանի նախագահ Վլադիմիր Յովսեփյանը: -Ու եթե քաղաքացին այնքան էլ գոհացած չէ դատարանի գործունեությունից, ուրեմն մենք ինչ-որ տեղ դեռ թերանում ենք մեր պարտականությունների մեջ, և վստահության պակասն ամեն գնով լրացնել է պետք»...

Կարևորելով զանգվածային լրատվամիջոցների դերը՝ երկրում ժողովրդավարական արժեքների արմատավորմանը միտված ձեռնարկումների, մասնավորապես՝ «իրավական տեղեկատվության» անաչառ տարածման և հասարակական կարծիքի ձևավորման գործում, Վ.Յովսեփյանը կառույցի գործունեությունն առավել թափանցիկ և իրապարակային դարձնելու, մամուլ – դատարան կապը սերտացնելու նպատակով առաջարկեց մշակել համատեղ ռազմավարական ծրագիր՝ հստակեցնելով մեխանիզմները: «Սաղմնային վիճակում» համարելով վերաքննիչ դատարանի կայացման գործընթացը, նա վստահություն հայտնեց, որ կարվի հնարավորը, որպեսզի թե՛ ներպետական, ու թե՛ միջազգային իրավունքի տեսակետից աշխատանքները համապատասխանեցվեն Սահմանադրության պահանջներին:

Ինչպես տեղեկացրեց Վ.Յովսեփյանը, վերաքննիչ դատարան մտած քաղաքացիական 122 գործից 4-ով վերաքննիչ բողոքները վերադարձվել են՝ օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, իսկ 118-ը ընդունվել է վարույթ: 94 գործով կայացվել են վերջնական դատական ակտեր: Դատարանի նախագահի խոսքերով, «քննարկվող ժամա-

նակահատվածում ստորադաս դատարանի կողմից ավարտված 1111 քաղաքացիական գործից վերաքննության կարգով բողոքարկվել է 118 վճիռ, որից 94-ի վերաբերյալ կայացվել են վերջնական դատական ակտեր: Բողոքները հետ վերցնելու կապակցությամբ 4 գործով կարճվել են վարույթները: Ընդ որում, 20 գործ «փոխանցվել է» 2009 թվական, որից 5 գործով, դատական փորձաքննություններ նշանակելու պատճառով, վարույթները կասեցվել են»:

Հատկանշական է, որ վերաքննությամբ ավարտված 94 քաղաքացիական գործից 28-ն առնչվում են գույքային, 13-ը՝ բնակարանային, 12-ը՝ սեփականության իրավունքի, 6-ը՝ հողային, 5-ը՝ ժառանգության, 4-ը՝ աշխատանքի հետ կապված հարցերին: Ըստ պարոն Յովսեփյանի, վերաքննությամբ ավարտված 98 գործից վճռաբեկության կարգով բողոքարկվել են 17 գործ: 5 բողոք վերադարձվել են բողոքաբերների խնդրանքով և քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, 2 գործով դատարանի որոշումները բեկանվել, և օրինական ուժ են տրվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռներին, 3 գործով վճռաբեկ բողոքները մերժվել են՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Եվ այս որոշումները հիմնավորելով՝ Վ.Յովսեփյանը լրացուցիչ իրավական փաստարկներ բերեց:

Լրագրողներից մեկի այն հարցին, թե վերաքննիչ դատարանը, լիազորությունների շրջանակում ի զորու է արդյոք, լիովին օգտագործել կոռուպցիայի դեմ պայքարի լծակները, պարոն Յովսեփյանը հավաստիացրեց, որ խնդիրն առաջնահերթությունների թվում է մնում, և նման երևույթների դեմ պայքարը միասնական պետք է լինի՝ այդ գործում ընդհուպ ներգրավելով հանրությանը: «Վերջերս նման նախադեպ արդեն մենք ունեցել ենք, և իրավախախտները համոզվել են, որ պետական ունեցվածքի հափշտակման, պաշտոնական դիրքի չարաշահման և հանցավոր այլ երևույթների նկատմամբ դատարանի վճիռը լինելու է անհամեմատ խիստ», - ասաց նա՝ բերելով կոնկրետ օրինակներ: Վ.Յովսեփյանը հաստատեց կառավարության մտադրությունը՝ ԼՂՀ Գերագույն և վերաքննիչ դատարանները Շուշի փոխադրելու վերաբերյալ՝ դա համարելով ռազմավարական խնդիր: Միևնույն ժամանակ նա ավելորդ չհամարեց նշել, որ այդ գործընթացը շատ ջանքեր կպահանջի՝



շենքային պայմանները բարելավելու, տեղում կայուն բազա ստեղծելու առումով:

«ՀՀ»-ի խնդրանքով վերաքննիչ դատարանի նախագահին անդրադարձավ նաև Հայաստանի Հանրապետության դատական կառույցների հետ ունեցած կապերին: Նրա խոսքերով, 2005թ. երկու երկրների բարձրագույն դատական ատյանների միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր, և փաստաթղթում ամրագրված շատ կետեր արդեն իրագործվել են: Գոհունակություն հայտնելով այդ առնչությամբ, Վ.Հովսեփյանը նշեց, որ հաշվի առնելով Հայաստանի գործընկերների աշխատանքային հարուստ փորձը, պայմանավորվածության համաձայն, վերաքննիչի բոլոր դատավորներն այս տարի կատարելագործման դասընթացներ կանցնեն երևանյան դատական դպրոցում:

*«Հայաստանի Հանրապետություն» թերթ, 16 հունվարի 2009թ.*

## ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է ԿԵՍ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*ԼՂՀ Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումների շարքում կարևոր տեղ ունի վերաքննիչ դատարանի ստեղծումը, որը մեր հանրապետությունում գործում է արդեն վեց ամիս: Հունվարի 15-ին դատարանի նախագահ Վ.Հովսեփյանը հրավիրել էր մամուլի ասուլիս՝ լրատվամիջոցների օգնությամբ հանրությանը ծանոթացնելու 2008թ. երկրորդ կիսամյակի ընթացքում դատական այդ կառույցի կատարած աշխատանքներին:*

Կառույցի ղեկավարը նշեց, որ Վերաքննիչ դատարանի ստեղծումը հնարավորություն է տվել ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատական ակտերը վերանայել կոլեգիալ եղանակով՝ երեք դատավորի կազմով: «Նախորդ տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում դատարան է մտել 122 քաղաքացիական գործ, չորս գործով վերաքննիչ բողոքները վերադարձվել են օրենքի պահանջների անհամապատասխանության հիմքով, իսկ 118 գործից 94-ով վերջնական դատական որոշումներ են կայացվել: 20 գործ ընթացքավորման մեջ են, որոնցից 5-ով դատական փորձաքննություններ նշանակելու կապակցությամբ վարույթները կասեցվել են: Վերաքննությամբ ավարտված 98 գործից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 17-ը, որոնցով բերված բողոքներից 5-ը վերադարձվել են, 2 բողոքով վերաքննիչ դատարանի վճիռները բեկանվել, և օրինական ուժ է տրվել առաջին աստիճանի վճիռներին: Մեկ գործով վճռաբեկ բողոքը մերժվել է՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Մեկ գործով էլ բեկանվել է դատական ակտը և գործն ուղարկվել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննություն կատարելու համար», - հաղորդեց Վ.Հովսեփյանը:

Վերաքննիչ դատարանը նշված ժամանակաընթացքում վերանայել է նաև 36 քրեական գործ: Վերաքննությամբ ավարտված 28 քրեական գործից 10 դատավճիռ թողնվել է անփոփոխ, երկու դատավճիռ բեկանվել և լրացուցիչ քննության է ուղարկվել, իսկ 16 դատավճիռ փոփոխվել է: Դատարանի նախագահը նշեց, որ քրեական գործերից մեկն առավել ծանր հանցագործության հետ էր կապված, ոստիկանության աշխատա-

կիցը մտել էր քաղաքացու բնակարան, կողոպուտի նպատակով մահափորձ կատարել մոր և աղջկա նկատմամբ: Հանցագործը դատապարտվել է 10 տարվա ազատազրկման: Դատարանի ուշադրության կենտրոնում է հայտնվել նաև մեկ կոռուպցիոն գործ՝ կապված պաշտոնական դիրքի չարաշահման և դրամաշորթության փաստի հետ: «Դա առաջին ատյանի դատարանի դատական նիստերի քարտուղար Է.Հայրապետյանի գործն էր, ով տեղյակ լինելով, որ քաղաքացու պատիժը կապված չէ ազատազրկման հետ, փորձել է մեղադրվող քաղաքացու հարազատներից դրամական միջոցներ շորթել: Վերջինս առաջին ատյանի կողմից դատապարտվել էր ազատազրկման երեք տարի ժամկետով: Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով մի շարք մեղմացուցիչ հանգամանքներ, նշանակել է պայմանական պատիժ՝ ստուգողական ժամանակաշրջանով:

Խոսելով թափանցիկ ու բնականոն հունով ընթացող կադրային փոփոխությունների մասին, Վ.Հովսեփյանը նշեց, որ կառույցում ներգրավված են լավագույն երիտասարդ ուժեր, որոնք ակտիվ աշխատանքով ձեռք են բերում աշխատանքային հմտություններ: Դատարանի նախագահը կարևորեց Հայաստանի դատական մարմինների հետ շահեկան փոխհամագործակցությունը: Նշեց, որ այս տարի, պայմանավորվածության համաձայն, վերաքննիչ դատարանի բոլոր դատավորները Հայաստանի դատական դպրոցում կանցնեն կատարելագործման դասընթացներ: Հանդիպման ընթացքում խոսք եղավ նաև դատարանի նյութատեխնիկական թույլ բազայի մասին. այսօր վերաքննիչ դատարանը շենքային պայամանների առումով հպարտանալու առիթ չունի: Չկա դատական նիստերի դահլիճ, խորհրդակցական սենյակ, դատավորներն ապահովված չեն առանձին սենյակներով: Վ.Հովսեփյանը համոզվածություն հայտնեց, որ այդ դժվարությունները ժամանակավոր են, քանի որ երկրի ղեկավարությունը ևս մտահոգ է այս հարցում:

Վերաքննիչ դատարանի նախագահը դատական կառույցի առավել արդյունավետ ու հրապարակային գործունեության համար որպես կարևոր նախապայման շեշտեց լրատվամիջոցների դերը, նշելով, որ այդօրինակ պարբերական հանդիպումներն ու վերլուծությունները կնպաստեն քաղաքացիների՝ դատական մարմինների հանդեպ վստահության բարձրացմանը:

*«Ազատ Արցախ» ՀԹ, 17 հունվարի 2009թ.*

## ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՅԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ

### **«Անվտանգության անդունդը կլցվի փոխվտանգության մթնոլորտով», հավատացած է վերաքննիչ դատարանի նախագահը**

Ընդամենը մեկուկես տարի է, ինչ կազմավորվել և գործում է ԼՂՀ վերաքննիչ դատարանը: Ու չնայած մեծ ժամանակահատված չէ, բայց կատարված աշխատանքի արդյունքները վկայում են, որ դրանք շոշափելի են ու ձեռնարկվող քայլերը գլխավորապես ուղղված են եղել արդարադատության ապահովմանն ու քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: « Միննույն ժամանակ մենք քաջ գիտակցում ենք, որ դատական իշխանության կայացման ամենամեծ պատասխանատվությունն ընկած է մեզ վրա, որովհետև հենց դատավորներն են հանդիսանում դատական իշխանության կրողներն ու իրականացնողները: Իսկ ցանկացած դատական իշխանության համար գաղտնիք չէ, որ հասարակության շրջանում վտանգության նվաճումը գերխնդիր է մնում», - խոստովանում է ԼՂՀ վերաքննիչ դատարանի նախագահը և ավելացնում, թե այդ հարցում իր գլխավորած դատական կառույցը դեռևս լուրջ անելիքներ ունի:

Ըստ վիճակագրական տվյալների, 2009թ. ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությամբ ավարտված 1604 քաղաքացիական գործից վերաքննության կարգով բողոքարկվել է 153 վճիռ: Ընդ որում, դատաքննությամբ ավարտված 139 քաղաքացիական գործից 63-ով օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճիռներին, 46 գործով վճիռները բեկանվել և փոփոխվել են, իսկ 30 գործով վճիռները բեկանվել և ուղարկվել են ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վ.Յովսեփյանը վերաքննիչ դատարանի ստեղծումը միանգամայն արդարացված է համարում: «Թեկուզև այն փաստը, որ վերաքննության ինստիտուտը գործելու պահից, վճռաբեկության կարգով, վերաքննիչ ատյանի ավելի քիչ գործեր են բեկանվել, քան 2009 թվականի ընթացքում, խոսում է այն մասին, որ վերաքննիչ դատարանի ստեղծումն անհ-

րաժեշտություն էր ու խնդիրը չէր կարող անտեսվել», - գտնում է պարոն Յովսեփյանը:

Այն հարցին, թե անցյալ տարի վերաքննությամբ ավարտված 49 քրեական գործից քանիսն են դասվում ծանր հանցագործությունների շարքին, վերաքննիչ դատարանի նախագահը պատասխանեց, որ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, ընդամենը երկուսն են դասվել առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, 19-ը որակվել է ծանր, իսկ 21-ը՝ միջին ծանրության հանցագործություն: Ընդհանուր առմամբ, 2009-ին վերաքննիչ դատարանում վերջնական դատական ակտի կայացմամբ, ավարտվել է 188 գործ, որից 139-ը եղել է քաղաքացիական, իսկ 49-ը՝ քրեական բնույթի:

Չհամաձայնելով այն կարծիքին, որ «դատավորներն ու ՁԼՄ-ները հակառակ դիրքերում են գտնվում», - Վ. Յովսեփյանը փորձեց ապացուցել հակառակը. «Ես կարող եմ պնդել, որ ժողովրդավարության պայմաններում նրանք իսկական դաշնակիցներ են, որովհետև երկուսն էլ պաշտպանում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու օրինական շահերը»: Եվ հիմնավորելով իր ասածը, նա եզրակացրեց, որ եթե երրորդ և չորրորդ իշխանությունները միմյանցից օտարված են լինում, «իրար հետ խոսում են թուր և թվանքով», ինչից և, բնականաբար, տուժում է հասարակությունը:

Վերաքննիչ դատարանի նախագահն այն կարծիքին է, որ Արցախում մամուլ-դատական իշխանություն փոխհարաբերությունները դեռևս գտնվում են սաղմնային վիճակում: «Մի կողմից լրագրողներն իրավական անհրաժեշտ գիտելիքներ չեն ունենում՝ նյութը պատշաճ մակարդակով ներկայացնելու համար, մյուս կողմից՝ դատավորները խուսանավում են լրագրողներից ու համապատասխան տեղեկություններ չեն տրամադրում: Մինչդեռ օրենքի համաձայն, յուրաքանչյուր քաղաքացի ունի տեղեկատվություն ստանալու իրավունք: Արդյունքում տուժում է հասարակությունը և վերջինս դատավորին պատկերացնում է մի անհոգի աստիճանավորի, կախված դատախազությունից, իշխանություններից և ազդեցիկ պաշտոնյաներից: Ու պատահական չէ, որ այսօր աննշան է մնում հասարակության վստահությունը դատարանների նկատմամբ», - եզրակացնում է Վ. Յովսեփյանը և դրա պատճառներից մեկը համարում դատական համակարգի «տեղեկատվության փակվածությունը»:

նը»: Միևնույն ժամանակ նա հավատացած է, որ «առաջիկայում կհաղթահարվի դատավորների և լրագրողների միջև եղած անվստահությունը և այդ անդունդը կլցվի փոխվստահության մթնոլորտով»:

Արդյոք, վերաքննիչ դատարանի վճիռները միշտ են արդար լինում, թե՛, այնուամենայնիվ, ինչ-որ բան վիճարկելի է մնում: Անդրադառնալով այս հարցին, Վ.Յովսեփյանը մասնավորապես ասաց. «Որպես դատարանի նախագահ, փաստում եմ, որ մեր կողմից քննված ու հետագայում Գերագույն դատարանի կողմից բեկանված և փոփոխված գործերով մենք էլ ենք ունենում թերացումներ, բացթողումներ, օրենքի ոչ ճիշտ կիրառման դեպքեր, որոնք վկայում են մասնագիտական գիտելիքների դեռևս ոչ պատշաճ մակարդակի մասին: Այդ տեսակետից անելիքները շատ են: Պետք է մշտապես զբաղվենք մեր մասնագիտական ունակությունների բարձրացմամբ, մանավանդ, որ հասարակական ու տնտեսական հարաբերություններն այնքան արագ են զարգանում և օրենքներն էլ այնպես շուտ են փոխվում, որ երեկվա գիտելիքներն այսօրվա համար այլևս բավարար չեն կարող լինել: Պիտի հաղթահարենք հին իներցիան և արագ զինվենք նոր իրավագիտակցությամբ»,- գտնում է դատարանի նախագահը:

*Դավիթ Միքայելյան*  
*«Ստեփանակերտ» /քաղաքային թերթ/, հունվար 2010թ.*

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

### Դատարանի և դատախազության մարմինների վերանվանման մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը  
*որոշում է.*

1. Լեռնային Ղարաբաղի մարզային դատարանը վերանվանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարան:
2. Լեռնային Ղարաբաղի մարզային դատախազությունը վերանվանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազություն:
3. Հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանին և դատախազությանը շարունակել իրենց գործունեությունը մինչև Գերագույն դատարանի և դատախազության նոր կառուցվածքների ձևավորումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ՝

Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ.ՀԱԿՈՒՅԱՆ

6 հունվարի 1992 թվականի,  
քաղ. Ստեփանակերտ  
հ.Ն- 0011-1

## **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԻՋԵԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանը, այսուհետ՝ Կողմեր, կարևորելով Կողմերի փոխադարձ հարաբերություններում իրավական օգնության ուղղությամբ ակտիվ համագործակցության անհրաժեշտությունը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

#### **Հոդված 1**

Միասնական տեղեկատվական դաշտի ձևավորման և իրավական տեղեկատվությամբ ապահովելու, ինչպես նաև իրավական տեղեկատվական բազայի ստեղծման նպատակով, Կողմերը պարտավորվում են միմյանց տրամադրել Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը:

#### **Հոդված 2**

Փոխանակման ենթակա տեղեկատվության շրջանակներում Կողմերը պարտավորվում են միմյանց ուղարկել ենթակայության և ընդդատության, հայցադիմումներ ներկայացնելիս պետական տուրքի չափի և վճարման կարգի, հայցային և կատարման վաղեմության ժամկետների, գործի քննության ընթացակարգերի փոփոխության, բանկային հաշվարկների և դատական ակտերի կատարման հարցերը կանոնակարգող իրավական ակտերը:



### **Յոդված 3**

Կողմերը տեղեկացնելու են միմյանց օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին և այդ նպատակով փոխանակելու են դատական պրակտիկայի ամփոփման և վերլուծության նյութերը:

Կողմերի հայեցողությամբ փոխադարձության հիման վրա կարող են ուղարկել նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի գործունեությանն առնչվող այլ նյութերը:

### **Յոդված 4**

Իրավական տեղեկատվությունը տրամադրվում է հայերեն լեզվով և անհատույց: Նյութերի և հաղորդագրությունների փոխանակման համար կարող են օգտագործվել էլեկտրոնային կապի միջոցները, ինչպես նաև էլեկտրոնային կրիչները:

### **Յոդված 5**

Իրավական տեղեկատվության փոխանակումը ներառում է նաև՝  
-օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի նախագծեր կազմելու նպատակով փոխադարձ խորհրդատվությունները,  
-օրենսդրության մեջ եղած հակասությունները վերացնելու նպատակով համագործակցության շրջանակներում օրենսդրական հակասությունների վերացմանը նպաստելը:

### **Յոդված 6**

Կողմերն իրավական օգնության շրջանակներում համագործակցում են անմիջականորեն:

### **Յոդված 7**

Փոխադարձ պայմանավորվածության հիման վրա աշխատանքային փորձի փոխադարձ ուսումնասիրման, օրենքների կիրառման միասնական դատական պրակտիկայի և ընդհանուր մոտեցումներ մշակելու նպատակով Կողմերն անցկացնելու են հանդիպումներ, խորհրդակցություններ, համատեղ ժողովներ, կոնֆերանսներ և համաժողովներ:

### **Հոդված 8**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

### **Հոդված 9**

Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, այդպիսի իրավասություն ունեցող անձանց կողմից՝ լրացուցիչ արձանագրություն կազմելու միջոցով:

### **Հոդված 10**

Սույն Համաձայնագիրը կնքված է 2005 թվականի հոկտեմբերի 7-ին, Ստեփանակերտ քաղաքում, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից:

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ  
ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ԼՂՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ**

Ցարական Ռուսաստանի տարիներին Արցախ-Ղարաբաղը մտնում էր Գանձակի նահանգի Շուշիի գավառի մեջ: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո՝ 1917 թվականի դեկտեմբերի 16-ին, Արցախի մայրաքաղաքում՝ Շուշիում, ստեղծվեց ազգային խորհուրդ, որը 22.07.1918թ. Ղարաբաղի հայության առաջին համագումարում վերանվանվեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն»՝ 7 հոգու կազմով: Առաջին համագումարի օրակարգում դրված 7 հարցերից մեկն էլ «Դատարանների հարցն» էր: Դատարաններ ունենալու վերաբերյալ համագումարը որոշում է «քաղաքացիական բնույթ ունեցող գործերի համար կիրառել միջնորդ դատարաններ թե՛ գյուղերում, և թե՛ Շուշի քաղաքում, իսկ քրեական հանցագործներին դատելու համար ամեն անգամ կազմել զինվորական դատարան, որի արձակած վճիռները պիտի ներկայացվեն Ղարաբաղի ղեկավար մարմնին՝ ի հաստատումն: Ի դեպ Ղարաբաղի առաջին կառավարության 7 «կառավարիչներից» մեկը հողային և արդարադատության գործերի կառավարիչն է եղել: Սակայն Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կառավարությանը 1918-1920 թվականներին չհաջողվեց կայուն վարչաձև, դատական համակարգ ստեղծել, քանզի երկրամասի առաջնահերթ խնդիրը հայ ժողովրդի ղարաբաղյան հատվածի ինքնապաշտպանության հարցն էր, մի հարց, որը 1918-1920թթ. աղջամուղջում գտնվում էր թուրքական, մուսավաթական և անգլիական զինված միջամտությունների, Խորհրդային Ադրբեջանի և բոլշևիկյան Ռուսաստանի խարդավանքների հորձանուտում:

Դրա հետևանքը եղավ ՌԿ/Բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հակաօրինական, անտրամաբանական, նորմատիվ ակտի ուժ չունեցող 05.07.1921 թվականի կուսակցական որոշումը, որի ուժով Ղարաբաղը

թողնվեց Ադրբեջանի ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային ինքնավարություն:

Երկար ձգձգումներից հետո Ադրբեջանի Կենտգործկոմի 03.07.1923թ. որոշմամբ ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը, իսկ նույն թվականի օգոստոսի 15-ին ինքնավար մարզի տարածքում ստեղծվեցին 4 շրջաններ՝ Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի, իսկ 1924 թվականին՝ Շուշիի շրջանը: Հետագա տարիներին Ջրաբերդի շրջանը վերանվանվեց Մարտակերտի, Վարանդայինը՝ Մարտունու, Դիզակինը՝ Հադրութի, Խաչենինը՝ Ասկերանի:

Նորակազմ հայկական մարզից Ադրբեջանի կենտգործկոմի վերոնշյալ որոշմամբ դուրս մնաց ամբողջ Յյուսիսային Արցախը, Դիզակի, Վարանդայի և Ջրաբերդի արևելյան մասերի մի շարք բնակավայրեր, Հայաստանի Հանրապետության և հայկական մարզի սահմանակցության բոլոր գոտիները: Դեռ ավելին, Ադրբեջանը, խախտելով ՌԿ/ԲԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշման պահանջները, մարզկենտրոնը Շուշի քաղաքից տեղափոխեց Վարարակն /Խանքենդի/ ավանը, որն էլ Ղարաբաղի կուսակցության մարզկոմի 1923թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ Ստեփան Շահումյանի անվամբ կոչվեց Ստեփանակերտ:

Արխիվային տվյալները վկայում են, որ ինքնավար մարզում շրջանային դատարանների կազմավորումն սկսվեց 1923 թվականի օգոստոսի 15-ին, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի ժողովրդական կոմիսարների խորհրդի 1924թ. հունվարի 20-ի որոշմամբ ստեղծվեց մարզային դատարան, որը կազմված էր նախագահությունից և քրեական ու քաղաքացիական գործերով միացյալ կոլեգիայից:

Կյանքի կոչված լինելով կանգնելու օրենքի, ճշմարտության և արդարության պաշտպանի դիրքերում՝ դատավորը միշտ էլ հարգված դեմք է եղել Արցախի հասարակության մեջ: ԼՂՀ Սահմանադրությունից բխող իշխանության երեք ճյուղերի համատեքստում, հաշվի առնելով դատական համակարգի աշխատողների նշանակալից ներդրումը սահմանադրական կարգի ամրապնդման, օրինականության ապահովման, անձի օրինական իրավունքների և շահերի պաշտպանության բնագավառներում, ինչպես նաև ԼՂՀ դատարանների հեղինակությունը և գործունեությունը բարձրացնելու համար, պետական մակարդակով առանձին օր սահմանելը միայն ու միայն կբարձրացնի դատարանների հեղինակու-

թյունը և անհրաժեշտ նախապայման կհանդիսանա ԼՂՀ-ում դատական իշխանության լիարժեք կայացման, արդարադատության իրականացման և դատական համակարգի հանդեպ ժողովրդի վստահության աճի ավելացման ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ դատարանների նախագահների խորհրդի կանոնակարգով՝

### **Միջնորդում եմ**

ԼՂՀ դատարանների նախագահների խորհրդի առաջիկա նիստում քննարկել սույն միջնորդությունը և դիմել ԼՂՀ կառավարությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օգոստոսի 15-ը կամ հունվարի 20-ը նշելու որպես «ԼՂՀ դատարանների օր», կամ «ԼՂՀ դատական համակարգի աշխատողի օր», կամ էլ «ԼՂՀ դատարանների աշխատողների օր», կամ էլ «Դատարանի աշխատողի օր»:

Առդիր. որոշման նախագիծը՝ «1» թերթից:

ԼՂՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ  
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ

Վ.ՅՈՎՍԵՓՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 03-Լ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ը ՈՐՊԵՍ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՃԽԱՏՈՂԻ ՕՐ»  
ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը, ուսումնասիրելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի նախագահ Վ. Հովսեփյանի միջնորդությունը

*Պ Ա Ր Զ Ե Ց*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունից բխող դատաիրավական բարեփոխումներն ավարտված են և դատական իշխանությանը վերաբերող բոլոր ինստիտուտները գործում են: Ձևավորվել և գործում են դատական իշխանության ինքնակառավարման մարմինները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և օրենքներով նախատեսված իրենց լիազորություններն են իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտը:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ կյանքի կոչված լինելով կանգնելու օրենքի, ճշմարտության և արդարության պաշտպանի դիրքերում՝ դատավորը միշտ էլ հարգված դեմք է եղել Արցախի հասարակության մեջ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունից

բխող իշխանության երեք ճյուղերի համատեքստում, հաշվի առնելով դատական համակարգի աշխատողների նշանակալից ներդրումը սահմանադրական կարգի ամրապնդման օրինականության ապահովման, անձի օրինական իրավունքների և շահերի պաշտպանության բնագավառներում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դատարանների հեղինակությունը և գործունեությունը բարձրացնելու համար, պետական մակարդակով առանձին օր սահմանելը միայն ու միայն կբարձրացնի դատարանների հեղինակությունը և անհրաժեշտ նախապայման կհանդիսանա Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունում դատական իշխանության լիարժեք կայացման, արդարության իրականացման և դատական համակարգի հանդեպ ժողովրդի վստահության աճի ավելացման ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

#### *ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության վերաքննիչ դատարանի նախագահ Վ. Հովսեփյանի միջնորդությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունում հունվարի 20-ը որպես «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դատական համակարգի աշխատողի օր» նշելու մասին միջնորդությամբ դիմել Լեռնային Ղարաբաղի Յանրապետության կառավարությանը:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ

Ա. ԱՎԱԳՅԱՆ

24 դեկտեմբերի 2010թ.  
ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«14» հունվարի 2011թ.

N 1-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հունվարի 20-ը նշել որպես դատական համակարգի աշխատողի օր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱՊԵՏ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ N-74**

**ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎՈԳՐՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ար-  
դարադատության համակարգի կայացման գործում ԼՂՀ Գերագույն  
դատարանի նախագահ Վ.Հովսեփյանի իրականացրած ակտիվ գոր-  
ծունեությունը, Հայաստանի Հանրապետության դատարանների նա-  
խագահների խորհուրդը

*ՈՐՈՇՈՒՄ Է*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի  
նախագահ Վ.Հովսեփյանին պարգևատրել Հայաստանի Հանրապե-  
տության դատարանների նախագահների խորհրդի պատվոգրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

5 հոկտեմբերի, 2005թ.  
ք.Երևան

**ПРОКУРАТУРА СССР  
ПРИКАЗ**

15.03.1985г.

№436-д

Москва

**С поощрении работников прокуратуры  
Азербайджанский ССР**

За примерное исполнение служебного долга по укреплению социалистической законности и правопорядка и активное участие в общественной жизни

*ПРИКАЗЫВАЮ*

Наградить                      ценной  
   подарком

Младшего юриста - следователя прокуратуры  
ОСИПЯНА Володю Хореновича Мартунинского района НКАО.

прокурор ССР  
действительный государственный  
Советник юстиции

/А.Рекунков/

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը**

**Վ. Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՌԱՋԻՆ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԼՂՀ գերագույն դատարանի նախագահի տեղակալ Վոլոդյա Խորենի  
Հովսեփյանին շնորհել առաջին որակավորման դաս:

Ռ.ԲՈՉԱՐՅԱՆ

11 փետրվարի 1997թ.  
ՈՆՀ-119

## **Պ Ա Տ Վ Ո Պ Ի Ր**

Արդարադատության բնագավառում երկարամյա աշխատանքի, ունեցած ներդրման համար և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր Վլադիմիր Խորենի Յովսեփյանին ՀՀ դատավորների միության խորհրդի 15.05.2013թ. N8 որոշմամբ

## **Շ Ն Ո Ր Հ Վ ՈՒ Մ Է**

**ՀՀ դատավորների միության պատվոգիր:**

**ՀՀ դատավորների միության նախագահ՝**

**Հ.Սարգսյան**

**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորներ»  
հասարակական կազմակերպություն**

**Պ Ա Տ Վ Ո Գ Ի Ր**

**Շ Ն Ո Ր Հ Վ ՈՒ Մ Է**

**Վ Լ Ա Դ Ի Մ Ի Ր Հ Ո Վ Ս Ե Փ Յ Ա Ն Ի Ն**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 5-ամյակի կապակցությամբ՝ բարեխիղճ ու անձնվեր աշխատանքի համար:

**Միության նախագահ՝**

**Հ.Խաչատրյան**

19 հունիսի 2013թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

Վ.ՀՈՎԱՍԵՓՅԱՆԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱՔԱՆԻ  
ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը՝ *որոշում եմ.*

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական համակարգում երկարամյա բեղմնավոր գործունեության և ունեցած ավանդի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի դատավոր **Վլադիմիր Խորենի Հովսեփյանին** շնորհել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2015թ. հունվարի 17  
Ստեփանակերտ  
ՆՀ-7-Ա

**ՅԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ  
ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՐԵՆԻ ՅՈՎԱԵՓՅԱՆ**



Ծնվել է 1953թ. ապրիլի 22-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում: 1970թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: 1971-1974թթ. ծառայել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմում: 1974-1975թթ. աշխատել է Երևանի Կիրովի անվան քիմիական գործարանում, 1977-1981թթ.՝ «Երևանվիտամիններ» արտադրական միավորումում՝ որպես փականագործ: 1975թ. ընդունվել և 1981թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը /երեկոյան բաժին/՝ իրավագետի մասնագիտությամբ: 1981-1983թթ. աշխատել է Յաղոբի պետական նոտարական գրասենյակում՝ պետական նոտար, 1983-1996թթ. ԼՂԻՄ-ԼՂՅ դատախազության մարմիններում՝ Մարտունու շրջադատախազության քննիչ, Ստեփանակերտի քաղաքատախազության ավագ քննիչ, մարզդատախազության կարևորագույն գործերով քննիչ, քննչական բաժնի պետ, Ասկերանի շրջադատախազ, ԼՂՅ դատախազության ընդհանուր հսկողության բաժնի պետ: ԽՍՀՄ Գլխավոր դատախազ Ա.Ռեկունկովի 1985թ. մարտի 15-ի հրամանով պարգևատրվել է արժեքավոր նվերով: 1996-2007թթ. աշխատել է ԼՂՅ դատական մարմիններում՝ ԼՂՅ Գերագույն դատարանի նախագահի տեղակալ, ԼՂՅ Գերագույն դատարանի նախագահ: ԼՂՅ նախագահ Ռ.Քոչարյանի 1997թ. փետրվարի 11-ի հրամանագրով շնորհվել է դատավորի առաջին որակավորման դաս կոչում: 2007-2008թթ. աշխատել է ԼՂՅ նախագահի խորհրդական, 2008-2012թթ.՝ ԼՂՅ վերաքննիչ դատարանի նախագահ: 2012թ. նոյեմբերի 29-ին ԼՂՅ Ազգային ժողովի որոշմամբ նշանակվել է ԼՂՅ Գերագույն դատարանի դատավոր: Դասախոսում է Արցախի պետհամալսարանում: 2015թ. հունվարի 20-ին ԼՂՅ նախագահ Բ.Սահակյանի հրամանագրով շնորհվել է ԼՂՅ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում: Ամուսնացած է, ունի երեք զավակ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից .....	3
«Հողի աշխատավորը» .....	5
Դատական իշխանության կայացումը ԼՂՀ-ում .....	9
Արդարադատության ապահովման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության դիրքերում .....	17
Ադրբեջանի կողմից Արցախին շնորհված «Սահմանադրությունը» .....	23
Արդարադատության մատչելիությունը բնակչության անապահով խավերի համար .....	29
Արդարադատության աստվածուհին .....	36
Դատաիրավական բարեփոխումներն Արցախում .....	41
Ցեղասպանության հանցակազմը երիտթուրքերի արարքներում .....	49
Միջազգային դատական ատյանները .....	67
Մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը և դրա պաշտպանությունը .....	81
Անձնական տվյալների պաշտպանությունը .....	92
Արցախի Հանրապետության դատական իշխանության 25-ամյա ուղին .....	95
Լույս է տեսել «Իրավունքը և արդարադատությունն Արցախում» գիրքը ....	107
Կամբիզի դատաստանը կամ ծախու դատավորի մորթազերծումը .....	109
Բարոյական վնասի ինստիտուտն Արցախի Հանրապետության օրենսդրության մեջ .....	111
Դատական իշխանության հիմունքներն Արցախի Հանրապետությունում .....	128
Դատավորի կարգավիճակի հիմունքներն Արցախի Հանրապետությունում .....	145
Արցախի դատական իշխանության ինքնակառավարումը .....	168
 <i>ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ</i>	
Արդար դատիր, խղճով դատիր, որ չդատվես .....	179
Դատավորները պարտավոր են հոգ տանել իրենց մասնագիտական գիտելիքների մակարդակի և աշխատանքի որակի բարձրացման ուղղությամբ .....	187



Գործող աշխատանքային օրենսգիրքը չի կարգավորում ժամանակակից հարաբերությունները .....	192
«Թափանցիկ ու անկաշառ աշխատանքով միայն կշահենք հասարակության վստահությունը» .....	198
Որքանով է ԼՂՀ քաղաքացին այսօր պաշտպանված .....	201
Վստահության պակասը լրացնել է պետք .....	205
Վերաքննիչ դատարանն ամփոփում է կես տարվա գործունեությունը .....	208
Դատական իշխանությունը՝ կայացման ճանապարհին .....	210

### ՅԱՎԵԼ ՎԱԾՆԵՐ

ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշումը դատարանի և դատախազության մարմինների վերանվանման մասին .....	213
ՀՀ վճռաբեկ և ԼՂՀ Գերագույն դատարանների միջև կնքված համաձայնագիրը .....	214
ԼՂՀ վերաքննիչ դատարանի միջնորդությունը .....	217
ԼՂՀ Դատարանների նախագահների խորհրդի N03-Լ որոշումը .....	220
ԼՂՀ կառավարության N1-Ն որոշումը .....	222
Հայաստանի Հանրապետության Դատարանների նախագահների խորհրդի N74 որոշումը .....	223
Приказ Генерального прокурора СССР за N436-п от 15.03.1985г. ....	224
ԼՂՀ նախագահի 11.02.1997թ. ՆՆՀ-119 հրամանագիրը .....	225
ՀՀ դատավորների միության պատվոգիրը .....	226
«ԼՂՀ դատավորներ» հ/կ պատվոգիրը .....	227
ԼՂՀ նախագահի 17.01.2015թ. ՆՀ-7-Ա հրամանագիրը .....	228
Չեղինակի մասին .....	229

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՐԵՆՆԻ ՅՈՎՍԵՓՅԱՆ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԴԻՐՔԵՐՈՒՄ**

**ВЛАДИМИР ХОРЕНОВИЧ ОВСЕПЯН**

**НА ПОЗИЦИЯХ  
ПРАВОСУДИЯ**

Խմբագիր՝  
Սրբագրիչ՝  
Համակարգչային  
Էջադրումը՝  
Կազմի ձևավորումը՝

Գևորգ Դանիելյան  
Դիանա Ղուկասյան  
Թամար Հարությունյանի  
Մարինե Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>,  
ծավալը՝ 14.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

---

Տպագրվել է «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչության տպարանում  
Հ.Հակոբյան 25  
Ստեփանակերտ 2018